



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

Ուղեցույց Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի
թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի վերաբերյալ

Սեփականության պաշտպանություն

Թարմացվել է 2025 թվականի փետրվարի 28-ին

Կազմվել է Քարտուղարության կողմից: Դատարանի համար պարտադիր ուժ չունի:



Սույն ուղեցույցի Էլեկտրոնային կամ տպագիր տարբերակն ամբողջությամբ կամ մասնակի թարգմանել և (կամ) վերարտադրել ցանկացող հրատարակողներին կամ կազմակերպություններին առաջարկվում է լրացնել «[request to reproduce or republish a translation](#)» կոնտակտային ձևը՝ թույլտվության ընթացակարգի վերաբերյալ տեղեկանալու համար:

Եթե ցանկանում եք տեղեկանալ նախադեպային իրավունքի վերաբերյալ ուղեցույցների ընթացիկ թարգմանությունների մասին, խնդրում ենք անցնել հետևյալ հղմամբ՝ [pending translations](#):

Սույն ուղեցույցի բնօրինակը կազմվել է անգլերեն: Այն պարբերաբար թարմացվում է, և վերջին անգամ թարմացվել է 2025 թվականի փետրվարի 28-ին: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:

Նախադեպային իրավունքի վերաբերյալ ուղեցույցները ներբեռնման համար հասանելի են հետևյալ հղմամբ՝ <https://ks.echr.coe.int>: Հրապարակումների հետ կապված թարմացումների համար հետևե՛ք Դատարանի «X» հարթակի Էջին հետևյալ հասցեով՝ https://x.com/ECHR_CEDH:

Սույն թարգմանությունը կատարվել է Եվրոպայի խորհրդի «Աջակցություն սահմանադրական արդարադատության զարգացմանը Հայաստանում՝ եվրոպական չափանիշներին համապատասխան» ծրագրի շրջանակներում՝ Եվրոպայի խորհրդի Հայաստանի համար իրականացվող գործողությունների 2023-2026 թվականների ծրագրի ներքո:

© Եվրոպայի խորհուրդ/Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 2026 թ.

Բովանդակություն

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԸՆԹԵՐՑՈՂԻ ՀԱՄԱՐ	5
I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	7
II. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՆԴԻՐՆԵՐ	9
Ա. Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի կիրառելիությունը. «գույք»	9
ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ՀՈԴՎԱԾ. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆԷ 9	
HUDOC-Ի ԲԱՆԱԼԻ ԲԱՌԵՐ	9
1. «Գույք» հասկացությունը	9
ա. Ինքնուրույն նշանակությունը	9
բ. Պաշտպանված «գույքը»	12
i. Իրավաչափ ակնկալիքները	15
գ. «Գույքի» տարբեր տեսակները և այլ գույքային շահեր	21
i. Պահանջները և վճռով ճանաչված պարտքերը	21
ii. Ընկերության բաժնեմասերը, ֆինանսական այլ գործիքներ և ձեռնարկատիրական այլ ակտիվներ	22
iii. Մասնագիտական հաճախորդների բազա	29
iv. Լիցենզիաներ	30
v. Ապագա եկամուտ	31
vi. Մտավոր սեփականություն	32
vii. Գույքի վարձակալություն և բնակարանային իրավունքներ	33
viii. Սոցիալական ապահովության նպաստներ/կենսաթոշակներ	37
ix. Գույքի ոչնչացումը միջազգային կամ ներքին զինված հակամարտությունների իրավիճակներում. ապացույցների անհրաժեշտ մակարդակ	42
x. Մարդկային էմբրիոններ	44
Բ. Միջամտությունը սեփականությունից անարգել օգտվելու իրավունքին	44
1. «Երեք կանոնների» մոտեցումը	44
ա. Սեփականությունից զրկելը	51
բ. Օգտագործման նկատմամբ վերահսկողությունը	54
գ. Ընդհանուր կանոն	58
2. Օրինականության սկզբունքը	60
3. Հանրային կամ ընդհանուր շահը	71
4. Համաչափությունը և հարակից հարցեր (արդար հավասարակշռություն, փոխհատուցում, հայեցողական լիազորությունների շրջանակ)	77
ա. Ընթացակարգային գործոններ	80
բ. Միջոցների ընտրությունը	84
գ. Արդար հավասարակշռության ստուգմանը վերաբերող Էական հարցեր	86
դ. Դիմումատուին առնչվող հարցեր	92
ե. Սեփականությանը միջամտության համար փոխհատուցումը որպես արդար հավասարակշռության տարր	94
Գ. Անդամ պետությունների դրական պարտավորությունները	102
1. Հորիզոնական ազդեցությունը. մասնավոր անձանց կողմից միջամտությունը	110
2. Իրավական պաշտպանության միջոցները	112
3. Կատարողական վարույթը	115

Դ. Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի և Կոնվենցիայի այլ հոդվածների միջև կապը 121	
1. Հոդված 2	121
2. Հոդված 3	122
3. Հոդված 4	123
4. Հոդված 6	124
5. Հոդված 7	129
6. Հոդված 8	131
7. Հոդված 10	137
8. Հոդված 11	138
9. Հոդված 13	138
10. Հոդված 14	140
 III. ԿՈՆԿՐԵՏ ՀԱՐՑԵՐ.....	149
Ե. Վարձակալությունը և վարձավճարի նկատմամբ հսկողությունը	149
2. Սոցիալական բարեկեցության վերաբերյալ գործեր	159
Է. Բանկային գործեր	170
Ը. Հարկումը	178
Թ. Հողային պլանավորումը.....	185
Ժ. Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների բռնագրավումը	187
ԺԱ. Գույքի ռեստիտուցիան	198
ԺԲ. Պետական մասնակցությամբ ընկերությունները.....	207
ԺԳ. Խիստ խնայողության միջոցները	212
ԺԴ. Եվրոպական միության իրավունքը.....	217
 ՄԵԶԲԵՐՎԱԾ ԳՈՐԾԵՐԻ ՑԱՆԿ.....	221

Ծանոթագրություն ընթերցողի համար

Սույն ուղեցույցը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Դատարան, Եվրոպական դատարան կամ Ստրասբուրգի դատարան) կողմից հրատարակվող «Նախադեպային իրավունքի ուղեցույցներ» շարքից է՝ նախատեսված գործող իրավաբաններին Ստրասբուրգի դատարանի կողմից կայացված հիմնարար վճիռների և որոշումների մասին տեղեկացնելու համար: Սույն կոնկրետ ուղեցույցում վերլուծվում և ամփոփվում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա կամ Եվրոպական կոնվենցիա) թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի վերաբերյալ մինչև 2021 թվականի օգոստոսի 31-ը ձևավորված նախադեպային իրավունքը: Ընթերցողները հնարավորություն կունենան ծանոթանալու այս ոլորտի առանցքային սկզբունքներին և համապատասխան նախադեպերին:

Հիշատակված նախադեպային իրավունքի օրինակներն ընտրվել են ուղենիշային, առավել կարևոր և (կամ) վերջերս կայացված վճիռներից ու որոշումներից*:

Դատարանի վճիռները և որոշումները ծառայում են ոչ միայն Դատարան ներկայացված համապատասխան գործի վերաբերյալ որոշում կայացնելու, այլև ընդհանուր առմամբ Կոնվենցիայով սահմանված նորմերը պարզաբանելու, պաշտպանելու և կատարելագործելու համար՝ այդպիսով նպաստելով պետությունների կողմից որպես Պայմանավորվող կողմեր նրանց ստանձնած պարտավորությունների կատարմանը ([Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության \[Ireland v. the United Kingdom\]](#), 1978թ., § 154, [Յերոնովիչն ընդդեմ Լատվիայի \[ՄՊ\] \[Jeronovičs v. Latvia\] \[GC\]](#), § 109):

Այսպիսով, Կոնվենցիայով ստեղծված համակարգի նպատակն է լուծել հանրային քաղաքականության խնդիրները՝ ելնելով ընդհանուր շահերից՝ այդպիսով բարձրացնելով մարդու իրավունքների պաշտպանության չափանիշները և մարդու իրավունքների ոլորտում առկա իրավական պրակտիկան տարածելով Կոնվենցիայի մասնակից պետությունների շրջանում ([Կոնստանտին Մարկինն ընդդեմ Ռուսաստանի \[ՄՊ\] \[Konstantin Markin v. Russia\] \[GC\]](#)], 30078/06, 2012թ., § 89, ՄԻԵԴ 2012թ.): Անշուշտ, Դատարանը շեշտել է Կոնվենցիայի՝ որպես «Եվրոպական հասարակական կարգի սահմանադրական գործիքի» դերը մարդու իրավունքների բնագավառում ([«Բոսնիա»](#)).

* Հիշատակված նախադեպային իրավունքը կարող է լինել Դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի պաշտոնական լեզուներից (անգլերեն կամ ֆրանսերեն) որևէ մեկով կամ երկուսով: Եթե այլ բան նշված չէ, ապա բոլոր հղումներն արվել են գործի ըստ էության բնույթի վերաբերյալ Դատարանի պալատի կողմից կայացված վճիռ: «Որոշում» բառը նշանակում է, որ հղում է կատարվում Դատարանի որոշմանը, իսկ «[ՄՊ]» հապավումով նշվում է, որ գործը քննվել է Մեծ պալատի կողմից: Պալատի այն վճիռները, որոնք վերջնական չեին այս թարմացված տարբերակի հրապարակման պահին, նշված են աստղանիշով (*):

ավիատուղիներ» գրոսաշրջային և առևտրային բաժնետիրական ընկերությունն ընդդեմ Իռլանդիայի [ՄԴ] [Bosphorus Hava Yolları Turizm ve Ticaret Anonim Şirketi v. Ireland [GC]], 2005թ., § 156, և համեմատաբար վերջերս՝ Ն.Դ.-ն և Ն.Տ.-ն ընդդեմ Իսպանիայի [ՄԴ] [N.D. and N.T. v. Spain [GC]], թիվ 8675/15 և թիվ 8697/15, § 110, 2020 թվականի փետրվարի 13):

Կոնվենցիայի թիվ 15 արձանագրությամբ սուբսիդիարության սկզբունքը վերջերս ներառվել է Կոնվենցիայի նախաբանում: Այս սկզբունքը «սահմանում է Կողմ պետությունների և Դատարանի համատեղ պատասխանատվություն» մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում, իսկ ազգային իշխանությունները և դատարանները պետք է ներպետական իրավունքն այնպես մեկնաբանեն և կիրառեն, որ Կոնվենցիայում և դրան կից արձանագրություններում սահմանված իրավունքները և ազատությունները լիարժեք գործողության մեջ դրվեն (*Գրժեդան ընդդեմ Լեհաստանի [ՄԴ] [Grzęda v. Poland [GC]], § 324*):

Սույն ուղեցույցը պարունակում է հղումներ Կոնվենցիայից և դրան կից լրացուցիչ արձանագրություններից մեջբերված հոդվածներից յուրաքանչյուրում պարունակվող բանալի բառերին: Յուրաքանչյուր գործով քննարկված իրավական խնդիրներն ամփոփված են *Բանալի բառերի ցանկում (List of keywords)*, որոնք ընտրվել են (հիմնականում)

Կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների տեքստից անմիջականորեն վերցված եզրույթների բառարանից:

Դատարանի նախադեպային իրավունքի «*HUDOC database*» շտեմարանում հնարավոր է որոնումներ կատարել ըստ բանալի բառերի: Այդ բանալի բառերով որոնումը տալիս է համանման իրավական բովանդակություն ունեցող փաստաթղթերի խումբ գտնելու հնարավորություն (բանալի բառերի օգնությամբ ամփոփվում են յուրաքանչյուր գործով Դատարանի պատճառաբանությունները և եզրակացությունները): Առանձին գործերի բանալի բառերը կարելի է գտնել «HUDOC» համակարգում՝ սեղմելով «Case Details» կոճակը: «HUDOC» շտեմարանի և բանալի բառերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «*HUDOC*»-ի *օգտագործողի ձեռնարկը (HUDOC user manual)*:

I. Ներածություն

Թիվ 1 արձանագրության 1-ին հոդված. Սեփականության իրավունք

«1. Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

2. Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքը, որոնք այն անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար»:

HUDOC-ի բանալի բառեր

Դրական պարտավորություններ (P1-1)

Գույք (P1-1-1) - Գույքից անարգել օգտվել (P1-1-1) - Միջամտություն (P1-1-1) - Սեփականությունից զրկել (P1-1-1). Հանրային շահ (P1-1-1) - Օրենքով նախատեսված (P1-1-1). Մատչելիություն (P1-1-1). Կանխատեսելիություն (P1-1-1). Երաշխիքներ չարաշահումների դեմ (P1-1-1) - Միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներ (P1-1-1)

Սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն (P1-1-2). Ընդհանուր շահ (P1-1-2) - Հարկերի վճարման ապահովում (P1-1-2) - Գանձումների կամ տուգանքների վճարման ապահովում (P1-1-2):

1. Սույն ուղեցույցի նպատակը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (Դատարան) կողմից իր սկզբնավորման պահից մինչ օրս տվյալ հարցի վերաբերյալ կայացված ամենակարևոր վճիռների մասին գործող իրավաբաններին տեղեկություններ տրամադրելն է: Դրանով սահմանվում են Դատարանի նախադեպային իրավունքում մշակված առանցքային սկզբունքները համապատասխան նախադեպերի հետ միասին: Հիշատակված նախադեպային իրավունքը կիրառված է ընտրողաբար. դրանք ուղենիշային, նշանակալի և վերջերս կայացված վճիռներ և որոշումներ են:

2. Ստրասբուրգի դատարանի վճիռները փաստացի ծառայում են ոչ միայն Դատարանում քննվող գործերը լուծելու, այլև ընդհանուր առմամբ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով (Կոնվենցիա) սահմանված նորմերը

պարզաբանելու, պաշտպանելու և կատարելագործելու համար՝ այդպիսով նպաստելով պետությունների կողմից որպես Պայմանավորվող կողմեր նրանց ստանձնած պարտավորությունների կատարմանը (*Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության [Ireland v. the United Kingdom]*, 1978թ., § 154): Այսպիսով, Կոնվենցիայով ստեղծված համակարգի առաքելությունն է լուծել հանրային քաղաքականության խնդիրները՝ ելնելով ընդհանուր շահերից՝ այդպիսով բարձրացնելով մարդու իրավունքների պաշտպանության չափանիշները և մարդու իրավունքների ոլորտում առկա իրավական պրակտիկան տարածելով Կոնվենցիային մասնակից պետությունների շրջանում (*Կոնստանտին Մարկին ընդդեմ Ռուսաստանի [ՄՊ] [Konstantin Markin v. Russia [GC]]*, 2012թ., § 89):

3. Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորվում է սեփականության իրավունքը: *Մարքսն ընդդեմ Բելգիայի [Marckx v. Belgium]* գործով, 1979թ., §§ 63-64, Դատարանն առաջին անգամ նշել է, որ.

«... Ընդունելով, որ յուրաքանչյուր անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք՝ 1-ին հոդվածն ըստ էության երաշխավորում է սեփականության իրավունքը: Այդպիսի հստակ տպավորություն են թողնում «գույք» և «սեփականության օգտագործում» բառերը (ֆրանսերեն՝ «*biens*», «*propriété*», «*usage des biens*»), *Նախապատրաստական կյուբերը [travaux préparatoires]* իրենց հերթին անվերապահորեն հաստատում են սա. Նախագծողները մշտապես խոսել են «սեփականության իրավունքի» մասին՝ նկարագրելու համար հաջորդական այն Նախագծերի առարկան, որոնք հիմք են եղել սույն 1-ին հոդվածի համար: Անշուշտ, անձի գույքը տնօրինելու իրավունքը սեփականության իրավունքի ավանդական և հիմնարար հայեցակետն է:

1-ին հոդվածի երկրորդ կետով, այնուամենայնիվ, Պայմանավորվող պետությանը տրվում է «այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքը, որոնք այն անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու ... համար»: Այսպիսով, այս կետով Պայմանավորվող պետությունները սահմանվում են որպես այդպիսի օրենքի «անհրաժեշտության» հարցը լուծող միակ դատավոր ... Ինչ վերաբերում է «ընդհանուր շահին», ապա այն որոշ դեպքերում կարող է դրդել օրենսդիր մարմինն «վերահսկել սեփականության օգտագործումը» (...):

II. Ընդհանուր խնդիրներ

Ա. Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի կիրառելիությունը.

«գույք»

Թիվ 1 արձանագրության 1-ին հոդված. Սեփականության իրավունք

«1. Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: ...»:

HUDOC-ի բանալի բառեր

Գույք (P1-1-1) – Գույքից անարգել օգտվելը (P1-1-1)

1. «Գույք» հասկացությունը

4. Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի առաջին մասում նշված «գույք» հասկացությունն ինքնուրույն հասկացություն է, որն ընդգրկում է ինչպես «գոյություն ունեցող գույքը», այնպես էլ ակտիվները, այդ թվում՝ այն պահանջները, որոնց առնչությամբ դիմումատուն կարող է պնդել, որ ունի «իրավաչափ ակնկալիք»: «Գույքը» ներառում է «գույքային» (*in rem*) և «անձնական» (*in personam*) իրավունքները: Եզրույթն ընդգրկում է անշարժ և շարժական գույքը և այլ գույքային շահեր:

ա. Ինքնուրույն նշանակությունը

5. «Գույք» հասկացությունն ունի ինքնուրույն նշանակություն, որն անկախ է ներպետական իրավունքում առկա պաշտոնական դասակարգումից և չի սահմանափակվում նյութական իրերի սեփականության շրջանակով. ակտիվներ համարվող որոշ այլ իրավունքներ և շահեր սույն դրույթի նպատակներով նույնպես կարող են համարվել «սեփականության իրավունքներ» և այդպիսով նաև «գույք»: Յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է դիտարկել այն հարցը, թե արդյոք գործի հանգամանքները որպես ամբողջություն դիտարկելիս դիմումատունն վերապահում են Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանվող նյութական շահ («Անհոյգեր-Բուշ Ինք.»-ն ընդդեմ Պորտուգալիայի [ՄՊ] [Anheuser-Busch Inc. v. Portugal [GC]], 2007թ., § 63, Ըյունեյրյըրզն ընդդեմ Թուրքիայի [ՄՊ] [Öneryıldız v. Turkey] [GC], 2004թ., § 124, Բրոնիովսկին ընդդեմ Լեհաստանի [ՄՊ] [Broniowski v. Poland [GC]], 2004թ., § 129, Բեյելերն ընդդեմ Իտալիայի [ՄՊ] [Beyeler v. Italy [GC]], 2000թ., § 100, Խատրիդիսն ընդդեմ

Յունաստանի [ՄԴ] [Iatridis v. Greece [GC]], 1999թ., § 54, «Չենտրո Եվրոպա 7 Էս.ար.Էլ.»-ը և Դի Ստեֆանոն ընդդեմ Իտալիայի [ՄԴ] [Centro Europa 7 S.r.l. and Di Stefano v. Italy [GC]], 2012թ., § 171, Ֆաբրիս ընդդեմ Ֆրանսիայի [ՄԴ] [Fabris v. France [GC]], 2013թ., §§ 49 և 51, Պարիլլոն ընդդեմ Իտալիայի [ՄԴ] [Parrillo v. Italy [GC]], 2015թ., § 211, Բելանե Նագին ընդդեմ Հունգարիայի [ՄԴ] [Bélané Nagy v. Hungary [GC]], 2016թ., § 76, Էլիֆ Զիզիլ ընդդեմ Թուրքիայի [Elif Kizil v. Turkey], 2020թ., § 61):

6. Պարտադիր չէ, որ այն փաստը, որ պետության ներպետական իրավունքով կոնկրետ շահը չի ճանաչվում որպես «իրավունք» կամ նույնիսկ «սեփականության իրավունք», խոչընդոտի, որ տվյալ շահը որոշ հանգամանքներում համարվի «գույք» թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով (*Դեպալն ընդդեմ Ֆրանսիայի [ՄԴ] [Depalle v. France [GC]], 2010թ. § 68, վաղեմության ժամկետը լրանալու հիմքով հանրային գույքը զբաղեցնելու չեղյալ ճանաչելի և հետկանչելի իրավունքի վերաբերյալ, Ըյուներյիլդզն ընդդեմ Թուրքիայի [ՄԴ] [Öneryıldız v. Turkey [GC]], 2004թ., § 129, իր ինքնակամ բնակարանի նկատմամբ դիմումատուի գույքային շահի վերաբերյալ, «Ջ. Փոլ Գեթի» տրաստը և այլք ընդդեմ Իտալիայի [The J. Paul Getty Trust and Others v. Italy], 2024թ., § 264, դիմումատուին, որպես մշակութային արժեք ներկայացնող առարկայի ներկայիս տիրապետողի, ներպետական վարույթին մասնակցելու հրավեր ներկայացնելու վերաբերյալ): Իշխանությունների կողմից ցուցաբերված տևական հանդուրժողականությունը նույնպես դիմումատուների համար ապահովել է գույքային իրավունքներ վիճելի հողակտորի նկատմամբ (*Կոսմասը և այլք ընդդեմ Յունաստանի [Kosmas and Others v. Greece], 2017թ., §§ 68-71, տե՛ս նաև Արնավուքոյի Տակսիարիսի հույն ուղղափառ եկեղեցու հիմնադրամն ընդդեմ Թուրքիայի [Arnavutkoy Greek Orthodox Taksiarhis Church Foundation v. Türkiye], 2022թ., §§ 45-46, կրոնական հիմնադրամի սեփականության վերաբերյալ, որի նկատմամբ դիմումատուն պատշաճ սեփականության իրավունք չի ունեցել, սակայն որը նշված է եղել դրա հիմնադիր փաստաթղթում, և «Ջ. Փոլ Գեթի» տրաստը և այլք ընդդեմ Իտալիայի [The J. Paul Getty Trust and Others v. Italy], 2024թ., § 265, որը վերաբերում է այն ժամանակահատվածի տևողությանը, որի ընթացքում դիմումատուին վերապահվում էր գույքային շահ, որը բավարար հիմնավորված և ծանրակշիռ էր, որպեսզի արվեստի գործը համարվեր «գույք»։ Բացի այդ, համարվել է, որ ներպետական իրավունքը, որով պահանջվում էր**

որոշակի հանգամանքներում հողակտորի օտարում՝ փոխհատուցման իրավունքով, առաջացրել է գույքային շահ (*Զուլթուն և այլք ընդդեմ Թուրքիայի* [Kutlu and Others v. Turkey], 2016թ., § 58):

7. Դատարանը կարող է հաշվի առնել ենթադրյալ միջամտության պահին գործող ներպետական իրավունքը, եթե չկա ոչինչ՝ ենթադրելու, որ այդ իրավունքը հակասում է Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի առարկային և նպատակին («Պրեսոս Կոմպանիա Նավիերա Էս.Ա.»-ն և այլք ընդդեմ Բելգիայի [Pressos Compania Naviera S.A. and Others v. Belgium], 1995թ., § 31): Օրինակ, ապօրինի շինությունները կարող են որոշակի հանգամանքներում համարվել «գույք» (*Ըյունեթյըլդզն ընդդեմ Թուրքիայի* [ՄՊ] [Öneryıldız v. Turkey [GC]], 2004թ., § 127, *Դեպալն ընդդեմ Ֆրանսիայի* [ՄՊ] [Depalle v. France [GC]], 2010թ., § 85, տե՛ս նախորդ պարբերությունը, *Բրոսսե-Տրիբուլեն և այլք ընդդեմ Ֆրանսիայի* [ՄՊ] [Brosset-Triboulet and Others v. France [GC]], 2010թ., § 71, *Զերիման Թեքինը և այլք ընդդեմ Թուրքիայի* [Keriman Tekin and Others v. Turkey], 2016թ., §§ 42-46), հատկապես, եթե ներպետական իրավունքով ընդունվում է, որ դրանք սեփականության իրավունքի օբյեկտներ են (*Իվանովան և Չերկեզովն ընդդեմ Բուլղարիայի* [Ivanova and Cherkezov v. Bulgaria], 2016թ., § 68): Այսպիսով, Դատարանի գնահատմամբ գույքային շահի ճանաչումը ներպետական դատարանների կողմից խիստ կարևոր է (*Բրոնիովսկին ընդդեմ Լեհաստանի* [ՄՊ] [Broniowski v. Poland [GC]], 2004թ., §§ 130-131), թեև վճռորոշ չէ:

8. Այն փաստը, որ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը որոշ հանգամանքներում ճանաչվում է չեղյալ, չի խոչընդոտում, որ այն համարվի 1-ին հոդվածով պաշտպանվող «գույք» առնվազն մինչև դրա չեղյալ ճանաչվելը (*Բելանե Նագին ընդդեմ Հունգարիայի* [ՄՊ] [Bélané Nagy v. Hungary [GC]], 2016թ., § 75, *Կրստիչն ընդդեմ Սերբիայի* [Krstić v. Serbia], 2013թ., § 83, *Չակարևիչն ընդդեմ Խորվաթիայի* [Čakarević v. Croatia], 2018թ., § 52, *Մոսկալն ընդդեմ Լեհաստանի* [Moskal v. Poland], 2009թ., § 40, *Գրոբելնին ընդդեմ Լեհաստանի* [Grobelny v. Poland], 2020թ., § 58): Օրինակ, *Բեյելերն ընդդեմ Իտալիայի* [ՄՊ] [Beyeler v. Italy [GC]] գործով, 2000թ., §§ 104-105, Դատարանը գտել է, որ առկա էր Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանվող գույքային շահ, նույնիսկ եթե նկարի գնման պայմանագիրն ազգային իշխանությունների կողմից համարվել էր առոչինչ այն հիմքով, որ նկարը մի քանի տարի գտնվել էր դիմումատուի տիրապետման տակ, որ իշխանությունները նրան *de facto* համարում էին դրա

Նկատմամբ գույքային շահ ունեցող, և որ նա ստացել էր փոխհատուցում (տե՛ս նաև ստորև՝ «Սոցիալական բարեկեցության վերաբերյալ գործեր» վերտառությամբ գլուխը): Նույն կերպ Դատարանը նաև վճռել է, որ գնման պայմանագիրը կարող է Արձանագրության իմաստով համարվել «գույք», նույնիսկ եթե պայմանագիրն այնուհետև չեղարկվել է (*Թուրքանն ընդդեմ Թուրքիայի* [Kurban v. Turkey], 2020թ., §§ 64-65, «*ՅուէյԲի Պրոֆարմա*»-ն և «*ՅուէյԲի Բոնա Դիագնոսիս*»-ն ընդդեմ *Լիտվայի* [UAB Profarma and UAB Bona Diagnosis v. Lithuania], 2025թ., §§ 173-174):

9. Ոչ նյութական ակտիվների դեպքում Դատարանը հաշվի է առել մասնավորապես, թե արդյոք տվյալ իրավական կարգավիճակն առաջացրել է ֆինանսական իրավունքներ և շահեր և հետևաբար ունեցել է տնտեսական արժեք: Այսպիսով, օրինակ, մտավոր սեփականության այնպիսի տեսակներ, ինչպիսիք են ապրանքային նշանները, հեղինակային իրավունքները և արտոնագրերը (*Մելնիչուկն ընդդեմ Ուկրաինայի* (որոշում) [Melnychuk v. Ukraine (dec.)], 2005թ., «*Անհոյգեր-Բուշ Ինք.*»-ն ընդդեմ *Պորտուգալիայի [ՄՊ]* [Anheuser-Busch Inc. v. Portugal [GC]], 2007թ., §§ 72, 76 և 78, *Թոքելն ընդդեմ Թուրքիայի* [Tokel v. Turkey], 2021թ., § 56, «*ԱսԴԱԿ*»-ն ընդդեմ *Մոլդովայի Հանրապետության* [AsDAC v. the Republic of Moldova], 2020թ., § 24, *Կորոտյուկն ընդդեմ Ուկրաինայի* [Korotyuk v. Ukraine], 2023թ., § 33) կամ գույքը որոշակի ձևով օգտագործելու լիցենզիաները (ինչպես օրինակ՝ ոգելից խմիչքների վաճառքի լիցենզիաները կամ ձկնորսության իրավունքները, «*Երեք Տրակտոր*» *ՍՊԸ-ն ընդդեմ Շվեդիայի* [Tre Traktörer Aktiebolag v. Sweden], 1989թ., § 53, *Ալատուկկիլան և այլք ընդդեմ Ֆինլանդիայի* [Alatulkkila and Others v. Finland], 2005թ., § 66, «*ՕՍալիան ՄըքԶարթի Մասլ Դիվելոպմենթ*» *ՍՊԸ-ն ընդդեմ Իռլանդիայի* [O'Sullivan McCarthy Mussel Development Ltd v. Ireland], 2018թ., § 89) այն համարել է «գույք», ինչպես նաև «գույք» է համարել ընկերության անունով գրանցված համացանցային դոմենների օգտագործման բացառիկ իրավունքը («*Փեֆգեն GmbH*»-ն ընդդեմ *Գերմանիայի* (որոշում) <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-82671> [Paeffgen GmbH v. Germany (dec.)], 2007թ.):

բ. Պաշտպանված «գույքը»

10. Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը կիրառվում է միայն անձի գոյություն ունեցող «գույքի» նկատմամբ (*Մարքսն ընդդեմ Բելգիայի* [Marckx

v. Belgium], 1979թ., § 50, «Անհոյգեր-Բուշ Ինք.»-ն ընդդեմ Պորտուգալիայի [ՄՊ] [Anheuser-Busch Inc. v. Portugal [GC]], 2007թ., § 64):

11. Այսպիսով, դիմումատուն կարող է պնդել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտման մասին միայն այնքանով, որքանով վիճարկվող որոշումները սույն դրույթի իմաստով վերաբերում են իր «գույքին»: «Գույք» հասկացությունը կարող է լինել կամ «գոյություն ունեցող գույքը» կամ ակտիվները, այդ թվում՝ պահանջները, որոնց առնչությամբ դիմումատուն կարող է պնդել, որ ունի գույքային իրավունքից արդյունավետ օգտվելու առնվազն «իրավաչափ ակնկալիք» («Պրեսոս Կոմպանիա Նավիերա Էս.Ա.»-ն և այլք ընդդեմ Բելգիայի [Pressos Compania Naviera S.A. and Others v. Belgium], 1995թ., § 31, «Ջեյ.Էյ.<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-82172> Փայ (Օքսֆորդ)» ՄՊԸ-ն և «Ջեյ.Էյ. Փայ (Օքսֆորդ) Լենդ» ՄՊԸ-ն ընդդեմ Միացյալ Թագավորության [ՄՊ] [J.A. Pye (Oxford) Ltd and J.A. Pye (Oxford) Land Ltd v. the United Kingdom [GC]], 2007թ., § 61, Ֆոն Մալցանը և այլք ընդդեմ Գերմանիայի (որոշում) [Von Maltzan and Others v. Germany (dec.)], 2005թ., § 74, (գ), Կոպեցկին ընդդեմ Սլովակիայի [ՄՊ] [Kopecký v. Slovakia [GC]], 2004 թ., § 35«գ», Կատոնան և Չավարսկին ընդդեմ Սլովակիայի, [Katona and Závorský v. Slovakia], § 52):

12. Ի հակադրություն, սեփականության իրավունքի ճանաչման հույսը, որը հնարավոր չի եղել արդյունավետորեն իրականացնել, չի կարող համարվել «գույք» թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով, ինչպես և պայմանական պահանջը, որը կորցնում է իր ուժը պայմանը չկատարվելու արդյունքում (Լիխտենշտայնի արքայազն Հանս-Ադամ II-ն ընդդեմ Գերմանիայի [ՄՊ] [<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-59591>Hans-Adam II of Liechtenstein v. Germany [GC]], 2001թ., §§ 82-83, Գրացինգերը և Գրացինգերովան <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-22710>ընդդեմ Չեխիայի Հանրապետության (որոշում) [ՄՊ] <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-22710>[Gratzinger and Gratzingerova v. the Czech Republic (dec.) [GC]], 2002թ., § 69, Կոպեցկին ընդդեմ Սլովակիայի [ՄՊ] [Kopecký v. Slovakia [GC]], 2004թ., § 35«գ», Մալիհոուսն ընդդեմ Չեխիայի Հանրապետության (որոշում) [ՄՊ] [Malhous v. the Czech Republic] (dec.), [GC]], 2000թ., Ներվան և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության [Nerva and Others v. the United Kingdom], 2002թ., § 43, Սթրեչն ընդդեմ Միացյալ Թագավորության [Stretch v. the United Kingdom], 2003թ., § 32, «Չենտրո Եվրոպա 7 Էս.ար.Էլ.»-ը և Դի Ստեֆանոն ընդդեմ Իտալիայի [ՄՊ] [Centro Europa 7 S.r.l. and Di Stefano v. Italy [GC]], 2012թ., § 172)

(տե՛ս ստորև՝ օտարված գույքի վերականգնման կոնկրետ համատեքստում):

13. Չի կարելի ասել, որ առաջանում է իրավաչափ ակնկալիք, եթե առկա է վեճ ներպետական իրավունքի ճիշտ մեկնաբանման և կիրառման առնչությամբ, և դիմումատուի փաստարկները հետագայում հերքվել են ազգային դատարանների կողմից (*Կոպեցկին ընդդեմ Սլովակիայի* [ՄԴ] [*Kopecký v. Slovakia [GC]*], 2004թ., § 50, և «*Չիֆթչիլեր*» *բաժնետիրական ընկերությունը և այլք ընդդեմ Թուրքիայի* (որոշում) [*Çiftçiler Joint Stock Company and Others v. Turkey (dec.)*], 2020թ., § 82, ժամանակին օրինական ճանապարհով օտարված գույքի համատեքստում, որը զգալի ժամանակ անց այլևս չէր օգտագործվում հանրային շահի նպատակներով, «*ՅուԷԲի ԱմբերԶոր ԴիՍի*» ՄՄԴԸ-ն և «*ՅուԷԲի Արկուս Նովուս*» ՄՄԴԸ-ն ընդդեմ *Լիտվայի* [*UAB AmberCore DC and UAB Arcus Novus v. Lithuania*], 2023թ., §§ 130-131, ազգային անվտանգության նկատառումներով դիմումատու ընկերություններին տվյալների կենտրոն կառուցելու թույլտվությունը մերժելու վերաբերյալ):

14. Անձը, որը բողոքում է իր սեփականության իրավունքի խախտման վերաբերյալ, նախևառաջ պետք է ապացուցի, որ այդպիսի իրավունք գոյություն է ունեցել (*Պիշտորովան ընդդեմ Չեխիայի Հանրապետության* [*Pištorová v. the Czech Republic*], 2004թ., § 38, *Դես Ֆորու Վալդերոդեն ընդդեմ Չեխիայի* <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-92969> *Հանրապետության* <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-92969> (որոշում) [*Des Fours Walderode v. the Czech Republic (dec.)*], 2004թ., *ժիգալևն ընդդեմ Ռուսաստանի* [*Zhigalev v. Russia*], 2006թ., § 131): Ի սկզբանե, գույքային իրավունքների տրամադրումը և որոշումն ազգային իրավական համակարգի կողմից է կատարվում, իսկ դիմումատուի պարտավորությունն է պարզելու ազգային օրենսդրության շրջանակներում իրավունքի ճշգրիտ բնույթը և դրանից օգուվելու իր իրավունքը: Վճիռը, որով Սահմանադրական դատարանն օրենսդրական ակտը հայտարարել է ոչ սահմանադրական, սակայն հետաձգել է դրա կիրառումը, չի առաջացնում իրավաչափ ակնկալիք մինչև վճիռն ուժի մեջ մտնելն ընկած ժամանակահատվածի համար (*Դոբրովոլսկին և այլք ընդդեմ Լեհաստանի* (որոշում) [*Dobrowolski and Others v. Poland (dec.)*], 2018թ., § 28):

15. Եթե առկա է վեճ այն մասին, թե արդյոք դիմումատուն ունի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանության ենթակա գույքային շահ,

ապա Դատարանից պահանջվում է որոշել դիմումատուի իրավական կարգավիճակը (*«Ջեյ.Էյ. Փայ (Օքսֆորդ) ՄՊԸ-ն և «Ջեյ.Էյ. Փայ (Օքսֆորդ) Լենդ» ՄՊԸ-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* [ՄՊ] [*J.A. Pye (Oxford) Ltd and J.A. Pye (Oxford) Land Ltd v. the United Kingdom [GC]*], 2007թ., § 61): Դատարանը չի գտել, որ առկա է գույքային շահ, որը բավարար կլիներ «գույք» համարվելու համար, այն գործով, որով դիմումատուի հոր գույքի վաճառքը տեղի է ունեցել նախքան ազգակցական կապի հաստատումը (*Վիսովսկան ընդդեմ Լեհաստանի* (որոշում) [*Wysowska v. Poland (dec.)*], 2018թ., §§ 51-52):

16. Մյուս կողմից՝ այն դեպքում, երբ ներպետական դատարանները վավերացրել են դիմումատուի ամուսնու կտակը, դիմումատուն հետագայում ընդունել է իր ամուսնու գույքը նոտարական ակտով, այնուհետև իրեն փոխանցված գույքը գրանցել է Հողային կադաստրում, Դատարանը համարել է, որ դիմումատուի՝ իր ամուսնուց ժառանգություն ստանալու գույքային շահն ուներ այնպիսի բնույթ և բավարար չափով էր ճանաչված, որ համարվեր «գույք» (*Մոլլա Սալին ընդդեմ Հունաստանի* [ՄՊ] [*Molla Sali v. Greece [GC]*], 2018թ., §§ 128-132):

17. Նույն կերպ, դիմումատուի կնոջը պատկանող՝ օրինական ճանապարհով ձեռք բերված ոսկյա զարդերի բռնագրավման և երկրի տարածքով տարանցիկ փոխադրման ժամանակ մաքսային մարմիններում ոսկյա իրերը չհայտարարագրելու պատճառով տուգանքի նշանակման առնչությամբ Դատարանը վճռել է, որ չի կարող կասկածի տակ դնել Սահմանադրական դատարանի եզրահանգումն այն մասին, որ ապարանջանները եղել են դիմումատուի «գույքը»: Այդպիսով, այն ընդունել է դիմումատուի՝ տուժողի կարգավիճակը (*Յայլալին ընդդեմ Սերբիայի* [*Yaylali v. Serbia*], 2024թ., §§ 31-33):

i. Իրավաչափ ակնկալիքները

18. Որոշ իրավիճակներում ակտիվի ձեռքբերման «իրավաչափ ակնկալիքը» նույնպես կարող է լինել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված պաշտպանության ներքո (*«Պրեսոս Կոմպանիա Նավիերա Էս.Ա.»-ն և այլք ընդդեմ Բելգիայի* [*Pressos Compania Naviera S.A. and Others v. Belgium*], 1995թ., § 31, և հակառակը՝ *Գրացինգերը և Գրացինգերովան ընդդեմ Չեխիայի Հանրապետության* (որոշում) [ՄՊ] [*Gratzinger and Gratzingerova v. the Czech Republic (dec.) [GC]*], 2002թ., § 73):

19. Որպեսզի «ակնկալիքը» լինի «իրավաչափ», այն պետք է ավելի կոնկրետ

բնույթ ունենա, քան պարզապես հույսը, և հիմնված լինի իրավական դրույթի կամ այնպիսի իրավական ակտի վրա, ինչպիսին է դատական որոշումը, որը վերաբերում է տվյալ գույքային շահին (*Կոպեցկին ընդդեմ Սլովակիայի* [ՄԴ] [*Kopecký v. Slovakia [GC]*], 2004թ., §§ 49-50), «*Չենտրո Եվրոպա 7 Էս.ար.Էլ.-ը և Դի Ստեֆանոն ընդդեմ Իտալիայի* [ՄԴ] [*Centro Europa 7 S.r.l. and Di Stefano v. Italy [GC]*], 2012թ., § 173, *Սաղինաձեն և այլք ընդդեմ Վրաստանի* [*Saghinadze and Others v. Georgia*], 2010թ., § 103, *Չենին ընդդեմ Իտալիայի* [*Ceni v. Italy*], 2014թ., § 39, *Բելանե Նագին ընդդեմ Հունգարիայի* [ՄԴ] [*Bélané Nagy v. Hungary [GC]*], 2016թ., § 75, *Վալվերդե Դիգոն ընդդեմ Իսպանիայի* [*Valverde Digon v. Spain*], 2023թ., § 49):

20. Դատարանը Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համատեքստում «իրավաչափ ակնկալիք» հասկացությունն առաջին անգամ մանրամասն մեկնաբանել է «*Փայն Վեյլի Դիվելոպմենթս» ՍՊԸ-ն և այլք ընդդեմ Իռլանդիայի* [*Pine Valley Developments Ltd and Others v. Ireland*] գործով, 1991թ., § 51: Այդ գործով Դատարանը գտել է, որ «իրավաչափ ակնկալիք» է առաջացել, երբ տրվել է շինարարության նախնական թույլտվություն, որի վրա հիմնվելով՝ դիմումատու ընկերությունները գնել են հող՝ այն կառուցապատելու նպատակով: Շինարարության թույլտվությունը, որը չէր կարող չեղարկվել պլանավորման համար պատասխանատու մարմնի կողմից, «դիմումատու ընկերությունների սեփականության բաղկացուցիչ մասն» էր (*Նույն տեղում*, § 51, *Սթրեչն ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Stretch v. the United Kingdom*], 2003թ., § 35, երկարաժամկետ վարձակալության երկարաձգման տարբերակից օգտվելու վերաբերյալ, և *Չենին ընդդեմ Իտալիայի* [*Ceni v. Italy*], 2014թ., § 43, բնակարանի գնման ստորագրված նախնական պայմանագրի, լրիվ վճարված արժեքի և դիմումատուի կողմից բնակարանի տիրապետման վերաբերյալ): Հետևաբար այս կատեգորիայի գործերում «իրավաչափ ակնկալիքը» հիմնվում է կայուն իրավական հիմքով ողջամտորեն հիմնավորված իրավական ակտի վրա, որը վերաբերում է գույքային շահերին (*Կոպեցկին ընդդեմ Սլովակիայի* [ՄԴ] [*Kopecký v. Slovakia [GC]*], 2004թ., § 47):

21. «Իրավաչափ ակնկալիք» հասկացության մեկ այլ հայեցակետ ներկայացված է «*Պրեսոս Կոմպանիա Նավիերա Էս.Ա.-ն և այլք ընդդեմ Բելգիայի* [*Pressos Compania Naviera S.A. and Others v. Belgium*] գործում, 1995թ., § 31: Վճռաբեկ դատարանի մի շարք որոշումների հիման վրա Դատարանը վճռել է,

որ դիմումատուները կարող էին պնդել, որ ունեցել են «իրավաչափ ակնկալիք», որ ծովային վթարներից բխող իրենց պահանջները կքննվեն ընդհանուր դելիկտային իրավունքով, համաձայն որի՝ այդ պահանջներն առաջանում էին վնասի առաջացման պահից: Այստեղ նշված «իրավաչափ ակնկալիքն» ինքնին գույքային շահի բաղկացուցիչ մաս չէր, այն վերաբերում էր այն եղանակին, որով որպես «ակտիվ» որակվող պահանջը դիտարկվելու էր ներպետական իրավունքի համաձայն (*Դրանն ընդդեմ Ֆրանսիայի* [ՄԴ] [*Draon v. France* [GC]], 2005թ., § 70, *Մորիսն ընդդեմ Ֆրանսիայի* [ՄԴ] [*Maurice v. France* [GC]], 2005թ., §§ 67-69, տե՛ս նաև *Ն.Մ.-ն և այլք ընդդեմ Ֆրանսիայի* [*N.M. and Others v. France*], 2022թ., §§ 49-50):

22. Նույն կերպ, *Ուզանը և այլք ընդդեմ Թուրքիայի* [*Uzan and Others v. Turkey*] գործով, 2019թ., § 193, Դատարանը գտել է, որ անչափահաս դիմումատուներն իրավաչափ ակնկալիքներ ունեին, որոնք համապատասխանում էին «գույք» հասկացությանը, ներպետական դատարանը ճանաչել էր ժառանգության և նվիրատվության միջոցով որոշակի իրավունքներ ձեռք բերելու նրանց ունակությունը: *ժանն ընդդեմ Ֆրանսիայի* [*Jarre v. France*] գործը, 2024թ., §§ 48-49, նույնպես վերաբերում էր ժառանգության իրավունքներին և մասնավորապես Սահմանադրական խորհրդի այն որոշման անմիջական հետևանքներին, որով ուժը կորցրած էր ճանաչվել այն օրենսդրական դրույթը, համաձայն որի՝ Ֆրանսիայում ժառանգության իրավունք ունեցող, սակայն օտարերկրյա օրենսդրությամբ կարգավորվող ժառանգության իրավունքից զրկված անձանց թույլ էր տրվում որպես փոխհատուցում պահանջել մասնաբաժին Ֆրանսիայում գտնվող անշարժ գույքից: Դատարանը գտել է, որ դիմումատուները կատարել են չորս օրենսդրական պայմանները, երբ մահացել է նրանց հայրը, ինչպես նաև երբ նրանք ներկայացրել են իրենց հայցը, ուստի նրանք ունեին իրավաչափ ակնկալիք, որը համարվում էր «գույք»:

23. Ավելին, թեև *Ալիևան և այլք ընդդեմ Ադրբեջանի* [*Aliyeva and Others v. Azerbaijan*] գործով, 2021թ., §§ 109-111, Գերագույն դատարանը շեղվել է պետության կարիքների համար օտարման համանման գործերում արված իր նախկին եզրահանգումներից, Դատարանը վճռել է, որ դիմումատուների այն պնդումը, որ նրանք օրենքով սահմանված կարգով լրացուցիչ փոխհատուցում ստանալու իրավունք ունեին, բավարար չափով հաստատված էր Գերագույն դատարանի նախադեպային իրավունքը կազմող գործերի հստակ

նույնականացվող շարքով: Այսպիսով, չնայած ներպետական դատարանների մոտեցումների միջև առկա հակասություններին՝ դիմումատուների պնդումը «իրավաչափ ակնկալիք» էր կազմում, որը բավարար չափով հաստատված էր ներպետական իրավունքում՝ «գույք» համարվելու համար (հակառակը՝ [Նույն տեղում](#), §§ 118-120):

24. Ի հակադրություն դրա՝ չի կարելի ասել, որ առաջանում է «իրավաչափ ակնկալիք», եթե առկա է վեճ ներպետական իրավունքի ճիշտ մեկնաբանման և կիրառման վերաբերյալ, և դիմումատուի փաստարկները հետագայում մերժվում են ազգային դատարանների կողմից ([«Անհոյգեր-Բուշ Ինք.»-ն ընդդեմ Պորտուգալիայի](#) [ՄՊ] [*Anheuser-Busch Inc. v. Portugal* [GC]], 2007թ., § 65, [«Չենտրո Եվրոպա 7 Էս.ար.Էլ»-ը և Դի Ստեֆանոն ընդդեմ Իտալիայի](#) [ՄՊ] [*Centro Europa 7 S.r.l. and Di Stefano v. Italy* [GC]], 2012թ., § 173, [Բելանե Նագին ընդդեմ Հունգարիայի](#) [ՄՊ] [*Bélané Nagy v. Hungary* [GC]], 2016թ., § 75, [Կարաչալիոսն ընդդեմ Հունաստանի](#) (որոշում) [*Karachalios v. Greece (dec.)*], 2017թ., § 46, [Ռադոմիլյան և այլք ընդդեմ Խորվաթիայի](#) [ՄՊ] [*Radomilja and Others v. Croatia* [GC]], 2018թ., § 149): Համապատասխան դրույթի հետագա օրենսդրական փոփոխությունները նույնպես ինքնին չեն վկայում այն մասին, որ Նախորդ իրավակարգավորումը թերի է եղել ([Գալակվոսչիուսն ընդդեմ Լիտվայի](#) (որոշում) [*Galakvoščius v. Lithuania (dec.)*], 2020թ., §§ 42 և 59-60): Այդ գործը վերաբերում էր տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին թեկնածու առաջադրվելու համար դիմումատուի կողմից վճարված գումարը վերադարձնելուց իշխանությունների հրաժարվելուն:

25. Իրավաչափ ակնկալիք չի առաջանում այն իրավիճակում, երբ դիմումատուն հիմնվում է գուտ այն փաստի վրա, որ պատասխանող կառավարության անդամները քաղաքական հայտարարություններ են արել հոգուտ դիմումատուի փոխհատուցման պահանջների ([Բատան ընդդեմ Չեխիայի Հանրապետության](#) (որոշում) [*Bata v. Czech Republic (dec.)*], 2008թ., § 77), կամ օրենքում առկա ծրագրային հայտարարության վրա, որը հղում է կատարում ապագա օրենքին, որն ի վերջո չի ընդունվել ([Չամոյսկի-Բրիսսոնն ընդդեմ Լեհաստանի](#) (որոշում) [*Zamoyski-Brisson v. Poland (dec.)*], 2017թ., § 78), կամ ֆինանսական աջակցության տրամադրման մասին դիմումատուների պահանջի առնչությամբ, քանի որ համապատասխան ազգային օրենսդրությունը ֆինանսական աջակցություն ստանալու «իրավունքը» հստակ պայմանավորել է

արտակարգ իրավիճակների համար նախատեսված ֆոնդերի առկայությամբ՝ չնախատեսելով կանոններ՝ տրամադրման ենթակա գումարների և արտակարգ իրավիճակների համար նախատեսված ֆոնդերի սահմանափակ ֆինանսական ռեսուրսների բաշխման վերաբերյալ (*Տրայնա Բերտոն և Ալֆոնսետտին ընդդեմ Իտալիայի* (որոշում) [*Traina Berto and Alfonsetti v. Italy (dec.)*], 2022թ., §§ 45-46): Նույն կերպ, իրավաչափ ակնկալիք չի առաջանում պետական աջակցության առնչությամբ, որն ապօրինի եղանակով բաշխվում է մասնավոր անձանց միջև՝ շինարարական ընկերության միջոցով («Բի.Սի.Ար. Բանկա Պենտրու Լոկինտե Էս.Ա.»-ն ընդդեմ Ռումինիայի (որոշում) [*Banca pentru locuinte S.A. v. Romania (dec.)*], 2024թ., §§ 127-139): Վերջապես, դիմումատու ընկերության կողմից նախկինում մատակարարներին վճարված ԱԱՀ-ի նվազեցման մասով իրավաչափ ակնկալիք առկա չէ, եթե դիմումատու ընկերությունը տեղյակ է եղել մատակարարների կողմից իրենց ԱԱՀ-ի պարտավորությունների չկատարման մասին և ունեցել է մատակարարներին դրանց կատարումը պարտադրելու բոլոր միջոցները՝ անկախ նրանից, թե դիմումատու ընկերությունն ամբողջությամբ կատարել է ԱԱՀ-ի մասով իր սեփական պարտավորությունները, թե՛ ոչ («*Իմորեքս Մակեդոնիա*» ՍՊԸ Սկոպյե»-ն ընդդեմ Հյուսիսային Մակեդոնիայի (որոշում) [*Immoreks Makedonija Doo Skopje v. North Macedonia (dec.)*], 2024թ., §§ 32-35 և 41):

26. Գոյություն ունեցող «գուլքին» առնչվող հարցերից բացի այլ պահանջների վերաբերյալ գանգատներում այն պահանջը, որ գործի հանգամանքները, որպես ամբողջություն դիտարկվելով, դիմումատուին տալիս են Էական շահի իրավունք, Դատարանի նախադեպային իրավունքում ուսումնասիրվել է տարբեր տեսանկյուններից (*Բելանե Նագին ընդդեմ Հունգարիայի* [ՄԴ] [*Bélané Nagy v. Hungary [GC]*], 2016թ., § 76): Որպես օրինակ, մի շարք գործերում Դատարանը համապատասխանաբար քննել է, թե արդյոք դիմումատուներն ունեցել են «պահանջ, որը բավարար չափով հաստատված է եղել կատարման ենթակա լինելու համար» (*Գրացինգերը և Գրացինգերովան ընդդեմ Չեխիայի Հանրապետության* (որոշում) [ՄԴ] [*Gratzinger and Gratzingerova v. the Czech Republic (dec.) [GC]*] 2002թ., § 74), արդյոք նրանք ապացուցել են «սոցիալական ապահովության նպաստի նկատմամբ ներպետական օրենսդրությամբ հաստատված իրենց իրավունքը» (*Ստեկը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության* (որոշում) [ՄԴ] [*Stec and others v. the United Kingdom (dec.) [GC]*],

2005թ., § 51), կամ արդյոք տվյալ անձինք բավարարել են «որևէ կոնկրետ տեսակի նպաստ տրամադրելու համար ազգային օրենսդրությամբ սահմանված իրավական պայմանները» (*Ռիչարդսոնն ընդդեմ Միացյալ Թագավորության (որոշում)* [*Richardson v. the United Kingdom (dec.)*], 2012թ., § 17):

27. Դատարանի նախադեպային իրավունքը «իրական վեճի» կամ «փաստարկելի պնդման» առկայությունը չի նախատեսում որպես չափորոշիչ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանվող «իրավաչափ ակնկալիքի» առկայությունը որոշելու համար՝ ի տարբերություն գործով վարույթի նկատմամբ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի՝ դրա քաղաքացիաիրավական հայեցակետով կիրառելիությունը որոշելու իրավիճակի (*Կոպեցկին ընդդեմ Սլովակիայի* [ՄԴ] [*Kopecký v. Slovakia [GC]*], 2004թ., §§ 50 և 52, *Դրաոնն ընդդեմ Ֆրանսիայի* [ՄԴ] [*Draon v. France [GC]*], 2005թ., § 68): Հետևաբար առկա չէ անհրաժեշտ փոխկապակցվածություն թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով «գույք» հասկացությանը դասվող պահանջների առկայության և այն վարույթի նկատմամբ 6-րդ հոդվածի 1-ին կետի կիրառելիության միջև, որի վերաբերյալ բողոքում են: Այն փաստը, որ դիմումատուները չեն ունեցել իրավաչափ ակնկալիք, որ իրենց սեփականությունը վերադարձվի իրենց ներպետական իրավունքի նյութաիրավական դրույթների շրջանակներում, բավարար էր գործի հանգամանքների նկատմամբ Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի կիրառությունը բացառելու համար: Միևնույն ժամանակ, դա բավարար չէր բացառելու համար այն եզրակացությունը, որ գույքային իրավունքների առկայության վերաբերյալ իրական և լուրջ վեճ առաջանալուն պես 6-րդ հոդվածի 1-ին կետի երաշխիքները կիրառելի են դառնում (*Կոպեցկին ընդդեմ Սլովակիայի* [ՄԴ] [*Kopecký v. Slovakia [GC]*], 2004թ., § 52, *Յ.Ս.-ն և Ա.Ս.-ն ընդդեմ Լեհաստանի* [*J.S. and A.S. v. Poland*], 2005թ., § 51):

28. Ամփոփելով նշենք, որ չնայած գույքային շահ առաջացնող ներպետական իրավական հիմքի պահանջի վերաբերյալ նախադեպային իրավունքում օգտագործվող արտահայտությունների բազմազանությանը՝ դրանց ընդհանուր իմաստը կարելի է ամփոփ ներկայացնել հետևյալ կերպ. որպեսզի «գույքի» նկատմամբ ճանաչվի «իրավաչափ ակնկալիքը», դիմումատուն պետք է ունենա պահանջելի իրավունք, որը, կիրառելով *Կոպեցկին ընդդեմ Սլովակիայի* [ՄԴ] [*Kopecký v. Slovakia [GC]*], 2004թ., գործի 52-րդ պարբերության մեջ ձևակերպված սկզբունքը (տե՛ս հաջորդ՝ «Պահանջները և վճռով ճանաչված պարտքերը»

վերտառությամբ գլուխը), չի կարող բավարար չլինել ազգային իրավունքին համապատասխան բավարար չափով հաստատված Էական գույքային շահ լինելու համար (*Բելանե Նագին ընդդեմ Հունգարիայի* [ՄԴ] [*Bélané Nagy v. Hungary [GC]*], 2016թ., § 79):

գ. «Գույքի» տարբեր տեսակները և այլ գույքային շահեր

ի. Պահանջները և վճռով ճանաչված պարտքերը

29. Որպեսզի հնարավոր լինի պահանջը դիտարկել որպես թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում գտնվող «ակտիվ», պահանջ ներկայացնողը պետք է ապացուցի, որ ազգային իրավունքով սահմանված բավարար հիմք ունի, օրինակ, երբ առկա է դա հաստատող՝ ներպետական դատարանների հաստատված նախադեպային իրավունք (*Կոպեցկին ընդդեմ Սլովակիայի* [ՄԴ] [*Kopecký v. Slovakia [GC]*], 2004թ., § 52, *Պլեխանովն ընդդեմ Լեհաստանի* [*Plechanow v. Poland*], 2009թ., § 83, *Վիլհո Էսկելինենը և այլք ընդդեմ Ֆինլանդիայի* [ՄԴ] [*Vilho Eskelinen and Others v. Finland [GC]*], 2007թ., § 94, «Անհոյգեր-Բուշ Ինք.»-ն ընդդեմ Պորտուգալիայի [ՄԴ] [*Anheuser-Busch Inc. v. Portugal [GC]*], 2007թ., § 65, *Հաուպտն ընդդեմ Ավստրիայի (որոշում)* [*Haupt v. Austria (dec.)*], 2017թ., § 47, *Ռոդամիլյան և այլք ընդդեմ Խորվաթիայի* [ՄԴ] [*Radomilja and Others v. Croatia [GC]*], 2018թ., § 142, *Գրբաչն ընդդեմ Խորվաթիայի* [*Grbac v. Croatia*], 2021թ., § 86): Դա արվելու դեպքում կարող է գործել «իրավաչափ ակնկալիք» հասկացությունը (*Դրաոնն ընդդեմ Ֆրանսիայի* [ՄԴ] [*Draon v. France [GC]*], 2005թ., § 65):

30. Ինչ վերաբերում է պահանջներին, ապա «իրավաչափ ակնկալիք» հասկացությունը վերաբերում է նաև այն եղանակին, որով «ակտիվ» համարվող պահանջը կդիտարկվի ներպետական իրավունքի շրջանակներում, և մասնավորապես այն փաստի վրա հիմնվելուն, որ ազգային դատարանների հաստատված նախադեպային իրավունքը կշարունակվի կիրառվել նույն կերպ (*Կոպեցկին ընդդեմ Սլովակիայի* [ՄԴ] [*Kopecký v. Slovakia [GC]*], 2004թ., § 48):

31. Ի հակադրություն, Դատարանը բացառել է «իրավաչափ ակնկալիք» հասկացության կիրառելիությունն այն հաստատված պահանջի նկատմամբ, որը չէր կարող բավարարվել կանխատեսելի օրենսդրական միջամտության պատճառով ([«<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-58109>Ազգային և շրջանային փոխադարձ հիփոթեքային վարկային ընկերությունը](http://hudoc.echr.coe.int/eng?i=001-58109)», «Լիդսի կապիտալ

շինարարական ընկերությունը» և «Յորքշիրի փոխադարձ հիփոթեքային վարկային ընկերությունը» ընդդեմ Միացյալ Թագավորության <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-58109> [National & Provincial Building Society, Leeds Permanent Building Society and Yorkshire Building Society v. the United Kingdom], 1997թ., § 69):

32. Պայմանական պահանջը, որն ուժը կորցնում է պայմանի չկատարման արդյունքում, թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի նպատակներով գույք չի համարվում (*Կոպեցկին ընդդեմ Սլովակիայի* [ՄԴ] [Kopecký v. Slovakia [GC]], 2004թ., § 35, *Լիխտենշտայնի արքայազն Հանս-Ադամ II-ն ընդդեմ Գերմանիայի* [ՄԴ] [Hans-Adam II of Liechtenstein v. Germany [GC]], 2001թ., § 83, *Գրացինգերը և Գրացինգերովան* <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-22710> *ընդդեմ Չեխիայի Հանրապետության* <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-22710> (որոշում) [ՄԴ] [Gratzinger and Gratzingerova v. the Czech Republic (dec.) [GC]], 2002թ., § 69):

33. Վճռով ճանաչված պարտքը, որը բավարար չափով հաստատվել է հարկադիր կատարման ենթակա լինելու համար, համարվում է «գույք» (*Հունական նավթամշակման «Ստրեն» գործարանները և Ստրատիս Անդրեադիսն ընդդեմ Հունաստանի* [Stran Greek Refineries and Stratis Andreadis v. Greece], 1994թ., § 59, *Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի* [Burdov v. Russia], 2002թ., § 40, *Գերասիմովը և այլք ընդդեմ Ռուսաստանի* [Gerasimov and Others v. Russia], 2014թ., § 179, *Յուրի Նիկոլաևիչ Իվանովն ընդդեմ Ուկրաինայի* [Yuriy Nikolayevich Ivanov v. Ukraine], 2009թ., § 45, *Ստրելցովի և «Նովոչերկասկի ռազմական կենսաթոշակառուների» այլ գործերն ընդդեմ Ռուսաստանի* [Streltsov and other “Novocherkassk military pensioners” cases v. Russia], 2010թ., § 58): Ի հակադրություն, վճռով ճանաչված պարտքը, որը վերջնական չէ և այդպիսով անհապաղ վճարման ենթակա չէ, չի կարող համարվել «բավարար չափով հաստատված՝ հարկադիր կատարման ենթակա լինելու համար» և համապատասխանաբար չի համարվում «գույք»:

34. Կարող է առաջանալ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի՝ Կոնվենցիայի 14-րդ հոդվածի հետ համակցությամբ խախտում այն դեպքում, երբ պայմանը խտրական է (*Չայբեկն ընդդեմ Հունաստանի* [Zeïbek v. Greece], 2009թ., §§ 45-46): Ժառանգության և իրավահաջորդության այն պահանջները, որոնք վերաբերում են վերաբերմունքի տարբերություններին, համարվել են «գույք» (*Մարքսն ընդդեմ Բելգիայի* [Marckx v. Belgium], 1979թ., §§ 52-55, *Ֆաբրին ընդդեմ*

Ֆրանսիայի [ՄԴ] [*Fabris v. France [GC]*], 2013թ., §§ 52-55):

ii. Ընկերության բաժնեմասերը, ֆինանսական այլ գործիքներ և ձեռնարկատիրական այլ ակտիվներ

35. Ընդհանուր առմամբ ընկերության՝ տնտեսական արժեք ունեցող բաժնեմասը դրա հետ կապված տարբեր իրավունքների հետ միասին, որոնք բաժնետիրոջն ընկերության վրա ազդեցություն ունենալու հնարավորություն են տալիս, կարող է համարվել «գույք» (*Օլչակն ընդդեմ Լեհաստանի (որոշում)* [*Olczak v. Poland (dec.)*], 2002թ., § 60, «*Սովտրանսավտո Հոլդինգ*»-ն ընդդեմ *Ուկրաինայի* [*Sovtransavto Holding v. Ukraine*], 2002թ., § 91, «*Շեստի Մայ Էնջինիդրինգ*» ՍՊԸ-ն և այլք ընդդեմ *Բուլղարիայի* [*Shesti Mai Engineering OOD and Others v. Bulgaria*], 2011թ., § 77, *Սեբելևան և այլք ընդդեմ Ռուսաստանի* [*Sebeleva and Others v. Russia*], 2022թ., § 39): Սա նաև ներառում է ընկերության ակտիվների նկատմամբ անուղղակի պահանջը, այդ թվում՝ ընկերության լուծարման դեպքում այդ ակտիվների բաժնեմասի նկատմամբ իրավունքը, ինչպես նաև այլ համապատասխան իրավունքներ, մասնավորապես՝ քվեարկության իրավունքները և ընկերության վարքագծի և քաղաքականության վրա ազդելու իրավունքը («*Էս. և Թի.*» ընկերությունն ընդդեմ *Շվեդիայի* [*Company S. and T. v. Sweden*], Հանձնաժողովի որոշում, 1986թ., *Ռեյսներն ընդդեմ Թուրքիայի* [*Reisner v. Turkey*], 2015թ., § 45, *Մարինին ընդդեմ Ալբանիայի* [*Marini v. Albania*], 2007թ., § 165): *Պինտարը և այլք ընդդեմ Սլովենիայի* [*Pintar and Others v. Slovenia*] գործով, 2021թ., § 91, Դատարանը գտել է, որ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը կիրառելի էր դիմումատուների բաժնեմասերի չեղարկման նկատմամբ, նույնիսկ եթե ենթադրենք, որ այդ բաժնեմասերի կասկածելի տնտեսական արժեքի վերաբերյալ Կառավարության առարկությունը հիմնավոր էր:

36. Այնուամենայնիվ, որպես ընդհանուր սկզբունք, բաժնետերերը չեն կարող դիտարկվել որպես իրենց ընկերությունների վրա ազդող գործողություններից և միջոցառումներից տուժողներ («*Ագրոտեքսիմ*»-ը և այլք ընդդեմ *Հունաստանի* [*Agrotexim and Others v. Greece*], 1995թ., §§ 65-66, *Օլչակն ընդդեմ Լեհաստանի (որոշում)* [*Olczak v. Poland (dec.)*], 2002թ., § 57), *Լեկիչն ընդդեմ Սլովենիայի* [ՄԴ] [*Lekić v. Slovenia [GC]*], 2018թ., § 111, *Ալբերտը և այլք ընդդեմ Հունգարիայի* [ՄԴ] [*Albert and Others v. Hungary [GC]*], 2020թ., § 124, *Պապախելան և «ԱՄԱԶՈՆ Էս. Ա.»-ն ընդդեմ Հունաստանի* [*Papachela and AMAZON S.A. v. Greece*], 2020թ., § 37)՝

բացառությամբ բացառիկ իրավիճակների: Այնուամենայնիվ, [Ալբերտը և այլք ընդդեմ Հունգարիայի](#) <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-203850> [ՄԴ] [*Albert and Others v. Hungary* [GC]], գործով, 2020թ., § 134, Դատարանը հաստատել է, որ բաժնետերերի իրավունքների վրա ազդեցություն ունեցող գործողությունները տարբերվում են ընկերության վրա ազդող միջոցներից կամ վարույթներից նրանով, որ այդ գործողությունների ինչպես բնույթը, այնպես էլ դրանց ենթադրյալ հետևանքներն ազդում են բաժնետերերի օրինական իրավունքների վրա ինչպես ուղղակիորեն, այնպես էլ անձնապես, և ավելին են, քան զուտ ընկերությունում նրանց շահերի պարզ խախտումը՝ խաթարելով ընկերության կառավարման կառուցվածքում նրանց դիրքը (*Օլչակն ընդդեմ Լեհաստանի (որոշում)* [*Olczak v. Poland(dec.)*], 2002թ., § 58, [Ալբերտը և այլք ընդդեմ Հունգարիայի](#) [ՄԴ] [*Albert and Others v. Hungary* [GC]], 2020թ., §§ 131-133, նշելով մի շարք գործեր, որոնցով Դատարանն անուղղակիորեն ընդունել է դիմումատու բաժնետիրոջ՝ տուժողի կարգավիճակը. տե՛ս նաև [«Փրոյեքթ-Թրեյդ» ՍՊԸ-ն ընդդեմ Խորվաթիայի](#) [*Project-Trade d.o.o. v. Croatia*], 2020թ., §§ 44-45):

37. Դատարանը նշել է երկու իրավիճակ, որոնք բացառություն են ընդհանուր սկզբունքից, որով բաժնետերերի համար կբացառվեր տուժողի կարգավիճակը, եթե համարվեր, որ միջոցն ազդում է ընկերության վրա ([Ալբերտը և այլք ընդդեմ Հունգարիայի](#) [ՄԴ] [*Albert and Others v. Hungary* [GC]], 2020թ., § 124, [Պապախելան և «ԱՄԱԶՈՆ Էս. Ա.»-ն ընդդեմ Հունաստանի](#) [*Papachela and AMAZON S.A. v. Greece*], 2020թ., § 37): Այս իրավիճակներում Դատարանը կարող է որոշել «ներսից» պատռել կորպորատիվ շղարշը՝ Արդարադատության միջազգային դատարանի (ԱՄԴ) ձևակերպումներով ([Լեկիչն ընդդեմ Սլովենիայի](#) [ՄԴ] <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-188268> [*Lekič v. Slovenia* [GC]], 2018թ., § 111, [Ալբերտը և այլք ընդդեմ Հունգարիայի](#) [ՄԴ] [*Albert and Others v. Hungary* [GC]], 2020թ., § 138): Այլ կերպ ասած, այն կարող է որոշել, որ բաժնետերը կարող է Կոնվենցիայի 34-րդ հոդվածի համաձայն պնդել, որ ընկերության գույքի դեմ ուղղված գործողությունների արդյունքում ինքը տուժող է:

38. Առաջին բացառությունն այն իրավիճակն է, երբ ընկերությունը և դրա բաժնետերերն այնքան սերտորեն են նույնացվում միմյանց հետ, որ նրանց տարբերակելն արհեստական է համարվում ([«ԿԻՊՍ» ՍՊԸ-ն և Դրեկալովիչն ընդդեմ Զեռնոգորիայի](#) [*KIPS DOO and Drekalović v. Montenegro*], 2018թ., § 87, [«Ֆայն» ՍՊԸ-ն և Կանոսկին և այլք ընդդեմ Հյուսիսային Մակեդոնիայի](#) (որոշում)

[*Fine Doo and Canoski and Others v. North Macedonia (dec.)*], 2022թ., § 30): Դրան կարելի է հանդիպել փոքր կամ ընտանեկան կամ ընտանիքի կողմից ղեկավարվող ընկերությունների կամ կոոպերատիվների բաժնետերերի կողմից ներկայացված գործերի դեպքում, մասնավորապես, երբ ընկերության միակ սեփականատերը բողոքում է իր ընկերության նկատմամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ (*«Գլաս Նադեժդա» ՄՄԴԸ-ն և Անատոլի Էլենկովն ընդդեմ Բուլղարիայի* [*Glas Nadezhda EOOD and Anatoliy Elenkov v. Bulgaria*], 2007թ., § 40, *Պապախելան և «ԱՄԱԶՈՆ Էս. Ա.»-ն ընդդեմ Հունաստանի* [*Papachela and AMAZON S.A. v. Greece*], 2020թ., § 37), կամ երբ փոքր կոոպերատիվի բոլոր բաժնետերերը դիմել են Դատարան որպես դիմումատուներ, կամ երբ ընտանեկան ընկերության մեկ բաժնետեր Կոնվենցիայի համաձայն գանգատ է ներկայացրել, իսկ մյուս բաժնետերերն առնվազն չեն առարկել դրան: Այս կապակցությամբ Դատարանն *Անկարկրոնան ընդդեմ Շվեդիայի* (որոշում) [*Ankarcrona v. Sweden (dec.)*], 2000թ., գործով ընդգծել է, որ տուժողի կարգավիճակն ընդունելու պատճառն այդպիսի գործերում այն էր, որ Կոնվենցիայով սահմանված իրավունքների խախտման իրական լինելու կամ այդպիսի խախտմանն արձագանքելու ամենահամապատասխան եղանակի վերաբերյալ բաժնետերերի միջև կամ բաժնետերերի և տնօրենների խորհրդի միջև կարծիքների տարբերության վտանգ առկա չէր (*Ալբերտը և այլք ընդդեմ Հունգարիայի* [ՄԴ] [*Albert and Others v. Hungary*] [GC], 2020թ., §§ 136-137):

39. Իրավիճակի երկրորդ տեսակը, որի դեպքում Դատարանը կարող է անտեսել ընկերության կոնկրետ իրավասուբյեկտությունը և թույլատրել դրա բաժնետերերին բողոքներ ներկայացնել ընկերության վրա ազդող միջոցի դեմ, վերաբերում է բացառիկ հանգամանքների առկայությանը, մասնավորապես, երբ հստակ սահմանված է, որ ընկերությունը չի կարող դիմել Կոնվենցիայի կառույցներ՝ իր հիմնադրման մասին փաստաթղթերով սահմանված մարմինների կամ ընկերության լուծարման դեպքում՝ լուծարողների միջոցով (*«Ագրոտեքսիմ»-ը և այլք ընդդեմ Հունաստանի* [*Agrotexim and Others v. Greece*], 1995թ., § 66, *Լեկիչն ընդդեմ Սլովակիայի* [ՄԴ] [*Lekič v. Slovenia [GC]*], 2018թ., § 111, *«ՍիԴիԱյ Հոլդինգ» բաժնետիրական ընկերությունը և այլք ընդդեմ Սլովակիայի* (որոշում) [*CDI Holding Aktiengesellschaft and Others v. Slovakia (dec.)*], 2001թ., § 4, *«Մելտեքս» ՄԴԸ-ն և Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի* [*Meltex Ltd and Movsesyan v. Armenia*], 2008թ., § 66, *Վեսելան և Լոյկան ընդդեմ Սլովակիայի* (որոշում) [*Veselá and Loyka*

v. Slovakia (dec.)], 2005թ., *Գ.ժ.-ն ընդդեմ Լյուքսեմբուրգի* [*G.J. v. Luxembourg*], 2000թ., § 24, *Ֆելդմանի և «Սլովյանսկի բանկ»-ի* [*Feldman and Slovyanskyy Bank*] գործը, 2017թ., §§ 28-29, *Վլադիմիրովան ընդդեմ Ռուսաստանի* [*Vladimirova v. Russia*], 2018թ., §§ 40-41): Այս խմբին դասվող գործերի դեպքում տվյալ ընկերության հետ կապված արտաքին վերահսկողության կամ հսկողության միջոցառումների զուտ առկայությունը, որպես կանոն, դիտվել է որպես կարևոր, սակայն ոչ միակ գործունը (*Ալբերտը և այլք ընդդեմ Հունգարիայի* [ՄԴ] [*Albert and Others v. Hungary [GC]*], 2020թ., §§ 124, 138-139 և 143):

40. Բաժնետերերն են կրում ապացուցման այն բեռը, որ պաշտոնատար անձը, որին հանձնարարված է ապահովելու ընկերության շահերի պաշտպանությունը, չի կարողացել կամ ցանկություն չի ունեցել տվյալ բողոքը ներկայացնելու ներպետական կամ Ստրասբուրգի մակարդակով (*«Ագրոտեքսիմ»-ը և այլք ընդդեմ Հունաստանի* [*Agrotexim and Others v. Greece*], 1995թ., § 70, *Վեսելան և Լոյկան ընդդեմ Սլովակիայի* (որոշում) [*Veselá and Loyka v. Slovakia (dec.)*], 2005թ., *Ալբերտը և այլք ընդդեմ Հունգարիայի* [ՄԴ] [*Albert and Others v. Hungary [GC]*], 2020թ., § 144): Որպես այլընտրանք, բաժնետերը պետք է ապացուցի, որ Կոնվենցիայի համաձայն ներկայացված բողոքը վերաբերել է այնպիսի հարցի, ինչպիսին է սովորական կառավարչին աշխատանքից ազատելը և հավատարմագրային կառավարիչ նշանակելը, որի վերաբերյալ հավատարմագրային կառավարչի և բաժնետերերի կարծիքները տարբերվել են, կամ վերաբերել է հավատարմագրային կառավարչի՝ բաժնետերերի շահերի վրա ազդող տարբեր գործողությունների (*«Վարկային և արդյունաբերական բանկ»-ն ընդդեմ Չեխիայի Հանրապետության* [*Credit and Industrial Bank v. the Czech Republic*], 2003թ., § 51, *«Բեմբրոու ԷմԷՄ5» ԲԸ-ն ընդդեմ Բուլղարիայի* (որոշում) [*Camberrow MM5 AD v. Bulgaria (dec.)*], 2004թ., *«Կապիտալ բանկ» ԲԸ-ն ընդդեմ Բուլղարիայի* (որոշում) [*Capital Bank AD v. Bulgaria (dec.)*], 2005թ., *«Առևտրի և զարգացման միջազգային բանկ» ԲԸ-ն և այլք ընդդեմ Բուլղարիայի* [*International Bank for Commerce and Development AD and Others v. Bulgaria*], 2016թ., §§ 90-92, *Գ.ժ.-ն ընդդեմ Լյուքսեմբուրգի* [*G. J.v. Luxembourg*], §§ 23-24, *Ֆելդմանի և «Սլովյանսկի բանկ»-ի* [*Feldman and Slovyanskyy Bank*] գործը, 2017թ., §§ 28-29): Այս գործերից յուրաքանչյուրի դեպքում հարցն այնպիսին էր, որ դրա հնարավոր ազդեցությունը կարող էր լուրջ հետևանք ունենալ բաժնետերերի վիճակի վրա՝ ուղղակիորեն (*«ԱՆԿԱ» ՄՄԴԸ-ն և այլք ընդդեմ Բելգիայի* (որոշում) [*S.p.r.l. ANCA*

and Others v. Belgium (dec.)], 1984թ.) կամ անուղղակիորեն (*Գ.Ճ.-ն ընդդեմ Լյուքսեմբուրգի* [G. J. v. Luxembourg], § 24): Բաժնետերերը պետք է կշռադատված ու համոզիչ պատճառներ ներկայացնեն, որոնք կապացուցեն, որ գործնականում կամ փաստացի անհնար է, որ ընկերությունը դիմի Կոնվենցիայի կառույցներ իր կանոնադրությամբ սահմանված մարմինների միջոցով, և որ հետևաբար նրանց պետք է թույլատրվի ընկերության անունից բողոք ներկայացնել (*Ալբերտը և այլք ընդդեմ Հունգարիայի* [ՄԴ] [Albert and Others v. Hungary [GC]], 2020թ., §§ 144-145):

41. Այս ընդհանուր սկզբունքները կիրառելով՝ Դատարանն *Ալբերտը և այլք ընդդեմ Հունգարիայի* [ՄԴ] [Albert and Others v. Hungary [GC]] գործով, 2020թ., վճռել է, որ բաժնետերերը, որոնք ենթադրաբար կորցրել են վերահսկողությունն իրենց բանկերի նկատմամբ, երբ ֆինանսական ճգնաժամից հետո պետությունը վերահսկողություն է հաստատել նրանց նկատմամբ, չէին կարող համարվել ընկերությունների նկատմամբ վիճարկվող գործողություններից տուժածներ: Նախ, թեև բարեփոխումը զգալիորեն ազդել էր բանկերի և դրանց կանոնադրական մարմինների վրա, դրա ազդեցությունը դիմումատու բաժնետերերի իրավունքների վրա երկրորդային և անուղղակի էր: Նրանց քվեարկության իրավունքի արհեստական սահմանափակում կամ բաժնեմասերի ուղղակի չեղարկում տեղի չէր ունեցել: Դիմումատուների անհատական բաժնեմասերի չափը նրանց թույլ չէր տալիս վերահսկողություն իրականացնել որևէ բանկի նկատմամբ, իսկ նրանց ազդեցությունը որպես խումբ, որը համախմբված չէր որևէ համաձայնագրով, հատվածայնացված և թույլ էր (*Նույն տեղում*, §§ 154-155): Երկրորդ, գտել էին, որ պետական բանկերը, ունենալով բազմաթիվ բաժնետերեր և ամբողջությամբ պատվիրակված կառավարում, «այնքան էլ սերտորեն» կապված չէին դիմումատուների հետ: Այն բաժնեմասերի ճշգրիտ տոկոսը, որը կարող էր դիմումատուներին պատկանել երկու բանկերում, որոշիչ չէր (*Նույն տեղում*, § 157): Վերջապես, առկա չէին բացառիկ հանգամանքներ, որոնք կբացառեին բանկերի կողմից իրենց սեփական անունից Դատարան դիմելու հնարավորությունը. բանկերը շարունակել են գործել, դիմումատուները, որոնք համատեղ տիրապետում էին քվեարկող ձայների մեծամասնությունը, կարող էին բանկերին հանձնարարել իրենց անունից հարուցել իրավական վարույթ, բարեփոխումը և վերահսկողություն իրականացնող մարմինների որոշումները բաց էին դատական վերանայման համար, և այս առումով բանկերի նկատմամբ անհարկի ճնշման որևէ ապացույց

առկա չէր ([Նույն տեղում](#), §§ 159-164):

42. Դատարանը նաև վճռել է, որ իր եզրահանգումները կարծես թե չեն հակասել Եվրոպայի խորհրդի անդամ պետություններից շատերի կարգավորող համատեքստում ձևավորված ստանդարտին, այն է՝ թույլատրվում է բավական խիստ միջամտություն ենթադրող միջոցների ընդունումը բանկերի և դրանց հավասարեցված կառույցների նկատմամբ, քանի որ համարվել է, որ այս ոլորտի ոչ բավարար կարգավորումը կարող է լուրջ համակարգային ռիսկերի հանգեցնել համապատասխան տնտեսությունների համար ([Նույն տեղում](#), § 167): Այնուամենայնիվ, առկա է շեմ այն մասով, թե անդամ պետությունները որքան հեռու կարող են գնալ բանկային ոլորտը կարգավորել փորձելիս (տե՛ս, օրինակ՝ «Բանկային գործերի» շրջանակներում՝ [«Փրոջեքթ Թրեյդ» ՍՊԸ-ն ընդդեմ Խորվաթիայի](#) [*Project-Trade d.o.o. v. Croatia*], 2020թ.):

43. Դատարանը [Լեկիչն ընդդեմ Սլովենիայի](#) [ՄԴ] [*Lekić v. Slovenia* [GC]] գործով, 2018թ., § 111, պարզաբանել է, որ «Ագրոտեքսիմ»-ի և այլոց [*Agrotexim and Others*] գործով, 1995թ., սահմանված ընդհանուր սկզբունքները կիրառվել են մի շարք դեպքերում՝ բաժնետերերի՝ «տուժողի» կարգավիճակ ստանալու նպատակով իրենց ընկերությունների հետ «ներսից» նույնականացման պահանջները քննելիս (նաև [Ալբերտը և այլք ընդդեմ Հունգարիայի](#) [ՄԴ] [*Albert and Others v. Hungary* [GC]], 2020թ., § 138): Այնուամենայնիվ, նախադեպային իրավունքի մաս կազմող՝ «Ագրոտեքսիմ»-ի գործի հետ կապված գործերի շարքը չի կարող ուղղակիորեն փոխատեղվել այն գործերով, որոնք վերաբերում են սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից իր պարտատերերի շահերից ելնելով կամ «դրսից» կորպորատիվ շղարշը բարձրացնելուն: Այն իրավիճակներում, երբ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն իր սեփականատերերի կամ կառավարիչների կողմից օգտագործվել է զուտ որպես պատրվակ խարդախ գործողությունների համար, կորպորատիվ շղարշը պատռելը կարող է պատշաճ լուծում լինել դրա պարտատերերի, այդ թվում՝ պետության իրավունքները պաշտպանելու համար, և որպես այդպիսին, սխալ չէ ([Խոդորկովսկին և Լեբեդևն ընդդեմ Ռուսաստանի](#) [*Khodorkovskiy and Lebedev v. Russia*], 2013թ., § 877): Ավելին, պետական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կամ բանկերի պարտատերերի կողմից ներկայացված գործերում Դատարանը գտել է, որ տեղի է ունեցել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում պատասխանող պետության կողմից՝

կորպորատիվ շղարշի հետևում թաքնվելով, վիճարկվող ընկերության կամ բանկի պարտքը վճարելուց հրաժարվելու պատճառով (*Ալիշիչ և այլք ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի, Խորվաթիայի, Սերբիայի, Սլովենիայի և Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության* [ՄՊ] [*Ališić and Others v. Bosnia and Herzegovina, Croatia, Serbia, Slovenia and the former Yugoslav Republic of Macedonia* [GC]], 2014թ., §§ 114-15): Այս առնչությամբ Դատարանը հիմնվել է հետևյալ գործոնների վրա. արդյոք պետությունը յուրացրել է կորպորատիվ միջոցներն ի վնաս ընկերության, և դրա բաժնետերերը չեն պահպանել ընկերության հետ առանց շահագրգռվածության հարաբերություն կամ այլ կերպ չարաշահել են կազմակերպարարական ձևը (*Լեկիչ և ընդդեմ Սլովենիայի* [ՄՊ] [*Lekić v. Slovenia* [GC]], 2018թ., § 111):

44. Վերջապես, Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը տարածվում է կապիտալ շուկայում ազատ շրջանառվող պարտատոմսերի վրա, որոնք փոխանցվում են մեկ իրավատիրոջից մյուսին, և որոնց արժեքը կարող է տատանվել՝ մի շարք գործոններից կախված (*Մամատաս և այլք ընդդեմ Հունաստանի* [*Mamatas and Others v. Greece*], 2016թ., § 90, տե՛ս նաև *Պինտար և այլք ընդդեմ Սլովենիայի* [*Pintar and Others v. Slovenia*], 2021թ., § 92): *Ֆրեյրե Լոպեշ և ընդդեմ Պորտուգալիայի* (որոշում) [*Freire Lopes v. Portugal (dec.)*] գործով, 2023թ., § 78, Դատարանը վճռել է, որ դիմումատուի բաժնեմասը որոշակի գնով գնելու բանկի համաձայնությունը հավասարազոր էր պարտատոմսի (ֆինանսական գործիք)։

45. Այնուամենայնիվ, համարվել է, որ «հատուկ նշանակության» կամ «ապրանքային» պետական պարտատոմսը, որը սկզբնապես նախատեսում էր բնեղենով ավտոմեքենա ստանալու իրավունք և Կոնվենցիայի վավերացումից անմիջապես հետո ընկած ժամանակահատվածում և դրանից հետո դարձել է շրջանակային օրենսդրության առարկա, չի ներառել գույքի ձեռքբերման իրավունքը (*Գրիշչենկոն ընդդեմ Ռուսաստանի* (որոշում) [*Grishchenko v. Russia (dec.)*], 2004թ.):

46. Վերջապես, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-221253> «*Պանոն Պլակատ*» ՄՊԸ-ն և այլք ընդդեմ Հունգարիայի [*Pannon Plakát Kft and Others v. Hungary*] գործով, 2022թ., §§ 42 և 44, Դատարանը գտել է, որ ճանապարհի եզրերի գովազդային վահանակները պետք է համարվեն ակտիվների ոչ ճկուն և

անփոփոխ տեսակներ, որոնք պիտանի չէին որևէ այլ տեսակի ձեռնարկատիրական գործունեության համար: Այս գովազդային վահանակների հեռացումը, օրենսդրության համաձայն, նշանակում էր, որ դիմումատու ընկերությունները կորցրել էին շուկայական հնարավորությունները, եկամուտ ստանալու հնարավորությունը, ինչը կարող էր հանգեցնել նրանց բաժնեմասերի բաժնետիրական արժեքի նվազման:

iii. Մասնագիտական հաճախորդների բազա

47. Դատարանն ընդունել է, որ գույքային իրավունքներին համանման իրավունքները գոյություն են ունեցել մասնագիտական պրակտիկայի վերաբերյալ գործերում, որտեղ տվյալ դիմումատուներն իրենց սեփական ջանքերով ստեղծել են հաճախորդների բազա, որը շատ առումներով մասնավոր իրավունքի բնույթ ուներ և համարվում էր ակտիվ, և հետևաբար թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի առաջին նախադասության իմաստով՝ գույք ([Լեդերերն](http://hudoc.echr.coe.int/eng?i=001-83568)<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-83568> [ընդդեմ Գերմանիայի](#) (որոշում) [*Ledererv. Germany (dec.)*], 2006թ., [Բուզեսկուն](#) [ընդդեմ Ռումինիայի](#) [*Buzescu v. Romania*], 2005թ., § 81, [Վենդենբուրգը](#) [և այլք](#) [ընդդեմ Գերմանիայի](#) (որոշում)<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-23337> [*Wendenburg and Others v. Germany (dec.)*], 2003թ., [Օլբերցն](#) [ընդդեմ Գերմանիայի](#) (որոշում) [*Olbertz v. Germany (dec.)*], 1999թ., [Դյորինգն](#) [ընդդեմ Գերմանիայի](#) (որոշում) [*Döring v. Germany (dec.)*], 1999թ., [Իատրիդիսն](#) [ընդդեմ Հունաստանի](#) [ՄԴ] [*Iatridis v. Greece [GC]*], 1999թ., § 54, [Վան Մարլեն](#) [և այլք](#) [ընդդեմ Նիդերլանդների](#) [*Van Marle and Others v. the Netherlands*], 1986թ., § 41, [Մալիկն](#) [ընդդեմ Միացյալ Թագավորության](#) [*Malik v. the United Kingdom*], 2012թ., § 89), [Ռոլան](#) [ընդդեմ Սլովենիայի](#) [*Rola v. Slovenia*], § 71. Նախադեպային իրավունքի համապարփակ ուսումնասիրության համար տե՛ս «Կոնիվ-Տար» [ՄԴԸ-ն](#) [և այլք](#) [ընդդեմ Հունգարիայի](#) [*Könyv-Tár Kft and Others v. Hungary*] գործը, 2018թ., §§ 31-32):

iv. Լիցենզիաներ

48. Ձեռնարկատիրական գործունեության լիցենզիան համարվում է գույք, և այն չեղյալ հայտարարելը թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված իրավունքի խախտում է («[Megadat.com](#) [ԷսԱրԷլ](#)»-ն [ընդդեմ Մոլդովայի](#) [*Megadat.com SRL v. Moldova*], 2008թ., §§ 62-63, «[Բիմեր](#) [Էս.Ա.](#)»-ն [ընդդեմ Մոլդովայի](#) [*Bimer S.A. v. Moldova*], 2007թ., § 49, [Ռոզենցվայգը](#) [և](#)

«Մաքսային պահեստներ» ՍՊԸ-ն ընդդեմ Լեհաստանի [Rosenzweig and Bonded Warehouses Ltd. v. Poland], 2005թ., § 49, «Կապիտալ բանկ» ԲԸ-ն ընդդեմ Բուլղարիայի [Capital Bank AD v. Bulgaria], 2005թ., § 130, «Երեք Տրակտոր» ՍՊԸ-ն ընդդեմ Շվեդիայի [Tre Traktörer Aktiebolag v. Sweden], 1989թ., § 53, Վեկոնին ընդդեմ Հունգարիայի [Vékony v. Hungary], 2015թ., § 29, Ֆրեդին ընդդեմ Շվեդիայի (թիվ 1) [Fredin v. Sweden (no. 1)], 1991թ., § 40, Մալիկն ընդդեմ Միացյալ Թագավորության [Malik v. the United Kingdom], 2012թ., § 90, «ԷնԱյԹի Էս.Ար.Էլ.»-ն ընդդեմ Մոլդովայի Հանրապետության [NIT S.R.L. v. the Republic of Moldova], 2022թ., § 235):

49. Բանկային գործունեության լիցենզիան, որի չեղյալ հայտարարման հետևանքը բանկի նկատմամբ ինքնաբար հարկադիր լուծարման գործընթաց իրականացնելն է, համարվել է «գույք» («Կապիտալ բանկ» ԲԸ-ն ընդդեմ Բուլղարիայի (որոշում) [Capital Bank AD v. Bulgaria (dec.)], 2005թ., § 130):

50. Նույն կերպ, միդիայի թրթուրների որսի թույլտվությունը, որը կապված էր դիմումատուի ձկնաբուծության բիզնեսի սովորական իրականացման հետ, համարվել է «գույք», և միդիայի թրթուրների որսի ժամանակավոր արգելքը համարվել է այդ թույլտվության նկատմամբ կիրառված սահմանափակում («ՕՍալիվան ՄըքՔարթի Մասս Դիվելոպմենթ» ՍՊԸ-ն ընդդեմ Իռլանդիայի [O’Sullivan McCarthy Mussel Development Ltd v. Ireland], 2018թ., § 89):

51. Ավելին, առանց հեռարձակման հաճախականությունների հատկացման ազգային վերգետնյա հեռուստատեսության լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվել («Չենտրո Եվրոպա 7 Էս.ար.Էլ.»-ը և Դի Ստեֆանոն ընդդեմ Իտալիայի [ՄՊ] [Centro Europa 7 S.r.l. and Di Stefano v. Italy [GC]], 2012թ., § 177):

52. Վերջապես, «Էոլիկա դե Սան ժուլիաո» ՍՊԸ-ն ընդդեմ Պորտուգալիայի (որոշում) [Eólica de S. Julião, Lda v. Portugal (dec.)] գործով, 2024թ., §§ 94-95, Դատարանը գտել է, որ հողմային տուրբինների շահագործման լիցենզիան տրվել է աղմուկի ազդեցության ուսումնասիրություն ներկայացվելու պայմանով, որը չի կատարվել: Հաշվի առնելով, որ պայմանը չի կատարվել դիմումատու ընկերության կողմից, այն հետևաբար չի ունեցել «գույք» թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով:

v. Ապագա եկամուտ

53. Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը չի առաջացնում սեփականության ձեռքբերման իրավունք (*Դենիսովն ընդդեմ Ուկրաինայի* [ՄՊ] [Denisov v. Ukraine [GC]], 2018թ., § 137): Ապագա եկամուտը համարվում է «գույք» միայն այն դեպքում, երբ այն վաստակել են, կամ դրա վերաբերյալ առկա է կատարման համար պարտադիր պահանջ (*Յան Էդգար (Լիվերպոլ)՝ ՍՊԸ-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* (որոշում) [Ian Edgar (Liverpool) Ltd v. the United Kingdom (dec.)], 2000թ., *Վենդենբուրգը և այլք ընդդեմ Գերմանիայի* (որոշում) [Wendenburg and Others v. Germany (dec.)], 2003թ., *Լևանենը և այլք ընդդեմ Ֆինլանդիայի* (որոշում) [Levänen and Others v. Finland (dec.)], 2006թ., *«Անհոյզեր-Բուշ Ինք.»-ն ընդդեմ Պորտուգալիայի* [ՄՊ] [Anheuser-Busch Inc. v. Portugal [GC]], 2007թ., § 64, *Դենիսովն ընդդեմ Ուկրաինայի* [ՄՊ] [Denisov v. Ukraine [GC]], 2018թ., § 137, *Յուշչիշինսն ընդդեմ Լեհաստանի* [Juszczyszyn v. Poland], 2022թ., § 344, *Գյուլումյանը և այլք ընդդեմ Հայաստանի* (որոշում) [Gyulumyan and Others v. Armenia (dec.)], 2023թ., § 101):

54. Ի հակադրություն, ազատ մասնագիտությունների ներկայացուցիչների կողմից առանց ֆիքսված եկամտի և երաշխավորված շրջանառության իրականացվող գործունեության ծավալը, որը ենթարկվում է տնտեսական կյանքի վտանգներին, «գույք» չի համարվում (*Հունաստանի մաքսային ծառայողների ֆեդերացիան, Գիալուրիսը և այլք ընդդեմ Հունաստանի* [Greek Federation of Customs Officers, Gialouris and Others v. Greece], Հանձնաժողովի որոշում, 1995թ.): Նույն կերպ, եթե ներպետական իրավունքով և նախադեպային իրավունքով չի նախատեսվում ֆիքսված և անփոփոխ գումարի վճարում որպես ողջամիտ եկամուտ կամ ներդրումներից ստացվող եկամուտ, նոր կարգավորումներն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ ստացման ենթակա սուբսիդիաներն ազգային իրավունքով բավարար հիմք չունեն Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով «գույք» համարվելու համար (*«Էներջիվորքս Կարտախենա Էս.Էլ.»-ն ընդդեմ Իսպանիայի* (որոշում) [Energyworks Cartagena S.L. v. Spain (dec.)], 2024թ., §§ 46-48):

vi. Մտավոր սեփականություն

55. Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը կիրառվում է մտավոր սեփականության նկատմամբ (*«Անհոյզեր-Բուշ Ինք.»-ն ընդդեմ Պորտուգալիայի* [ՄՊ] [Anheuser-Busch Inc. v. Portugal [GC]], 2007թ., § 72):

56. Այն կիրառվում է ապրանքային նշանի գրանցման հայտի նկատմամբ նույնիսկ նախքան ապրանքային նշանի գրանցումը (*«Անհոյգեր-Բուշ Ինք.»-ն ընդդեմ Պորտուգալիայի* [ՄԴ] [*Anheuser-Busch Inc. v. Portugal* [GC]], 2007թ., § 78), և *a fortiori* (առաջին հերթին), ապրանքային նշանների (*«Կամոյ Ռադյո Թելեվիզյոն Յայինժիլիկ վե Օրգանիզայոն Ա.Էս.»-ն ընդդեմ Թուրքիայի* [*Kamoy Radyo Televizyon Yayincilik ve Organizasyon A.S. v. Turkey*], 2019թ., § 37), արտոնագրերի (*«Սմիթ Կլայն»-ը և «Ֆրանսիական լաբորատորիաներ» ՍՊԸ-ն ընդդեմ Նիդերլանդների (որոշում)* [*French Laboratories Ltd v. the Netherlands* (dec.)], 1990թ., *«Լենզինգ» ԱԳ-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Lenzing AG v. the United Kingdom*], *Հանձնաժողովի որոշում*, 1998թ., *Տոկելն ընդդեմ Թուրքիայի* [*Tokel v. Turkey*], 2021թ., § 56) և հեղինակային իրավունքի նկատմամբ (*Մելնիչուկն ընդդեմ Ուկրաինայի* (որոշում) [*Melnychuk v. Ukraine* (dec.)], 2005թ.: Հեղինակային իրավունքի իրավատերերը պաշտպանված են թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով (*Նեյը և Սունդե Կոլմիսոպիվ ընդդեմ Շվեդիայի* (որոշում) [*Neij and Sunde Kolmisoppiv. Sweden* (dec.)], 2013թ., *«ԱԿԿԱ/ԼԱԱ» ՍՊԸ-ն ընդդեմ Լատվիայի* [*SIA AKKA/LAA v. Latvia*], 2016թ., § 41): Վեպի թարգմանությունը հրատարակելու իրավունքը սույն դրույթի գործողության շրջանակներում է (*«ԷսՍի Էդիտուրա Օրիզոնտուրի ԷսԱրԷլ»-ն ընդդեմ Ռումինիայի* [*SC Editura Orizonturi SRL v. Romania*], 2008թ., § 70, *Սաֆարովն ընդդեմ Ադրբեջանի* [*Safarov v. Azerbaijan*], 2022թ., § 30, *Կորոտյուկն ընդդեմ Ուկրաինայի* [*Korotyuk v. Ukraine*], 2023թ., § 33), ինչպես և երաժշտական ստեղծագործությունների նկատմամբ իրավունքը և դրանցից ստացվող, նաև լիցենզիայի համաձայնագրի միջոցով ստացվող տնտեսական շահը (*«ԱԿԿԱ/ԼԱԱ» ՍՊԸ-ն* <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-164659> *ընդդեմ Լատվիայի* [*SIA AKKA/LAA v. Latvia*], 2016թ., § 55):

vii. Գույքի վարձակալություն և բնակարանային իրավունքներ

57. Որոշ դեպքերում Դատարանը վարձակալությունը համարել է գույքային շահ, որը պաշտպանված է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով (*Սթրեչն ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Stretch v. the United Kingdom*], 2003թ., §§ 32-35, *Բրունկրոնան ընդդեմ Ֆինլանդիայի* [*Bruncrona v. Finland*], 2004թ., § 79, *«Բոսֆորի ավիաուղիներ» զբոսաշրջային և առևտրային բաժնետիրական ընկերությունն ընդդեմ Իռլանդիայի* [ՄԴ] [*Bosphorus Hava Yolları Turizm ve Ticaret Anonim Şirketi v. Ireland* [GC]], 2005թ., § 140): *Դի Մարկոն ընդդեմ Իտալիայի*

[[Di Marco v. Italy](#)] գործով, 2011թ., §§ 48-53, Դատարանը համարել է, որ գույքային շահերի, ինչպես օրինակ՝ հողօգտագործման և դրան առնչվող առևտրային գործունեության նկատմամբ դիմումատուի իրավաչափ ակնկալիքը բավարար կարևոր էր թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով «գույք» համարվելու համար:

58. Այնուամենայնիվ, դիմումատուի՝ «սոցիալական վարձակալության» (*bail social*) իրավունքի բնույթը հավասարազոր չէ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով սահմանված «գույքին» ([Չոկոնտիո Ապին ընդդեմ Ֆրանսիայի](#) [[Tchokontio Happi v. France](#)], 2015թ., § 60), քանի որ ներպետական վճռի համաձայն՝ դիմումատուն պետք է օգտվեր բնակարանն օգտագործելու իրավունքից, այլ ոչ թե այն ձեռք բերելու իրավունքից:

59. Բնակարանային ապահովման ոլորտում հաճախ առանցքային է այն հարցը, թե արդյոք թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը կիրառելի է:

60. Հանձնաժողովի կողմից քննված [Ս.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության](#) (որոշում) [[S. v. the United Kingdom \(dec.\)](#)] գործով, 1986թ., դիմումատուն երկար տարիներ միասեռական հարաբերություններում ապրել է մեկ այլ կնոջ հետ, որը բնակվել է տեղական իշխանության մարմնի սեփականությունը հանդիսացող տանը որպես վարձակալ: Դիմումատուն ինքը վարձակալության կամ այլ օրինական իրավունք չի ունեցել այդ տան նկատմամբ: Նրա զուգընկերոջ մահից հետո տեղական իշխանության մարմինը դիմումատուի նկատմամբ հայց է հարուցել և ձեռք է բերել նրան վտարելու մասին դատարանի կարգադրություն: Հանձնաժողովը գտել է, որ դիմումատուի և տեղական իշխանության մարմնի միջև պայմանագրային հարաբերություններ առկա չեն եղել, և այն փաստը, որ դիմումատուն որոշակի ժամանակահատվածի ընթացքում բնակվել է այդ տանն առանց իրավական հիմքի, չէր կարող համարվել «գույք» թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով:

61. Ինչ վերաբերում է «գույքի» առկայությանը, [Դուրինին ընդդեմ Իտալիայի](#) [[Durini v. Italy](#)] գործով, 2014թ., ապա Հանձնաժողովի որոշումը վերաբերում էր մոր և նրա դստերի պնդումներին առ այն, որ նրանք պետք է իրավունք ունենային շարունակելու բնակվել ընտանեկան ամրոցում (որը պատկանում էր հիմնադրամին)՝ չնայած նրանց հանգուցյալ ամուսնու և հոր նախնիների՝ 1918 թվականով թվագրված կտակի, որով ամրագրված էր, որ այդ իրավունքը պետք է

վերապահվել տարիքով ավագ արու ժառանգին: Հանձնաժողովը վճռել է, որ սեփականության իրավունքով իրեն չպատկանող ամրոցում բնակվելու իրավունքը Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով «գույք» չի համարվում, և որ հետևաբար այդ դրույթը կիրառելի չէր այդ գործի նկատմամբ:

62. Ներքին տեղահանված անձանց (ՆՏԱ) համատեքստում Դատարանը համարել է, որ Նույնիսկ գրանցված գույքային իրավունքի բացակայության դեպքում դիմումատուի կողմից 10 տարուց ավելի քրեչին տիրապետելը, հաշվի առնելով դրա բարեխիղճ բնույթը, ինչպես նաև իշխանությունների բացահայտ հանդուրժողականությունը և բնակարանային ապահովման ոլորտում ՆՏԱ-ների իրավունքները հաստատող տարբեր իրավական ակտերի ընդունումը և այդ իրավունքների պաշտպանության համար հուսալի երաշխիքների սահմանումը, հավասար էր Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով «գույքի» (*Սաղինաձեն և այլք ընդդեմ Վրաստանի* [*Saghinadze and Others v. Georgia*], 2010թ., §§ 104-108):

63. *Համերն ընդդեմ Բելգիայի* [*Hamer v. Belgium*] գործով, 2007թ., § 76, վիճարկվող շենքը, որը կառուցվել էր առանց նախագծման թույլտվության, քանի որ տարի շարունակ գոյություն է ունեցել, մինչև իշխանություններն արձանագրել են այս իրավախախտումը: Իշխանությունները շարունակել են հանդուրժել այն ևս տասը տարի՝ նախքան այն քանդելու մասին հրաման տալը: Դատարանը համարել է, որ դիմումատուի՝ իր ամառային առանձնատնից օգտվելու գույքային շահը, որի համար նա և իր հայրը հարկեր էին վճարել, բավարար չափով հաստատված էր և հիմնավորված, որպեսզի համարվեր էական շահ և հետևաբար «գույք»:

64. Նույն կերպ, *Զերիման Թեքինը և այլք ընդդեմ Թուրքիայի* [*Keriman Tekin and Others v. Turkey*] գործով, 2016թ., §§ 40-43, Դատարանը համարել է, որ առանց թույլտվության կառուցված տունը «գույք» էր, քանի որ դիմումատուն որոշ ժամանակ օգտվել էր դրանից՝ առանց անհանգստանալու դրա ապօրինի լինելու մասին:

65. *Էլիֆ Զիզիլն ընդդեմ Թուրքիայի* [*Elif Kizil v. Turkey*] գործով, 2020թ., §§ 67-69, Դատարանը նշել է, որ դիմումատուն օրինական եղանակով ձեռք էր բերել գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, որը գրանցվել էր հողային ռեգիստրում: Չնայած հետագայում դրա՝ պետական գանձապետարան փոխանցվելուն, նրա սեփականության իրավունքը երբևէ պաշտոնապես չէր

չեղարկվել, և նա շարունակել է օգտվել իր գույքից ևս 28 տարի և վճարել հարկեր: Հաշվի առնելով իշխանությունների այդչափ երկարատև հանդուրժողականությունը՝ դիմումատուի գույքային իրավունքները «գույք» էին:

66. *«Վալլե Պիեմոնտիե Սոչիետա Ագրիկոլա Էս.Պե.Ա.»-ն ընդդեմ Իտալիայի* [Valle Pierimpie Società Agricola S.P.A. v. Italy] գործով, 2014թ., §§ 47-51, որը վերաբերում էր Վենետիկի շրջանի ծովածոցում գտնվող ձկնաբուծարանին, դիմումատու ընկերությունը տիրապետում էր նոտարական կարգով գրանցված և գույքի ռեգիստրում մուտքագրված՝ գույքի նկատմամբ պաշտոնական սեփականության իրավունքով: Այն կարող էր իր իրավաչափ ակնկալիքը հիմնել դեռևս 15-րդ դարի այն գործելակերպի վրա, որով անձանց տրվում էր ձկնորսարանների տիրապետման իրավունք, և հանդուրժողական վերաբերմունք էր դրսևորվում դրանց շարունակական զբաղեցման և օգտագործման նկատմամբ: Դիմումատուն գույքահարկ էր վճարում Վալլե Պիեմոնտիեի համար, այդ վայրը զբաղեցնում էր և գործում էր որպես դրա սեփականատեր՝ առանց իշխանությունների կողմից երբևէ գործողություն ձեռնարկվելու: Հողատարածքն ընկերության գործունեության հիմնական վայրն էր, ընկերության՝ դրանից ստացած շահույթը դրա եկամտի միակ աղբյուրն էր, և քանի դեռ գույքը ներառված չէր պետական ծովային նավագնացության մեջ, ընկերությունն ուներ իրավաչափ ակնկալիք, որ կկարողանար շարունակել իր գործունեության իրականացումը: Հետևաբար Դատարանը վճռել է, որ այս հանգամանքները դիմումատու ընկերությանը տալիս էին թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանվող էական շահի նկատմամբ իրավունք:

67. Բացի այդ, *Չիրագովը և այլք ընդդեմ Հայաստանի* [ՄՊ] [Chiragov and Others v. Armenia [GC]] գործով, 2015թ., Դատարանը վճռել է, որ բնակելի տների և հողի «օգտագործման իրավունքը», ինչպես ժամանակավոր, այնպես էլ անժամկետ, համարվում է «գույք», քանի որ այն էական տնտեսական շահ հանդիսացող ծանրակշիռ և պաշտպանված իրավունք է (§ 147): Սա հատկապես արդիական է հետխորհրդային համատեքստում, որտեղ շենքի տակ գտնվող հողակտորի նկատմամբ սեփականության իրավունքն ինքնաբերաբար չի կապվում հենց շենքի նկատմամբ սեփականության իրավունքի հետ (*Մահարամովն ընդդեմ Ադրբեյջանի* [Maharramov v. Azerbaijan], 2017թ., § 53): Խորհրդային իրավակարգի համաձայն՝ քաղաքացիները բնակելի տներ ունենալու իրավունք են ունեցել, սակայն հողի նկատմամբ մասնավոր սեփականության իրավունք չի սահմանվել, և

այն, փոխարենը, համարվել է պետության սեփականությունը (*Չիրագովը և այլք ընդդեմ Հայաստանի* [ՄԴ] [*Chiragov and Others v. Armenia* [GC]], 2015թ., § 146, տե՛ս նաև *Տկաչենկոն ընդդեմ Ռուսաստանի* [*Tkachenko v. Russia*], 2018թ., § 7, որտեղ շենքի տակի և հարակից հողը պատկանում էր համայնքին): Համապատասխանաբար, «օգտագործման իրավունքը» հողի նկատմամբ միակ իրավունքն էր, որն անհատը կարող էր ձեռք բերել: Հետագայում իրականացվել են գույքային բարեփոխումներ, սակայն որոշ իրավիճակներում դիմումատուների գույքային իրավունքների առկայության մասով անորոշությունները պահպանվում են:

68. Պատշաճ իրավունքի բացակայության պայմաններում դիմումատուներին անհրաժեշտ է ներկայացնել այլ փաստաթղթային ապացույց՝ հողի նկատմամբ իրենց գույքային շահը հիմնավորելու համար: Օրինակ՝ *Մահարամովն ընդդեմ Ադրբեյջանի* [*Maharramov v. Azerbaijan*] գործով, 2017թ., դիմումատուն կարողացել է ապացուցել այն հողի նկատմամբ «օգտագործման իրավունքը», որի վրա կառուցված էր իր խանութը՝ ապացուցելով, որ վճարել էր շենքի տակ գտնվող հողակտորի գույքահարկը: Դատարանը վճռել էր, որ դիմումատուն առնվազն համապատասխան հողի «օրինական օգտագործողն» էր՝ դրա վրա գտնվող անշարժ գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքի ուժով՝ հետագայում հողը սեփականության իրավունքով իրեն փոխանցելու հնարավորությամբ (§ 54): Ի հակադրություն, *Արսիմիկովը և Արսեմիկովն ընդդեմ Ռուսաստանի* [*Arsimikov and Arsemikov v. Russia*] գործով, 2020թ., դիմումատուները չեն կարողացել հիմնավորել իրենց պահանջը համապատասխան հողի նկատմամբ, քանի որ նրանք իրենց պահանջը հիմնավորող որևէ ապացույց չեն ներկայացրել (§ 49) (տե՛ս նաև «Գույքի ոչնչացումը միջազգային կամ ներքին զինված հակամարտությունների իրավիճակներում»):

69. Բացի այդ, քաղաքացիական ծառայողների համար բնակարանային աջակցությունը նույնպես համարվում է «գույք», քանի դեռ անձն այդպիսի աջակցություն ստանալու իրավունք ունի (*Նեչայևան ընդդեմ Ռուսաստանի* [*Nechayeva v. Russia*], 2020թ., §§ 40-41), նույնիսկ եթե գումարի ճշգրիտ չափը վիճարկվել է: Դատարանը համարել է, որ Ռուսաստանի օրենսդրությամբ չնախատեսված նպաստի գումարի նվազեցումը բյուջետային նկատառումներով անօրինական է եղել: Այն նաև վճռել է, որ դիմումատուն չէր կարող օրինական կարգով ընդունել ավելի փոքր գումար՝ հաշվի առնելով, որ այդ հնարավորությունն

օրենքով նախատեսված չէր (*Նույն տեղում*, § 48):

70. Վերջապես, *Բրազաուսկիենեն ընդդեմ Լիտվայի* (որոշում) [*Brazauskienė v. Lithuania (dec.)*] գործով, 2024թ., §§ 122-127 և 135, Դատարանը վճռել էր, որ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը չէր տարածվում նախկին նախագահի այրուկ պաշտոնական բնակավայրի մշտական անվճար օգտագործման իրավունքը մերժելու վրա այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանը չեղարկել էր համապատասխան իրավական դրույթները և օրենսդրական միջամտությունը:

viii. Սոցիալական ապահովության նպաստներ/կենսաթոշակներ

71. Կոնվենցիոն մարմինների ավելի վաղ նախադեպային իրավունքով համարվում էր, որ ցանկացած տեսակի սոցիալական ապահովության ծրագրում պարտադիր վճարների կատարումը ստեղծում էր Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանվող իրավունք միայն, եթե առկա էր ուղղակի կապ կատարված վճարների աստիճանի և տրամադրված նպաստների միջև (*Մյուլլերն ընդդեմ Ավստրիայի* [*Müller v. Austria*], Հանձնաժողովի որոշում, 1975թ., էջ 49): Հակառակ դեպքում դիմումատուն որևէ կոնկրետ պահի չէր ունենա սահմանված և պահանջելի մասնաբաժին հիմնադրամում (*Գ.-ն ընդդեմ Ավստրիայի* [*G. v. Austria*], 1984թ., Հանձնաժողովի որոշում, էջ 86, *Կլեյնե Սթաարմանն ընդդեմ Նիդերլանդների* [*Kleine Staarman v. the Netherlands*], Հանձնաժողովի որոշում, 1985թ., էջ 166):

72. Այնուամենայնիվ, վերջին շրջանի մի շարք գործերով Դատարանը հետևողականորեն վճռել է, որ Նույնիսկ կենսամակարդակի ապահովման նպաստը ոչ վճարային հիմքով ծրագրում կարող էր համարվել գույք՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի նպատակներով (*ԲուչեՆն ընդդեմ Չեխիայի Հանրապետության* [*Bucheň v. the Czech Republic*], 2002թ. § 46, *Կուա Պուլադեզն ընդդեմ Ֆրանսիայի* [*Koua Poirrez v. France*], 2003թ., § 37, *Վեսելս-Բերգերվոետն ընդդեմ Նիդերլանդների* (որոշում) [*Wessels-Bergervoet v. the Netherlands (dec.)*], 2000թ., *Վան դեն Բուվհույսենը և Շուրինգն ընդդեմ Նիդերլանդների* (որոշում) [*Van den Bouwhuijsen and Schuring v. the Netherlands (dec.)*], 2003թ.):

73. Սոցիալական ապահովության նպաստների նկատմամբ այս դրույթի կիրառելիության անորոշությունն ի վերջո վերացվեց *Ստեկը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության* (որոշում) [ՄԴ] [*Stec and Others v. the United Kingdom (dec.)* [GC]], 2005թ., § 47-56, գործում: Դատարանը նկատել է, որ պետությունների

մեծ մասում առկա էր սոցիալական ապահովության նպաստների լայն շրջանակ, որոնք նախատեսված էին անբախտելի իրավունքի ուժով առաջացող իրավունքներ տրամադրելու համար: Նպաստները ֆինանսավորվում են ամենատարբեր ձևերով. որոշները վճարվում են կոնկրետ հիմնադրամում կատարված վճարումներից, որոշները կախված են հայցվորի վճարումների կատարման ստաժից, շատերն էլ վճարվում են ընդհանուր հարկերից՝ օրենքով սահմանված կարգավիճակի հիման վրա: Հաշվի առնելով ֆինանսավորման մեթոդների բազմազանությունը և կենսամակարդակի ապահովման համակարգերի մեծամասնության դեպքում նպաստների փոխկապակցված բնույթը, այլևս արդարացված չէր վճռելը, որ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի գործողությունը տարածվում էր միայն կոնկրետ հիմնադրամում կատարված ներդրումներից ֆինանսավորվող նպաստների վրա: Ավելին, ընդհանուր հարկերից վճարվող նպաստները բացառելը կնշանակեր անտեսել այն փաստը, որ այս համակարգի շրջանակներում նպաստ ստացող հայցվորներից շատերը նույնպես նպաստում են դրա ֆինանսավորմանը հարկ վճարելու միջոցով (լրացուցիչ պարզաբանման համար տե՛ս [Բիլերն ընդդեմ Շվեյցարիայի](#) [ՄԴ] [[Beeler v. Switzerland \[GC\]](#)] գործը, 2022թ., §§ 50-65, երկուսն էլ Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի և 8-րդ հոդվածի շրջանակներում):

74. Ժամանակակից ժողովրդավարական պետությունում շատ անձինք իրենց ամբողջ կյանքի ընթացքում կամ դրա որոշակի ժամանակահատվածում գոյատևման հարցում լիովին կախված են սոցիալական ապահովման և կենսամակարդակի ապահովման նպաստներից: Ներպետական իրավական համակարգերից շատերով ընդունվում է, որ այդ անձինք որոշակի մակարդակի որոշակիության և ապահովության կարիք ունեն, և որպես նրանց օրինական իրավունք նախատեսվում է նպաստների վճարում՝ համապատասխանության չափանիշները բավարարելու պայմանով: Եթե անձը ներպետական օրենսդրությամբ ունի կենսամակարդակի ապահովման նպաստ ստանալու հաստատված իրավունք, ապա այդ շահի կարևորությունը պետք է արտացոլվի նաև վճռելիս, որ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը կիրառելի է ([Ստեկը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության](#) (որոշում) [ՄԴ] [[Stec and others v. the United Kingdom \(dec.\)](#), [GC]], 2005թ., § 51, [Մոսկալն ընդդեմ Լեհաստանի](#) [[Moskal v. Poland](#)], 2009թ., § 39, [Անդրեյևան ընդդեմ Լատվիայի](#) [ՄԴ] [[Andrejeva v. Latvia \[GC\]](#)], 2009թ., § 77):

75. Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով որևէ սահմանափակում չի կիրառվում Պայմանավորվող պետության՝ սոցիալական ապահովման ցանկացած համակարգ ունենալու կամ չունենալու կամ այդ համակարգի շրջանակներում տրամադրվող նպաստի տեսակը կամ գումարն ընտրելու հարցում ազատության նկատմամբ (*Սուխանովը և Իլչենկոն ընդդեմ Ուկրաինայի*<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-145014> [*Sukhanov and Ilchenko v. Ukraine*], 2014թ., § 36, *Կոլեսնիկն ընդդեմ Ուկրաինայի* (որոշում) [*Kolesnykv. Ukraine (dec.)*], 2014թ., §§ 89 և 91, *Ֆակասն ընդդեմ Ուկրաինայի* (որոշում) [*Fakas v. Ukraine (dec.)*], 2014թ., §§ 34, 37-43, 48, *Ֆեդուլովն ընդդեմ Ռուսաստանի* [*Fedulov v. Russia*], 2019թ., § 66): Եթե այնուամենայնիվ Պայմանավորվող պետությունում գործում է օրենսդրություն, որով նախատեսված է անքակտելի իրավունքի ուժով կենսամակարդակի ապահովման նպաստի վճարում, անկախ նրանից՝ այն պայմանավորված է նախկինում կատարված վճարումներից, թե՛ ոչ, ապա պետք է համարվի, որ այդ օրենսդրությունը դրա պահանջները բավարարող անձանց համար ստեղծում է գույքային շահ, որի վրա տարածվում է Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը (*Ստեկը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության* (որոշում) [ՄԴ] [*Stec and Others v. the United Kingdom (dec.)* [GC]], 2005թ., § 54):

76. Ծերության կենսաթոշակի վճարում նախատեսող օրենսդրությունը, անկախ նրանից՝ այն պայմանավորված է կատարված վճարումներով, թե՛ ոչ, դրա պահանջները բավարարող անձանց համար ստեղծում է գույքային շահ, որի վրա տարածվում է այդ հոդվածի գործողությունը (*Կարսոնը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության* [ՄԴ] [*Carson and Others v. the United Kingdom* [GC]], 2010թ., § 64):

77. Եթե տվյալ անձը չի բավարարում (*Բելլեթը, Ուերտասը և Վիալատն ընդդեմ Ֆրանսիայի* (որոշում) [*Bellet, Huertas and Vialatte v. France (dec.)*], 1999թ., § 5) կամ դադարում է բավարարել ներպետական իրավունքում ամրագրված՝ նպաստի կամ կենսաթոշակի որևէ կոնկրետ ձևի տրամադրման իրավական պայմանը, ապա Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով սահմանված իրավունքներին միջամտություն առկա չէ (*Ռասմուսենն ընդդեմ Լեհաստանի* [*Rasmussen v. Poland*], 2009թ., § 71, *Փ.Զ.-ն ընդդեմ Իռլանդիայի* [*P.C. v. Ireland*], 2022թ., §§ 46-47), եթե պայմանները փոխվել են նախքան դիմումատուի կողմից որոշակի նպաստ ստանալու իրավունքի ձեռքբերումը (*Ռիչարդսոնն ընդդեմ*

Միացյալ Թագավորության [Richardson v. the United Kingdom (dec.)], 2012թ., § 17): Եթե կենսաթոշակի կասեցումը կամ նվազեցումը պայմանավորված է եղել ոչ թե դիմումատուի անձնական հանգամանքների փոփոխությամբ, այլ օրենքի կամ դրա կիրառման փոփոխություններով, ապա դա կարող է հանգեցնել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով սահմանված իրավունքներին միջամտության (*Բելանե Նագին ընդդեմ Հունգարիայի* [Bélané Nagy v. Hungary [GC]], 2016թ., § 86, տե՛ս նաև *Բրազաուսկիենեն ընդդեմ Լիտվայի* (որոշում) [Brazauskienė v. Lithuania (dec.)], 2024թ., §§ 107-112, նախկին նախագահի այրուն պետական ամենամյա վճարում կատարելը մերժելու վերաբերյալ): Ավելին, գտել են, որ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը կիրառելի է այն դեպքում, երբ դիմումատուին վարչական մարմնի որոշման հիման վրա կարգադրել են վերադարձնել բարեխղճորեն ստացված նպաստները, և երբ իշխանությունները սխալ են թույլ տվել (*Չակարևիչն ընդդեմ Խորվաթիայի* [Čakarević v. Croatia], 2018թ., §§ 54-65):

78. *Գայգուսուզն ընդդեմ Ավստրիայի* [Gaygusuz v. Austria] գործով, 1996թ., § 41, Ղատարանը գտել է, որ արտակարգ իրավիճակում օգնություն՝ սոցիալական նպաստ ստանալու իրավունքը, որը կապված է գործազրկության ապահովագրության հիմնադրամում վճարումների կատարման հետ, այնքանով, որքանով նախատեսված է գործող օրենսդրությամբ, թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի նպատակներով նյութական իրավունք է: *Կլայնն ընդդեմ Ավստրիայի* [Klein v. Austria] գործով, 2011թ., § 57, նշվել է, որ փաստաբանների կենսաթոշակային ծրագրից կենսաթոշակ ստանալու իրավունքը կապված է վճարումների կատարման հետ, և այն դեպքում, երբ այդ վճարումները կատարվում են, տվյալ անձին տրամադրումը չէր կարող մերժվել: Այսպիսով, կենսաթոշակային հիմնադրամում կատարվող վճարումները որոշակի հանգամանքներում և ներպետական իրավունքի համաձայն առաջացնում են գույքային իրավունք (*Կյարտան Ասմունդսոնն ընդդեմ Իսլանդիայի* [Kjartan Ásmundsson v. Iceland], 2004թ., § 39, *Ապոստոլակիսն ընդդեմ Հունաստանի* [Apostolakis v. Greece], 2009թ., §§ 28 և 35, *Բելլեն, Ուերտասը և Վիալատն ընդդեմ Ֆրանսիայի* (որոշում) [Bellet, Huertas and Vialatte v. France (dec.)], 1999թ., *Սկորկևիչն ընդդեմ Լեհաստանի* (որոշում) [Skórkiewicz v. Poland (dec.)], 1999թ.): Ավելի մանրամասն տե՛ս ստորև՝ «Սոցիալական բարեկեցության վերաբերյալ գործեր» վերտառությամբ գլուխը:

79. *Ֆեդուլովն ընդդեմ Ռուսաստանի* [Fedulov v. Russia] գործով, 2019թ.,

§§ 70-72, Դատարանը նաև վճռել է, որ հաշմանդամություն ունեցող անձի՝ անվճար դեղեր (քաղցկեղի դեմ դեղեր) ստանալու իրավունքը հավասարազոր էր «իրավաչափ ակնկալիքի», այսպիսով՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը կիրառելի էր:

80. *Փ.Բ.-ն ընդդեմ Իռլանդիայի* [P.C. v. Ireland] գործով, 2022թ., § 50, Դատարանը վճռել է, որ կենսաթոշակի վճարումները, որոնք չեն կատարվել դիմումատուին այն դեպքում, երբ նա իր ազատագրկման պատճառով օրենքով սահմանված կարգով գրկված է եղել կենսաթոշակ ստանալու իրավունքից, չեն կարող համարվել «գույք», և Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը կիրառելի չէր:

81. Վերջապես, *Պետրեսկուն և այլք ընդդեմ Ռումինիայի (որոշում)* [Petrescu and Others v. Romania (dec.)] գործով, 2023թ., §§ 69-72, տարբերվող նախադեպային իրավունքի մասին բողոքի համատեքստում դիմումատուները պնդել են, որ ներպետական դատարանների կողմից օրենքի ենթադրյալ սխալ մեկնաբանությունը նրանց գրկել է աշխատանքը հատուկ պայմաններում իրականացրած լինելու փաստը ճանաչելու իրավունքից, քանի որ այն կարևոր հետևանքներ կունենար իրենց աշխատանքային ստաժի և կենսաթոշակային իրավունքների համար: Դատարանը, ինչպես նախորդ գործով, վճռել է, որ դիմումատուները չունենին «գույք», և որ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը կիրառելի չէր:

ix. Գույքի ոչնչացումը միջազգային կամ ներքին զինված հակամարտությունների իրավիճակներում. ապացույցների անհրաժեշտ մակարդակ

82. Գործերում, որոնցում դիմումատուները բողոքել են զինված հակամարտությունների ժամանակ իրենց տների ոչնչացման առնչությամբ, այն հարձակումից հետո, որի մասով բողոքել են, քաղաքի վարչական մարմնի կողմից տրամադրված՝ բնակարանների գույքագրման ցուցակի քաղվածքների հիման վրա Դատարանն ընդունել է սեփականության իրավունքի պահանջը (*Կերիմովան և այլք ընդդեմ Ռուսաստանի* [Kerimova and Others v. Russia], 2011թ., § 293): *Դամանևն ընդդեմ Ռուսաստանի* [Damayev v. Russia] գործով, 2012թ., § 108-111, Դատարանը համարել է, որ իր տունը ոչնչացվելու մասով բողոքելիս դիմումատուն պետք է տրամադրի առնվազն խնդրո առարկա գույքի համառոտ նկարագրությունը: Որպես գույքի նկատմամբ սեփականության իրավունքի կամ

այնտեղ բնակվելու մասին վկայող առևերույթ (*prima facie*) ապացույցի օրինակ Դատարանն ընդունել է այնպիսի փաստաթղթեր, ինչպիսիք են հողի կամ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերը, հողային կամ հարկային ռեգիստրներից քաղվածքները, տեղական վարչական մարմնի տրամադրած փաստաթղթերը, հատակագծերը, լուսանկարներն ու սպասարկման վճարների անդորրագրերը, ինչպես նաև փոստային առաքումների վերաբերյալ ապացույցները, վկաների ցուցմունքները կամ ցանկացած այլ վերաբերելի ապացույց ([Պրոկոպովիչն ընդդեմ Ռուսաստանի](#) [[Prokopovich v. Russia](#)], 2004թ., § 37, [Էլսանովան ընդդեմ Ռուսաստանի](#) (*որոշում*) [[Elsanova v. Russia](#)] (*dec.*), 2005թ.): Բացի այդ, այսպես կոչված տեխնիկական անձնագրերը, որոնք դիտարկվել են որպես «գույքագրման տեխնիկական փաստաթղթեր», տների և հողի նկատմամբ իրավունքի անուղղակի ապացույցներ են համարվել ([Չիրագովը և այլք ընդդեմ Հայաստանի](#) [ՄԴ] [[Chiragov and Others v. Armenia \[GC\]](#)], 2015թ., §§ 140-141): Սովորաբար, եթե դիմումատուն գույքի կամ բնակելի տան նկատմամբ իր իրավունքի մասին վկայող որևէ ապացույց չի ներկայացնում, իր գույքի ոչնչացման մասին նրա բողոքները չեն բավարարվում, քանի որ Դատարանը կարող է համարել, որ չունի բավարար ապացույցներ՝ տվյալ գույքի առկայությունը և այն դիմումատուի «գույքը» համարելու փաստն ընդունելու համար ([Սարգսյանն ընդդեմ Ադրբեջանի](#) [ՄԴ] [[Sargsyan v. Azerbaijan \[GC\]](#)], 2015թ., § 183, [Լիսնիյը և այլք ընդդեմ Ուկրաինայի և Ռուսաստանի](#) (*որոշում*) [[Lisnyy and Others v. Ukraine and Russia \(dec.\)](#)], 2016թ., §§ 26-27) (տե՛ս նաև վերևում՝ «Գույքի վարձակալություն և բնակարանային իրավունքներ» վերտառությամբ ենթագլուխը):

83. [Դողանը և այլք ընդդեմ Թուրքիայի](#) [[Doğan and Others v. Turkey](#)] գործով, 2004թ., որը վերաբերում էր Թուրքիայի՝ արտակարգ իրավիճակում գտնվող հարավարևելյան շրջանից գյուղացիների հարկադիր արտաքսմանը և մի քանի տարի շարունակ նրանց վերադառնալ թույլ չտալուն, պատասխանող կառավարությունը բարձրացրել է այն առարկությունը, որ դիմումատուներից ոմանք սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթեր չեն ներկայացրել՝ հաստատելու համար, որ իրենք նշված գյուղում գույք են ունեցել: Դատարանը համարել է, որ անհրաժեշտություն չկար որոշելու, թե արդյոք սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթի բացակայության դեպքում դիմումատուները ներպետական իրավունքի համաձայն ունեին գույքային իրավունք, թե՛ ոչ: Հարցն ավելի շատ այն էր, թե արդյոք դիմումատուների կողմից իրականացված ընդհանուր

տնտեսական գործունեությունը համարվում էր Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում գտնվող «գույք»: Այս հարցին դրական պատասխան տալով՝ այն նշել է, որ անվիճելի էր, որ դիմումատուները բոլորն էլ մինչև 1994 թվականը բնակվել են Բոյդաշ գյուղում: Թեև նրանք գրանցված գույք չեն ունեցել, նրանք ունեցել են իրենց սեփական տները՝ կառուցված իրենց նախնիների հողատարածքների վրա, կամ բնակվել են իրենց հայրերի սեփականությունը համարվող տներում և մշակել են վերջիններիս պատկանող հողատարածքը. նրանք անվիճարկելի իրավունքներ են ունեցել գյուղի ընդհանուր հողերի, ինչպես օրինակ՝ արոտավայրերի, արածելու վայրերի և անտառային հողերի նկատմամբ, և իրենց ապրուստը վաստակել են՝ անասնապահությամբ և ծառահատմամբ զբաղվելով: Տնտեսական այս բոլոր ռեսուրսները և դիմումատուների կողմից դրանցից ստացված եկամուտը որակվել են որպես Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի նպատակներով «գույք» ([Նույն տեղում](#), § 139):

84. Ամփոփելով, դիմումատուներից պահանջվում է *prima facie* ապացույցներ ներկայացնել Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում զինված հակամարտության ժամանակ գույքի ոչնչացման մասին իրենց բողոքները հիմնավորելու համար:

x. Մարդկային Էմբրիոններ

85. Հաշվի առնելով Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի գործողության տնտեսական և նյութական շրջանակը՝ մարդկային Էմբրիոնները չեն կարող համարվել «գույք» այդ դրույթի իմաստով ([Պառիյոն ընդդեմ Իտալիայի](#) [ՄԴ] [[Parrillo v. Italy \[GC\]](#)], 2015թ., § 215):

Բ. Միջամտությունը սեփականությունից անարգել օգտվելու իրավունքին

1. «Երեք կանոնների» մոտեցումը

86. Երբ Դատարանը հավաստիանում է, որ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը կիրառելի է գործի հանգամանքների նկատմամբ, Դատարանն սկսում է այն հանգամանքների ըստ Էության վերլուծությունը, որոնց վերաբերյալ բողոքում են:

87. Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը բաղկացած է երեք առանձին կանոններից: Առաջին կանոնը, որը շարադրված է առաջին պարբերության

առաջին նախադասության մեջ, ընդհանուր բնույթի է և ձևակերպում է սեփականությունից անարգել օգտվելու սկզբունքը: Երկրորդ կանոնը, որը շարադրված է առաջին պարբերության երկրորդ նախադասության մեջ, վերաբերում է միայն «գույքից» զրկելուն և դրա համար սահմանում է որոշակի պայմաններ: Երրորդ կանոնով, որը շարադրված է երկրորդ պարբերության մեջ, ճանաչվում է, որ Պայմանավորվող պետությունները, ի թիվս այլնի, ունեն ընդհանուր շահերին համապատասխան սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու իրավունքը (*Սպորրոնգը և Լյոնրոթն ընդդեմ Շվեդիայի* [Sporrong and Lönnroth v. Sweden], 1982թ., § 61, *Իատրիդիսն ընդդեմ Հունաստանի* [ՄՊ] [Iatridis v. Greece [GC]], 1999թ., § 55, «Ջեյ. Էյ. Փայ (Օքսֆորդ)» ՍՊԸ-ն և «Ջեյ.Էյ. Փայ (Օքսֆորդ) Լենդ» ՍՊԸ-ն ընդդեմ Միացյալ Թագավորության [ՄՊ] [J. A. Pye (Oxford) Ltd and J.A. Pye (Oxford) Land Ltd v. the United Kingdom [GC]], 2007թ., § 52, «Անհոյգեր-Բուշ Ինք»-ն ընդդեմ Պորտուգալիայի [ՄՊ] [Anheuser-Busch Inc. v. Portugal [GC]], 2007թ., § 62, *Ալիշիչը և այլք ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի, Խորվաթիայի, Սերբիայի, Սլովենիայի և Մակեդոնիայի* Նախկին Հարավսլավական Հանրապետության <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-145575> [ՄՊ] [Ališić and Others v. Bosnia and Herzegovina, Croatia, Serbia, Slovenia and the Former Yugoslav Republic of Macedonia [GC]], 2014թ., § 98, «Իմմոբիլիարե Սաֆֆի»-ն ընդդեմ Իտալիայի [ՄՊ] [Immobiliare Saffi v. Italy [GC]], 1999թ., § 44, *Բրոնիովսկին ընդդեմ Լեհաստանի* [ՄՊ] [Broniowski v. Poland [GC]], 2004թ., § 134, և *Վիստինշը և Պերեպոլկինսն ընդդեմ Լատվիայի* [ՄՊ] [Vistiņš and Perepjolkins v. Latvia [GC]], 2012թ., § 93):

88. Երեք կանոնները «տարբեր» չեն այն իմաստով, որ փոխկապակցված են. երկրորդ և երրորդ կանոնները վերաբերում են սեփականությունից անարգել օգտվելու իրավունքին միջամտության կոնկրետ տեսակներին և հետևաբար պետք է մեկնաբանվեն առաջին կանոնում ձևակերպված ընդհանուր սկզբունքի լույսի ներքո (*Հունաստանի նախկին թագավորը և այլք ընդդեմ Հունաստանի* [ՄՊ] [Former King of Greece and Others v. Greece [GC]], 2000թ., § 50, *Բրունկրոնան ընդդեմ Ֆինլանդիայի* [Bruncrona v. Finland], 2004թ., § 65, «Անհոյգեր-Բուշ Ինք»-ն ընդդեմ Պորտուգալիայի [ՄՊ] [Anheuser-Busch Inc. v. Portugal [GC]], 2007թ., § 62) (առավել մանրամասն տեղեկությունների համար տե՛ս «Սեփականությունից զրկելը», «Օգտագործման նկատմամբ վերահսկողությունը» կամ «Ընդհանուր

կանոն» վերտառությամբ ենթագլուխները):

89. Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի հետ համատեղելի լինելու համար միջամտությունը պետք է բավարարի որոշակի չափորոշիչներ. այն պետք է համապատասխանի օրինականության սկզբունքին և հետապնդի իրավաչափ նպատակ՝ իրագործման ենթակա հետապնդվող նպատակին ողջամտորեն համաչափ միջոցներով (*Բեյելերն ընդդեմ Իտալիայի* [ՄԴ] [*Beyeler v. Italy* [GC]], 2000թ., §§ 108-114):

90. Այս մոտեցումը ձևավորում է Դատարանի կողմից գործերի քննության մեթոդը, եթե Դատարանը բավարարվում է, որ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը կիրառելի է (տե՛ս «Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի կիրառելիությունը» վերտառությամբ գլուխը): Մեթոդը բաղկացած է մի շարք հաջորդական քայլերից, որոնց ընթացքում անդրադարձ է արվում հետևյալ հարցերին. արդյո՞ք տեղի է ունեցել դիմումատուի՝ «գույքից» անարգել օգտվելու իրավունքին միջամտություն: Եթե այո, ապա արդյո՞ք այդ միջամտությունը հավասարազոր է սեփականությունից զրկելուն: Եթե ոչ, արդյո՞ք դա վերաբերել է սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողությանը: Եթե դիմումատուի իրավունքների վրա ազդող միջոցները չեն կարող որակվել որպես սեփականությունից զրկում կամ դրա օգտագործման նկատմամբ վերահսկողություն, կարո՞ղ է արդյոք Դատարանը գործի փաստերը մեկնաբանել «գույքից» անարգել օգտվելու ընդհանուր սկզբունքի լույսի ներքո:

91. Գործերի մեծ մասի դեպքում, երբ Դատարանը պարզում է, որ միջամտությունն օրենքով նախատեսված պայմաններին չի համապատասխանել կամ հանրային շահ կամ իրավաչափ նպատակ չի հետապնդել, ապա այն հենց միայն այդ պատճառով գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի խախտում, և անհրաժեշտ չի համարում անդրադառնալ բողոքում նշված միջոցների համաչափության վերլուծությանը (*Սիմոնյանն ընդդեմ Հայաստանի* [*Simonyan v. Armenia*], 2016թ., §§ 25-26, *Վիյատովիչն ընդդեմ Խորվաթիայի* [*Vijatović v. Croatia*], 2016թ., § 58, *Գուբիևն ընդդեմ Ռուսաստանի* [*Gubiyev v. Russia*], 2011թ., § 83, *Դիմիտրովներն ընդդեմ Բուլղարիայի* [*Dimitrovi v. Bulgaria*], 2015թ., §§ 52-56, և *Բոկը և Պալադեն ընդդեմ Ռումինիայի* [*Bock and Palade v. Romania*], 2007թ., §§ 58-65, *Կասիլովն ընդդեմ Ռուսաստանի* [*Kasilov v. Russia*], 2021թ., § 52) (ավելի մանրամասն տե՛ս «Օրինականության սկզբունքը» և «Հանրային կամ

ընդհանուր շահը» վերտառությամբ ենթագլուխները):

92. Այնուամենայնիվ, որոշ հազվադեպ դեպքերում Դատարանն այս հարցերից մեկը թողնում է բաց և շարունակում է գործի քննությունը համաչափության հայեցակետի տեսանկյունից ([«Megadat.com ԷսԱրԷլ»-ն ընդդեմ Մոլդովայի](#) [[Megadat.com SRL v. Moldova](#)], 2008թ., § 67, և [«Ունսպեդ Պակետ Սերվիսի ՍաՆ. Վե ՏիՉ. Ա.Շ.»-ն ընդդեմ Բուլղարիայի](#) [[Ünspeđ Paket Servisi SaN. Ve TiC. A.Ş. v. Bulgaria](#)], 2015թ., § 43) (ավելի մանրամասն տե՛ս «Համաչափությունը և հարակից հարցեր (արդար հավասարակշռություն, փոխհատուցում, հայեցողական լիազորությունների շրջանակ)» վերտառությամբ ենթագլուխը):

93. Երբ Դատարանը հավաստիանում է, որ տեղի է ունեցել միջամտություն դիմումատուի իրավունքներին, այն յուրաքանչյուր գործով քննում է, թե որ կատեգորիային է պատկանում այն միջամտությունը, որի վերաբերյալ բողոքում են: Եթե դիմումատուի սեփականության իրավունքը դադարեցվել է ներպետական իրավունքի դրույթների համաձայն, ապա այն գործը կքննի առաջին պարբերության երկրորդ նախադասության համաձայն, այսինքն՝ որպես «գույքից» զրկում: «Գույքից» զրկելն ընդգրկում է մի շարք իրավիճակներ՝ անկախ նրանից, թե ինչպես են դրանք որակվում ներպետական իրավունքի համաձայն, եթե անհատական իրավունքի բուն էությունը չի չեղարկվել:

94. Օտարումից պակաս միջամտող միջոցները Դատարանի կողմից կարող են որակվել որպես «սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն»: Որոշ դեպքերում պետք է հստակ տարանջատել որպես սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն և որպես սեփականությունից զրկելուն հավասար միջոցները: Նույնը գործում է նաև սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողության և Դատարանի կողմից առաջին ընդհանուր սկզբունքի, այն է՝ «գույքից» անարգել օգտվելու իրավունքի շրջանակներում քննվող միջոցների միջև: Սովորաբար, որքան պակաս միջամտող է միջոցը, այնքան այն ավելի շատ է թույլ տալիս վերլուծությունն իրականացնել ոչ թե «օգտագործման նկատմամբ վերահսկողություն» գլխի շրջանակներում, այլ առաջին ընդհանուր սկզբունքի համաձայն:

95. Համանման միջոցները Դատարանի կողմից կարող են գնահատվել տարբեր կերպ (օրինակ՝ [Սպորրոնգը և Լյոնորթն ընդդեմ Շվեդիայի](#) [[Sporrong and](#)

[Lönroth v. Sweden](#)] գործով, 1982թ., §§ 62-64, օտարման մասին կարգադրությունը զգալի ժամանակահատվածում շինարարության արգելքի հետ միասին վերլուծվել է որպես «սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն», մինչդեռ համանման միջոցները քննվել են ընդհանուր սկզբունքի շրջանակներում հետևյալ գործերով՝ [Ֆոկասն ընդդեմ Ֆրանսիայի](#) [[Phocas v. France](#)], 1996թ., § 52, [Իատրիդիսն ընդդեմ Հունաստանի](#) [ՄՊ] [[Iatridis v. Greece](#) [GC]], 1999թ., § 55, [Կատտե Կլիտշե դե լա Գրանջեն ընդդեմ Իտալիայի](#) [[Katte Klitsche de la Grange v. Italy](#)], 1994թ., § 40, [Պիալոպուլոսը և այլք ընդդեմ Հունաստանի](#) [[Pialopoulos and Others v. Greece](#)], 2001թ., § 53: Համանման ձևով, [«Պրեսսոս Կոմպանիա Նավիերա Էս.Ա.»-ն և այլք ընդդեմ Բելգիայի](#) [[Pressos Compania Naviera S.A. and Others v. Belgium](#)] գործով, 1995թ., § 34, օրենսդրական միջամտության միջոցով փոխհատուցման պահանջների չեղյալ ճանաչումը քննվել է որպես սեփականությունից զրկում, մինչդեռ [Հունական նավթամշակման «Ստրեն» գործարանները և Ստրատիս Անդրեադիսն ընդդեմ Հունաստանի](#) [[Stran Greek Refineries and Stratis Andreadis v. Greece](#)] գործով, 1994թ., Դատարանը նույնատեսակ միջոցը քննել է Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի առաջին կանոնի համաձայն:

96. Որոշ դեպքերում Դատարանի համար ավելի դժվար է միջոցը կամ մի շարք միջոցներ որակել որպես սեփականությունից զրկում կամ սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն, հիմնականում քանի որ դրանք չեն կարող հեշտությամբ հավասարեցվել գործող նախադեպային իրավունքում որակված միջոցներին, կամ քանի որ այդ մի շարք միջոցները բաղկացած են ներպետական օրենսդրության տարբեր ճյուղերին պատկանող տարբերվող որոշումներից: Այդպիսի դեպքերում այն հավանաբար գործի հանգամանքները կվերլուծի Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի առաջին նախադասությամբ սահմանված ընդհանուր սկզբունքի համաձայն: Սա կկիրառվի մասնավորապես այն իրավիճակներում, երբ դիմումատուի սեփականության վրա ազդել է ոչ թե մեկ որոշում, այլ տարբեր միջոցների/որոշումների համակցություն ([Դոկիչն ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի](#) [[Dokić v. Bosnia and Herzegovina](#)], 2010թ., §§ 55-56՝ բնակարանի առուվաճառքի պայմանագիրն իրականորեն վավեր է, դիմումատուն գրանցված է որպես սեփականատեր, սակայն չի կարողանում բնակարանն իրեն վերադարձնել, [«Մատուշ և Սիլվա» ՍՊԸ-ն և այլք ընդդեմ Պորտուգալիայի](#) [[Error! Hyperlink reference not valid.](#)], 1996թ., § 85, օտարման մասին պաշտոնական որոշման

բացակայության պայմաններում գույքի նկատմամբ իրավունքի սահմանափակումները բխել են այն տնօրինելու սահմանափակ հնարավորությունից և այն փաստից առաջացող վնասից, որ նախատեսվում էր օտարում, սակայն դիմումատուները շարունակել են մշակել այդ հողը, և «[J. Paul Getty Trust and Others v. Italy](#)», 2024թ., § 278, ապօրինի արտահանված մշակութային արժեքի վերադարձն այնպիսի միջոցով, որը թեև ընդունվել է քրեական վարույթի շրջանակներում, ունեցել է քաղաքացիական հետևանքներ): Այն գործով, որով դիմումատուները բողոքել են, որ իրենց իրավունքները խախտվել են օտարված գույքի շուկայական արժեքի՝ փոխհատուցման չափը որոշելու և նույն գույքի նկատմամբ ժառանգության հարկի նպատակներով անցկացված գնահատումների միջև անհամապատասխանությունների պատճառով, օտարումը և հարկումը քննվել են առանձին, և խախտում չի հայտնաբերվել: Այնուամենայնիվ, երկու միջոցների համատեղ հետևանքը քննվել է առաջին կանոնի համաձայն, և արդյունքում գտել են, որ տեղի է ունեցել խախտում ([Jokela v. Finland](#)], 2002թ., §§ 61-65):

97. Այդպիսի դեպքերում, թեև միջոցները չեն ունեցել միևնույն իրավական հետևանքը և ունեցել են տարբեր նպատակներ, Դատարանը սովորաբար համարում է, որ դրանք պետք է դիտարկել միասին՝ «գույքից» անարգել օգտվելու իրավունքի վերաբերյալ ընդհանուր սկզբունքի լույսի ներքո («[Matos e Silva, Lda., and Others v. Portugal](#)», 1996թ., §§ 84-85):

98. Միջոցները որպես օգտագործման նկատմամբ վերահսկողություն կամ ընդհանուր սկզբունքի շրջանակներում որակելու հարցում այս դժվարությունն արտացոլված է նաև այն փաստում, որ որոշ դեպքերում Դատարանը բացահայտ չի նշում, թե Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի որ մասն է կիրառվել ([Papamichalopoulos v. Greece](#)], 1993թ., § 46), կամ հարցը բացահայտ թողնում է բաց ([Lavrechov v. the Czech Republic](#)], 2013թ., § 43, [Դենիսովան և Մոիսեյևան ընդդեմ Ռուսաստանի](#) [Denisova and Moiseyeva v. Russia], 2010թ., § 55, «[Ունսպեդ Պակետ Սերվիսի ՍաՆ. Վե ՏիԶ. Ա.Շ.](#)»-ն ընդդեմ [Բուլղարիայի](#) [Ünspeid Paket Servisi SaN. Ve TiC A.Ş. v. Bulgaria], <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-157757> 2015թ.,

§§ 39-40):

99. Ամեն դեպքում Դատարանը կկիրառի գնահատման նույն չափորոշիչները՝ անկախ միջամտության դասակարգումից: Բոլոր դեպքերում միջամտությունը պետք է ծառայի հանրային շահին (տե՛ս ստորև՝ հանրային շահին միջամտության վերաբերյալ գլուխը), համապատասխանի օրենքով նախատեսված պայմաններին (տե՛ս ստորև՝ օրենքով նախատեսված պայմաններին ենթակա միջամտության վերաբերյալ գլուխը) և անցնի արդար հավասարակշռության ստուգումը (տե՛ս ստորև՝ «Համաչափությունը և հարակից հարցեր» վերտառությամբ գլուխը):

100. Մասնավոր կողմերի միջև քաղաքացիաիրավական վեճի վերաբերյալ վարույթներն ինքնին չեն առաջացնում պետության՝ Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով սահմանված պատասխանատվություն (*Ռուիս Մատեոսն ընդդեմ Միացյալ Թագավորության* [Ruiz Mateos v. the United Kingdom], Հանձնաժողովի որոշում, 1988թ., Էջ 268 և 275, *Գուստաֆսոնն ընդդեմ Շվեդիայի* [ՄՊ] [Gustafsson v. Sweden [GC]], 1996թ., § 60, *Սկովրոնսկին ընդդեմ Լեհաստանի* (որոշում) [Skowroński v. Poland (dec.)], 2001թ., *Կրանցն ընդդեմ Լեհաստանի* (որոշում) [Kranz v. Poland (dec.)], 2002թ., *Էսկելինենն ընդդեմ Ֆինլանդիայի* (որոշում) [Eskelinen v. Finland (dec.)], 2004թ., *Տորմալան ընդդեմ Ֆինլանդիայի* (որոշում) [Tormala v. Finland (dec.)], 2004թ., «*«Ռուսթավի 2» հեռուստաընկերություն» ՍՊԸ-ն և այլք ընդդեմ Վրաստանի* [Rustavi 2 Broadcasting Company Ltd and Others v. Georgia], 2019թ., § 310): Չուտ այն փաստը, որ պետությունն իր դատական համակարգի միջոցով տրամադրում է մասնավոր իրավունքի վերաբերյալ վեճը լուծելու ֆորում, չի առաջացնում պետության կողմից Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով սահմանված գույքային իրավունքների միջամտություն (*Կուխաժը և Շտիսն ընդդեմ Չեխիայի Հանրապետության* [Kuchař and Štis v. the Czech Republic], Հանձնաժողովի որոշում, 1998թ.), նույնիսկ եթե քաղաքացիական դատարանի կողմից կայացված վճռի նյութական արդյունքը հանգեցնում է որոշակի «գույքի» կորստի: Այնուամենայնիվ, պետության՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով սահմանված պարտավորություններից է առնվազն նվազագույն օրենսդրական դաշտի, այդ թվում՝ պատշաճ ֆորումի ստեղծումը, որը թույլ կտար այն անձանց, որոնք պնդում են, որ իրենց իրավունքը խախտվել է, արդյունավետ կերպով պաշտպանել իրենց իրավունքները և հետամուտ լինել դրանց կատարմանը: Առանց դրա, պետությունը լրջորեն

կիսախտի օրենքի գերակայությունը պաշտպանելու և կամայականությունը կանխելու իր պարտավորությունը (*Կոտովն ընդդեմ Ռուսաստանի* [ՄՊ] [*Kotov v. Russia* [GC]], 2012թ., § 117):

101. Դատարանի՝ ներպետական իրավունքի ճիշտ մեկնաբանումը և կիրառումը ստուգելու իրավասությունը սահմանափակ է, և ազգային դատարանների պարտականությունները ստանձնելը դրա գործառույթը չէ: Դրա դերն ընդհանուր առմամբ ապահովելն է, որ այդ դատարանների որոշումները չլինեն կամայական կամ այլ կերպ ակնհայտ անհիմն (*«Անհոյգեր-Բուշ Ինք.»-ն ընդդեմ Պորտուգալիայի* [ՄՊ] [*Anheuser-Busch Inc. v. Portugal* [GC]], 2007թ., § 83): Այդպիսի որոշումներով պատճառված կորուստների համար պետությունը կարող է պատասխանատվության ենթարկվել միայն, եթե դատարանի որոշումները ներպետական իրավունքին համապատասխան չեն, կամ եթե դրանք թերի են՝ կամայական են կամ ակնհայտ անհիմն՝ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածին հակառակ, կամ եթե անձը կամայականորեն կամ անարդար ձևով զրկվել է սեփականությունից՝ հոգուտ մեկ այլ անձի (*Բրամելիդը և Մալմստրոմն ընդդեմ Շվեդիայի* [*Bramelid and Malmström v. Sweden*], Հանձնաժողովի որոշում, 1982թ., Էջ 82-83, *Դաբիչն ընդդեմ Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության* <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-22051> (որոշում) [*Dabić v. the former Yugoslav Republic of Macedonia (dec.)*], 2001թ., *Վուլախը և այլք ընդդեմ Ռուսաստանի* [*Vulakh and Others v. Russia*], 2012թ., § 44):

102. Դատարանը միայն խիստ բացառության կարգով է քաղաքացիական դատարանի վճիռը համարել միջամտություն, քանի որ դրա կատարման եղանակներն այնքան ոչ ճկուն են եղել, որ չափազանց մեծ բեռ են դրել կողմի վրա (*Միլոն ընդդեմ Ֆրանսիայի* [*Milhau v. France*], 2014թ., §§ 48-53): Դա տեղի էր ունեցել նաև այն դեպքում, երբ դիմումատուի կողմից որպես սեփականաշնորհման ծրագրի մաս գնված լինելու փաստը հաստատող՝ կեղծված փաստաթղթերի հիման վրա գնված բնակարանը հետագայում վերցվել էր համայնքապետարանի կողմից, և Դատարանը համարել էր, որ վեճի առարկան և կիրառված նյութաիրավական դրույթները պարունակում էին հանրային իրավունքի էական տարրեր և ենթադրում էին պետության մասնակցությունը՝ իր կարգավորող կարողությամբ (*Գլադիշևան ընդդեմ Ռուսաստանի* [*Gladysheva v. Russia*], 2011թ., §§ 52-59): Նույն կերպ, *ժիդովը և այլք ընդդեմ Ռուսաստանի* [*Zhidov and Others v. Russia*] գործով, 2018թ., §§ 94-95, Դատարանը գտել է, որ

վարույթի ընթացքում սահմանված դատական արգելքները «միջամտություն» էին, քանի որ դրանք հանրային շահ էին հետապնդում: *«ԱԿԿԱ/ԼԱԱ» ՍՊԸ-ն ընդդեմ Լատվիայի* [SIA AKKA/LAA v. Latvia] գործով, 2016թ., §§ 58-59, վարույթով կայացված վճիռը, որը վերաբերում էր հեղինակների մտավոր սեփականության պաշտպանությանը, որոնք իրենց երաժշտական ստեղծագործությունների հեղինակային իրավունքի կառավարումը վստահել էին դիմումատու կազմակերպությանը, համարվել էր միջամտություն, քանի որ այն սահմանափակում էր դիմումատու կազմակերպության՝ երաժշտության հեռարձակման վերաբերյալ պայմանագրեր ազատորեն կնքելու իրավունքը:

ա. Սեփականությունից զրկելը

103. Եթե դիմումատուի իրավունքները չեղյալ են հայտարարվել օրենքի ուժով, ապա Դատարանը դիմումատուի բողոքը կքննի երկրորդ կանոնի համաձայն, այն է՝ սեփականությունից զրկելը:

104. *Սուրբ մենաստաններն ընդդեմ Հունաստանի* [The Holy Monasteries v. Greece] գործով, 1994թ., §§ 60-61, Դատարանը վճռել է, որ նշված գույքի օգտագործումը և տիրապետումն ինքնաբերականորեն վերապահող՝ օրենքով սահմանված դրույթի ազդեցությունը համապատասխան հողի նկատմամբ սեփականության լիարժեք իրավունքը պետությանը փոխանցելն էր, և դա «գույքից» զրկում էր:

105. «Գույքից» զրկելը կարող է առաջանալ նաև այն իրավիճակներում, երբ անհատական իրավունքները չեղյալ ճանաչելու պաշտոնական որոշում առկա չէ, սակայն պետական մարմինների կողմից ձեռնարկված տարբեր միջոցների խմբի ազդեցությունը դիմումատուի «գույքի» վրա այնքան մեծ է, որ դա նույնացվում է օտարման հետ: «Գույքից» զրկում տեղի ունեցած լինելու կամ չլինելու փաստը որոշելու համար Դատարանը չպետք է սահմանափակվի՝ ուսումնասիրելով, թե արդյոք տեղի է ունեցել սեփականագրվում կամ պաշտոնական օտարում. այն պետք է տեսանելիության սահմաններից ավելի խոր ուսումնասիրի և քննի այն իրավիճակի իրողությունները, որի վերաբերյալ բողոքում են: Քանի որ Կոնվենցիան նախատեսված է երաշխավորելու այն իրավունքները, որոնք «գործնական են», պետք է պարզել, թե արդյոք այդ իրավիճակը հավասարազոր է *de facto* (փաստացի) օտարման (ի թիվս այլ վճիռների, *Սպորրոնսզը և Լյոնրոթն ընդդեմ Շվեդիայի* [Sporrong and Lönnroth v. Sweden], 1982թ., § 63, *Վասիլեսկուն*

ընդդեմ Ռումինիայի [Vasilescu v. Romania], 1998թ., § 51, *Շեմբրին և այլք ընդդեմ Մալթայի* [Schembri and Others v. Malta], 2009թ., § 29, *Բրումարեսկուն ընդդեմ Ռումինիայի* [ՄՊ] [Brumărescu v. Romania [GC]], 1999թ., § 76, *Դեպալն ընդդեմ Ֆրանսիայի* [ՄՊ] [Depalle v. France [GC]], 2010թ., § 78): Անշուշտ, Կոնվենցիայի տարբեր հոդվածների շրջանակներում Դատարանի նախադեպային իրավունքը ցույց է տալիս, որ կարող է անհրաժեշտ տեսանելիության սահմաններից և օգտագործված ձևակերպումներից ավելի խոր ուսումնասիրել և կենտրոնանալ իրավիճակի իրողությունների վրա (օրինակ՝ *Ապապ Բոլոնյան ընդդեմ Մալթայի* [Apap Bologna v. Malta], 2016թ., § 83):

106. Օրինակ, այն գործով, որով ռազմածովային ուժերը զավթել էին դիմումատուների հողը, դրա վրա ռազմածովային բազա էին կառուցել, և դիմումատուներն այնուհետև չէին կարողացել մատչելիություն ունենալ իրենց գույքին և կամ այն վաճառել, կտակել, գրավադրել կամ նվիրատվություն կատարել, հողը տնօրինելու կարողությունն իրավիճակը շտկելու համար ձեռնարկված փորձերի ձախողման հետ միասին դիմումատուների համար առաջացրել էր այնքան լուրջ *de facto* հետևանքներ, որ Դատարանը համարել է, որ տեղի էր ունեցել օտարում՝ նույնիսկ օտարման մասին պաշտոնական որևէ որոշման բացակայության դեպքում (*Պապամիխալոպուլոսն ընդդեմ Հունաստանի* [Papamichalopoulos v. Greece], 1993թ., §§ 44-46): Նույն կերպ, *Սարիկան և Դիլավերն ընդդեմ Թուրքիայի* [Sarica and Dilaver v. Turkey] գործով, 2021թ., § 43, որտեղ դիմումատուների հողերը ներառվել էին ռազմական գոտում, *de facto* օտարումը Թուրքիայի իշխանություններին հնարավորություն էր տվել զավթելու անշարժ գույքը և անդառնալիորեն փոխելու դրա նպատակային նշանակությունն այնպես, որ այն, ի վերջո, համարվել էր պետական սեփականություն՝ առանց սեփականության փոխանցման մասին որևէ պաշտոնական դեկլարատիվ ակտի (տե՛ս նաև *Յավուզ Օշդենն ընդդեմ Թուրքիայի* [Yavuz Özden v. Turkey], 2021թ., §§ 79-80):

107. Նախքան Թիվ 1 արձանագրությունն ուժի մեջ մտնելը բռնագրավված ոսկյա մետաղադրամների շարունակական հարկադիր պահման վերաբերյալ գործով, որտեղ արձանագրությունն ուժի մեջ մտնելուց հետո մետաղադրամները դիմումատուին վերադարձնելու վերաբերյալ վճիռը հետագայում բեկանվել էր, Դատարանը նշել էր, որ գործնական խոչընդոտը կարող է հավասարազոր լինել Կոնվենցիայի խախտման նույն կերպ, ինչ իրավական խոչընդոտը: Գույքը

տնօրինելու հնարավորության լիարժեք կորուստն իրավիճակը շտկելու համար փորձեր չձեռնարկվելու հետ միասին դիմումատուի համար լուրջ հետևանքներ էր առաջացրել, որոնք բավարար էին, որ Դատարանը դրանք համարեր *de facto* բռնագրավում (*Վասիլեսկուն ընդդեմ Ռումինիայի* [Vasilescu v. Romania], 1998թ., §§ 51-54):

108. Այն գործով, որով համայնքապետարանը դիմումատու ընկերության հողը տնօրինելու համար արագացված ընթացակարգով կարգադրություն էր արձակել, այդ հողի նկատմամբ ֆիզիկական տիրապետում էր հաստատել և սկսել էր դրա վրա ճանապարհաշինարարական աշխատանքներ իրականացնել, հետագա վճիռը, որով հետադարձ ուժով թույլատրվել էր պետական մարմինների կողմից հողի անօրինական տիրապետումը, դիմումատու ընկերությանը գրկել էր այդ հողի նկատմամբ իրավունքի վերականգնման հնարավորությունից: Վճռի հետևանքը հավասարազոր էր «գույքից» գրկելուն (*«Բելվեդերե Ալբերգիերա Էս.ար.Էլ.»-ն ընդդեմ Իտալիայի* [Belvedere Alberghiera S.r.l. v. Italy], 2000 թ., § 54): *Բագիրովան և այլք ընդդեմ Ադրբեջանի* [Bagirova and Others v. Azerbaijan] գործով, 2023թ., §§ 46 և 53, Դատարանը վճռել է, որ մասնավոր սեփականություն հանդիսացող գույքի օտարման ներպետական ընթացակարգը չի պահպանվել: Ավելին, հողակտորների արժեքի 40 տոկոսի և 100 տոկոսի կորուստը պատվարի կառուցման արդյունքում դրանց ֆիզիկական հասանելիության մասնակի կորստի հետ միասին նույնպես հավասարազոր էր *de facto* օտարման (*Այգունն ընդդեմ Թուրքիայի* [Aygün v. Turkey], 2011թ., § 39): Համանման եզրակացություն է արվել շենքի անօրինական քանդման առնչությամբ (*Չամմիտը և Վասսալուն ընդդեմ Մալթայի* [Zammit and Vassallo v. Malta], 2019թ., § 54):

109. Եթե Դատարանը միջոցը կամ միջոցների խումբը համարում է օտարում, ապա դա սովորաբար պետության համար առաջացնում է տուժած սեփականատիրոջը փոխհատուցում վճարելու պարտավորություն (տե՛ս «Սեփականությանը միջամտության համար փոխհատուցումը որպես արդար հավասարակշռության տարր» վերտառությամբ ենթագլուխը):

բ. Օգտագործման նկատմամբ վերահսկողությունը

110. Դատարանի կողմից երրորդ կանոնի համաձայն որպես օգտագործման նկատմամբ վերահսկողություն որակված միջոցները տարածվում են մի շարք իրավիճակների, այդ թվում, օրինակ՝ հետևյալի վրա. ձեռնարկությունների

գործունեության վրա ազդող լիցենզիաների գործողության դադարեցում կամ պայմանների փոփոխություն (*«Երեք Տրակտոր» ՍՊԸ-ն ընդդեմ Շվեդիայի* [Tre Traktörer Aktiebolag v. Sweden], 1989թ., § 55, *Ռոզենցվայգը և «Մաքսային պահեստներ» ՍՊԸ-ն ընդդեմ Լեհաստանի* [Rosenzweig and Bonded Warehouses Ltd. v. Poland], 2005թ., § 49, *«Բիմեր Էս.Ա.»-ն ընդդեմ Մոլդովայի* [Bimer S.A. v. Moldova], 2007թ., §§ 49 և 51, *«Megadat.com ԷսԱրԷլ»-ն ընդդեմ Մոլդովայի* [Megadat.com SRL v. Moldova], 2008թ., § 65, *«Չենտրո Եվրոպա 7 Էս.ար.Էլ.»-ը և Դի Ստեֆանոն ընդդեմ Իտալիայի* [ՄՊ] [Centro Europa 7 S.r.l. and Di Stefano v. Italy [GC]], 2012թ., § 186, *«ԷսԱյթի ԷսԱր.Էլ.»-ն ընդդեմ Մոլդովայի Հանրապետության* [NIT S.R.L. v. the Republic of Moldova], 2022թ., § 247, *Պարիզեկն ընդդեմ Չեխիայի Հանրապետության* [Pařízek v. the Czech Republic], 2023թ., § 41), ճանապարհային գովազդի հետ կապված գործունեություն (*«Պանոն Պլակատ» ՍՊԸ-ն և այլք ընդդեմ Հունգարիայի* [Pannon Plakát Kft and Others v. Hungary], 2022թ., § 46), դպրոցական դասագրքերի շուկայում պետական մենաշնորհի հաստատում (*«Կոնյվ-Տար» ՍՊԸ-ն և այլք ընդդեմ Հունգարիայի* [Könyv-Tár Kft and Others v. Hungary], 2018թ., §§ 43 և 59), վարձավճարի կարգավորման համակարգեր (*Մելախերը և այլք ընդդեմ Ավստրիայի* [Mellacher and Others v. Austria], 1989թ., § 44, *Հուտեն-Չապսկան ընդդեմ Լեհաստանի* [ՄՊ] [Hutten-Czapska v. Poland [GC]], 2005թ., § 160, *Էստոնի Ակիլինան ընդդեմ Մալթայի* <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-140234> [Anthony Aquilina v. Malta], 2014թ., § 54, *Բիտտոն և այլք ընդդեմ Սլովակիայի* [Bittó and Others v. Slovakia], 2014թ., § 101), այն վարձակալների նկատմամբ գույքի վերադարձի մասին կարգադրությունների կատարման կասեցում, որոնք դադարել են վճարել վարձավճար (*«Իմմոբիլիարե Սաֆֆի»-ն ընդդեմ Իտալիայի* [ՄՊ] [Immobiliare Saffi v. Italy [GC]], 1999թ., § 46), գույքի սեփականատերերի կողմից վարձակալից պահանջվող վարձավճարի չափի նկատմամբ օրենքով սահմանված սահմանափակումներ և վարձակալության պայմանագրի՝ նույն պայմաններով երկարաձգումն անորոշ ժամկետով, մինչ սեփականատերերը շարունակել են ստանալ վարձավճարը նույն պայմաններով, որոնց կամավոր համաձայնել էին պայմանագիրը ստորագրելիս, և ազատ են եղել վաճառելու իրենց հողը՝ չնայած հողի հետ կապված վարձակալության պայմանագրին (*Լինդհայմը և այլք ընդդեմ Նորվեգիայի* [Lindheim and Others v. Norway], 2012թ., § 75-78), հողի նկատմամբ որոշ բացառիկ իրավունքների կորուստ (*Շասանյուն և այլք ընդդեմ Ֆրանսիայի* [ՄՊ] [Chassagnou and Others v. France [GC]], 1999թ., § 74, դիմումատուների հողի

վրա որսորդությունը հանդուրժելու պարտավորություն, *Հերմանն ընդդեմ Գերմանիայի* [ՄՊ] [*Herrmann v. Germany [GC]*], 2012թ., § 72), ավտոմեքենայի պաշտոնական գրանցման մերժում (*Յարոսլավցևն ընդդեմ Ռուսաստանի* [*Yaroslavtsev v. Russia*], 2004թ., § 32, *Սիլդեջիսն ընդդեմ Լեհաստանի* [*Sildedzis v. Poland*], 2005թ., § 45), բանկային հաշիվների սառեցում (*Ուզանը և այլք ընդդեմ Թուրքիայի* [*Uzan and Others v. Turkey*], 2019թ., § 194, «*Ժողովրդավարության և մարդու իրավունքների ռեսուրսային կենտրոն»-ը և Մուստաֆաևն ընդդեմ Ադրբեջանի* [*Democracy and Human Rights Resource Centre and Mustafayev v. Azerbaijan*], 2021թ., § 66), հողի սեփականատիրոջ նկատմամբ դրական պարտավորությունների սահմանում (օրինակ՝ պարտադիր անտառատնկում՝ *Դենևն ընդդեմ Շվեդիայի* [*Denev v. Sweden*], Հանձնաժողովի որոշում, 1989թ.) կամ հողի իրավական դասակարգումը որպես անտառային հող՝ սեփականատիրոջ նկատմամբ սահմանված հարակից պարտավորություններով (*Անսայը և այլք ընդդեմ Թուրքիայի* (որոշում) [*Ansay and Others v. Turkey (dec.)*], 2006թ.):

111. Ապօրինի կառուցված շենքերի քանդումը սովորաբար համարվում է գույքի օգտագործման նկատմամբ վերահսկողություն (*Իվանովան և Չերկեզովն ընդդեմ Բուլղարիայի* [*Ivanova and Cherkezov v. Bulgaria*], 2016թ., § 69): *Սալիբան ընդդեմ Մալթայի* [*Saliba v. Malta*] գործով, 2005թ., § 46, Դատարանը վճռել է, որ ամբողջությամբ ապօրինի շինության քանդման մասին կարգադրություն արձակելու նպատակը հողակտորն այն նախնական վիճակին բերելն էր, որում այն կգտնվեր, եթե օրենքի պահանջները խախտված չլիներին: Այնուամենայնիվ, մի շարք գործերով քանդման մասին միջոցը հավասարեցվել է պատժամիջոցի, և հետևաբար այն գտնվում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի քրեաիրավական հայեցակետի գործողության ներքո, թեև քրեական պատիժ չի նշանակվել (*Համերն ընդդեմ Բելգիայի* [*Hamer v. Belgium*], 2007թ., §§ 59-60): Նույն կերպ, «*Սուդ Ֆոնդի Էսարել»-ը և այլք ընդդեմ Իտալիայի* (որոշում) [*Sud Fondi srl and Others v. Italy (dec.)*] գործով, 2007թ., Դատարանը վճռել էր, որ 7-րդ հոդվածը կիրառվում էր ապօրինի կառուցապատված հողի բռնագրավման նկատմամբ, որի արդյունքում արդեն կառուցված շենքերը հետագայում քանդվելու էին:

112. Բռնագանձումը և բռնագրավումը Դատարանի կողմից սովորաբար համարվում են գույքի օգտագործման նկատմամբ վերահսկողություն, որը պետք է դիտարկել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի երկրորդ

պարբերության համաձայն՝ չնայած այն ակնհայտ փաստի, որ դրանք հանգեցնում են «գուլքից» զրկման (*«ԱԳՕՍԻ»-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* [AGOSI v. the United Kingdom], 1986թ., § 55, *Ռայմոնդոն ընդդեմ Իտալիայի* [Raimondo v. Italy], 1994թ., § 29, *Հոնեկերը և այլք ընդդեմ Գերմանիայի* (որոշում) [Honecker and Others v. Germany (dec.)], 2001թ., *Ռիելան և այլք ընդդեմ Իտալիայի* (որոշում) [Riela and Others v. Italy (dec.)], 2001թ., *Իմերին ընդդեմ Խորվաթիայի* https://hudoc.echr.coe.int/eng_-_%7B%22itemid%22%3A%5B%22001-210495%22%5D%7D [Imeri v. Croatia], 2021թ., § 66): Հետևաբար Դատարանի անփոփոխ մոտեցումն այն է, որ բռնագրավման միջոցը գուլքի օգտագործման նկատմամբ վերահսկողությունն է (*«Էրր Կանադա»-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* [Air Canada v. the United Kingdom], 1995թ., § 34, *Սիլիցկիենեն ընդդեմ Լիտվայի* [Silickienė v. Lithuania], 2012թ., § 62, *«Ակտիվա» ՍՊԸ-ն ընդդեմ Սերբիայի* [Aktiva DOO v. Serbia], 2021թ., § 78): *«Բիո դ'Արդենն Էս.Ա.»-ն ընդդեմ Բելգիայի* [S.A. Bio d'Ardenne v. Belgium] գործով, 2019թ., §§ 47-49, կենդանիների առողջության պահպանության մասին կարգավորումների բազմաթիվ խախտումների պատճառով բրուցելոզով վարակված մեծ թվով կենդանիների հարկադիր սպանող հավասար էր օգտագործման նկատմամբ վերահսկողության:

113. Այնուամենայնիվ, եթե հանցագործության գործիքի բռնագրավումը վերաբերում է երրորդ անձանց գուլքին և հավասար է մշտական միջոցի, Դատարանն այդ միջամտությունները վերլուծել է որպես գուլքից զրկում (*Անդոնոսկին ընդդեմ Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության* [Andonoski v. the former Yugoslav Republic of Macedonia], 2015թ., § 36, երրորդ կողմի կողմից միգրանտներին մաքսանենգ ճանապարհով տեղափոխելու համար օգտագործված ավտոմեքենայի մշտական բռնագրավումը, *«Բի.Զեյ.Էմ.» լոգիստիկ տրանսպորտային առևտրային* <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-170387սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն ընդդեմ Սլովենիայի> [B.K.M. Lojistik Tasimacilik Ticaret Limited Sirketi v. Slovenia], 2017թ., § 48, թմրանյութերի առևտրի համար երրորդ կողմի կողմից օգտագործված՝ ընկերության բեռնատարի մշտական բռնագրավումը, *Յաշարն ընդդեմ Ռումինիայի* [Yaşar v. Romania], 2019թ., § 49, երրորդ անձի կողմից ապօրինի ձկնորսության համար օգտագործված՝ դիմումատուի նավի մշտական բռնագրավումը): *«Ակտիվա» ՍՊԸ-ն ընդդեմ Սերբիայի* [Aktiva DOO v. Serbia] գործով, 2021թ., § 78, Դատարանը որոշել է չանդադարապես այն հարցին, թե որ

կանոնն է կիրառելի, և գտել է, որ դիմումատու ընկերության կողմից օրինական ճանապարհով, սակայն հաշվառման պահանջների խախտմամբ ներմուծված ապրանքների բռնագրավումն անհամաչափ է եղել:

114. Նույնիսկ կանխարգելիչ բռնագրավման միջոցները, որոնք սահմանվել են քրեական պատժի բացակայության պայմաններում, որպես այդպիսին չեն հանգեցնում Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտման: Այն կանխավարկածը, որ հանցավոր կազմակերպության կազմում լինելու մեջ կասկածվող անձի գույքն ապօրինի գործունեությունից ստացված եկամուտ է, *per se* (ինքնին) արգելված չէ, եթե համապատասխան վարույթը սեփականատիրոջն իր գործն իշխանություններին ներկայացնելու ողջամիտ հնարավորություն չի ընձեռում, հատկապես այն դեպքում, երբ դատարաններին արգելվում է իրենց որոշումներում զուտ կասկածների վրա հիմնվելը ([Արկուրին և այլք ընդդեմ Իտալիայի](#) (որոշում) [[Arcuri and Others v. Italy \(dec.\)](#)], 2001թ.):

115. Ավելին, եթե դիմումատուի սերվերը պահպանվել է միտ յոթուկես ամիս երրորդ կողմերի նկատմամբ քրեական գործով քննություն իրականացնելու նպատակով, և նախկինում նրա կողմից օգտագործվել է մասնագիտական գործունեության համար, Դատարանը գտել է, որ ներպետական մարմիններն արդար հավասարակշռություն չեն հաստատել հետապնդվող օրինական նպատակի (անկարգությունների կամ հանցագործության կանխում և այլոց իրավունքների պաշտպանություն) և դիմումատուի գույքային իրավունքների միջև ([Պենդովն ընդդեմ Բուլղարիայի](#) [[Pendov v. Bulgaria](#)], 2020թ., §§ 44-51 և 63): Դատարանը նաև նշել է, որ իշխանությունները կարող էին պատճենել համապատասխան տեղեկությունները և սերվերը վերադարձնել դիմումատուին, ինչը կարևոր էր նրա մասնագիտական գործունեության համար:

116. Վերջապես, դատական ծախսերը վճարելու պարտավորության և համապատասխան կարգավորումների վրա տարածվում է Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի երկրորդ պարբերությունը: Վարույթի կողմերից դատական ծախսերը գանձելը հետապնդում է տարբեր նպատակներ, այդ թվում՝ դատական համակարգի ֆինանսավորումը և պետական եկամուտների ավելացումը ([Պերդիգաուն ընդդեմ Պորտուգալիայի](#) [ՄԴ] [[Perdigão v. Portugal](#) [GC]], 2010թ., § 61): Այնուամենայնիվ, [Պերդիգաունի](#) գործին հաջորդող բազմաթիվ գործերով Դատարանը մյուս կողմի ծախսերը վճարելու մասին դատական կարգադրությունն ուսումնասիրել է որպես միջամտություն գույքից անարգել

օգտվելու իրավունքին, որը կարգավորվում է Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի առաջին պարբերության առաջին նախադասության մեջ սահմանված ընդհանուր կանոնով: *Ցինդրիչ և Բեշլիչ ընդդեմ Խորվաթիայի* [Cindrić and Bešlić v. Croatia] գործով, 2016թ., § 92, Դատարանն այնուհետև տարբերակել է որպես այդպիսին դատական համակարգին առնչվող ծախսերը և շահող կողմի կատարած և «պարտվողը վճարում է» կանոնի համաձայն վճարման ենթակա ծախսերը՝ նշելով, որ միայն առաջինը պետք է ներառվի Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի երկրորդ պարբերության իմաստով «գանձում» հասկացության մեջ (*«Էկոգլասնոստ» ազգային շարժումն ընդդեմ Բուլղարիայի*, [National Movement Ekoglasnost v. Bulgaria], 2020թ., §§ 69-71) (տե՛ս նաև 6-րդ հոդվածի ներքո):

գ. Ընդհանուր կանոն

117. Առաջին կանոնն ընդհանուր բնույթ ունի: Եթե գույքային իրավունքներին միջամտությունը չի կարող որակվել երկրորդ կամ երրորդ կանոնով, ապա կիրառվում է առաջին կանոնը (այսպես կոչված՝ համապարփակ բանաձևը):

118. *Սպորրոնգը և Լյոնրոթն ընդդեմ Շվեդիայի* [Sporrong and Lönnroth v. Sweden] գործով, 1982թ., §§ 64-65, Դատարանը վճռել է, որ օտարման թույլտվությունները նախնական քայլ էին «գույքից» զրկման հանգեցնող ընթացակարգում, և դրանք քննել է առաջին պարբերության առաջին նախադասության շրջանակներում:

119. *Յունական նավթամշակման «Ստրեն» գործարանները և Ստրատիս Անդրեադիսն ընդդեմ Յունաստանի* [Stran Greek Refineries and Stratis Andreadis v. Greece] գործով, 1994թ., §§ 62 և 68, Դատարանը քննել է օրենսդրական միջամտությունը՝ արբիտրաժային որոշումն առջին և ընդհանուր կանոնի համաձայն կիրառման ոչ ենթակա ճանաչելով, և գտել է, որ տեղի է ունեցել դիմումատուի գույքային իրավունքի խախտում: Նույն կերպ, *«ԲիԹԷՍ Յուդինգ ա.Էս.»-ն ընդդեմ Սլովակիայի* [BTS Holding a.s. v. Slovakia] գործով, 2022թ., §§ 64 և 71, Դատարանն Առևտրի միջազգային պալատի կողմից կայացված վերջնական և պարտադիր արբիտրաժային որոշման կատարումից հրաժարվելու դեպքը քննել է ընդհանուր կանոնի շրջանակներում: Դատարանը համարել է, որ հիմքերը, որոնց վրա հենվել են ներպետական դատարանները, չեն բերվել և (կամ) դուրս են եղել օտարերկրյա արբիտրաժային որոշման կատարումից հրաժարվելու իրավական շրջանակից, որը թույլատրված էր ներպետական իրավունքի

դրույթներով և «Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին» Նյու Յորքի կոնվենցիայով, և գտել է, որ տեղի է ունեցել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

120. *Լոիզիդու ընդդեմ Թուրքիայի* [*Loizidou v. Turkey*] գործը, 1996թ., §§ 61-64, վերաբերում էր դիմումատուի համար Զյուսիսային Կիպրոսում գտնվող իր գույքին հասանելիությանը: Դատարանը վճռել է, որ դիմումատուի բողոքը չէր սահմանափակվում տեղաշարժի ազատության իրավունքով, և որ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը կիրառելի է: Դիմումատուն շարունակել է լինել հողի օրինական սեփականատերը: Թուրքական ուժերի կողմից հասանելիության շարունակական մերժումը համարվել է միջամտություն, և Դատարանը գտել է, որ տեղի է ունեցել ընդհանուր կանոնի շրջանակներում դիմումատուի գույքային իրավունքի խախտում:

121. Այնպիսի միջոցներ, ինչպիսիք են հողերի խոշորացման վարույթը (*Պրյոտշը ընդդեմ Ավստրիայի* [*Prötsch v. Austria*], 1996թ., § 42), քաղաքաշինության հետ կապված քաղաքականությունը (*Ֆոկասն ընդդեմ Ֆրանսիայի* [*Phocas v. France*], 1996թ., § 52), վարչական վտարումը (*Խատրիդիսն ընդդեմ Հունաստանի* [*Iatridis v. Greece*] [GC], 1999թ., § 55), հողօգտագործման պլանի հաստատումը (*Կատտե Կլիտշե դե լա Գրանջեն ընդդեմ Իտալիայի* [*Katte Klitsche de la Grange v. Italy*], 1994թ., § 40) և դիմումատուի գույքի նկատմամբ կիրառվող պլանավորման միջոցը՝ շինարարության սառնեցումը (*Պիալոպուլոսը և այլք ընդդեմ Հունաստանի* [*Pialopoulos and Others v. Greece*], 2001թ., § 56), քննվել են ընդհանուր սկզբունքի շրջանակներում: Գույքային իրավունքի ենթադրյալ խախտումը, որն առաջացել է դիմումատուի գնման պայմանագրի չեղարկումից, որը Դատարանը գտել է, որ չէր կարող դասակարգվել հստակ կատեգորիայի, համանման ձևով քննվել է ընդհանուր կանոնի լույսի ներքո (*Կուրբանն ընդդեմ Թուրքիայի* [*Kurban v. Turkey*], 2020թ., §§ 74-75):

122. *Չաքլանն ընդդեմ Խորվաթիայի* [*Zaklan v. Croatia*] գործը, 2021թ., § 90, վերաբերում էր Խորվաթիայում 1991 թվականին, երբ այդ պետությունը դեռևս նախկին Հարավսլավիայի Սոցիալիստական Ֆեդերատիվ Հանրապետության կազմում էր, Հարավսլավիայի իշխանությունների կողմից առգրավված արտարժույթը վերադարձնելու դիմումատուի փորձերին: Դատարանը նկատել է, որ այն, որ դիմումատուն երկար ժամանակ (ավելի քան երեսուն տարի) չէր կարողացել

վերականգնել գումարը, պետք է քննվեր ընդհանուր սկզբունքի լույսի ներքո (համեմատել վերևում՝ «Օգտագործման նկատմամբ վերահսկողությունը» վերտառությամբ «բ» կետում նշված բռնագանձման և բռնագրավման հետ):

123. [«Ջ. Փոլ Գեթի» տրաստը և այլք ընդդեմ Իտալիայի](#) [[The J. Paul Getty Trust and Others v. Italy](#)] գործով, 2024թ., § 273-277, Դատարանը հավաստիացել է, որ բռնագանձման մասին կարգադրությունը, որն ընդունվել էր արտերկրում գտնվող մշակութային արժեք ներկայացնող առարկայի նկատմամբ, սակայն դեռևս չէր կատարվել, սահմանափակել է դիմումատու տրաստի՝ այդ առարկան ամբողջությամբ տնօրինելու կարողությունը, և համապատասխանաբար համարել է, որ միայն դրա արձակումը հավասար էր դիմումատուի՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանվող գույքային շահերին միջամտության: Այն գտել է, որ ընդհանուր կանոնը կիրառելի է:

2. Օրինականության սկզբունքը

124. Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանված իրավունքներին ցանկացած միջամտություն պետք է համապատասխանի օրինականության պահանջին ([Վիստինշը և Պերեպյոլկինսն ընդդեմ Լատվիայի](#) [ՄԴ] [[Vistiņš and Perepjolkins v. Latvia \[GC\]](#)], 2012թ., § 95, [Բելանե Նագին ընդդեմ Հունգարիայի](#) [[Bélané Nagy v. Hungary \[GC\]](#)], 2016թ., § 112): «Այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով» արտահայտությունը, որը վերաբերում է «գույքից» անարգել օգտվելու իրավունքին արվող ցանկացած և բոլոր միջամտություններին, պետք է մեկնաբանվի նույն կերպ, ինչ 8-րդ հոդվածում առկա «նախատեսված է օրենքով» արտահայտությունը, որը վերաբերում է սույն դրույթով պաշտպանված իրավունքներին միջամտությանը, կամ «օրենքով սահմանված» արտահայտությունը՝ կապված Կոնվենցիայի 9-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածներով պաշտպանված իրավունքներին միջամտությունների հետ:

125. Օրինականության սկզբունքը թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի առաջին և ամենակարևոր պահանջն է: Առաջին պարբերության երկրորդ նախադասությամբ թույլատրվում է «գույքից» զրկել «այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով», և երկրորդ պարբերությամբ ընդունվում է, որ պետություններն ունեն սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու իրավունք՝ «օրենքներ» կիրառելու միջոցով: Ավելին, օրենքի գերակայությունը՝ ժողովրդավար հասարակության հիմնարար

սկզբունքներից մեկը, ներհատուկ է Կոնվենցիայի բոլոր հոդվածներին (*Լեկիչն ընդդեմ Սլովենիայի* [Lekić v. Slovenia], 2018թ., § 94, *Իատրիդիսն ընդդեմ Հունաստանի* [ՄՊ] [Iatridis v. Greece [GC]], 1999թ., § 58, *Հունաստանի նախկին թագավորը և այլք ընդդեմ Հունաստանի* [ՄՊ] [Former King of Greece and Others v. Greece [GC]], 2000թ., § 79, *Բրոնիովսկին ընդդեմ Լեհաստանի* [Broniowski v. Poland [GC]], 2004թ., § 147, *Կուրբանն ընդդեմ Թուրքիայի* [Kurban v. Turkey], 2020թ., § 76):

126. Ներպետական իրավունքում իրավական հիմքերի առկայությունն ինքնին բավարար չէ օրինականության սկզբունքը բավարարելու համար: Բացի այդ, իրավական հիմքը պետք է որոշակի հատկանիշ ունենա, մասնավորապես այն պետք է համատեղելի լինի օրենքի գերակայության հետ և պետք է տրամադրի ազատություն կամ երաշխիքներ կամայականության դեմ («*Իսթ Վեսթ Ալյանս Լիմիթեդ*»-ն ընդդեմ *Ուկրաինայի* [East West Alliance Limited v. Ukraine]<http://hudoc.echr.coe.int/eng/?i=001-140029>, 2014թ., § 167, «*Ունսպեդ Պակետ Սերվիսի ՍաՆ. Վե ՏիՉ. Ա.Շ.*»-ն ընդդեմ *Բուլղարիայի* [Ünspeđ Paket Servisi SaN.Ve TiC. A.Ş. v. Bulgaria], 2015թ., § 37, *Վիստինշը և Պերեպոլկինսն ընդդեմ Լատվիայի* [ՄՊ] [Vistiņš and Perepjolkins v. Latvia [GC]], 2012թ., § 96, *Յելը և այլք ընդդեմ Թուրքիայի* [Yel and Others v. Turkey], 2021թ., § 89): Այս կապակցությամբ հարկ է նշել, որ «օրենքի» մասին խոսելիս թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը հիշատակում է հենց նույն հասկացությունը, որին Կոնվենցիան է հղում կատարում այլ դրույթներում, երբ օգտագործվում է այդ դրույթը. հասկացություն, որը ներառում է օրենսդրական ակտերում ամրագրված իրավունքը, ինչպես նաև նախադեպային իրավունքը («*Շպաչեկ, Էս.ար.օ.*»-ն ընդդեմ *Չեխիայի Հանրապետության* [Špaček, s.r.o., v. the Czech Republic], 1999թ., § 54, *Բեժանիչը և Բաշկարադն ընդդեմ Խորվաթիայի* [Bežanić and Baškarad v. Croatia], 2022թ., § 62. հարկային հարցերի վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս ստորև՝ «Հարկումը» վերտառությամբ ենթագլուխը): Նախադեպային իրավունքում առկա անհամապատասխանությունները կարող են ստեղծել իրավական անորոշություն, որն անհամատեղելի է օրենքի գերակայության պահանջների հետ (*Մոլլա Սալին ընդդեմ Հունաստանի* [ՄՊ], [Molla Sali v. Greece [GC]], 2018թ., § 153, *Ն.Մ.-ն և այլք ընդդեմ Ֆրանսիայի* [N.M. and Others v. France], 2022թ., § 59):

127. Օրինականության սկզբունքը նաև ենթադրում է, որ ներպետական իրավունքի կիրառելի դրույթները բավարար չափով մատչելի, հստակ և

կանխատեսելի են իրենց կիրառման մեջ (*Լեկիչն ընդդեմ Սլովենիայի* [ՄՊ] [*Lekić v. Slovenia* [GC]], 2018թ., § 95, *Բեյելերն ընդդեմ Իտալիայի* [ՄՊ] [*Beyeler v. Italy* [GC]], 2000թ., § 109, *Անտոհիշն ընդդեմ Ֆրանսիայի* [*Hentrich v. France*], 1994թ., § 42, *Լիտգոուն և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Lithgow and Others v. the United Kingdom*], 1986թ., § 110, *Ալիշիչը և այլք ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի, Խորվաթիայի, Սերբիայի, Սլովենիայի և* <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-145575>*Մակեդոնիայի նախկին Հարավսլավական Հանրապետության* [ՄՊ] [*Ališić and Others v. Bosnia and Herzegovina, Croatia, Serbia, Slovenia and the Former Yugoslav Republic of Macedonia* GC]], 2014թ., § 103, «*Չենտրո Եվրոպա 7 Էս.ար.Էլ.*»-ը և *Դի Ստեֆանոն ընդդեմ Իտալիայի* [ՄՊ] [*Centro Europa 7 S.r.l. and Di Stefano v. Italy* [GC]], 2012թ., § 187, *Հուտեն-Չապսկան ընդդեմ Լեհաստանի* [ՄՊ] [*Hutten-Czapska v. Poland* [GC]], 2005թ., § 163, *Վիստինշ և Պերեպյոլկինսն ընդդեմ Լատվիայի* [ՄՊ] [*Vistiņš and Perepjolkins v. Latvia* [GC]], 2012թ., §§ 96-97, *Իմերին ընդդեմ Խորվաթիայի* [*Imeri v. Croatia*], 2021թ., § 69, «*Ժողովրդավարության և մարդու իրավունքների ռեսուրսների կենտրոն*»-ը և *Սուստաֆանն ընդդեմ Ադրբեջանի* [*Democracy and Human Rights Resource Centre and Mustafayev v. Azerbaijan*], 2021թ., § 67, *Գոդլևսկայան ընդդեմ Ռուսաստանի* [*Godlevskaya v. Russia*], 2021թ., §§ 50 և 61-63, «*Տագանրոգ*» ՏԿԿ-ն և այլք ընդդեմ Ռուսաստանի [*Taganrog LRO and Others v. Russia*], 2022թ., §§ 281-282): Դատարանը կարող է նաև նպատակահարմար համարել չանդրադառնալ վիճարկվող միջոցի օրինականության հարցին նույնիսկ, եթե ներպետական մարմիններն այդ հարցի վերաբերյալ որոշում չեն կայացրել, երբ դիմումատուն, ունենալով իրավական ներկայացուցիչ, այս հարցը չի բարձրացրել այդ մարմինների առջև, և նույնիսկ, երբ Դատարանի առջև դիմումատուները միայն հիշատակում են արել՝ առանց օրենսդրական դրույթների կանխատեսելիության հստակության վերաբերյալ որևէ փաստարկ բերելու (*Յայլալին ընդդեմ Սերբիայի* [*Yaylali v. Serbia*], 2024թ., §§ 44-45):

128. Ինչ վերաբերում է օրենքի մատչելիությանը, ապա «օրենք» եզրույթը պետք է հասկանալ դրա բովանդակային իմաստով, այլ ոչ թե ձևական: Ուստի, այն փաստը, որ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանված իրավունքների իրացմանը վերաբերող որոշ կարգավորումներ չեն հրապարակվել պաշտոնական տեղեկագրերում՝ ընդհանրապես քաղաքացիների և իրավաբանական անձանց համար պարտադիր օրենսդրական կամ նորմատիվ

փաստաթղթերի հրապարակման համար օրենքով նախատեսված ձևով, չի խոչընդոտում այդ կարգավորումներն օրենք համարելուն, եթե Դատարանը հավաստիացել է, որ դրանք հանրությանը հասանելի են դարձել այլ միջոցներով ([«Շպաչեկ, Eu.ար.օ.»-ն ընդդեմ Չեխիայի Հանրապետության \[Špaček, s.r.o., v. the Czech Republic\]](#), 1999թ., §§ 57-60):

129. «Օրենքով նախատեսված» արտահայտությունից բխող մեկ այլ պահանջ է կանխատեսելիությունը: Համապատասխան օրենքը պետք է ձևակերպվի բավարար հստակությամբ, որպեսզի քաղաքացիներին հնարավորություն տա կարգավորելու իրենց վարքագիծը՝ տվյալ հանգամանքներում ողջամիտ չափով կանխատեսելով այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը: Պարտադիր չէ, որ այդ հանգամանքները կանխատեսելի լինեն բացարձակ հստակությամբ, քանի որ չափազանց կոշտ բնույթը ցանկալի չէ ([«Չենտրո Եվրոպա 7 Eu.ար.Էլ.»-ը և Դի Ստեֆանոն ընդդեմ Իտալիայի \[ՄԴ\] \[Centro Europa 7 S.r.l. and Di Stefano v. Italy \[GC\]\]](#), 2012թ., § 141): Համապատասխանաբար, շատ օրենքներ քիչ թե շատ աղոտ են, և դրանց մեկնաբանումը և կիրառումը գործելակերպի հարց է ([նույն տեղում](#), § 141): Ներպետական օրենսդրությունից պահանջվող հստակության մակարդակը, որը ոչ մի դեպքում չի կարող նախատեսել բոլոր հնարավոր դեպքերը, զգալի չափով կախված է տվյալ օրենքի բովանդակությունից, այն ոլորտից, որը պետք է ընդգրկի, և այն անձանց թվից ու կարգավիճակից, որոնց վերաբերում է ([նույն տեղում](#), § 142):

130. Դատարանը [«Ջ.Փոլ Գեթի» տրաստը և այլք ընդդեմ Իտալիայի \[The J. Paul Getty Trust and Others v. Italy\]](#) գործով, 2024թ., § 306, լրացուցիչ պարզաբանել է, որ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով կարգավորվող գործերով միջամտության միջոցների սահմանում թույլատրող իրավական հիմքի կանխատեսելիությունը պետք է գնահատել՝ հաշվի առնելով այն պահը, երբ տեղի է ունեցել քննարկվող միջամտությունը, այսինքն՝ վիճարկվող միջոցի մասին որոշում կայացվելու պահը: Այս դիրքորոշումը հաստատվել է [Էպիսկոպոն և Բասսանին ընդդեմ Իտալիայի \[Episcopo and Bassani v. Italy\]](#) գործով, 2024թ., §§ 154-156, որով Դատարանը գնահատել է դիմումատուի այն ակտիվների բռնագրավման մասին որոշման կանխատեսելիության աստիճանը, որոնք համարվել են հանցավոր ճանապարհով ստացված ուղղակի եկամուտներ, և այդ որոշումը կայացվել էր՝ չնայած վաղեմության ժամկետը լրանալու հիմքով վարույթի

դադարեցմանը: Դատարանը գտել է, որ տվյալ պահին հաստատված նախադեպային իրավունքով համարվում էր, որ բռնագրավման միջոցը չէր կարող կիրառվել այն բանից հետո, երբ հանցանքն այլևս պատժելի չէր, և որ Վճռաբեկ դատարանը միայն ավելի ուշ է սկսել ընդունել, որ բռնագրավման միջոցը փաստացի կարող էր կիրառվել այդպիսի իրավիճակում, և նույնիսկ այդ ժամանակ հարցը դեռևս մի քանի տարի կարգավորվում էր տարբերվող նախադեպային իրավունքի համաձայն:

131. Օրենքը կարող է դեռևս բավարարել կանխատեսելիության պահանջը նույնիսկ, եթե տվյալ անձը պետք է ստանա համապատասխան իրավաբանական խորհրդատվություն այն հետևանքները գնահատելու նպատակով, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը: Դա հատկապես ճիշտ է այն անձանց համար, որոնք զբաղվում են մասնագիտական կամ առևտրային գործունեությամբ, որոնք իրենց մասնագիտական գործունեությամբ զբաղվելիս սովոր են գործել մեծ զգուշավորությամբ: Այս առումով նրանցից կարելի է ակնկալել, որ հատուկ զգուշավորություն կցուցաբերեն այդ գործունեության հետ կապված ռիսկերը գնահատելիս (*Լեկիչն ընդդեմ Սլովենիայի* [ՄԴ] [*Lekičv. Slovenia* [GC]], 2018թ., § 97):

132. Բացի այդ, *Ալպերինն ընդդեմ Ուկրաինայի* [*Alperin v. Ukraine*] գործը, 2024թ., § 78, վերաբերում էր դիմումատուի գրավն այն փաստի հիմքով բռնագանձելու մասին որոշմանը, որ դիմումատուն խախտել էր գրավի պայմանները: Դատարանը գտել է, որ օրինականության սկզբունքը պահպանվել էր նույնիսկ, երբ բռնագանձումը հիմնված էր լայն եզրույթներով ձևակերպված դրույթի վրա և այդպիսով կարող էր ստեղծել հստակության բացակայության տպավորություն, երբ ներպետական դատարանը, ըստ ամենայնի, հանգամանքների մանրակրկիտ վերլուծություն իրականացնելու և իր որոշման համար համոզիչ հիմնավորում տրամադրելու միջոցով վերացրել էր ցանկացած հնարավոր անորոշություն:

133. Դատարանը կարող է գտնել, որ կանխատեսելիության պահանջը չի կատարվել, եթե օրենսդրության կիրառումը կամ մեկնաբանումը եղել են սպասվածից այլ, չափազանց լայն կամ կամայականությամբ մոտ: Օրինակ՝ *Լելասն ընդդեմ Խորվաթիայի* [*Lelas v. Croatia*] գործով, 2010թ., դիմումատուն՝ Պաշտպանության նախարարությունում աշխատող զինծառայողը, բողոքել էր այն հատուկ նպաստի վճարումն ուշացնելու առնչությամբ, որը նա իրավունք ուներ

ստանալու, և իր հրամանատարին հարցրել էր, թե ինչու չէր վճարվել նպաստը: Հրամանատարն իր վերադասից էր հետաքրքրվել այդ մասին, որը կապ էր հաստատել Խորվաթիայի զինված ուժերի գլխավոր շտաբի հետ, և ի վերջո դիմումատուին տեղեկացրել էր, որ նպաստի վերաբերյալ իր պահանջները չէին վիճարկվում, և որ նա դրանք կստանար հենց որ դրամական միջոցներ հասանելի լինեին: Քանի որ նպաստները շարունակում էին չվճարվել, դիմումատուն դատական վարույթ էր հարուցել: Ներպետական դատարանը մերժել էր նրա բողոքը վաղեմության ժամկետը լրացած լինելու հիմքով: Այն պնդել էր, որ միայն Պաշտպանության նախարարության կենտրոնական ֆինանսական վարչության պետը կարող էր ընդունել պարտքը՝ այդպիսով ընդհատելով վաղեմության ժամկետը: Այնուամենայնիվ, ներպետական դատարանը չէր նշել որևէ իրավական դրույթ, որը կարող էր մեկնաբանվել որպես իր այդ եզրակացության հիմք: Հետևաբար, ներպետական դատարանի կողմից համապատասխան ներպետական օրենքը մեկնաբանվելու և կիրառվելու եղանակը կանխատեսելի չէր եղել դիմումատուի համար, որը ողջամտորեն կարող էր ակնկալած լինել, որ իր հրամանատարի հայտարարություններն առ այն, որ իր պահանջները չէին վիճարկվում, և որ վճարումը կատարվելու էր միջոցների հատկացումից հետո, պարտքի ընդունում էին, որը կարող էր ընդհատել վաղեմության ժամկետի ընթացքը ([Նույն տեղում](#), §§ 77-78):

134. [Նեշիչն ընդդեմ Չեռնոգորիայի](#) [*Nešić v. Montenegro*] գործով, 2020թ., §§ 52-53, Դատարանը գտել է, որ դիմումատուին տիրապետման իրավունքից զրկելը և պետության կողմից փոխհատուցում չվճարվելն օրենքին համապատասխան չէին, քանի որ ավիամերձ հողերի օտարման վերաբերյալ օրենսդրական դաշտը հստակ չէր: Պարզ չէր, թե այդ համատեքստում փաստացի ինչ էր նշանակում օտարումը: Թեև դիմումատուն *ex lege* (օրենքի ուժով) կորցրել էր ծովափին գտնվող իր երկու հողակտորների նկատմամբ սեփականության իրավունքը, պարզվել էր, որ պաշտոնական օտարումը դեռևս տեղի չէր ունեցել, և պետության իրավունքը ձևակերպելու, ինչպես նաև փոխհատուցման չափը որոշելու համար անհրաժեշտ էին լրացուցիչ ընթացակարգեր: Համապատասխան ներպետական օրենսդրությունը չէր պարունակում մանրամասներ այն մասին, թե արդյոք հողի պաշտոնական օտարումը պարտադիր էր, և եթե այո, ապա երբ էր պարտադիր: Օրենքի համաձայն նույնիսկ հնարավոր էր թվում, որ պաշտոնական օտարում ընդհանրապես տեղի չունենար, որի դեպքում դիմումատուն չէր ստանա

որևէ փոխհատուցում, ինչը հակասում էր մյուս օրենքներին:

135. Դատարանը [Նասկովը և այլք ընդդեմ Հյուսիսային Մակեդոնիայի](http://hudoc.echr.coe.int/eng?i=001-229390) <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-229390> [Naskov and Others v. North Macedonia] գործով, 2023թ., §§ 77-78, համանման եզրակացության է հանգել ռեստիտուցիայի վարույթի համատեքստում, որով այն վճռել էր, որ վարչական կարգով գանձման համար նախաձեռնված վարույթի արդյունքում 2002 թվականի ռեստիտուցիայի մասին վերջնական որոշման բեկանումը խաթարել է դիմումատուների կողմից պարտադիր ուժ ունեցող որոշման վրա հիմնվելու հնարավորությունը և զրկել է նրանց այն գույքը տիրապետելու հնարավորությունից, որը նրանք օրինականորեն ակնկալում էին ստանալ: Դատարանը եզրակացրել է, որ դիմումատուների գույքային շահերին միջամտությունը խախտում էր օրինականության սկզբունքը և չէր կարող համարվել կանխատեսելի՝ Կոնվենցիայի սկզբունքներին համապատասխան:

136. Կանխատեսելիության պահանջը հաճախ փոխկապակցված է կամայականության բացակայության և ընթացակարգային երաշխիքների պահանջների հետ: Այսպիսով, իրավական նորմը «կանխատեսելի» է, երբ դրանով տրամադրվում է պաշտպանության միջոց պետական մարմինների կամայական միջամտություններից: Գույքից անարգել օգտվելուն ցանկացած միջամտություն հետևաբար պետք է ուղեկցվի ընթացակարգային երաշխիքներով, որոնք տվյալ անձին կամ սուբյեկտին ողջամիտ հնարավորություն են տալիս իր գործը ներկայացնելու պատասխանատու մարմիններին՝ այդ դրույթով երաշխավորված իրավունքներին միջամտող միջոցներն արդյունավետորեն վիճարկելու նպատակով: Պարզելիս, թե արդյոք այս պայմանը պահպանվել է, պետք է համապարփակ կերպով ուսումնասիրել դատական և վարչական ընթացակարգերը ([Լեկիչն ընդդեմ Սլովենիայի](#) [ՄՊ] [[Lekić v. Slovenia](#) (GC)], 2018թ., § 95, [Յոկելան ընդդեմ Ֆինլանդիայի](#) [[Jokela v. Finland](#)], 2002թ., § 45, «[Կապիտալ բանկ](#)» [ԲԸ-ն ընդդեմ Բուլղարիայի](#) (որոշում), [[Capital Bank AD v. Bulgaria](#) (dec.)], 2005թ., § 134, և [Ստոյարովան ընդդեմ Ռուսաստանի](#) [[Stolyarova v. Russia](#)], 2015թ., § 43, «[Փրոյեքթ-Թրեյդ](#)» [ՄՊԸ-ն ընդդեմ Խորվաթիայի](#) [[Project-Trade d.o.o. v. Croatia](#)], 2020թ., § 82, [Դանոյուն և այլք ընդդեմ Ռումինիայի](#) [[Dănoiu and Others v. Romania](#)], 2022թ., §§ 69-72, [Չաթաքը և այլք ընդդեմ Թուրքիայի](#) [[Çatak and Others v. Türkiye](#)], 2024թ., §§ 122-125):

137. *Մարկուսն ընդդեմ Լատվիայի* [Markus v. Latvia] գործով, 2020թ., § 75, Դատարանը վճռել է, որ բռնագրավման ձևով պատիժն անօրինական էր, քանի որ վիճարկվող ներպետական կարգավորումը զուրկ էր հստակությունից և կանխատեսելիությունից, չէր տրամադրում անհրաժեշտ ընթացակարգային երաշխիքներ և չէր տրամադրում կամայականության դեմ պաշտպանության որևէ միջոց: Գործը վերաբերում էր գույքի բռնագրավման ձևով լրացուցիչ պատժին: Այնուամենայնիվ, ներպետական դատարանը չէր նշել, թե կոնկրետ որ գույքն էր բռնագրավման ենթակա, և փոխարենը միջոցը կիրառել էր դիմումատուին պատկանող ամբողջ գույքի նկատմամբ: Ավելին, գործը քննող դատարանի՝ բռնագրավվող գումարի չափը որոշելու կարողության հարցում առկա էր անորոշություն և նախադեպային իրավունքի հակասություններ: Դատարանը վճռել է, որ եթե կարգավորումը գործը քննող դատարանի իրավասության վերաբերյալ այդպիսի անորոշություն է թողնում, ապա այն չի կարող համարվել կանխատեսելի և չի տրամադրում պաշտպանություն կամայականության դեմ: Այն նաև կարող է լրջորեն խոչընդոտել անձի՝ իր գործը դատարանի առջև արդյունավետորեն ներկայացնելու կարողությունը: Բացի այդ, բռնագրավման ձևով պատժի հարկադիր բնույթը տվյալ դիմումատուներին զրկել էր իրենց գործերով փաստարկները վիճարկելու որևէ հնարավորությունից և հաջողության որևէ հեռանկարից: Վերջապես, այլ նպատակի ծառայող որոշմամբ վարույթի մինչդատական փուլում սահմանվող պատժի ճշգրիտ չափը չի կարող համարվել անձին իր գործն իրավասու մարմիններին ներկայացնելու ողջամիտ հնարավորություն (*Նույն տեղում*, § 73):

138. *Զեմալ Բայրամն ընդդեմ Թուրքիայի* [Kemal Bayram v. Turkey] գործով, 2021թ., §§ 52-73, դիմումատուն բողոքել է, որ ինքը կորցրել է 1977 թվականին գնած երկու հողակտորների նկատմամբ սեփականության իրավունքը, որը 1985 թվականին հողային կադաստրի վերակազմակերպման արդյունքում հետագայում՝ 1986 թվականին, վերագրանցվել է որպես Գանձապետարանին պատկանող: Դիմումատուն, որը հողակտորները որպես Գանձապետարանի սեփականություն վերագրանցվելու ժամանակ բնակվելիս է եղել Գերմանիայում, բողոքել է, որ չէր կարող վիճարկել այդ միջոցը, քանի որ տեղեկացված չի եղել այդ մասին: Նա այդ միջոցի մասին իմացել է 2004 թվականին, երբ լրացած է եղել գրանցումը վիճարկելու վաղեմության ժամկետը: Դատարանը գտել է, որ տվյալ գործով պետությունը չէր ապահովել մրցակից շահերի միջև արդար

հավասարակշռություն:

139. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համատեքստում օրենքի գերակայության սկզբունքով և արդար դատաքննության հասկացությամբ արգելվում է, բացառությամբ հանրային շահերի հետ կապված ծանրակշիռ հիմքերի առկայության դեպքերի, օրենսդիր մարմնի կողմից արդարադատության իրականացման գործընթացին միջամտությունը, որի նպատակն է ներգործել վեճի՝ դատական կարգով լուծման վրա

(<http://hudoc.echr.coe.int/sites/eng/pages/search.aspx?i=001-57913> *Հունական*

Նավթամշակման «Ստրեն» գործարանները և Ստրատիս Անդրեադիսն ընդդեմ Հունաստանի [Stran Greek Refineries and Stratis Andreadis v. Greece], 1994թ., § 49, «Ազգային և շրջանային փոխադարձ հիփոթեքային վարկային ընկերություն»-ը, «Լիդսի կապիտալ շինարարական ընկերություն»-ը և «Յորքշիրի փոխադարձ հիփոթեքային վարկային ընկերություն»-ն ընդդեմ Միացյալ Թագավորության [National & Provincial Building Society, Leeds Permanent Building Society and Yorkshire Building Society v. the United Kingdom], 1997թ., § 112, *Չիելինսկին և Պրադալը և Գոնսալեսը և այլք ընդդեմ Ֆրանսիայի* [ՄՊ] [Zielinski and Pradal and Gonzalez and Others v. France [GC]], 1999թ., § 57, «Ազիենդա Ագրիկոլա Սիլվերֆունգի Էս.ա.Էս»-ն ընդդեմ Իտալիայի [Azienda Agricola Silverfunghi S.a.s. and Others v. Italy], 2014թ., § 76): Այնուհանդերձ, թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի ներքո քննվելիս հետադարձ ուժով օրենքները, որոնք ճանաչվել են օրենսդրական միջամտություն, այնուամենայնիվ, համապատասխանում են թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված օրինականության պահանջին (*Մաջիոն և այլք ընդդեմ Իտալիայի* [Maggio and Others v. Italy], 2011թ., § 60, *Արրասը և այլք ընդդեմ Իտալիայի* [Arras and Others v. Italy], 2012թ., § 81, «Ազիենդա Ագրիկոլա Սիլվերֆունգի Էս.ա.Էս»-ն ընդդեմ Իտալիայի [Azienda Agricola Silverfunghi S.a.s. and Others v. Italy], 2014թ., § 104, *Տոկելն ընդդեմ Թուրքիայի* [Tokel v. Turkey], 2021թ., § 76): Միջամտության հանգեցնող փաստերն ի հայտ գալուց հետո ընդունված օրենքների հիման վրա կիրառված՝ օգտագործման նկատմամբ վերահսկողության միջոցները, ըստ էության, անօրինական չեն (*Սալիբան ընդդեմ Մալթայի* [Saliba v. Malta], 2005թ., §§ 39-40), եթե այդ օրենքները չեն ընդունվել կոնկրետ առանձին գործի ելքի վրա ազդեցություն ունենալու նպատակով: Ոչ Կոնվենցիայով, ոչ դրա արձանագրություններով օրենսդիր մարմնին չի արգելվում հետադարձ ուժով միջամտել գործող պայմանագրերին

(*Մելախերը և այլք ընդդեմ Ավստրիայի* [Mellacher and Others v. Austria], 1989թ., § 50, *Բեքս ընդդեմ Ֆինլանդիայի* [Bäck v. Finland], 2004 թ., § 68):

140. Այնուամենայնիվ, որոշ իրավիճակներում հետադարձ ուժով օրենսդրության կիրառումը, որի արդյունքում անձը զրկվում է արդեն իսկ գոյություն ունեցող՝ իր «գույքի» մաս կազմող «ակտիվից», կարող է համարվել միջամտություն, որը կարող է խախտել մի կողմից՝ ընդհանուր շահի պահանջների և մյուս կողմից՝ «գույքից» անարգել օգտվելու իրավունքի միջև արդար հավասարակշռությունը (*Մորիս ընդդեմ Ֆրանսիայի* [ՄՊ] [Maurice v. France [GC]], 2005թ., §§ 90 և 93): Սա նաև վերաբերում է այն գործերին, որոնցում վեճը ծագել է մասնավոր անձանց միջև, իսկ պետությունն ինքը վարույթի կողմ չէ (*«Կամոյ Ռադյո Թելեվիզյոն Յայինժիլիկ վե Օրգանիզաայոն Ա.Էս.»-ն ընդդեմ Թուրքիայի* [Kamoy Radyo Televizyon Yayincilik ve Organizasyon A.S. v. Turkey], 2019թ., § 40): Ի հակադրություն, չի համարվել, որ տեղի է ունեցել գույքից հետադարձ ուժով զրկում այն գործով, որով Էլեկտրաէներգիա արտադրող ընկերությունների վարձատրության համակարգին վերաբերող նոր օրենսդրական շրջանակը ներառել է հատուկ երաշխիքներ, որոնք բացառում են դրա ընդունումից առաջ ստացված սուբսիդիաների վերադարձը (*«Էներջիվորքս Կարտախենա Էս.Էլ.»-ն ընդդեմ Իսպանիայի (որոշում)* [Energyworks Cartagena S.L. v. Spain (dec.)], 2024թ., § 44):

141. Ավելին, *«Պորչենի Պլեշա» և «Պիչոռուկ Բատրան Բանչու» համայնքային անտառային տնտեսությունների սեփականատերերի ասոցիացիաներն ընդդեմ Ռումինիայի* [Associations of Communally-owned Forestry Proprietors Porceni Pleșa and Piciorul Bătrân Bănciu v. Romania] գործով, 2023թ., §§ 76-77, Դատարանը քննել է այնպիսի դեպք, երբ ներպետական իշխանությունները երկար ժամանակ չեն ընդունել և չեն հրապարակել այն փոխհատուցումը տրամադրելու համար անհրաժեշտ մեթոդաբանական չափանիշները, որի իրավունքը դիմումատուներն ունեին: Գործը վերաբերել է անտառային տնտեսությունների սեփականատերերի երկու ասոցիացիայի, որոնք բողոքել են առ այն, որ չնայած իրավունքն օրինականորեն ճանաչված լինելու հանգամանքին՝ նրանք չեն ստացել փոխհատուցում իրենց անտառներն օգտագործելու հնարավորություն չունենալու համար, քանի որ այդ անտառները ճանաչվել են բնության հատուկ պահպանվող տարածքներ՝ «Նատուրա 2000» եվրոպական ցանցի նպատակներով: Դատարանը նշել է, որ մինչ օրս՝ «Նատուրա 2000» եվրոպական ցանցի առանձնացված

տարածքների սահմաններում գտնվող անտառային տնտեսության հողերի սեփականատեր ֆիզիկական կամ իրավաբանական անձանց պետական աջակցության տրամադրումը հաստատող Եվրոպական հանձնաժողովի որոշումից ավելի քան մեկ տասնամյակ անց, դեռևս չի հրապարակվել պետական փոխհատուցման միջոցների տրամադրման մեթոդաբանությունը սահմանող որոշման նախագիծը և դիմումատու ասոցիացիաներին չի կատարվել վճարում: Թեև համապատասխան անտառային տնտեսությունների հողերը որպես բնության հատուկ պահպանվող տարածքներ դասակարգվելու արդյունքում նրանց նկատմամբ կիրառվել է իրենց անտառներն օգտագործելու օրինական արգելքը, դիմումատու ասոցիացիաներն իրենց միջոցներով կատարել են դրանք պահպանելու պարտավորությունը: Դատարանը գտել է, որ վիճարկվող միջամտությունը չի եղել օրինական և չի հետապնդել իրավաչափ նպատակ:

142. Օրինականության սկզբունքն առաջացնում է նաև պետության կամ այլ պետական մարմնի՝ դրա նկատմամբ կայացված դատական կարգադրությունները կամ որոշումները կատարելու պարտականություն (*«Բելվեդերե Ալբերգիերա Էս.ար.Էլ.»-ն ընդդեմ Իտալիայի* [*Belvedere Alberghiera S.r.l. v. Italy*], 2000թ., § 56, տե՛ս ստորև՝ «Կատարողական վարույթը» վերտառությամբ գլուխը):

143. Վերջապես, Դատարանը նաև վճռել է, որ եթե ակնհայտորեն միմյանց հակասող որոշումները և մասնավորապես՝ Գերագույն դատարանի կողմից կայացված որոշումները միջամտում են գույքից անարգել օգտվելու իրավունքին, և չի տրվում որևէ ողջամիտ պարզաբանում այս հակասության առնչությամբ, ապա այդպիսի միջամտությունը չի կարող համարվել օրինական Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի նպատակներով, քանի որ արդյունքում ձևավորվում է հակասական նախադեպային իրավունք՝ զուրկ պահանջվող ճշգրտությունից, որը թույլ կտա անձանց կանխատեսել իրենց գործողությունների հետևանքները (*Ալիևան և այլք ընդդեմ Ադրբեջանի* [*Aliyeva and Others v. Azerbaijan*], 2021թ., §§ 130-135):

3. Հանրային կամ ընդհանուր շահը

144. Պետական իշխանության կողմից «գույքից» անարգել օգտվելու իրավունքին միջամտությունը կարող է հիմնավորված լինել միայն այն դեպքում, երբ այն ծառայում է օրինական հանրային (կամ ընդհանուր) շահին (*Բելանե Նագին ընդդեմ Հունգարիայի* [ՄԴ] [*Bélané Nagy v. Hungary [GC]*], 2016թ., § 113, *Լեկիչն*

[ընդդեմ Սլովենիայի](#) [ՄՊ] [[Lekić v. Slovenia \[GC\]](#)], 2018թ., § 105):

145. Դատարանը գտել է, որ հետևյալ նպատակները սույն դրույթի իմաստով համապատասխանում են «հանրային շահ» հասկացությանը՝ բնակարանային ոլորտում սոցիալական անարդարության վերացում ([Ջեյմսը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության](#) [[James and Others v. the United Kingdom](#)], 1986թ., § 45, [Գրոժդանիչը և Գրշկովիչ-Գրոժդանիչն ընդդեմ Խորվաթիայի](#) [[Grozđanić and Gršković-Grozđanić v. Croatia](#)], 2021թ., §§ 102-103, տե՛ս նաև [Մարիա Ացոպարդին ընդդեմ Մալթայի](#) [[Maria Azzopardi v. Malta](#)], 2022թ., §§ 53 և 60, պետության տնտեսական և պլանավորման քաղաքականությունների շրջանակներում բնակելի տների տրամադրման առնչությամբ), արտարժույթային վարկավորման ճգնաժամի հետևանքների դեմ պայքար, մասնավորապես՝ զանգվածային անօթևանության կանխարգելման համատեքստում ([Բելա Նեմեթն ընդդեմ Հունգարիայի](#) [[Béla Németh v. Hungary](#)], 2020թ., §§ 42-45), կոնկրետ ոլորտների ազգայնացում ([Լիթգոուն և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության](#) [[Lithgow and Others v. the United Kingdom](#)], 1986թ., §§ 9 և 109), էներգետիկայի ոլորտի կարգավորում («Սալենտո Էներջի Էս.ար.Էլ.»-ը և «Նուովո Սոլե Էս.ար.Էլ.»-ն ընդդեմ Իտալիայի (որոշում)» [[Salento Energy S.r.l. and Nuovo Sole S.r.l. v. Italy \(dec.\)](#)], 2024թ., § 37), հողերի օգտագործման և քաղաքաշինության պլանների ընդունում ([Սպորրոնգը և Լյոնրոթն ընդդեմ Շվեդիայի](#) [[Sporrong and Lönnroth v. Sweden](#)], 1982թ., § 69), «Լա Լաուրենտինա» կոոպերատիվն ընդդեմ Իտալիայի [[Cooperativa La Laurentina v. Italy](#)], 2001թ., § 94, հողերի ձեռքբերում՝ տեղի հողերի օգտագործման պլանի իրականացման նպատակով ([Սկիբինսկին ընդդեմ Լեհաստանի](#) [[Skibiński v. Poland](#)], 2006թ., § 86), հարկերից խուսափելու դեպքերի կանխում ([Անտոյիշն ընդդեմ Ֆրանսիայի](#) [[Hentrich v. France](#)], 1994թ., § 39), հարկային պարտավորության վճարման ապահովում ([Ռուստամխանլին ընդդեմ Ադրբեջանի](#) [[Rustamkhanli v. Azerbaijan](#)], 2024թ., § 58), ճանապարհային երթևեկության անվտանգություն («Պանոն Պլակատ» ՍՊԸ-ն և այլք ընդդեմ Հունգարիայի [[Pannon Plakát Kft and Others v. Hungary](#)], 2022թ., § 48), թմրամիջոցների ապօրինի շրջանառության և մաքսանենգության դեմ պայքարի միջոցառումներ ([Բաթլերն ընդդեմ Միացյալ Թագավորության](#) (որոշում) [[Butler v. the United Kingdom \(dec.\)](#)], 2002թ.), մշակութային ժառանգությունը ծագման երկրից անօրինական դուրսբերումից պաշտպանությունը կամ դրա հետստացման և ծագման երկիր վերադարձի ապահովումը («[Զ. Փոլ Գեթի](#)» տրաստը և այլք ընդդեմ Իտալիայի [[The](#)

J. Paul Getty Trust and Others v. Italy], 2024թ., § 342), հանցագործությունից տուժողների շահերի պաշտպանություն (*Շեյկոն ընդդեմ Լիտվայի* [Šeiko v. Lithuania], 2020թ., § 31), ալկոհոլի սպառման սահմանափակմանն ուղղված միջոցառումներ (*«Երեք տրակտոր» ՍՊԸ-ն ընդդեմ Շվեդիայի* [Tre Traktörer AB v. Sweden], 1989թ., § 62), բարոյական սկզբունքների պաշտպանություն (*Հենդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության* [Handyside v. the United Kingdom], 1976թ., § 62), շրջանառության մեջ դրված ավտոմեքենաների օրինական ծագման նկատմամբ հսկողություն (*Սիլդեդզիս ընդդեմ Լեհաստանի* [Sildedzis v. Poland], 2005թ., § 50), անօրինական ճանապարհով ստացված դրամական միջոցների բռնագանձում (*Հոնեկերը և այլք ընդդեմ Գերմանիայի* (որոշում) [Honecker and Others v. Germany (dec.)], 2001թ.), գաղտնի համաձայնությունների կանխում և պետական բյուջեի պաշտպանություն և արդար մրցակցության խթանում (*Կուրբանն ընդդեմ Թուրքիայի* [Kurban v. Turkey], 2020թ., § 78), սոցիալիստական տնտեսությունից ազատ շուկայական տնտեսության անցում (*Լեկիչն ընդդեմ Սլովենիայի* [ՄՊ] [Lekić v. Slovenia [GC]], 2018թ., §§ 103 և 105) և դատական համակարգի բնականոն գործունեություն՝ ևս մեկ անգամ նշելով, թե որքան կարևոր է արդարադատությունն իրականացնել առանց ձգձգումների, ինչը կարող է վտանգել դրա արդյունավետությունն ու արժանահավատությունը (*Կոնստանտին Ստեֆանովն ընդդեմ Բուլղարիայի* [Konstantin Stefanov v. Bulgaria], 2015թ., § 64): Այնուամենայնիվ, հաշվի առնելով դիմումատուների և պարտապանի միջև պայմանագրային հարաբերությունը, որը կրել է բացառապես առևտրային իրավական բնույթ, Դատարանը, գործի հանգամանքներից ելնելով, չի արձանագրել սպառողների պաշտպանությունը որպես իրավաչափ նպատակ (*Կատոնան և Չավասկին ընդդեմ Սլովակիայի* [Katona and Závorský v. Slovakia], 2023թ., § 59):

146. Շրջակա միջավայրի պաշտպանությունը ևս համարվում է հանրային շահ (*«Ջի.Այ.Ի.Էմ Էս.Ար.Էլ.»-ն ընդդեմ Իտալիայի* (ըստ էության) [ՄՊ] [G.I.E.M. S.R.L. and Others v. Italy (merits) [GC]], 2018թ., § 295, *«Բայիա Նովա Էս.Ա.»-ն ընդդեմ Իսպանիայի* (որոշում) [Bahia Nova S.A. v. Spain (dec.)], 2000թ., *Չափմանն ընդդեմ Միացյալ Թագավորության* [ՄՊ] [Chapman v. the United Kingdom [GC]], 2001թ., § 82, *«Պորչենի Պլեշա» և «Պիչոռու Բատրան Բանչու» համայնքային անտառային տնտեսությունների սեփականատերերի ասոցիացիաներն ընդդեմ Ռումինիայի* [Associations of Communally-owned Forestry Proprietors Porceni Pleșa and Piciorul Bătrân Banciu v. Romania], 2023թ., § 77, տե՛ս նաև *«Սարլ Կոստոլան*

Ֆրեյր»-ն ընդդեմ Ֆրանսիայի [Sàrl Couttolenc Frères v. France], 2023թ., § 62, [եռնային գոտիների հավասարաչափ և կայուն զարգացման վերաբերյալ]: *Համերն ընդդեմ Բելգիայի* [Hamer v. Belgium] գործով, 2007թ., § 79, Դատարանը նշել է, որ թեև Կոնվենցիայի որևէ դրույթ հատուկ նախատեսված չէ որպես այդպիսին շրջակա միջավայրի ընդհանուր պաշտպանությունն ապահովելու համար (*Կիրտատոսն ընդդեմ Հունաստանի* [Kyrtatos v. Greece], 2003թ., § 52), «ժամանակակից հասարակությունում շրջակա միջավայրի պաշտպանությունը դառնում է ավելի ու ավելի կարևոր նկատառում», և որ «տնտեսական նկատառումները և նույնիսկ որոշ հիմնարար իրավունքներ, ինչպես օրինակ՝ սեփականության իրավունքը, չպետք է առաջնայնացվեն շրջակա միջավայրի պաշտպանությանը վերաբերող նկատառումներից, մասնավորապես, եթե պետությունն ընդունել է այդ խնդրի վերաբերյալ օրենսդրություն»: Վերջապես, համարվել է, որ բնակարանային շինարարության դեպքում, ինչպես մասնավոր առևտրային, այնպես էլ հանրային շահի նպատակներով, հանրային շահն առավել գերակա չէ, քան շրջակա միջավայրի պաշտպանությունը (*Սվիտլանա Իլչենկոն ընդդեմ Ուկրաինայի* [Svitlana Ilchenko v. Ukraine], 2019թ., § 70):

147. *«Էս.Ա. Բիո դ'Արդեն»-ն ընդդեմ Բելգիայի* [S.A. Bio d'Ardennes v. Belgium] գործը, 2019թ., §§ 55-57, վերաբերել է բրուցելոգով հիվանդ բազմաթիվ կենդանիների հարկադիր սպանդին, և Դատարանն ընդգծել է պետությունների կողմից կենդանիների հիվանդությունների կանխարգելման և այդ առումով նրանց վերապահված հայեցողական լիազորությունների լայն շրջանակի կարևորությունը:

148. Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համատեքստում պետության կողմից կատարված սխալների շտկումը ևս գտնվում է հանրային շահի հասկացության շրջանակներում (*Ալբերգասը և Արլոուսկասն ընդդեմ Լիտվայի* [Albergas and Arlauskas v. Lithuania], 2014թ., § 57, *Պիրանտիենեն ընդդեմ Լիտվայի* [Pyrantienė v. Lithuania], 2013թ., §§ 44-48, *Բեչվաժը և Բեչվաժովան ընդդեմ Չեխիայի Հանրապետության* [Bečvář and Bečvářová v. the Czech Republic], 2004թ., § 67), այդ թվում՝ այն իրավիճակները, երբ անձինք սահմանված կարգով ստացել են սոցիալական ապահովագրության վճարներ առանձին որոշումների հիման վրա, որոնք հետագայում ճանաչվել են սխալ (*Մոսկալն ընդդեմ Լեհաստանի* [Moskal v. Poland], 2009թ., § 63): Ավելի լայն առումով, կենսաթոշակային արտոնությունները, որոնք համարվել են չհիմնավորված կամ ապօրինի ստացված, օրենսդրական միջամտությամբ դադարեցնելը կենսաթոշակային համակարգում

արդարության ավելի բարձր մակարդակ ապահովելու նպատակով (*Չիխոպեկը և այլք ընդդեմ Լեհաստանի* (որոշում) [*Cichopek and Others v. Poland (dec.)*], 2013թ., § 144) ևս ճանաչվել է հանրային շահի հետապնդում:

149. Իրավական որոշակիության սկզբունքի պահպանումը դրա *res judicata* (նույն հայցը կրկին ներկայացնելու բացառում) կիրառմամբ, որպես ընդհանուր կանոն, կարող է համարվել ի շահ հանրության (*Գրոբելնին ընդդեմ Լեհաստանի* [*Grobely v. Poland*], 2020թ., § 66):

150. Բնակարանային ոլորտում պետության կողմից կիրառվող տարբեր կարգավորող միջոցառումները, ինչպես օրինակ՝ վարձավճարի կարգավորումը կամ երաշխավորված վարձակալությունը, Դատարանը հաճախ ճանաչել է հանրային շահին համապատասխանող, քանի որ դրանք ծառայում են վարձակալների սոցիալական պաշտպանության նպատակին (*Էնտոնի Ակվիլինան ընդդեմ Մալթայի* [*Anthony Aquilina v. Malta*], 2014թ., § 57, *Վելոզա Բարետուն ընդդեմ Պորտուգալիայի* [*Velosa Barreto v. Portugal*], 1995թ., § 25, *Հուտեն-Չապսկան ընդդեմ Լեհաստանի* [ՄԴ] [*Hutten-Czapska v. Poland [GC]*], 2005թ., § 178, *Ամատո Գաուչին ընդդեմ Մալթայի* [*Amato Gauci v. Malta*], 2009թ., § 55, *Կասմին ընդդեմ Ալբանիայի* [*Kasmi v. Albania*], 2020թ., § 76): Բնակարանային ոլորտում համարվել է, որ այն դիմումատուների համար սահմանված ջեռուցման ֆիքսված վճարը վճարելու պարտավորությամբ, որոնց բնակարաններն անջատված են եղել կենտրոնական ջեռուցման համակարգից, հետապնդվել է ապահով, անվտանգ և արդյունավետ ջերմամատակարարում ապահովելու իրավաչափ նպատակ (*Ստրեզովսկին և այլք ընդդեմ Հյուսիսային Մակեդոնիայի* [*Strezovski and Others v. North Macedonia*], 2020 թ., § 75):

151. Մշակութային ժառանգության պահպանության և անհրաժեշտության դեպքում՝ դրա կայուն օգտագործման նպատակը, որոշակի կենսամակարդակ ապահովելուց բացի, ներառում է տարածաշրջանի և դրա բնակչության պատմական, մշակութային և գեղագիտական արժանատիների պահպանումը: Որպես այդպիսին, դրանք կարևոր արժեքներ են, որոնց պաշտպանությունն ու հանրահռչակումը վերապահված է պետական իշխանություններին (*Բեյելերն ընդդեմ Իտալիայի* [ՄԴ] [*Beyeler v. Italy [GC]*], 2000թ., § 112, *«ԷսՍիԻԷյ Ֆերմ դե Ֆրենուա»-ն ընդդեմ Ֆրանսիայի* (որոշում) [*SCEA Ferme de Fresnoy v. France (dec.)*], 2005թ., *Դեբելիանովներն ընդդեմ Բուլղարիայի* [*Debelianovi v. Bulgaria*],

2007թ., § 54, [Կոզաչիոյուն ընդդեմ Թուրքիայի](#) [ՄԴ] [*Kozacioğlu v. Turkey* [GC]], 2009թ., § 54):

152. Նպատակների ցանկը, որոնք կարող են հետապնդել միջամտությունը «հանրային շահ» հասկացությանը համապատասխանելու համար, ընդգրկում է և կարող է ներառել նոր տարբեր նպատակներ, որոնց ծառայում են պետական քաղաքականության նկատառումները տարբեր փաստական համատեքստերում: Մասնավորապես, գույքի օտարման մասին ([Հունաստանի նախկին թագավորը և այլք ընդդեմ Հունաստանի](#) [ՄԴ] [*Former King of Greece and Others v. Greece* [GC]], 2000թ., § 87, [Վիստինշը և Պերեպյոլկինսն ընդդեմ Լատվիայի](#) [ՄԴ] [*Vistiņš and Perepjolkins v. Latvia* [GC]], 2012թ., § 106) կամ սոցիալական ապահովագրության վճարների մասին օրենքներ ընդունելու որոշման կայացումը, որպես կանոն, ենթադրում է քաղաքական, տնտեսական և սոցիալական հարցերի դիտարկում: Դատարանը հարգում է օրենսդիր մարմնի դատողությունն առ այն, թե ինչն է համապատասխանում «հանրային շահին», եթե այդ դատողությունն ակնհայտորեն զուրկ չէ ողջամիտ հիմքից ([Բելանե Նագին ընդդեմ Հունգարիայի](#) [ՄԴ] [*Bélané Nagy v. Hungary* [GC]], 2016թ., § 113):

153. Կոնվենցիայով սահմանված պաշտպանության համակարգի համաձայն՝ ազգային իշխանությունները պետք է իրականացնեն հանրությանը մտահոգող խնդրի առկայության նախնական գնահատում, որը թույլատրում է սեփականությունից զրկելու միջոցները կամ «գույքից» անարգել օգտվելու իրավունքին միջամտել: Այստեղ, ինչպես մյուս այն ոլորտներում, որոնց վրա տարածվում են Կոնվենցիայի երաշխիքները, ազգային իշխանությունները համապատասխանաբար ունեն հայեցողական լիազորությունների լայն շրջանակ: Օրինակ, սոցիալական և տնտեսական քաղաքականությունների իրականացման հարցում օրենսդիր մարմնին վերապահված հայեցողական լիազորությունների շրջանակը կլինի լայն, իսկ Դատարանը կհարգի օրենսդիր մարմնի դատողությունն առ այն, թե ինչն է «համապատասխանում հանրային շահին», եթե այդ դատողությունն ակնհայտորեն զուրկ չէ ողջամիտ հիմքից ([Բելանե Նագին ընդդեմ Հունգարիայի](#) [ՄԴ] [*Bélané Nagy v. Hungary* [GC]], 2016թ., § 113, [Պապախելան և «ԱՄԱԶՈՆ Էս.Ա.»-ն ընդդեմ Հունաստանի](#) [*Papachela and AMAZON S.A. v. Greece*], 2020թ., § 56): Ավելին, «հանրային շահ» հասկացությունն անխուսափելիորեն լայն է ([Վիստինշը և Պերեպյոլկինսն ընդդեմ Լատվիայի](#) [ՄԴ] [*Vistiņš and Perepjolkins v. Latvia* [GC]], 2012թ., § 106, [Ռ.Շ.-ն ընդդեմ Հունգարիայի](#)

[*R.Sz. v. Hungary*], 2013թ., § 44, *Գրուդիչն ընդդեմ Սերբիայի* [*Grudić v. Serbia*], 2012թ., § 75): Դատարանը, որպես կանոն, հարգալից վերաբերմունք է ցուցաբերում Պայմանավորվող պետությունների այն փաստարկների նկատմամբ, որ իր կողմից քննության առարկա հանդիսացող միջամտությունը եղել է հանրային շահի շրջանակներում, և այս առումով Դատարանի կողմից դրանց ուսումնասիրությունն այնքան էլ ինտենսիվ չի իրականացվում: Ուստի հազվադեպ է պատահում, որ դիմումատուի փաստարկն առ այն, որ տվյալ միջոցն իրականում ծառայել է մեկ այլ նպատակի, քան այն, որը նշում է պատասխանող Պայմանավորվող պետությունը, Դատարանում քննվող գործի շրջանակներում հաջողության լուրջ հեռանկարներ ունենա: Ամեն դեպքում Դատարանի համար բավարար է, որ միջամտությունը ծառայում է հանրային շահին, նույնիսկ եթե այն տարբերվում է Դատարանում քննվող վարույթի շրջանակներում Կառավարության կողմից ուղղակիորեն նշվածից: Որոշ դեպքերում Դատարանը նույնիսկ սեփական նախաձեռնությամբ նշել է նպատակը (*Ամբրուոզին ընդդեմ Իտալիայի* [*Ambruosi v. Italy*], 2000թ., § 28, *Մարիա Բոժիչն ընդդեմ Խորվաթիայի* [*Marija Božić v. Croatia*], 2014թ., § 58):

154. Մասնավորապես հայեցողական լիազորությունների շրջանակը կլինի լայն, երբ, օրինակ, օրենքներն ընդունվեն քաղաքական և տնտեսական ռեժիմի փոփոխության (*Վալկովը և այլք ընդդեմ Բուլղարիայի* [*Valkov and Others v. Bulgaria*], 2011թ., § 91), պետական բյուջեի պաշտպանության քաղաքականությունների ընդունման (*Ն.Կ.Մ.-ն ընդդեմ Հունգարիայի* [*N.K.M. v. Hungary*], 2013թ., §§ 49 և 61) համատեքստում կամ ֆինանսական միջոցների վերաբաշխման նպատակով (*Սավիցկասը և այլք ընդդեմ Լիտվայի* (որոշում) [*Savickas and Others v. Lithuania (dec.)*], 2013թ.) կամ լուրջ տնտեսական ճգնաժամով պայմանավորված խիստ խնայողության համատեքստում (*Կուֆակին և Ադեդին ընդդեմ Հունաստանի* (որոշում) [*Koufaki and Adedy v. Greece (dec.)*], 2013թ., §§ 37 և 39, և *Դա Կոնսեյսաու Մատեուշը և Սանտուշ Ժանուարիոն ընդդեմ Պորտուգալիայի* (որոշում) [*Da Conceição Mateus and Santos Januário v. Portugal (dec.)*], 2013թ., § 22, *Դա Սիլվա Կարվալյու Դիկուն ընդդեմ Պորտուգալիայի* (որոշում) [*Da Silva Carvalho Rico v. Portugal (dec.)*], 2015թ., § 37):

155. Ներպետական իշխանությունների կողմից տրված գնահատականի նկատմամբ այսպիսի հարգալից վերաբերմունք ցուցաբերվելու արդյունքում հազվադեպ են այն դեպքերի օրինակները, երբ Դատարանը չի գտնում, որ

հանրային շահը չի հիմնավորում միջամտությունը (*«Էս.Ա. Դանժվիլ»-ն ընդդեմ Ֆրանսիայի* [S.A. Dangeville v. France], 2002թ., §§ 47 և 53-58, ավել վճարված հարկը չվերադարձնելը, *Ռոզենցվայգը և «Մաքսային պահեստներ» ՍՊԸ-ը ընդդեմ Լեհաստանի* [Rosenzweig and Bonded Warehouses Ltd. v. Poland], 2005թ., § 56, դիմումատուի՝ ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնելու լիցենզիայի չեղարկում՝ համապատասխան որոշումներում իշխանությունների կողմից չներկայացվելով հանրային շահի հետ կապված որևէ հիմք, *Վասսալոն ընդդեմ Մալթայի* [Vassallo v. Malta], 2011թ., § 43, գույքի բռնագրավման օրվանից քսանութամյա ժամկետը լրանալը՝ առանց սկզբնական բռնագրավման պահանջին համապատասխան այն փաստացի օգտագործելու, հարց է առաջացնում թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում՝ կապված հանրային շահի պահանջի հետ, և *«Megadat.com ԷսԱրԷլ»-ն ընդդեմ Մոլդովայի* [Megadat.com SRL v. Moldova], 2008թ., § 79, Դատարան չեն ներկայացվել համոզիչ ապացույցներ, որ իշխանությունները դիմումատու ընկերության լիցենզիաները չեղարկելիս առաջնորդվել են իսկական և հետևողական քաղաքական նկատառումներով):

4. Համաչափությունը և հարակից հարցեր (արդար հավասարակշռություն, փոխհատուցում, հայեցողական լիազորությունների շրջանակ)

156. Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի առաջին պարբերության առաջին նախադասության մեջ սահմանված ընդհանուր կանոնին համապատասխանելու համար «գույքից» անարգել օգտվելու իրավունքին միջամտությամբ, օրենքով նախատեսված և ի շահ հանրության լինելու պայմաններից բացի, պետք է «արդար հավասարակշռություն» հաստատվի համայնքի ընդհանուր շահերի պահանջների և անձի հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև (*Բեյելերն ընդդեմ Իտալիայի* [ՄԴ] [Beyeler v. Italy [GC]], 2000թ., § 107, *Ալիշիչը և այլք ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի, Խորվաթիայի, Սերբիայի, Սլովենիայի և Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության* [ՄԴ] [Ališić and Others v. Bosnia and Herzegovina, Croatia, Serbia, Slovenia and the Former Yugoslav Republic of Macedonia [GC]], 2014թ., § 108):

157. Այլ կերպ ասած՝ այն գործերով, որոնցով տեղի է ունեցել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի ենթադրյալ խախտում, Դատարանը պետք է պարզի, թե արդյոք պետության գործողության կամ անգործության հետևանքով տվյալ անձը ստիպված էր կրել անհամաչափ և չափից ավելի մեծ բեռ: Այդ

պահանջին համապատասխանությունը գնահատելիս Դատարանը պետք է իրականացնի քննարկվող տարբեր շահերի ընդհանուր ուսումնասիրություն՝ հաշվի առնելով, որ Կոնվենցիայի նպատակն է երաշխավորել այնպիսի իրավունքներ, որոնք «գործնական և արդյունավետ» են: Այս համատեքստում հարկ է նշել, որ անորոշությունը, անկախ այն հանգամանքից՝ դա օրենսդրական, վարչական բնույթ է կրում, թե բխում է իշխանությունների կողմից իրականացված գործելակերպերից, այնպիսի գործոն է, որը պետք է հաշվի առնել պետության վարքագիծը գնահատելիս (*Բրոնիովսկին ընդդեմ Լեհաստանի* [ՄԴ] [*Broniowski v. Poland* [GC]], 2004թ., § 151):

158. Այս հավասարակշռության փնտրտուքն ամբողջ Կոնվենցիայի անբաժանելի մասն է կազմում և նաև արտացոլված է Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի կառուցվածքում (*Սպորրոնգը և Լյոնրոթն ընդդեմ Շվեդիայի* [*Sporrong and Lönnroth v. Sweden*], 1982թ., § 69, *Բրումարեսկուն ընդդեմ Ռումինայի* [ՄԴ] [*Brumărescu v. Romania* [GC]], 1999թ., § 78, *Սալիբան ընդդեմ Մալթայի* [*Saliba v. Malta*], 2005թ., § 36, *Բիստրովիչն ընդդեմ Խորվաթիայի* [*Bistrović v. Croatia*], 2007թ., § 34):

159. Այն հարցը, թե արդյոք հաստատվել է արդար հավասարակշռություն, դառնում է արդիական միայն այն դեպքում, երբ հաստատվել է, որ տվյալ միջամտությունը ծառայել է հանրային շահի, համապատասխանել է օրինականության պահանջին և չի եղել կամայական (*Իատրիդիսն ընդդեմ Հունաստանի* [ՄԴ] [*Iatridis v. Greece* [GC]], 1999թ., § 58, *Բեյելերն ընդդեմ Իտալիայի* [ՄԴ] [*Beyeler v. Italy* [GC]], 2000թ., § 107):

160. Այս հարցն առավել հաճախ որոշիչ նշանակություն ունի Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում տեղի ունենալու հանգամանքը որոշելիս: Դատարանը որպես կանոն իրականացնում է համաչափության պահանջի խորքային վերլուծություն՝ ի տարբերություն այն հարցի առավել սահմանափակ ուսումնասիրության, թե արդյոք միջամտությունը հետապնդել է հանրային շահին վերաբերող հարց (տե՛ս վերևում՝ հանրային շահին միջամտության վերաբերյալ գլուխը):

161. Համաչափության ստուգման նպատակն է նախևառաջ պարզել՝ ինչպես և որքանով է սահմանափակվել դիմումատուի այն իրավունքի իրացման հնարավորությունը, որը ենթարկվել է այնպիսի միջամտության, որի վերաբերյալ ներկայացվել է բողոք, և որոնք են եղել դիմումատուի իրավունքի իրացման

նկատմամբ սահմանված սահմանափակման՝ նրա դրության վրա բացասական հետևանքները: Այնուհետև համեմատություն է անցկացվում այս ազդեցության և միջամտությամբ հետապնդվող հանրային շահի կարևորության միջև:

162. Այս ուսումնասիրությունն իրականացնելիս Դատարանը հաշվի է առնում մի շարք գործոններ: Այս գործոնների հստակ ցանկ գոյություն չունի: Դրանք տարբեր գործերի դեպքում տարբեր են՝ կախված գործի փաստերից և համապատասխան միջամտության բնույթից:

163. Օրինակ՝ պետական գնումների համատեքստում Դատարանը վճռել է, որ Պայմանավորվող պետությունների հայեցողական լիազորությունների շրջանակն էականորեն ավելի լայն է, երբ հարցը ներառում է պետական գնումների թեկնածուների գնահատում, և թեկնածուների պարտադիր կամ հայեցողական բացառման վերաբերյալ քաղաքականության ընտրության հարցում (*Կուրբանսն ընդդեմ Թուրքիայի* [*Kurban v. Turkey*], 2020թ., §§ 81 և 86): Դատարանն այս եզրահանգումն այնուհետև կիրառել է այն գործերի դեպքում, երբ Պայմանավորվող պետությունները պետք է ընտրություն կատարեն պետական գնումների ընթացակարգերի մասնակիցների համար սահմանվող պարտավորությունների և այդ պարտավորությունների չկատարման հետևանքների առնչությամբ (*«Պրոֆարմա ՅուԷյԲի»-ն և «Բոնա Դիագնոսիս ՅուԷյԲի»-ն ընդդեմ Լիտվայի* [*UAB Profarma and UAB Bona Diagnosis v. Lithuania*], 2025թ., § 214):

164. Մեկ այլ օրինակ է *«Ջ. Փոլ Գեթի» տրաստը և այլք ընդդեմ Իտալիայի* [*The J. Paul Getty Trust and Others v. Italy*] գործը, 2024թ., §§ 407-408, որում Դատարանը նշել է հայեցողական լիազորությունների լայն շրջանակ՝ կապված այն հարցի հետ, թե ինչն է համարվում «ընդհանուր շահին համապատասխան», մասնավորապես՝ այն դեպքերում, երբ դիտարկվում են մշակութային ժառանգության հետ կապված հարցեր, մշակութային արժեքներն անօրինական դուրսբերումից պաշտպանելու և դրանք ծագման երկիր վերադարձնելու անհրաժեշտության շուրջ միջազգային և եվրոպական իրավունքի խիստ համաձայնեցվածությունը, դիմումատուի անփույթ վարքագիծը, ինչպես նաև այն բացառիկ իրավական վակուումը, որում հայտնվել են ներպետական իշխանությունները՝ վճռելով, որ տեղի չի ունեցել Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

165. *Ալպերինսն ընդդեմ Ուկրաինայի* [*Alperin v. Ukraine*] գործով, 2024թ., §§ 86-87, որը վերաբերում է դիմումատուի գրավի մասնակի բռնագանձմանը, հիմք

ընդունելով այն փաստը, որ դիմումատուն խախտել է իր գրավի պայմանները, Դատարանն արձանագրել է, որ ներպետական դատարաններն իրականացրել են մանրամասն գնահատում և ներկայացրել են իրենց որոշման համար բավարար հիմքեր՝ համադրելով հայտնաբերված խախտումը և համապատասխան հանգամանքները և բռնագանձումը կիրառելով գրավի գումարի կեսի չափով:

166. Որպես կանոն, հանրային շահի հարցը քննարկվելու դեպքում պետական իշխանությունները պարտավոր են գործել ժամանակին և պատշաճ ու հետևողական ձևով (*«Ֆեներ Ռում Էրեք Լիսեսի Վակֆի»-ն ընդդեմ Թուրքիայի* [Fener Rum Erkek Lisesi Vakfi v. Turkey], 2007թ., § 46, *Նովոսելեցկին ընդդեմ Ուկրաինայի* [Novoseletskiy v. Ukraine], 2005թ., § 102): Դատարանը դիտարկում է ընդհանուր առմամբ վարույթի կողմերի վարքագիծը, այդ թվում՝ պետության կողմից ձեռնարկված քայլերը (*Բեյելերն ընդդեմ Իտալիայի* [ՄԴ] [Beyeler v. Italy [GC]], 2000թ., § 114, *Բիստրովիչն ընդդեմ Խորվաթիայի* [Bistrović v. Croatia], 2007թ., § 35):

167. Ստորև ներկայացված են Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համատեքստում արդար հավասարակշռության ստուգման նպատակով իրականացվող ուսումնասիրությանը բնորոշ մի քանի գործոններ:

ա. Ընթացակարգային գործոններ

168. Թեև Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածում չեն պարունակվում բացահայտ ընթացակարգային պահանջներ, այն մեկնաբանվել է այնպես, որ նշանակի, որ անձանց, որոնց նկատմամբ կիրառվել է իրենց «գուլքին» միջամտող միջոց, պետք է ընձեռվի իրենց փաստարկները պատասխանատու մարմիններին ներկայացնելու ողջամիտ հնարավորություն՝ այդ միջոցներն արդյունավետորեն վիճարկելու նպատակով՝ վկայակոչելով, ըստ անհրաժեշտության, անօրինականությունը կամ կամայական և անխոհեմ վարքագիծը (*«Զի.Այ.Ի.Էմ. Էս.Ար.Էլ.»-ն ընդդեմ Իտալիայի* (ըստ ելքյան) [ՄԴ] [G.I.E.M. S.R.L. and Others v. Italy (merits) [GC]], 2018թ., § 302, *Յըլդըրըմն ընդդեմ Իտալիայի* (որոշում) [Yildirim v. Italy (dec.)], 2003թ., *«ԱԳՕՍԻ»-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* [AGOSI v. the United Kingdom], 1986թ., §§ 55 և 58-60, *«Էրր Կանադա»-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* [Air Canada v. the United Kingdom], 1995թ., § 46, *Արկուրին և այլք ընդդեմ Իտալիայի* (որոշում) [Arcuri and Others v. Italy (dec.)], 2001թ., *Ռիելան և այլք ընդդեմ Իտալիայի* (որոշում) [Riela and Others v. Italy (dec.)], 2001թ., *Էմալ Բայրամն ընդդեմ Թուրքիայի* [Kemal Bayram v. Turkey], 2021թ.,

§ 54, *Շորազովան ընդդեմ Մալթայի* [Shorazova v. Malta], 2022թ., § 302, *Արնավուդքոյի Տակսիարհի հույն ուղղափառ եկեղեցու հիմնադրամն ընդդեմ Թուրքիայի* [Arnavutkoy Greek Orthodox Taksiarhis Church Foundation v. Türkiye], 2022թ., §§ 50-56): Այս ընթացակարգային երաշխիքներն օրինականության սկզբունքի անբաժանելի մասն են կազմում (*Լեկիչն ընդդեմ Սլովենիայի* [ՄՊ] [Lekić v. Slovenia [GC]], 2018թ., § 95) (տե՛ս վերևում՝ «Օրինականության սկզբունքը» վերտառությամբ ենթագլուխը):

169. Այս պայմանը կատարված լինելու հանգամանքը ստուգելիս Դատարանը պետք է իրականացնի կիրառվող ընթացակարգերի համապարփակ ուսումնասիրություն (*«ԱԳՕՍԻ»-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* [AGOSI v. the United Kingdom], 1986թ., § 55, *«Բոուլեր Ինթերնեյշնլ Յունիթ»-ն ընդդեմ Ֆրանսիայի* [Bowler International Unit v. France], 2009թ., §§ 44-45, *Յոկելան ընդդեմ Ֆինլանդիայի* [Jokela v. Finland], 2002թ., § 45, *Դենիսովան և Մոյսեյևան ընդդեմ Ռուսաստանի* [Denisova and Moiseyeva v. Russia], 2010թ., § 59, *«Միկրոինտելեկտ» ՍՊԸ-ն ընդդեմ Բուլղարիայի* [Microintellect OOD v. Bulgaria], 2014թ., § 44): Ավելին, նույնիսկ այն իրավիճակներում, երբ առանձին ընթացակարգային թերություններն ինքնին որոշիչ ազդեցություն չունեն բռնազանձման միջոցի համաչափության վրա, Դատարանը պետք է հաշվի առնի դրանց կումուլյատիվ ազդեցությունը: Եթե համապատասխան գործոններն ընդհանուր առմամբ հանգեցնում են անորոշության և անճշտության, ապա արդյունքում բռնազանձումը կարող է դառնալ հետապնդվող իրավաչափ նպատակին անհամաչափ (*Տոդորովը և այլք ընդդեմ Բուլղարիայի* [Todorov and Others v. Bulgaria], 2021թ., § 211):

170. Այն դեպքերում, երբ դիմումատուները չեն ունեցել միջոցն արդյունավետորեն վիճարկելու հնարավորություն, Դատարանը գտել է, որ նրանք կրել են չափից ավելի մեծ բեռ (*Անտոյիչն ընդդեմ Ֆրանսիայի* [Hentrich v. France], 1994թ., § 49, *«Կոնիվ-Տար» ՍՊԸ-ն և այլք ընդդեմ Հունգարիայի* [Könyv-Tár Kft and Others v. Hungary], 2018թ., § 59, *Ուզանը և այլք ընդդեմ Թուրքիայի* [Uzan and Others v. Turkey], 2019թ., § 215, և *«Ամերիսոք Սենթեր Էս.Ար.Էլ.»-ն ընդդեմ Լյուքսեմբուրգի* [Amerisoc Center S.R.L. v. Luxembourg], 2024թ., § 61): Դատարանը ստուգում է, թե արդյոք կիրառված ընթացակարգով դիմումատուին ընձեռվել է իր շահերը պաշտպանելու արդարացի հնարավորություն (*Բեքն ընդդեմ Ֆինլանդիայի* [Bäck v. Finland], 2004թ., § 63): Արձանագրվել է խախտում այն հիմքով, որ

վարկային միության կառավարիչը դրա տնօրենների համար չի ապահովել հաշվապահական փաստաթղթերին հասանելիություն՝ միությունը ֆինանսապես կայուն լինելու հանգամանքն ապացուցելու հնարավորություն նրանց ընձեռելու համար (*«Դրուժստնևի Զալոժնա Պրիա»-ն և այլք ընդդեմ Չեխիայի Հանրապետության* [Družstevní Záložna Prie and Others v. the Czech Republic], 2008թ., §§ 94-95): Կարևոր է նաև այն փաստը, թե արդյոք իշխանությունները մանրամասն ուսումնասիրել են դիմումատուների կողմից առաջ քաշված հիմնական փաստարկները (*«Megadat.com ԷսԱրԷլ»-ն ընդդեմ Մոլդովայի* [Megadat.com SRL v. Moldova], 2008թ., § 74, *Նովոսելցկին ընդդեմ Ուկրաինայի* [Novoselelskiy v. Ukraine], 2005թ., § 111, *Բիստրովիչն ընդդեմ Խորվաթիայի* [Bistrović v. Croatia], 2007թ., § 37): Այս առնչությամբ, բռնագանձման պարտադիր բնույթով պայմանավորված, որի հետևանքով ներպետական իշխանությունները չեն կարող իրենց հայեցողությամբ իրականացնել միջոցառման համաչափության գնահատում, դիմումատուն գրկվել է այն արդյունավետորեն վիճարկելու ողջամիտ հնարավորությունից (*Յայլալին ընդդեմ Սերբիայի* [Yaylali v. Serbia], 2024թ., §§ 56-58): Ավելին, օտարումից ստացվող արտոնությունների վերաբերյալ անվիճարկելի ենթադրությունների (*Պապախելասն ընդդեմ Հունաստանի* [ՄՊ] [Papachelas v. Greece [GC]], 1999թ., §§ 53-54) և օտարման դիմաց տրվող փոխհատուցման հաշվարկի համատեքստում արված ենթադրությունների (*Կաթիկարիդիսը և այլք ընդդեմ Հունաստանի* [Kataridis and Others v. Greece], 1996թ., § 49, *«Էֆստատիու և Միխաիլիդիս և Քո. Մոթել Ամերիկա»-ն ընդդեմ Հունաստանի* [Efsthathiou and Michailidis & Co. Motel Amerika v. Greece], 2003թ., § 33) մասով վճռվել է կառավարությունների դեմ:

171. Երբ անձի գույքը ենթակա է օտարման, պետք է գործի այնպիսի ընթացակարգ, որն ապահովում է օտարման հետևանքների ընդհանուր գնահատումը, այդ թվում՝ օտարված գույքի արժեքից կախված փոխհատուցման տրամադրումը, փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող անձանց որոշումը և օտարման հետ կապված ցանկացած այլ հարցի կարգավորումը (*«Ալֆա Գլասս Անոնիմի Էմբորիկի Էտիրիա Յալոպինակոն»-ն ընդդեմ Հունաստանի* [Alfa Glass Anonymi Emboriki Etairia Yalopinakon v. Greece], 2021թ., § 36, *Պալկան և այլք ընդդեմ Չեխիայի Հանրապետության* [Pálka and Others v. the Czech Republic], 2022թ., §§ 62-50): Վերջին գործով Դատարանը գտել է, որ թեև չի կարելի ասել, որ վարչակարգի կողմից ներկայացված աղյուսակներով և դրույքաչափերով

փոխհատուցման տրամադրման համակարգն ինքնին խնդրահարույց է, Չեխիայի՝ տվյալ ժամանակահատվածում գործող օրենսդրությամբ չի նախատեսվում «ընթացակարգ, որն ապահովում է օտարման հետևանքների ընդհանուր գնահատում»։ Ավելին, *Յավուզ Օյուզդենն ընդդեմ Թուրքիայի* [Yavuz Özden v. Turkey] գործով, 2021թ., §§ 78-87, որով դիմումատուի հողակտորը դասակարգվել էր որպես ռազմական անվտանգության գոտի, գործող օրենսդրական շրջանակով չէր նախատեսվում դիմումատուի իրավունքները պատշաճ ձևով հարգելու մեխանիզմ, և փոխհատուցում չէր վճարվել։ Համանման ձևով, *Դրոզդիկը և Միկուլան ընդդեմ Ուկրաինայի* [Drozdyk and Mikula v. Ukraine] գործը, 2024թ., §§ 49-52, վերաբերում էր դիմումատուների կողմից տարիներ շարունակ օգտագործված և նրանց սեփականությունը հանդիսացող հողակտորների նկատմամբ իրավունքների չեղյալ հայտարարմանն այն հիմքով, որ հողերը գտնվել են երկաթուղու արգելված գոտիներում և հետևաբար չպետք է երբևէ դառնային մասնավոր սեփականություն։ Դատարանը գտել է, որ դիմումատուների նկատմամբ սահմանվել է անհամաչափ բեռ, քանի որ հետ վերցված հողերի դիմաց նրանց փոխհատուցում չի տրամադրվել։

172. Ազգային իշխանությունների կողմից գործում առկա մասնավոր շահերի և հանրային շահի միջև հավասարակշռության չպահպանումը ևս կարող է օգտագործվել պատասխանող պետության դեմ (*«Megadat.com ԷսԱրԷլ»-ն ընդդեմ Մոլդովայի* [Megadat.com SRL v. Moldova], 2008թ., § 74)։ Արձանագրվել է խախտում այն դեպքում, երբ աշխատանքային գործունեության արդյունքում կուտակված բոլոր խնայողությունները բռնագանձվել են անձից, որն այդ աշխատանքին անցել էր կեղծ անձնագրով։ Ներպետական դատարանները չեն ուսումնասիրել այն հանգամանքը՝ արդյոք բռնագանձման մասին որոշմամբ արդար հավասարակշռություն պահպանվել է գույքային իրավունքների և հանրային շահի միջև։ Ուստի ներպետական դատարանի կողմից համաչափության վերլուծություն չիրականացվելը կարող է հանգեցնել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտման (*Պոլետն ընդդեմ Միացյալ Թագավորության* [Paulet v. the United Kingdom], 2014թ., §§ 68-69, տե՛ս նաև *Ռուստամխանլին ընդդեմ Ադրբեջանի* [Rustamkhanli v. Azerbaijan], 2024թ., § 64, կապված հարկային մարմինների կողմից հրատարակչության բանկային հաշիվների սառեցման հետ՝ առանց համաչափության գնահատման)։ Նույն կերպ, պաշտպանության միջոցի՝ անորոշ ժամկետով ինքնաբար, ընդհանրական և ոչ ճկուն կիրառումը կարող է հանգեցնել

խախտման (*Ուզանը և այլք ընդդեմ Թուրքիայի* [*Uzan and Others v. Turkey*], 2019թ., § 193):

173. Հաշվի է առնվում նաև դիմումատուի իրավունքները սահմանափակող միջոցների վիճարկման համար օգտագործված ժամանակի տևողությունը: *Լուորդոն ընդդեմ Իտալիայի* [*Luordo v. Italy*] գործով, 2003թ., § 70, սնանկության վարույթի ամբողջ ընթացքում դիմումատուի իրավունքների սահմանափակման հիմնավորում չի ներկայացվել: Թեև սկզբունքորեն անհրաժեշտ է անվճարունակ անձին գրկել «գույքը» կառավարելու իրավունքից՝ այս վարույթի նպատակներն իրագործելու համար, այդ անհրաժեշտությունը կնվազի ժամանակի ընթացքում և սնանկության վարույթի չափազանց երկար տևողության հետևանքով: *Ուզանը և այլք ընդդեմ Թուրքիայի* [*Uzan and Others v. Turkey*] գործով, 2019թ., § 207, Դատարանի կողմից կարևոր համարված գործոններից մեկը եղել է այն, որ դիմումատուների սեփականության նկատմամբ կիրառված համապատասխան սահմանափակումները գործել են գրեթե 10 տարի կամ ավելի: Վերջապես, *Կասիլովը և այլք ընդդեմ Ռուսաստանի* [*Kasilov v. Russia*] գործով, 2021թ., § 52, Դատարանը եզրակացրել է, որ գրավի վճարը նույնիսկ դիմումատուին կալանքի տակ վերցնելուց հետո տասնմեկ ամիս պահելը համարվել է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

բ. Միջոցների ընտրությունը

174. Արդար հավասարակշռության ստուգման տարրերից մեկն այն է, թե արդյոք գոյություն են ունեցել այլ, ավելի պակաս միջամտող միջոցներ, որոնք պետական իշխանությունները կարող էին կիրառել ի շահ հանրության: Սակայն դրանց հնարավոր գոյությունն ինքնին չի նշանակում, որ վիճարկող օրենսդրությունն անհիմն է: Եթե օրենսդիր մարմինը գործել է իր հայեցողական լիազորությունների շրջանակում, ապա Դատարանը չէ, որ պետք է որոշի, թե արդյոք օրենսդրության մեջ ներկայացված է խնդիրը կարգավորելու լավագույն լուծումը, կամ արդյոք օրենսդիր մարմինն իր հայեցողական լիազորությունները պետք է իրականացնել այլ ձևով (*Ջեյմսը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության* [*James and Others v. United Kingdom*], 1986թ., § 51, *Կաուֆակին և Ադեդին ընդդեմ Հունաստանի* (որոշում) [*Koufaki and Adedy v. Greece (dec.)*], 2013թ., § 48):

175. Վերաբերելի կարող է լինել նաև այն հարցը, թե արդյոք հնարավոր կլինե՞ր նույն նպատակն իրագործել դիմումատուի իրավունքներին պակաս ինվազիվ

միջամտությամբ, և արդյոք իշխանությունները դիտարկել են այս պակաս միջամտող լուծումները կիրառելու հնարավորությունը (*«ՅՈՒԿՈՍ» Նավթային ընկերություն» ԲԲԸ-ն ընդդեմ Ռուսաստանի* [OAO Neftyanaya Kompaniya Yukos v. Russia], 2011թ., §§ 651-654, *Վասկրսիչն ընդդեմ Սլովենիայի* [Vaskrsić v. Slovenia], 2017թ., § 83):

176. Նույնիսկ այն դեպքում, երբ Կառավարությունը կոնկրետ պատճառներ չի ներկայացրել առ այն, թե ինչու է հենց դիտարկվող միջոցը եղել իր համար ցանկալի սոցիալ-տնտեսական նպատակներն իրագործելու միակ համապատասխան միջոցը, արդյոք այն լրջորեն դիտարկել է դրանք իրագործելու այլ միջոցներ կամ գնահատել է միջոցի՝ հետապնդվող նպատակին համաչափությունը, Դատարանը պատրաստ էր ընդունել, որ այդ միջոցի ընտրության պատճառը կարող էր սկզբում ոչ բացահայտ լինել (*Չելենչուկը և Ցիցյուրան ընդդեմ Ուկրաինայի* [Zelenchuk and Tsytsyura v. Ukraine], 2018թ., § 122): Դատարանը նաև հաշվի է առել այն փաստը, որ Եվրոպայի խորհրդի որևէ այլ անդամ պետություն, այդ թվում՝ համանման իրավիճակում գտնվող պետությունները չեն կիրառել համանման միջոց (*Նույն տեղում*, § 127):

177. Ավելին, *«Պրոֆարմա ՅուԷԲի»-ն և «Բոնա Դիագնոսիս ՅուԷԲի»-ն ընդդեմ Լիտվայի* [UAB Profarma and UAB Bona Diagnosis v. Lithuania] գործով, 2025թ., § 232, Դատարանը ԶՈՎԻԴ-19 համավարակի համատեքստում վճռել է, որ պետական գնումների մասին օրենքի կատարումն ապահովելու համար պատասխանատու պետական մարմնի նկատմամբ կիրառվող ֆինանսական պատժամիջոցների բացակայությունն ինքնին բավարար չէր, որ դիմումատու ընկերության գույքային իրավունքներին միջամտությունը համարվեր անհամաչափ:

գ. Արդար հավասարակշռության ստուգմանը վերաբերող Էական հարցեր

178. Որոշ դեպքերում արդար հավասարակշռության ստուգումը ներառում է հարց, թե արդյոք գործի հանգամանքները բավարար չափով հաշվի են առնվել պետության կողմից, այդ թվում՝ արդյոք սեփականության մի մասի օտարումն ազդել է դիմումատուին պատկանող՝ չօտարված մասի արժեքի կամ օգտագործման հնարավորությունների վրա (*Ազասն ընդդեմ Հունաստանի* [Azas v. Greece], 2002թ., §§ 51-53, *«Ինտերոլիվա ԷյԲիԻ»-ն ընդդեմ Հունաստանի* [Interoliva ABEE

[v. Greece](#)], 2003թ., §§ 31-33): Այս պահանջը չկատարելն առաջացնում է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում այն դեպքերում, երբ անկհայտ է, որ դիմումատուի սեփականության մոտակայքում իրականացվող շինարարական աշխատանքների բնույթն ուղղակիորեն նպաստել է մնացած սեփականության արժեքի զգալի նվազմանը, օրինակ, երբ ընդհանուր օգտագործման ճանապարհները կամ այլ շինություններ կառուցվել են մնացած հողի անմիջական հարևանությամբ ([Ուզունոյլուն ընդդեմ Հունաստանի](#) [[Ouzounoglou v. Greece](#)], 2005թ., § 30, [Բիստրովիչն ընդդեմ Խորվաթիայի](#) [[Bistrović v. Croatia](#)], 2007թ., §§ 42-44): Այնպիսի անհերքելի կանխավարկածի կիրառումը, որ դիմումատուի մնացած սեփականության արժեքն ավելացել է օտարման արդյունքում, և որ դիմումատուն հետևաբար օգուտ է ստացել դրանից, համաչափության ուսումնասիրության համատեքստում օգտագործվել է պատասխանող պետության դեմ ([Պապախելասն ընդդեմ Հունաստանի](#) [ՄԴ] [[Papachelas v. Greece](#) [GC]], 1999թ., §§ 53-54):

179. Մաքսային կանոնների խախտման համար ներմուծված ապրանքների արժեքին համարժեք չափով պարտադիր տուգանքի կիրառումը, որի հետևանքով ներպետական դատարանները գրկվում են շոշափվող շահերի և առանձին հանգամանքների հավասարակշռմանն ուղղված միջոցներ իրականացնելու հնարավորությունից, ևս հանգեցրել է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտման ([Կրաևան ընդդեմ Ուկրաինայի](#) [[Krayeva v. Ukraine](#)], 2022թ., §§ 29-32):

180. Դիմումատուի՝ «գույքից» անարգել օգտվելու իրավունքին միջամտության համաչափության մանրամասն ուսումնասիրություն իրականացնելիս այն անորոշ վիճակը, որում կարող է հայտնվել դիմումատուն իշխանությունների կողմից ձգձգումների պատճառով, այնպիսի գործոն է, որը պետք է հաշվի առնել այդ դատական վարույթի ընթացքում պետության վարքագիծը գնահատելիս ([Ալմեյդա Գարեթը, Մասկարենյաշ Ֆալկաուն և այլք ընդդեմ Պորտուգալիայի](#) [[Almeida Garrett, Mascarenhas Falcão and Others v. Portugal](#)], 2000թ., § 54, [Բրոնիովսկին ընդդեմ Լեհաստանի](#) [ՄԴ] [[Broniowski v. Poland](#) [GC]], 2004թ., §§ 151 և 185, [Բարցան և այլք ընդդեմ Հունգարիայի](#) [[Barcza and Others v. Hungary](#)], 2016թ., § 47, [Ֆրենդո Ռանդոնը և այլք ընդդեմ Մալթայի](#) [[Frendo Randon and Others v. Malta](#)], 2011թ., § 55, [«Հունգեստ Չոթ»-ն ընդդեմ Հունգարիայի](#) [[Hunguest Zrt v. Hungary](#)], 2016թ., §§ 25 և 27, [Չելենչուկը և](#)

Ցիցյուրան ընդդեմ Ուկրաինայի [Zelenchuk and Tsytsyura v. Ukraine], 2018թ., §§ 91 և 106):

181. Այն դեպքերում, երբ միջամտությունը չի դրսևորվել օտարման ձևով, Դատարանը նաև կուսումնասիրի այն հարցը, թե արդյոք օրենքներով նախատեսվում է փոխհատուցման որևէ եղանակ այն սահմանափակումների համար, որոնք կիրառվել են որոշակի ժամկետով (ի հակադրություն, *Սկիբինսցին ընդդեմ Լեհաստանի* [Skibiński v. Poland], 2006թ., §§ 93-95), արդյոք միջամտությունը կրել է արգելող, թե ճնշող բնույթ («Ալյանց-Սլովենսկա-Պոյստովնա, Ա.Էս.»-ը և այլք ընդդեմ Սլովակիայի (որոշում) [Allianz-Slovenska-Poistovna, A.S., and Others v. Slovakia (dec.)], 2010թ., *Կոնստանտին Ստեֆանովն ընդդեմ Բուլղարիայի* [Konstantin Stefanov v. Bulgaria], 2015թ., § 67), արդյոք պետությանը չի ցուցաբերվել արտոնյալ վերաբերմունք քաղաքացիական վարույթի ընթացքում, որի հետևանքով անձը հայտնվել է անբարենպաստ իրավիճակում (*Չոբուլիդիսն ընդդեմ Հունաստանի (թիվ 2)* [Zouboulidis v. Greece (no. 2)], 2009թ., §§ 32 և 35, խախտում պետության համար առավել կարճ հայցային վաղեմության ժամկետ սահմանված լինելու հիմքով), արդյոք գույքի արժեքը սահմանվել է հարկման նպատակներով և օտարման համար պետության կողմից վճարման ենթակա փոխհատուցման նպատակներով նույն կանոնների կիրառմամբ (*Յոկելան ընդդեմ Ֆինլանդիայի* [Jokela v. Finland], 2002թ., §§ 62 և 65, խախտում այն հիմքով, որ առաջին արժեքը սահմանվել է ավելի բարձր, քան վերջինը):

182. Այն միջոցների ժամանակավոր բնույթը, որոնց վերաբերյալ բողոքել են, որպես կանոն, գործում է հոգուտ պետության (*Դա Կոնսեյսաու Մատեուշը և Սանտուշ Ժանուարիոն ընդդեմ Պորտուգալիայի* (որոշում) [Da Conceição Mateus and Santos Januário v. Portugal (dec.)], 2013թ., § 29, *Սավիցկասը և այլք ընդդեմ Լիտվայի* (որոշում) [Savickas and Others v. Lithuania (dec.)], 2013թ., § 92):

183. Եթե անձի՝ «գույքից» անարգել օգտվելու իրավունքին միջամտությունը տեղի է ունեցել պետական իշխանության կողմից կատարված սխալի շտկման համատեքստում (որը, ինչպես արդեն նշվել է, եղել է ի շահ հանրության), ապա լավ կառավարման սկզբունքով իշխանությունները կարող են ոչ միայն պարտավորեցվել անհապաղ վերացնել իրենց սխալը (*Մոսկալն ընդդեմ Լեհաստանի* [Moskal v. Poland], 2009թ., § 69, *Պապլաուսկիենեն ընդդեմ Լիտվայի*

[*Paplauskienė v. Lithuania*], 2014թ., § 49), գործել պատշաճ ձևով և հնարավորինս հետևողականորեն (*Բելյելեն ընդդեմ Իտալիայի* [ՄԴ] [*Beyeler v. Italy* [GC]], 2000թ., § 120, *Ռոմևան ընդդեմ Հյուսիսային Մակեդոնիայի* [*Romeva v. North Macedonia*], 2019թ., § 58, *Գրոբելնի ընդդեմ Լեհաստանի* [*Grobelny v. Poland*], 2020թ., § 68, *Բելովան ընդդեմ Ռուսաստանի* [*Belova v. Russia*], 2020թ., § 37, *Սերեգինը և այլք ընդդեմ Ռուսաստանի* [*Seregin and Others v. Russia*], 2021թ., § 94, *Գավրիլովան և այլք ընդդեմ Ռուսաստանի* [*Gavrilova and Others v. Russia*]https://hudoc.echr.coe.int/eng_-_%7B%22itemid%22%3A%5B%22001-208898%22%5D%7D, 2021թ., § 74, *Սեմենովն ընդդեմ Ռուսաստանի* [*Semenov v. Russia*], 2021թ., § 59, *Կասարինն ընդդեմ Իտալիայի* [*Casarin v. Italy*], 2021թ., § 68, *Մուհարեմ Գյունեշը և այլք ընդդեմ Թուրքիայի* [*Muharrem Güneş and Others v. Turkey*], 2020թ., § 74), այլև այդ սխալները չպետք է շտկվեն տվյալ անձի հաշվին, մասնավորապես՝ այն դեպքում, երբ չի շոշափվում որևէ այլ հակասող մասնավոր շահ (*Գաշին ընդդեմ Խորվաթիայի* [*Gashi v. Croatia*], 2007թ., § 40, *Գլադիշևան ընդդեմ Ռուսաստանի* [*Gladysheva v. Russia*], 2011թ., § 80, *Պիրանտիենեն ընդդեմ Լիտվայի* [*Pyrantienė v. Lithuania*], 2013թ., § 70, *Մոսկալն ընդդեմ Լեհաստանի* [*Moskal v. Poland*], 2009թ., § 73, *Ալբերգասը և Արլոուսկասն ընդդեմ Լիտվայի* [*Albergas and Arlauskas v. Lithuania*], 2014թ., § 74, «Ս.Չ. Անտարես Թրանսպորտ ԷսԱ.»-ն և «Ս.Չ. Թրանսբոյի ԷսԱր.Էլ.»-ն ընդդեմ Ռումինիայի» [*S.C. Antares Transport S.A. and S.C. Transroby S.R.L. v. Romania*], 2015թ., § 48, *Սերեգինը և այլք ընդդեմ Ռուսաստանի* [*Seregin and Others v. Russia*], 2021թ., § 94, *Գավրիլովան և այլք ընդդեմ Ռուսաստանի* [*Gavrilova and Others v. Russia*], 2021թ., § 74, և *Սեմենովն ընդդեմ Ռուսաստանի* [*Semenov v. Russia*], 2021թ., § 59): Իշխանությունները պետք է կարողանան շտկել սեփական սխալները, սակայն դա չպետք է տեղի ունենա այնպիսի իրավիճակում, երբ համապատասխան անձից պահանջվում է կրել չափից ավելի մեծ բեռ (*Բելովան ընդդեմ Ռուսաստանի* [*Belova v. Russia*], 2020թ., § 37, *Կուրբանն ընդդեմ Թուրքիայի* [*Kurban v. Turkey*], 2020թ., § 82, *Մուհարեմ Գյունեշը և այլք ընդդեմ Թուրքիայի* [*Muharrem Güneş and Others v. Turkey*], 2020թ., § 74):

184. *Բելովան ընդդեմ Ռուսաստանի* [*Belova v. Russia*] գործով, 2020թ., §§ 40-45, Դատարանը որոշել է, որ պետությունը դժվար թե իրավունք ունենա պնդելու, որ տեղյակ չի եղել ոչ պատշաճ կառավարման հետևանքով իր գույքի կորստի մասին, իսկ գույքը ձեռք բերողը պետք է մանրամասնորեն ստուգեր դրա

ծագումը՝ բռնագանձման հնարավոր պահանջներից խուսափելու համար: Այսպիսով, Դատարանը չի արձանագրել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում այն դեպքում, երբ դիմումատուն կարող էր բացահայտել, որ գույքը, որը նա գնում էր, վեճի առարկա էր, և վիճարկվող գույքի նկատմամբ պետությունն ուներ իրավաչափ և զգալի հանրային շահ՝ Օլիմպիական խաղերը հյուրընկալելու և բնությունը պահպանելու առումով:

185. Երեք փոխլրացնող գործեր՝ *Սերեգինը և այլք ընդդեմ Ռուսաստանի* [Seregin and Others v. Russia], 2021թ., *Գավրիլովան և այլք ընդդեմ Ռուսաստանի* [Gavrilova and Others v. Russia], 2021թ., և *Սեմենովն ընդդեմ Ռուսաստանի* [Semenov v. Russia], 2021թ., վերաբերել են բարեխիղճ գնորդներին գույքի փոխանցումը համաձայնեցնելու ընդհանուր խնդրին այնպիսի հանգամանքներում, երբ գնորդները, մեղավորություն չունենալով, ստիպված են եղել կրել այն իրավիճակի հետևանքները, որի առաջացման պատճառը եղել է բացառապես ներպետական համակարգը կամ իշխանությունների սխալները կամ բացթողումները, և իրենց գույքից զրկվելու համար որևէ փոխհատուցում չտրամադրվելու պայմաններում: Ավելի կոնկրետ, խնդիրը ծագել է մասնավոր գույքի սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթերը հոգուտ համայնքապետարանների չեղյալ ճանաչելու համատեքստում այն հիմքով, որ սեփականաշնորհման ձևով գույքի սկզբնական փոխանցումները եղել են անօրինական (*Սերեգինը և այլք ընդդեմ Ռուսաստանի* [Seregin and Others v. Russia], 2021թ., § 4), իշխանությունների կատարած սխալների պատճառով «անտառային ռեսուրսներ» դասակարգված հողակտորների նկատմամբ սեփականության իրավունքի՝ հետադարձ ուժով չեղարկման (*Գավրիլովան և այլք ընդդեմ Ռուսաստանի* [Gavrilova and Others v. Russia], 2021թ., § 1) և դատախազի պահանջով հողակտորի նկատմամբ դիմումատուի սեփականության իրավունքի՝ հոգուտ համայնքապետարանի չեղյալ ճանաչման համատեքստում (*Սեմենովն ընդդեմ Ռուսաստանի* [Semenov v. Russia], 2021թ., § 1): Յուրաքանչյուր գործով Դատարանը գտել է, որ հանրային շահի պահանջների և դիմումատուի գույքային իրավունքը պաշտպանելու անհրաժեշտության միջև պահանջվող արդար հավասարակշռությունը խախտվել է այնպես, որ արձանագրվել է Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում (*Սերեգինը և այլք ընդդեմ Ռուսաստանի* <https://hudoc.echr.coe.int/eng> - %7B%22itemid%22%3A%5B%22001-208942%22%5D%7D[Seregin and Others v. Russia], 2021թ., § 111, *Գավրիլովան և այլք*

ընդդեմ Ռուսաստանի [Gavrilova and Others v. Russia], 2021թ., § 87, *Սեմենովն ընդդեմ Ռուսաստանի* [Semenov v. Russia], 2021թ., § 72, տե՛ս նաև *Լիդիա Նիկիտինան ընդդեմ Ռուսաստանի* [Lidiya Nikitina v. Russia], 2022թ., §§ 47-50, որը վերաբերել է սկզբնական սեփականատիրոջ մահվանից հետո իշխանությունների կողմից գույքի գրանցումը մերժելուն, որը պայմանավորված էր տարբեր տեղական և դաշնային մարմինների միջև պատշաճ և ժամանակին համագործակցության բացակայությամբ):

186. *Կանևսկան ընդդեմ Ուկրաինայի* (որոշում) [Kanevska v. Ukraine (dec.)] գործը, 2020թ., §§ 46-52, վերաբերել է գույքային վեճին, որը ծագել է մասնավոր անձանց միջև՝ բնակարանի առնչությամբ: Դիմումատուն եղել է այն բնակարանի բարեխիղճ գնորդը, որը, այնուամենայնիվ, մի քանի անգամ վաճառվել է առանց սկզբնական սեփականատիրոջ իմացության կամ համաձայնության: Խարդախության փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ: Ներպետական դատարաններն ի վերջո վճռել են հոգուտ բնակարանի սկզբնական սեփականատիրոջ: Դատարանը նշել է, որ ներպետական դատարանները պետք է ըստ էության հավասարակշռեն վիճարկվող գույքի նկատմամբ հակասող մասնավոր շահերը: Զանի որ ներպետական դատարանների վճռում չի հայտնաբերվել որևէ կամայականություն կամ ակնհայտ անճշտություն, Դատարանը համարել է, որ այն փաստը, որը ներպետական դատարաններն ի վերջո վճռել են հոգուտ բնակարանի սկզբնական սեփականատիրոջ, որպես այդպիսին, պետության համար չի առաջացնում պատասխանատվություն թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն: Պետությունը չի ունեցել այնպիսի նորմատիվ իրավական շրջանակ ներդնելու պարտավորություն, որը լիովին կբացառեր անշարժ գույքի գործարքների գրանցման ընթացքում խարդախությունների հնարավորությունը. փոխարենը պետության պարտավորությունը ներառել է այնպիսի նորմատիվ իրավական շրջանակ ներդնելու պահանջ, որով կնախատեսվեին իրավական պաշտպանության միջոցներ խարդախություն տեղի ունենալու դեպքում: Զանի որ դիմումատուին ներպետական մակարդակում հասանելի են եղել իրավական պաշտպանության միջոցներ՝ իր իրավունքները պաշտպանելու համար, թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում չի արձանագրվել:

187. *Կորշունովան ընդդեմ Ռուսաստանի* [Korshunova v. Russia] գործը, 2022թ., §§ 36-42, վերաբերել է դիմումատուի սեփականությունը հանդիսացող

բնակարանի՝ առանց փոխհատուցման բռնագանձմանը և վաճառքին: Համարվել է, որ բնակարանը գնվել է հանցավոր ծանապարհով ստացված միջոցներով, որի համար դիմումատուի ամուսինը դատապարտվել է, և այն պետք է օգտագործվի ի շահ քաղաքացիական կողմերի: Դիմումատուն, որի բարեխղճությունը կասկածի տակ չի առնվել ներպետական իշխանությունների կողմից, բողոքել է վաճառքի կարգադրության վերաբերյալ: Ընդգծելով ներպետական իշխանությունների կողմից տուժողի/քաղաքացիական կողմի համապատասխան շահերի՝ մի կողմից, և մյուս կողմից՝ գնորդի շահերի միջև հավասարակշռություն պահպանելու պահանջը՝ Դատարանը գտել է, որ տեղի է ունեցել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

188. Ավելին, *Սակը և Գյեբուկտովիչն ընդդեմ Լեհաստանի* (որոշում) [*Sak and Giebułtowicz v. Poland (dec.)*] գործը, 2023թ., §§ 66-67, վերաբերել է դիմումատուի՝ պետության կողմից մեկ տասնամյակ առաջ սխալ հաշվարկված փոխհատուցումն «անհիմն հարստացման» դոկտրինի համաձայն պետությանը վերադարձնելու պարտավորությանը: Դատարանը համարել է, որ պետական իշխանությունները ֆիզիկական անձանց և պետության միջև գույքային գործարքները կարգավորելիս ակնհայտ սխալ գնահատականներ չեն տվել՝ նպատակ ունենալով պաշտպանել պետությանն անհիմն կորուստներից, մասնավորապես՝ երկրի համակարգի՝ տոտալիտար ռեժիմից փոխակերպման առավել լայն համատեքստում: Ավելին, վերջին գործարքից անարդար շահույթ ստացած դիմումատուների առնչությամբ ներպետական դատարանի կայացրած վճիռը չի բնորոշվել կամայականությամբ):

189. Վերջապես, պատժամիջոցների դեպքում Դատարանը նշել է, որ համաչափ լինելու համար պատժամիջոցի խստությունը պետք է համապատասխանի այն հանցանքի ծանրությանը, որը պատժելու համար այն նախատեսված է, այլ ոչ թե ցանկացած ենթադրյալ խախտման ծանրությանը, որը փաստացի չի ապացուցվել (*Իմերին ընդդեմ Խորվաթիայի* [*Imeri v. Croatia*], 2021թ., § 71):

դ. Դիմումատուին առնչվող հարցեր

190. Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն հավասարակշռության ստուգման կարևոր գործոններից մեկն այն է, թե արդյոք դիմումատուն փորձել է օգտվել համակարգում առկա թերությունից կամ բացից (*«Ազգային և շրջանային փոխադարձ հիփոթեքային վարկային ընկերություն»-ը,*

«Լիդսի կապիտալ շինարարական ընկերություն»-ը և «Յորքշիրի փոխադարձ հիփոթեքային վարկային ընկերություն»-ն ընդդեմ Միացյալ Թագավորության [National & Provincial Building Society, Leeds Permanent Building Society and Yorkshire Building Society v. the United Kingdom], 1997թ., § 109, «ՕժիՍ-Ինստիտուտ Ստանիսլաս»-ը, «ՕժԵԿ Սընթ-Փայ Իքս»-ը և «Բլանշ դե Կաստիլ»-ը և այլք ընդդեմ Ֆրանսիայի [OGIS-Institut Stanislas, OGEC Saint-Pie X and Blanche de Castille and Others v. France], 2004թ., §§ 69 և 71): Նույն կերպ, «Զի.Այ.Ի.Էմ. Էս.Ար.Էլ.»-ը և այլք ընդդեմ Իտալիայի (ըստ Էուրոյան) [ՄՊ] [G.I.E.M. S.R.L. and Others v. Italy (merits) [GC]] գործով, 2018թ., § 301, Դատարանը նշել է, որ դիմումատուների մեղավորության կամ անփութության աստիճանը կամ առնվազն նրանց վարքագծի և տվյալ հանցանքի միջև կապը կարող է հաշվի առնվել բռնագանձումը համաչափ լինելու հանգամանքը գնահատելու համար (տե՛ս նաև «Զ. Փոլ Գեթի» տրաստը և այլք ընդդեմ Իտալիայի [The J. Paul Getty Trust and Others v. Italy], 2024թ., § 408): Անձի՝ հաշվապահի որակավորումը եղել է այնպիսի որոշում կայացնելու համար որոշիչ գործոններից մեկը, որ ավել կատարված վճարումների փոխհատուցումն առանց տոկոսների եղել է համաչափ (*Թաշքայան ընդդեմ Թուրքիայի* (որոշում) [Taşkaya v. Turkey (dec.)], 2018թ., §§ 49-50): «Պրոֆարմա ՅուԼԵԲԻ»-ն և «Բոնա Դիագնոսիս ՅուԼԵԲԻ»-ն ընդդեմ Լիտվայի [UAB Profarma and UAB Bona Diagnosis v. Lithuania] գործով, 2025թ., § 223, Դատարանը նկատել է, որ ներպետական դատարանները մանրամասն գնահատել են դիմումատու ընկերությունների ընդհանուր վարքագիծը Զովիդ-19 համավարակի հետևանքով ստեղծված հանրային առողջապահության ճգնաժամի արտակարգ իրավիճակում, և այդ ընկերությունները գործել են անբարեխղճորեն և փորձել են օգտվել հանրային առողջապահության ոլորտում ստեղծված արտակարգ իրավիճակից՝ ավելի շատ շահույթ ստանալու համար:

191. Որոշ դեպքերում դիմումատուի անձնական խոցելիությունը ևս հաշվի է առնվում, ինչպես *Պիրանտիենեն ընդդեմ Լիտվայի* [Pyrantienė v. Lithuania] գործում, 2013թ., § 62, որով դիմումատուի կենսաթոշակային տարիքը լրացել էր, և նա երկար ժամանակ ուներ հաշմանդամություն: Դիմումատուի առողջական և ֆինանսական դրությունը հաշվի չառնելով՝ նրա նկատմամբ սահմանված՝ նպաստները վերադարձնելու պարտավորությունը, որոնք նա բարեխղճորեն ստացել է վարչական որոշման հիման վրա, ինչը եղել է իշխանությունների սխալը, համարվել է անհամաչափ (*Չակարևիչն ընդդեմ Խորվաթիայի* [Čakarević

[v. Croatia](#)], 2018թ., §§ 82-90, տե՛ս նաև՝ [Կասարինն ընդդեմ Իտալիայի](#) [[Casarin v. Italy](#)], 2021թ., § 74):

192. Դատարանը կարող է նաև ուսումնասիրել այն հանգամանքը, թե արդյոք այն միջոցը, որի մասին բողոք է ներկայացվել, թիրախավորել է միայն առանձնացված կոնկրետ խմբի անձանց, թե կիրառվել է ընդհանուր սկզբունքներով ([Անտրիշն ընդդեմ Ֆրանսիայի](#) [[Hentrich v. France](#)], 1994թ., § 47, [Ռ.Ս.-ն ընդդեմ Հունգարիայի](#) [[R.Sz. v. Hungary](#)], 2013թ., § 60):

193. Կարևոր է նաև այն հանգամանքը, թե արդյոք դիմումատուն կարող էր ողջամտորեն տեղյակ լինել իր սեփականության նկատմամբ կիրառված իրավական սահմանափակումների մասին այնպիսի հանգամանքներում, երբ նրան արգելվել է, օրինակ, կառուցել ևս մեկ տուն իր սեփականության վրա կամ փոխել դրա գործառնական նշանակությունը, կամ կորցրել է «գույքը» ([Ալան Յակոբսոնն ընդդեմ Շվեդիայի \(թիվ 1\)](#) [[Allan Jacobsson v. Sweden](#)], 1989թ., §§ 60-61, «[Զ.Ա.Ն.Տ.Ե.-Մարատոնիսի Էյ.Ի.](#)»-ն ընդդեմ Հունաստանի [[Z.A.N.T.E. - Marathonisi A.E. v. Greece](#)], 2007թ., § 53, և [Դեպալն ընդդեմ Ֆրանսիայի](#) [ՄԴ] [[Depalle v. France](#) [GC]], 2010թ., § 86, դիմումատուի իրավունքները պաշտպանված լինելու հանգամանքը որոշելու նպատակով), և մասնավորապես՝ արդյոք տվյալ սեփականությունը գնելիս նա տեղյակ է եղել այդ սահմանափակումների մասին: Դատարանը մի քանի գործերով ընդունել է փոխհատուցման բացարձակ բացակայությունը, երբ սեփականատերն իմացել է կամ պետք է իմանար կամ ողջամտորեն տեղյակ լիներ ապագա սահմանափակումների հնարավորության մասին: [Ֆրեդինն ընդդեմ Շվեդիայի \(թիվ 1\)](#) [[Fredin v. Sweden \(no. 1\)](#)] գործով, 1991թ., §§ 12, 16 և 54, շրջակա միջավայրի պաշտպանության մասին օրենքով նախատեսված էր, որ տասը տարին լրանալուց հետո ընդերքօգտագործման լիցենզիայի գործողությունը դադարեցվում էր՝ առանց փոխհատուցում տրամադրվելու: Այդ օրենքն արդեն իսկ մի քանի տարի գործում էր, երբ դիմումատուն սկսել է ներդրումներ կատարել: [Լոնչն ընդդեմ Լեհաստանի](#) (որոշում) [[Łącz v. Poland \(dec.\)](#)] գործով, 2009թ., վաճառքի պայմանագրին կցվել են ճանապարհի կառուցմանը վերաբերող տեղական զարգացման ծրագրի համապատասխան քաղվածքները: Հետևաբար Դատարանը եզրակացրել է, որ դիմումատուները սեփականությունը գնել են՝ միանգամայն տեղյակ լինելով դրա կոնկրետ իրավական կարգավիճակի մասին, և որ այդ հանգամանքներում

պետությունը չի կարող պատասխանատվության ենթարկվել սեփականության վաճառքի հետ կապված վիճարկվող դժվարությունների համար: Նույն մոտեցումը կիրառվել է սոցիալական ապահովագրության համատեքստում (*Մաուրիելլոյն ընդդեմ Իտալիայի* (որոշում) [*Mauriello v. Italy (dec.)*], 2016թ.):

194. Դատարանը կարող է նաև հաշվի առնել դիմումատուի գույքին միջամտությունների ինքնաբերական, ընդհանրական և ոչ ճկուն բնույթը՝ առանց առանձին պատշաճ ուսումնասիրություն իրականացնելու: *Ուզանը և այլք ընդդեմ Թուրքիայի* <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-191475> [*Uzan and Others v. Turkey*] գործով, 2019թ., § 212, որը վերաբերում էր անվճարունակ բանկի կառավարիչներին կամ գործադիր տնօրենների հարազատներին պատկանող ակտիվների վրա կանխարգելիչ նպատակով արգելանք դնելուն, Դատարանը նշել է, որ ապացույցների բացակայությունը ենթադրում է, որ դիմումատուներն անձամբ կարող էին մասնակից լինել որևէ խարդախության: Նույն կերպ, *Յայլալին ընդդեմ Սերբիայի* [*Yaylali v. Serbia*] գործով, 2024թ., § 57, որը վերաբերում էր դիմումատուի կողմից ոսկյա զարդերը չհայտարարագրելու հետևանքով դրանց պարտադիր բռնագանձմանը, միջոցի ինքնաբերական բնույթով պայմանավորված՝ դիմումատուն գրկվել էր իր փաստարկները համապատասխան իշխանություններին ներկայացնելու ողջամիտ հնարավորությունից:

Ե. Սեփականությանը միջամտության համար փոխհատուցումը որպես արդար հավասարակշռության տարր

195. Փոխհատուցման պայմանները կարևոր են արդար հավասարակշռության և մասնավորապես այն հանգամանքի գնահատման համար, թե արդյոք վիճարկվող միջոցի կիրառմամբ դիմումատուների նկատմամբ չի սահմանվել անհամաչափ բեռ (*Սուրբ մենաստաններն ընդդեմ Հունաստանի* [*The Holy Monasteries v. Greece*], 1994թ., § 71, *Պլատակուն ընդդեմ Հունաստանի* [*Platakou v. Greece*], 2001թ., § 55): Այնուամենայնիվ, փոխհատուցման կարևորությունը Դատարանի գնահատմամբ տարբեր է՝ կախված դիտարկվող կանոններից:

196. Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի առաջին պարբերության երկրորդ նախադասության համաձայն՝ գույքը վերցնելը՝ առանց դրա արժեքին ողջամտորեն համապատասխանող գումարի վճարման, որպես կանոն, համարվում

Ե անհամաչափ միջամտություն, իսկ փոխհատուցման բացարձակ բացակայությունը կարող է համարվել արդարացի միայն բացառիկ դեպքերում (*Հունաստանի Նախկին թագավորն ընդդեմ Հունաստանի* (արդարացի փոխհատուցում) [ՄՊ] [*Former King of Greece and Others v. Greece* (just satisfaction) [GC]], 2002թ., § 89, տե՛ս նաև *Կատոնան և Չավարսկին ընդդեմ Սլովակիայի* [*Katona and Závorský v. Slovakia*], 2023թ., § 63, և *Դրոզդիկը և Միկուլան ընդդեմ Ուկրաինայի* [*Drozdyk and Mikula v. Ukraine*], 2024թ., § 52): Այնուամենայնիվ, այնպիսի դեպքերում, երբ դիտարկվում է սեփականության օգտագործումը վերահսկող միջոցը, արդար հավասարակշռություն ապահովելու հանգամանքը որոշելիս պետք է հաշվի առնել փոխհատուցման բացակայությունը (*Դեպալն ընդդեմ Ֆրանսիայի* [ՄՊ] [*Depalle v. France* [ՄՊ]], 2010թ., § 91):

Համանման նկատառումներ կիրառվում են, երբ դիտարկվում է ընդհանուր դրույթը (*Սպորրոնգը և Լյոնրոթն ընդդեմ Շվեդիայի* [*Sporrong and Lönnroth v. Sweden*], 1982թ., § 69, տե՛ս սույն ենթագլխի վերջում):

197. Ինչ վերաբերում է սեփականությունից զրկելուն, ապա ողջամտությունը կախված է տվյալ գործի հանգամանքներից, սակայն փոխհատուցման չափը որոշելիս կիրառվում է հայեցողական լիազորությունների լայն շրջանակ: Դատարանի՝ վերանայման լիազորությունը սահմանափակվում է այն հանգամանքը պարզելով, թե արդյոք փոխհատուցման պայմանների ընտրությունն այս տիրույթում պետության հայեցողական լիազորությունների լայն շրջանակից դուրս է (*Ջեյմսը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության* [*James and Others v. the United Kingdom*], 1986թ., § 54): Դատարանը նաև հարգում է օրենսդիր մարմնի դատողությունն օտարման համար տրամադրվող փոխհատուցման առնչությամբ, եթե այն ակնհայտորեն անհիմն չէ (*Լիթգոուն և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Lithgow and Others v. the United Kingdom*], 1986թ., § 122):

198. Թեև ճիշտ է, որ օրինական օտարման բազմաթիվ դեպքերում միայն ամբողջական փոխհատուցումը կարող է համարվել սեփականության արժեքին ողջամտորեն համարժեք, գոյություն ունեն այդ կանոնից բացառություններ (*Հունաստանի Նախկին թագավորը և այլք ընդդեմ Հունաստանի* (արդարացի փոխհատուցում) [ՄՊ] [*Former King of Greece and Others v. Greece* (just satisfaction) [GC]], 2002թ., § 78, *Սկորդինոն ընդդեմ Իտալիայի (թիվ 1)* [ՄՊ] [*Scordino v. Italy (no. 1)* [GC]], 2006թ., § 96): Հետևաբար այս դրույթով չի երաշխավորվում բոլոր դեպքերում ամբողջական փոխհատուցման տրամադրում, քանի որ «հանրային

շահի» իրավաչափ նպատակներով (ինչպիսիք են տնտեսական բարեփոխման միջոցներով հետաանդվող նպատակները կամ սոցիալական արդարության ավելի բարձր մակարդակ ապահովելուն ուղղված նպատակները) կարող է պահանջվել ամբողջ շուկայական արժեքից պակաս փոխհատուցում (*Ջեյմսը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության* [James and Others v. the United Kingdom], 1986թ., § 54, *Պապախելասը ընդդեմ Հունաստանի* [ՄՊ] [Papachelas v. Greece [GC]], 1999թ., § 48, <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-57906>*Սուրբ մենաստաններն ընդդեմ Հունաստանի* [The Holy Monasteries v. Greece], 1994թ., §§ 70-71, «*Ջեյ.Էյ. Փայ (Օքսֆորդ)*» *ՍՊԸ-ն և «Ջեյ.Էյ. Փայ (Օքսֆորդ) Լենդ» ՍՊԸ-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* [ՄՊ] [J.A. Pye (Oxford) Ltd and J.A. Pye (Oxford) Land Ltd v. The United Kingdom [GC]], 2007թ., § 54, «*Ուրբարսկա Օբեց Տրենչասկե Բիսկուպիցե*»-ն *ընդդեմ Սլովակիայի* [Urbárska Obec Trenčianske Biskupice v. Slovakia], 2007թ., § 115, *Պալկան և այլք ընդդեմ Չեխիայի Հանրապետության* [Pálka and Others v. the Czech Republic], 2022թ., § 49, *Մարիա Ազոպարդին ընդդեմ Մալթայի* [Maria Azzopardi v. Malta], 2022թ., § 54):

199. Համայնքի ընդհանուր շահերի և վերևում նշված՝ անձի հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև հավասարակշռությունը, որպես կանոն, ապահովվում է, երբ այն անձին վճարված փոխհատուցումը, որի սեփականությունը վերցվել է, ողջամտորեն համարժեք է օտարման պահին սահմանված դրա «շուկայական արժեքին» (*Պինցովան և Պինցն ընդդեմ Չեխիայի Հանրապետության* [Pincová and Pinc v. Czech Republic], 2002թ., § 53, *Գաշին ընդդեմ Խորվաթիայի* [Gashi v. Croatia], 2007թ., § 41, *Վիստինշը և Պերեպյոլկինսն ընդդեմ Լատվիայի* [ՄՊ] [Vistiņš and Perepjolkins v. Latvia [GC]], 2012թ., § 111, *Գուիզո-Գալիսեյն ընդդեմ Իտալիայի* (արդարացի փոխհատուցում) [ՄՊ] [Guiso-Gallisay v. Italy (just satisfaction) [GC]], 2009թ., § 103, *Մորենո Պիազ Պենյան և այլք ընդդեմ Պորտուգալիայի* [Moreno Diaz Peña and Others v. Portugal], 2015թ., § 76): Ցանկացած այլ մոտեցում կարող է առաջացնել անորոշություն կամ նույնիսկ կամայականություն (*Վիստինշը և Պերեպյոլկինսն ընդդեմ Լատվիայի* [ՄՊ] [Vistiņš and Perepjolkins v. Latvia [GC]], 2012թ., § 111):

200. Փոխհատուցումը պակաս համարժեք կլիներ, եթե այն վճարվեր առանց հաշվի առնելու տարբեր հանգամանքներ, որոնք ավելացնում են դրա արժեքը, ինչպես օրինակ՝ օտարված սեփականության արժեքը ներառել է ոչ միայն հողը, այլև ձեռնարկատիրական գործունեությունը, որը տեղի է ունեցել այդտեղ, օրինակ՝ քարհանքը («*Վեռա Նաթուրշտեյն ԳմբՀ և Զո Կգ*»-ն *ընդդեմ Գերմանիայի* [Werra

Naturstein GmbH & Co Kg v. Germany], 2017թ., § 46, *Ազասն ընդդեմ Հունաստանի* [*Azas v. Greece*], 2002թ., §§ 52-53, *Աթանասիուն և այլք ընդդեմ Հունաստանի* [*Athanasiou and Others v. Greece*], 2006թ., § 24): Օտարման հետևանքով եկամտի հիմնական աղբյուրի կորուստը կարող է նշանակել, որ դիմումատուն կրել է չափազանց մեծ անհատական բեռ, եթե իշխանությունները չեն անդրադարձել այն հարցին, թե արդյոք տրամադրված փոխհատուցումը կծածկեր ապրուստի միջոցներից զրկվելու հետևանքով կրած փաստացի կորուստը կամ առնվազն բավարար կլիներ այն տարածքում համարժեք հող ձեռք բերելու համար, որտեղ բնակվում էր դիմումատուն (*Օսմանյանը և Ամիրադյանն ընդդեմ Հայաստանի* [*Osmanyany and Amiraghyany v. Armenia*], 2018թ., § 70):

201. Փոխհատուցման վճարման անհարկի ձգձգումը մեկ այլ կարևոր գործոն է (*Ալմեյդա Գարեթը, Մասկարենյաշ Ֆալկաուն և այլք ընդդեմ Պորտուգալիայի* [*Almeida Garrett, Mascarenhas Falcão and Others v. Portugal*], 2000թ., § 54, *Չայկովսկան և այլք ընդդեմ Լեհաստանի* [*Czajkowska and Others v. Poland*], 2010թ., § 60): Դատարանը պետության դեմ կայացրել է վճիռ այն գործի շրջանակներում, որով պետական իշխանությունները, որոնք սահմանել են փոխհատուցման չափը, հաշվի չեն առել այն հանգամանքը, որ ավելի քան քսան տարի էր անցել, իսկ դիմումատուն դեռևս չէր ստացել փոխհատուցում (*Շեմբրին և այլք ընդդեմ Մալթայի* [*Schembri and Others v. Malta*], 2009թ., § 43): Փոխհատուցման վճարումը յոթանասունհինգ տարի ձգձգելն առաջացրել էր թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում (*Մալաման ընդդեմ Հունաստանի* [*Malama v. Greece*], 2001թ., § 51):

202. Օտարման համար փոխհատուցման վճարման՝ չափից երկար ժամկետով ձգձգումը գերզնաճի համատեքստում հանգեցնում է այն անձի ֆինանսական կորուստների ավելացմանը, որի հողն օտարվել է, որի հետևանքով նա հայտնվում է անորոշ վիճակում (*Աքքուսն ընդդեմ Թուրքիայի* [*Akkus v. Turkey*], 1997թ., § 29, *Աքան ընդդեմ Թուրքիայի* [*Aka v. Turkey*], 1998թ., § 49): Նույնիսկ եթե Դատարանի կողմից գործի քննության ժամանակ փոխհատուցման մի մասն արդեն իսկ վճարված է եղել, փոխհատուցման ամբողջական վճարման ձգձգումը շարունակում է խնդրահարույց լինել (*Չայկովսկան և այլք ընդդեմ Լեհաստանի* [*Czajkowska and Others v. Poland*], 2010թ., § 62):

203. Փոխհատուցումը սահմանելիս պետք է հաշվի առնել դիմումատուի անձնական և սոցիալական դրությունը (*Պիրանտիենեն ընդդեմ Լիտվայի* [*Pyrantiené v. Lithuania*], 2013թ., § 62): Այն սեփականությունը ձեռք բերելիս

դիմումատուի կողմից ցուցաբերված բարեխղճությունը հաշվի չառնելը, որը հետագայում օտարվել է, գործում է ի վնաս պետության (*նույն տեղում*, § 60):

204. Այն փաստը, որ անձինք, որոնց սեփականությունը հետագայում պետք է օտարվեր, շարունակել են դրա օգտագործումն այն վարույթի ընթացքում, որի շրջանակներում սահմանվել է վճարման ենթակա փոխհատուցման չափը, չի ազատում պետությանը դրա արժեքին ողջամտորեն համարժեք չափով փոխհատուցում սահմանելու պարտավորությունից (*Յեթիշը և այլք ընդդեմ Թուրքիայի* [*Yetiş and Others v. Turkey*], 2010թ., § 52):

205. Որոշ իրավիճակներում հատուկ հատուցում չտրամադրելը կարող է առաջացնել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում (*Ազասն ընդդեմ Հունաստանի* [*Azas v. Greece*], 2002թ., §§ 52-53, *Աթանասիուն և այլք ընդդեմ Հունաստանի* [*Athanasiou and Others v. Greece*], 2006թ., § 24): Օրինակ, մասնակի օտարման դեպքերում, երբ ավտոմոբիլային ճանապարհ է կառուցվել դիմումատուի տան անմիջական հարևանությամբ, այդպիսի միջամտությամբ կարող է պահանջվել լրացուցիչ փոխհատուցման տրամադրում՝ կապված տան օգտագործման սահմանափակման հետ: Ակնհայտ է, որ շինարարական աշխատանքների բնույթն անմիջականորեն նպաստել է մնացած սեփականության արժեքի էական նվազմանը (*Բիստրովիչն ընդդեմ Խորվաթիայի* [*Bistrović v. Croatia*], 2007թ., §§ 40-42, *Ուզունոյուն ընդդեմ Հունաստանի* [*Ouzounoglou v. Greece*], 2005թ., § 30):

206. Եթե օտարումն իրականացվել է ծավալուն տնտեսական բարեփոխումների կամ սոցիալական արդարության ավելի բարձր մակարդակ ապահովելուն ուղղված միջոցների կիրառման հետևանքով, ապա պետություններին վերապահված հայեցողական լիազորությունների շրջանակը, որպես կանոն, կլինի լայն նաև դիմումատուներին տրամադրվելիք փոխհատուցման չափը որոշելու հարցում: Ամբողջ ոլորտի ազգայնացման վերաբերյալ օրենսդրություն ընդունելը, որպես կանոն, ենթադրում է տարբեր հարցերի քննարկում, որոնց վերաբերյալ կարծիքները ժողովրդավարական հասարակությունում կարող են ողջամտորեն մեծապես տարբերվել: Զանի որ ազգային իշխանություններն անմիջականորեն ճանաչում են իրենց հասարակությանը և նրա կարիքներն ու ռեսուրսները, նրանք, ի տարբերություն միջազգային դատավորի, սկզբունքորեն ավելի լավ կարող են գնահատել՝ ինչ միջոցներ են պատշաճ տվյալ ոլորտում, և հետևաբար սեփականատիրոջն իր

սեփականությունից զրկելու և փոխհատուցման պայմանները սահմանելու հարցը որոշելու համար հայեցողական լիազորությունների շրջանակը պետք է լինի լայն (*Լիթգոուն և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության* [Lithgow and Others v. the United Kingdom], 1986թ., §§ 121-122, տե՛ս նաև *Մարիա Ազոպարդին ընդդեմ Մալթայի* [Maria Azzopardi v. Malta], 2022թ., § 55): Նույն կերպ, *Ջեյմսը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության* [James and Others v. the United Kingdom] գործով, 1986թ., §§ 68-69, խնդիրն այն էր, թե արդյոք վարձակալության ոլորտի բարեփոխումների մասին օրենսդրության համատեքստում երկարաժամկետ վարձակալներին իրենց գույքը ձեռք բերելու հնարավորություն ընձեռող պայմաններն ապահովում էին արդար հավասարակշռություն: Դատարանը գտել է, որ արդար հավասարակշռությունն ապահովվել էր՝ վճռելով, որ համատեքստը վերաբերել է սոցիալ-տնտեսական բարեփոխմանը, որի շրջանակներում ազատ սեփականատերերի կողմից կրած բեռը չի եղել ոչ ողջամիտ՝ չնայած շահագրգիռ կողմերի ստացած գումարները եղել են սեփականության շուկայական արժեքից պակաս: Ավելին, *Մարիա Ազոպարդին ընդդեմ Մալթայի* [Maria Azzopardi v. Malta] գործով, 2022թ., §§ 63 և 65-68, որով հողի օտարման նպատակը եղել է պետության տնտեսական և պլանավորման քաղաքականությունների շրջանակներում բնակելի տների տրամադրումը, Դատարանն ընդունել է, որ փոխհատուցման նպատակներով հողին գյուղատնտեսական նշանակություն տալու մասին ներպետական որոշումները զուրկ չեն եղել ողջամիտ հիմքից, և կարևորել է ընթացակարգային և այլ երաշխիքների առկայությունը:

207. *A fortiori* (առավել ևս), ամբողջական փոխհատուցումից պակաս չափով փոխհատուցումը նույնպես կարող է համարվել անհրաժեշտ, եթե սեփականությունը վերցվում է «երկրի սահմանադրական կարգի այնպիսի հիմնարար փոփոխության նպատակով, ինչպիսին է միապետությունից հանրապետության անցումը» (*Հունաստանի Նախկին թագավորը և այլք ընդդեմ Հունաստանի* [ՄՊ] [Former King of Greece and Others v. Greece [GC]], 2000թ., § 87): Քաղաքական և տնտեսական ռեժիմների փոփոխության համատեքստում օրենքներ ընդունելիս պետությունն ունի հայեցողական լիազորությունների լայն շրջանակ (*Կոպեցկին ընդդեմ Սլովակիայի* [ՄՊ] [Kopecký v. Slovakia [GC]], 2004թ., § 35): Այս սկզբունքը վերահաստատվել է *Բրոնիովսկին ընդդեմ Լեհաստանի* [ՄՊ] [Broniowski v. Poland [GC]] գործում, 2004թ., § 182, երկրի՝ ժողովրդավարական ռեժիմին անցում կատարելու համատեքստում: Դատարանը նշել է, որ այնպիսի

երկրում սեփականությանն առնչվող հարաբերությունները կարգավորող կանոնները, «որն ունի համապարփակ, սակայն հակասական օրենսդրական համակարգ՝ ընդհանուր առմամբ երկրի համար զգալի տնտեսական ազդեցությամբ», կարող են հանգեցնել այնպիսի որոշումների կայացման, որոնցով սահմանվում է սեփականությունից զրկելու կամ ռեստիտուցիայի համար փոխհատուցման տրամադրումը դրա շուկայական արժեքից ցածր չափով (*Սկորդինոն ընդդեմ Իտալիայի (թիվ 1)* [ՄԴ] [*Scordino v. Italy (no. 1)* [GC]], 2006թ., § 98):

208. Օրենքների ընդունմանն առնչվող այս սկզբունքները Դատարանը վերահաստատել է նաև «Գերմանիայի վերամիավորման բացառիկ համատեքստում» (*Ֆոն Մալցանը և այլք ընդդեմ Գերմանիայի* (որոշում) [ՄԴ] [*Von Maltzan and Others v. Germany (dec.)* [GC]], 2005թ., § 77 և 111-12) և այն դեպքում, երբ օտարումն իրականացվել է երկու ռեժիմներից անցումային ժամանակահատվածում գործող օրենսդրության համաձայն, որն ընդունվել է ոչ ժողովրդավար ընտրությունների արդյունքում ընտրված խորհրդարանի կողմից (*Յանը և այլք ընդդեմ Գերմանիայի* [ՄԴ] [*Jahn and Others v. Germany* [GC]], 2005թ., §§ 113 և 117): Վերջին դեպքում Գերմանիայի վերամիավորման քաղաքական և իրավական համատեքստի եզակի բնույթով հիմնավորվել է փոխհատուցման բացարձակ բացակայությունը: Տարբերակում է դրվել *Յանի և այլոց* գործի, 2005թ., և *Վիստինշի և Պերեպյոլկինսի* գործի միջև. վերջինս այնպիսի դեպք չէր, երբ ապազգայնացման գործընթացում առաջացած ակնհայտորեն անարդար իրավիճակն օրենսդիր մարմինը պետք է շտկեր *ex post facto* (հետադարձ ուժով)՝ համեմատաբար կարճ ժամանակահատվածում՝ սոցիալական արդարությունը վերականգնելու համար: Հետևաբար *Վիստինշը և Պերեպյոլկինսն ընդդեմ Լատվիայի* [*Vistiņš and Perepjolkins v. Latvia*] գործով, 2012թ., §§ 123, 127-130, գտել են, որ բավարար փոխհատուցման բացակայությունը հիմնավորված չէր):

209. Բացի այդ, այն դեպքերում, երբ սեփականությունը վերցվել է անօրինական ճանապարհով, փոխհատուցումը, այնուհանդերձ, պետք է կրի փոխհատուցող բնույթ, այլ ոչ թե պատասխանող պետության նկատմամբ լինի պատժիչ կամ զսպող միջոց (*Գուիզո-Գալիսայն ընդդեմ Իտալիայի* (արդարացի փոխհատուցում) [ՄԴ] [*Guiso-Gallisay v. Italy (just satisfaction)* [GC]], 2009թ., § 103): Համաձայն այս գործով Մեծ պալատի կողմից որդեգրված մոտեցման՝ ժամկետը լրանալու հանգամանքն արտացոլելու համար պետք է սեփականությունը վերցնելու

Ժամանակ գործող արժեքը փոխարկել ընթացիկ արժեքի՝ գնաճի հետևանքները մեղմելու և (օրենքով սահմանված պարզ) տոկոսը նվազեցնելու համար, որը կիրառվում է այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում դիմումատուն զրկված է եղել սեփականությունից (*նույն տեղում*, § 105): Բացի այդ, Մեծ պալատը գնահատել է այն հնարավորությունների կորուստները, որոնք դիմումատուները կրել են օտարումից հետո (*նույն տեղում*, § 107):

210. Ավելին, եթե դիտարկվում է սեփականության օգտագործումը վերահսկող միջոցը, ապա արդար հավասարակշռություն ապահովվելու հանգամանքը որոշելիս պետք է հաշվի առնել փոխհատուցման բացակայությունը, սակայն դա ինքնին բավարար չէ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում համարվելու համար («*Անոնիմոս Տուրիստիկի Էթերի Ըսենոդոխիա Կրիտիս*»-ն *ընդդեմ Հունաստանի* [Anonymos Touristiki Etairia Xenodocheia Kritis v. Greece], 2008թ., §§ 44 և 45, *Անդրեյ Ռուչինսկին ընդդեմ Լեհաստանի* [Andrzej Ruciński v. Poland], 2023թ., § 84): *Դեպալն ընդդեմ Ֆրանսիայի* [ՄՊ] [Depalle v. France [GC]] գործով, 2010թ., § 91, որով դիմումատուները զբաղեցրել էին ծովային նշանակության պետական գույքի դասին պատկանող հողի վրա կառուցված տներ, Դատարանը, հիմք ընդունելով պետական գույքը կարգավորող կանոնները և հաշվի առնելով, որ դիմումատուն չէր կարող չիմանալ այն սկզբունքի մասին, որ որևէ փոխհատուցում չի վճարվելու, ինչը հստակ նշված է եղել յուրաքանչյուր որոշման մեջ, վճռել է, որ փոխհատուցման չտրամադրումը չէր կարող համարվել դիմումատուի սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողությանն անհամաչափ միջոց, որն իրականացվել էր՝ ընդհանուր շահի նկատառումներից ելնելով:

211. «*Էս.Ա. Բիո դ'Արդեն*»-ն *ընդդեմ Բելգիայի* [S.A. Bio d'Ardennes v. Belgium] գործով, 2019թ., §§ 47-49 և 51, որով բրուցելոզով հիվանդ բազմաթիվ կենդանիների հարկադիր սպանողը համարվել է օգտագործման նկատմամբ վերահսկողություն, Դատարանը վճռել է, որ դիմումատու ընկերությանը դրա խոշոր եղջերավոր կենդանիների սպանդի համար փոխհատուցման տրամադրումը մերժելու պատճառով այն չպետք է կրեր անհատական և չափից մեծ բեռ:

212. Վերջապես, դիմումատուների իրավունքներին միջամտությունների առնչությամբ, որոնց վերլուծությունն իրականացվել է Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի ընդհանուր դրույթի համաձայն, Դատարանը որդեգրել է գործերի «օգտագործման նկատմամբ վերահսկողության» կատեգորիային պատկանող

գործերի համար կիրառվող մոտեցմանն ըստ էության համանման մոտեցում (*Կատտե Կլիտշե դե լա Գրանշեն ընդդեմ Իտալիայի* [Katte Klitsche de la Grange v. Italy], 1994թ., §§ 42 և 47-48, *Պիալոպուլոսը և այլք ընդդեմ Հունաստանի* [Pialopoulos and Others v. Greece], 2001թ., §§ 57-61): *Սպորրոնսզը և Լյոնրոթս ընդդեմ Շվեդիայի* [Sporrong and Lönnroth v. Sweden] գործով, 1982թ., § 69, Դատարանը գտել է, որ դիմումատուները կրել են անհատական և չափից մեծ բեռ, որը կարող էր համարվել իրավաչափ միայն այն դեպքում, երբ նրանք ունենային ժամկետների կրճատում հայցելու կամ փոխհատուցում պահանջելու հնարավորություն:

Գ. Անդամ պետությունների դրական պարտավորությունները

213. Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով սահմանված՝ սեփականության իրավունքը հարգելու պարտավորությունը ներառում է թե՛ բացասական և թե՛ դրական պարտավորություններ:

214. Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի էական նպատակն է անձին պաշտպանել իր «գույքից» անարգել օգտվելուն պետության չփխմավորված միջամտությունից (բացասական պարտավորություններ): Այնուամենայնիվ, Կոնվենցիայի 1-ին հոդվածի ուժով յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ «[իր] իրավագրության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում է այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են Կոնվենցիայով»: Այս ընդհանուր պարտականությունը կատարելը կարող է առաջացնել Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների արդյունավետ կատարումն ապահովելու գործընթացին բնորոշ դրական պարտավորություններ: Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համատեքստում այս դրական պարտավորություններով կարող է պետությունից պահանջվել սեփականության իրավունքը պաշտպանելու համար անհրաժեշտ միջոցների ձեռնարկում (*Բրոնիովսկին ընդդեմ Լեհաստանի* [ՄՊ] [Broniowski v. Poland [GC]], 2004թ., § 143, «*Սովտրանսավտո Հոլդինգ*»-ն ընդդեմ *Ուկրաինայի* [Sovtransavto Holding v. Ukraine], 2002թ., § 96, *Քիգանս ընդդեմ Իռլանդիայի* [Keegan v. Ireland], 1994թ., § 49, *Կրոնը և այլք ընդդեմ Նիդերլանդների* [Kroon and Others v. the Netherlands], 1994թ., § 31, *Ալիշիչը և այլք ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի, Խորվաթիայի, Սերբիայի, Սլովենիայի և Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության* [ՄՊ] [Ališić and Others v. Bosnia and Herzegovina, Croatia, Serbia, Slovenia and the Former Yugoslav

Republic of Macedonia [GC]], 2014թ., § 100, «*Լիկվիդեյամա փի/Էս Սելգա»-ն և Վասիլևսկան ընդդեմ Լատվիայի* (որոշում) [*Likvidējamā p/s Selga and Vasilevska v. Latvia* (dec.)], 2013թ., §§ 94-113):

215. Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանված իրավունքի իսկական, արդյունավետ իրացումը կախված չէ միայն պետության չմիջամտելու պարտականությունից, այլ կարող են պահանջվել պաշտպանության դրական միջոցներ, մասնավորապես՝ այն դեպքում, երբ առկա է դիմումատուի կողմից իշխանություններից օրինականորեն ակնկալվող միջոցների և իր «գույքից» արդյունավետորեն օգտվելու միջև ուղղակի կապ (*Ըյուներյըլդզն ընդդեմ Թուրքիայի* [ՄԴ] [*Öneryıldız v. Turkey* [GC]], 2004թ., § 134, *Դաբիչն ընդդեմ Խորվաթիայի* [*Dabić v. Croatia*], 2021թ., § 51), նույնիսկ այն դեպքերում, երբ դատական վարույթ է ընթանում մասնավոր անձանց կամ ընկերությունների միջև («*Սովտրանսավտո Հոլդինգ»-ն ընդդեմ Ուկրաինայի* [*Sovtransavto Holding v. Ukraine*], 2002թ., § 96, *Անտոնոպուլուն ընդդեմ Հունաստանի* (որոշում) [*Antonopoulou v. Greece* (dec.)], 2021թ., § 55):

216. *Ըյուներյըլդզն ընդդեմ Թուրքիայի* [ՄԴ] [*Öneryıldız v. Turkey* [GC]] գործով, 2004թ., § 134, որը վերաբերել է անօրինական բնակավայրում պետական վտանգավոր գործունեության հետևանքով բազմաթիվ տների ավերմանը և մի քանի անձանց մահվան դեպքերին (աղբահորում կուտակված մեթան գազի պայթյուն), Դատարանը գտել է, որ ներպետական իշխանությունները չեն կատարել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով սահմանված իրենց դրական պարտավորությունները, քանի որ նրանք չեն ձեռնարկել իրենց իրավասության ներքո գտնվող հնարավոր բոլոր միջոցները՝ դիմումատուի գույքային շահը պաշտպանելու համար՝ հաշվի առնելով այն ռիսկը, որը հայտնի էր կամ պետք է հայտնի լիներ նրանց (*Կուրշունն ընդդեմ Թուրքիայի* [*Kurşun v. Turkey*], 2018թ., § 115): Մասնավորապես իշխանությունները բնակիչներին չեն տեղեկացրել բնակավայրում առկա աղբահոր վտանգավորության մասին, որը տարիներ առաջ հաստատվել էր փորձագիտական եզրակացությամբ, սակայն նրանք չեն ձեռնարկել որևէ գործնական միջոց՝ այդ ռիսկից խուսափելու համար, ինչպես օրինակ՝ գազահեռացման համակարգի ժամանակին տեղադրումը:

217. Այնուհանդերձ, պետք է տարբերակել Կոնվենցիայի 2-րդ հոդվածով և Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով սահմանված դրական պարտավորությունները: Թեև կյանքի իրավունքի հիմնարար կարևորությամբ

պայմանավորված՝ անհրաժեշտ է, որ 2-րդ հոդվածով սահմանված դրական պարտավորությունների շրջանակը ներառի աղետների ժամանակ տրամադրվող օգնության ոլորտում իշխանությունների լիազորության ներքո գտնվող բոլոր միջոցները ձեռնարկելու պարտականությունը՝ այդ իրավունքը պաշտպանելու համար, գույքից անարգել օգտվելու իրավունքը պաշտպանելու պարտավորությունը, որը բացարձակ բնույթ չի կրում, չի կարող կիրառվել տվյալ հանգամանքներում ողջամտության սահմաններից դուրս (*Բուդայևան և այլք ընդդեմ Ռուսաստանի* [Budayeva and Others v. Russia], 2008թ., § 175, մարդու վերահսկողությունից դուրս գտնվող բնական աղետների առնչությամբ, *Զուրշունս ընդդեմ Թուրքիայի* [Kurşun v. Turkey], 2018թ., § 121, վտանգավոր, սակայն վնասի/մահվան չհանգեցրած գործունեության հետևանքով պատճառված գույքային վնասի առնչությամբ): Համանման ձևով պետությունը չի կրել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով սահմանված դրական պարտավորությունը, եթե պետությունը չի ցուցաբերել անփութություն, ինչպես նաև հաշվի առնելով դիմումատուի՝ որպես անհատ ձեռնարկատիրոջ պատասխանատվությունը և մարդկային վերահսկողությունից դուրս գտնվող բնական աղետների, ինչպես օրինակ՝ սողանքի առանձնահատկությունները (*Վլադիմիրովս ընդդեմ Բուլղարիայի* (որոշում) [Vladimirov v. Bulgaria (dec.)], 2018թ., §§ 37 և 39-41):

218. Պետք է նաև տարբերակել պետության դրական պարտավորությունները՝ կապված մի կողմից՝ գույքի ավերման և կյանքի կորստի, մյուս կողմից՝ հանգամանքները քննելու պարտականության հետ: Մասնավորապես Դատարանը վճռել է, որ քննություն անցկացնելու պարտավորությունն այնքան խիստ չէ ոչ այնքան ծանր հանցագործությունների, ինչպես օրինակ՝ գույքի հետ կապված հանցագործությունների դեպքում, որքան առավել ծանր բռնությամբ կատարված հանցագործությունների և մասնավորապես այն հանցագործությունների դեպքում, որոնք պատկանում են Կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածների գործողության շրջանակին: Ոչ այնքան ծանր հանցագործություններին վերաբերող գործերով պետությունը չի կատարում իր դրական պարտավորությունը միայն այն դեպքում, երբ քրեական գործով քննության կամ քրեական հետապնդման գործընթացում հայտնաբերվում են ակնհայտ և լուրջ թերություններ (*Բլումբերգան ընդդեմ Լատվիայի* [Blumberga v. Latvia], 2008թ., § 67, *Աբուկաուսկայն ընդդեմ Լիտվայի* [Abukauskai v. Lithuania], 2020թ., § 56, *Աճիգիտովան և այլք ընդդեմ Ռուսաստանի* [Adzhigitova and Others

v. Russia], 2021թ., § 255, *Գերարդի Մարտիրին ընդդեմ Սան Մարինոյի* [Gherardi Martiri v. San Marino], 2022թ., § 107):

219. *Բլումբերգայի* գործով, 2008թ., Դատարանը վճռել է, որ դիմումատուի գույքային իրավունքներին միջամտությունը չի իրականացվել այնպիսի եղանակով, որը կարող էր վտանգել նրա կյանքը կամ առողջությունը (*Նույն տեղում*, §§ 68-73), մինչդեռ *Աբուկատուսկայի* գործով, 2020թ., ներպետական իշխանությունները համարել են, որ դիմումատուի գույքին պատճառված վնասը հասցվել է «վտանգավոր եղանակով», սակայն դիմումատուները ներպետական վարույթների շրջանակներում և Դատարան ներկայացրած իրենց նախնական փաստարկներում չեն պնդել, որ նրանք կրել են վնասներ, կամ որ նրանց կյանքին վտանգ է սպառնացել հրկիզման վտանգավոր բնույթի պատճառով (*Նույն տեղում*, §§ 58-61): Այս երկու գործերից որևէ մեկում Դատարանն ապացուցված չի համարել այն հանգամանքը, որ քրեական գործերով քննություններում եղել են ակնհայտ և լուրջ թերություններ: Դատարանն այնուհետև հիշեցրել է, որ պետությունը չի կատարում թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով սահմանված իր դրական պարտավորությունները միայն այն դեպքում, երբ քաղաքացիական վարույթների հաջողության հեռանկարների բացակայությունն ուղղակիորեն պայմանավորված է նույն փաստերի հիմքով հարուցված քրեական վարույթների իրականացման ընթացքում միանգամայն լուրջ և ակնհայտ թերությունների առկայությամբ (*Բլումբերգան ընդդեմ Լատվիայի* [Blumberga v. Latvia], 2008թ., § 68):

220. Ի տարբերություն վերոնշյալի՝ *Կորոտյուկն ընդդեմ Ուկրաինայի* [Korotyuk v. Ukraine] գործով, 2023թ., §§ 36-37 և 55-56, որը վերաբերում էր մտավոր սեփականության իրավունքներին, Դատարանը գտել է, որ պետությունը չի կատարել դիմումատուի գույքի նկատմամբ իր դրական պարտավորությունը քրեական գործով վարույթը բնութագրող ակնհայտ և լուրջ թերությունների պատճառով: Նույն կերպ, *Նիկոլայ Կոստադինովն ընդդեմ Բուլղարիայի* [Nikolay Kostadinov v. Bulgaria] գործով, §§ 72-75, Դատարանը գտել է, որ տեղի է ունեցել խախտում այն հիմքով, որ պետությունը բաժնետիրոջը չի պաշտպանել մասնավոր անձի կողմից նրա ընկերության, բաժնեմասերի և ակտիվների՝ խարդախ ճանապարհով խլումից, քանի որ այն մասնավորապես չի քննել հանցավոր խմբի կողմից քրեական հանցանքներ կատարվելու վերաբերյալ լուրջ կասկածները և հետևաբար չի պարզել այդ հանցանքների հանգամանքները:

221. *Անտոնոպուլուն ընդդեմ Հունաստանի* (որոշում) [Antonopoulou v. Greece]

(dec.)] գործով, 2021թ., դիմումատուն շահավետ փոխարժեքից օգտվելու համար վերցրել է հիփոթեքային վարկ՝ շվեյցարական ֆրանկով: Պայմանագրի դրույթով նախատեսվել է, որ վարկի ամսական մարումը պետք է կատարվի ոչ թե վարկը ստանալու պահին, այլ մարման պահին գործող փոխարժեքով: Հետագայում դիմումատուն չի կարողացել վճարել վարկը, քանի որ համաշխարհային ֆինանսական ճգնաժամի պատճառով եվրոյի նկատմամբ շվեյցարական ֆրանկի ամրապնդման հետևանքով վարկի գումարն ավելացել էր մոտ 60%-ով: Ներպետական դատարաններում դիմումատուն ապարդյուն պնդել է, որ մարման մասին դրույթն իրավաչափ չէր: Դատարանը նշել է, որ ներպետական իրավունքով դիմումատուին չեն տրամադրվել իրավական պաշտպանության պատշաճ միջոցներ՝ սեփականությունից օգտվելու իր իրավունքները պաշտպանելու համար, այդ թվում՝ քաղաքացիական դատարաններում պայմանագրով նախատեսված պարտավորությունները չեղյալ ճանաչելու հայց ներկայացնելու հնարավորություն, ինչպես նաև Քաղաքացիական օրենսգրքի հիման վրա պայմանագրի վերաբերյալ կրկին բանակցություններ վարելու կամ նույնիսկ դրա գործողությունը դադարեցնելու հնարավորություն (*նույն տեղում*, § 82): Ավելին, դիմումատուն կարող էր ցանկացած ժամանակ բանկին դիմել վարկի արժույթը եվրոյի փոխարկելու խնդրանքով կամ կարող էր ապահովագրվել ամսական մարման գումարի ավելացման ռիսկից (*նույն տեղում*): Դատարանը եզրակացրել է, որ պետության կողմից գործողության մեջ դրված իրավական շրջանակով դիմումատուին տրամադրվել է այնպիսի մեխանիզմ, որը նրան հնարավորություն էր տալիս ապահովելու թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված իր իրավունքների նկատմամբ հարգանքը, և հետևաբար պետությունը կատարել էր սույն հոդվածով սահմանված իր դրական պարտավորությունը (*նույն տեղում*, § 84):

222. *Իոաննիդեսն ընդդեմ Կիպրոսի* [*Ioannides v. Cyprus*] գործով, 2025թ., §§ 78 և 101-104, բացառիկ իրավիճակում, երբ պատասխանող պետությունը չի իրականացրել արդյունավետ վերահսկողություն բուժքրային գոտու որոշ հատվածների նկատմամբ, որտեղ գտնվում էր դիմումատուի տունը, Դատարանը վճռել է, որ պետությունն ուներ սահմանափակ իրավագործություն, որն առաջացնում էր իր լիազորությունների շրջանակներում և միջազգային իրավունքին համապատասխան միայն դիվանագիտական, տնտեսական, դատական կամ այլ միջոցներ ձեռնարկելու դրական պարտավորություններ:

223. Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով սահմանված՝ պետության

դրական և բացասական պարտավորությունները հստակ սահմանման հնարավորություն չեն ընձեռում: Այդուհանդերձ, կիրառվող սկզբունքները համանման են: Անկախ այն հանգամանքից՝ գործը վերլուծության է ենթարկվում պետության դրական պարտավորության տեսանկյունից, թե պետական իշխանության կողմից դրսևորված միջամտության տեսանկյունից, որը հիմնավորման կարիք ունի, կիրառվելիք չափանիշներն ըստ էության չեն տարբերվում: Երկու դեպքում էլ պետք է ուշադրություն դարձնել անձնական և ընդհանուր առմամբ համայնքի հակասող շահերի միջև արդար հավասարակշռություն հաստատելուն: Ճշմարիտ է նաև, որ այդ դրույթում նշված նպատակները կարող են որոշ չափով նշանակություն ունենալ այն հարցի գնահատման համար՝ արդյոք դիտարկվող հանրային շահի պահանջների և դիմումատուի հիմնարար գույքային իրավունքի միջև հաստատվել է հավասարակշռություն: Երկու դեպքում էլ Կոնվենցիային համապատասխանությունն ապահովելու նպատակով ձեռնարկվելիք քայլերը սահմանելիս պետությունն ունի հայեցողական լիազորությունների կոնկրետ շրջանակ (*Բրոնիովսկին ընդդեմ Լեհաստանի* [ՄԴ] [*Broniowski v. Poland* [GC]], 2004թ., § 144, *Զիգանն ընդդեմ Իռլանդիայի* [*Keegan v. Ireland*], 1994թ., § 49, *Հատթոնը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության* [ՄԴ] [*Hatton and Others v. the United Kingdom* [GC]], 2003թ., §§ 98, *Ալիշիչը և այլք ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի, Խորվաթիայի, Սերբիայի, Սլովենիայի և Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության* [ՄԴ] [*Ališić and Others v. Bosnia and Herzegovina, Croatia, Serbia, Slovenia and the Former Yugoslav Republic of Macedonia* [GC]], 2014թ., § 101, *Կոտովն ընդդեմ Ռուսաստանի* [ՄԴ] [*Kotov v. Russia* [GC]], 2012թ., § 110, *Սարաչը և այլք ընդդեմ Թուրքիայի* [*Saraç and Others v. Turkey*], 2021թ., § 71):

224. Համապատասխանաբար, շատ գործերով, հաշվի առնելով դրանց կոնկրետ հանգամանքները, Դատարանն անհրաժեշտ չի համարում գործի քննությունը դասակարգել որպես բացառապես պատասխանող պետությունների դրական կամ բացասական պարտավորությունների հարց. ընդհակառակը, այն որոշում է՝ արդյոք պատասխանող պետությունների վարքագիծը, անկախ այն հանգամանքից՝ վարքագիծը կարող է բնութագրվել որպես միջամտություն, թե անգործություն, թե երկուսը միաժամանակ, հիմնավորված է օրինականության, իրավաչափի նպատակի և «արդար հավասարակշռության» սկզբունքների տեսանկյունից (*Ալիշիչը և այլք ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի, Խորվաթիայի, Սերբիայի, Սլովենիայի և Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական*

Հանրապետության [ՄՊ] [*Ališić and Others v. Bosnia and Herzegovina, Croatia, Serbia, Slovenia and the Former Yugoslav Republic of Macedonia*], 2014թ., § 101, *Կոտովն ընդդեմ Ռուսաստանի* [ՄՊ] [*Kotov v. Russia*], 2012թ., § 102, *Բրոնիովսկին ընդդեմ Լեհաստանի* [ՄՊ] [*Broniowski v. Poland*], 2004թ., § 146, *Սկորիցն ընդդեմ Հունգարիայի* [*Skórits v. Hungary*], 2014թ., §§ 37-38):

225. Սա նաև վերաբերում է *Ալիշիչը և այլք ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի, Խորվաթիայի, Սերբիայի, Սլովենիայի և Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության* [ՄՊ] [*Ališić and Others v. Bosnia and Herzegovina, Croatia, Serbia, Slovenia and the Former Yugoslav Republic of Macedonia* [GC]] գործին, 2014թ., § 101, որի դեպքում դիմումատուները բողոքել են առ այն, որ նրանք չեն կարողանում իրենց ավանդները հանել իրենց բանկային հաշիվներից, որոնք անհասանելի էին դարձնել այնպիսի հանգամանքներով պայմանավորված, ինչպիսիք են համապատասխան բանկում դրամական միջոցների բացակայությունը, օրենքով հաշիվների սառեցումը և դիմումատուների իրավիճակում հայտնված ավանդատուներին իրենց խնայողությունները տնօրինելու հնարավորություն ընձեռելու նպատակով ազգային իշխանությունների կողմից միջոցներ չձեռնարկվելը: Այսպիսի հանգամանքներում Դատարանն անհրաժեշտ չի համարել գործի քննությունը դասակարգել որպես բացառապես պատասխանող պետությունների դրական կամ բացասական պարտավորությունների հարց: Սլովենիայի և Սերբիայի առնչությամբ արձանագրվել է խախտում: Դատարանը կիրառել է միևնույն մոտեցումը, ինչ *Չակլանն ընդդեմ Խորվաթիայի* գործով [*Zaklan v. Croatia*], 2021թ., §§ 85 և 91, որը վերաբերել է նախկին հարավսլավական իշխանությունների կողմից արտարժույթի բռնագանձմանը, և որի շրջանակներում Դատարանը որոշել է, որ խախտման համար պատասխանատու է Խորվաթիան, որն անկախություն հռչակելուց հետո ստանձնել է դիմումատուի նկատմամբ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի իրականացումը:

226. Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածից բխող դրական պարտավորություններին վերաբերող մի շարք գործերով Դատարանը մասնավորապես ընդգծել է լավ կառավարման սկզբունքի կարևորությունը: Այս սկզբունքով պահանջվում է, որ ընդհանուր շահին վերաբերող հարց դիտարկվելու դեպքում, հատկապես, եթե դա վերաբերում է մարդու հիմնարար իրավունքներին,

այդ թվում՝ գույքային իրավունքներին, պետական իշխանությունները պետք է գործեն օպերատիվ, պատշաճ և գլխավորապես հետևողական ձևով (*Բեյելերն ընդդեմ Իտալիայի* [ՄԴ] [*Beyeler v. Italy* [GC]], 2000թ., § 120, «*Megadat.com* *ԷսԱրԷԼ*»-ն ընդդեմ *Մոլդովայի* [*Megadat.com SRL v. Moldova*], 2008թ., § 72, *Ռիսովսկիյն ընդդեմ Ուկրաինայի* [*Rysovskyy v. Ukraine*], 2011թ., § 71, *Մոսկալն ընդդեմ Լեհաստանի* [*Moskal v. Poland*], 2009թ., § 72, *Մարիա Միհալակեն ընդդեմ Ռումինիայի* [*Maria Mihalache v. Romania*], 2020թ., § 70, *Մուհարեմ Գյունեշը և այլք ընդդեմ Թուրքիայի* [*Muharrem Güneş and Others v. Turkey*], 2020թ., § 74): Այս պարտավորությունը կարևոր է թե՛ բացասական և թե՛ դրական պարտավորությունների համատեքստում, որոնք Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով սահմանվում են պետության համար: Լավ կառավարման սկզբունքը, որպես ընդհանուր կանոն, չպետք է խոչընդոտի իշխանություններին շտկելու հազվադեպ թույլ տրվող սխալները, այդ թվում՝ իրենց իսկ անփութության հետևանքով ի հայտ եկած սխալները: Այնուամենայնիվ, նախկին «սխալ» ուղղելու անհրաժեշտությունը չպետք է անհամաչափ ձևով միջամտի նոր իրավունքին, որն անձը ձեռք է բերել՝ բարեխղճորեն հավատալով, որ պետական իշխանության գործողությունն օրինական է (*Բեինարովիչը և այլք ընդդեմ Լիտվայի* [*Beinarovič and Others v. Lithuania*], 2018թ., § 140, *Մուհարեմ Գյունեշը և այլք ընդդեմ Թուրքիայի* [*Muharrem Güneş and Others v. Turkey*], 2020թ., § 75): Սխալմամբ շնորհիված գույքային իրավունքի չեղարկման համատեքստում լավ կառավարման սկզբունքով կարող է նաև պահանջվել, որ երկարաժամկետ բարեխիղճ իրավասիրոջը վճարվի համարժեք փոխհատուցման կամ այլ պատշաճ հատուցում (*Մուհարեմ Գյունեշը և այլք ընդդեմ Թուրքիայի* [*Muharrem Güneş and Others v. Turkey*], 2020թ., §§ 75-81):

1. Հորիզոնական ազդեցությունը. մասնավոր անձանց կողմից միջամտությունը

227. «Պաշտպանության դրական միջոցները», որոնց հղում է կատարում Դատարանը, վերաբերում են ոչ միայն պետության կողմից, այլև մասնավոր անձանց կողմից միջամտությանը, և դրանք կարող են ունենալ կանխարգելիչ կամ վերականգնող բնույթ:

228. Անշուշտ, Դատարանը գտել է, որ նույնիսկ հորիզոնական հարաբերություններում կարող են տեղ գտնել հանրային շահին վերաբերող նկատառումներ, որոնցով կարող են պետության համար սահմանվել որոշ

պարտավորություններ (*Չոլոտասն ընդդեմ Հունաստանի (թիվ 2)* [Zolotas v. Greece (no. 2)], 2013թ., § 39, *Սարաչը և այլք ընդդեմ Թուրքիայի* [Saraç and Others v. Turkey], 2021թ., § 70): Հետևաբար, սեփականության իրավունքը պաշտպանելու համար անհրաժեշտ որոշ միջոցներ կարող են պահանջվել նույնիսկ անձանց կամ ընկերությունների միջև ընթացող դատական վարույթին վերաբերող գործերի դեպքում (*«Սովտրանսավտո Հոլդինգ»-ն ընդդեմ Ուկրաինայի* [Sovtransavto Holding v. Ukraine], 2002թ., § 96, *Սարաչը և այլք ընդդեմ Թուրքիայի* [Saraç and Others v. Turkey], 2021թ., § 72, *Կանևսկան ընդդեմ Ուկրաինայի* (որոշում) [Kanevska v. Ukraine (dec.)], 2020թ., § 45):

229. Այնուամենայնիվ, եթե գործը վերաբերում է մասնավոր անձանց միջև սովորական տնտեսական հարաբերություններին, ապա այդ դրական պարտավորությունները շատ ավելի սահմանափակ են: Այսպիսով, Դատարանը բազմիցս ընդգծել է, որ Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը չի կարող մեկնաբանվել այնպես, որ Պայմանավորվող պետության համար սահմանվի ընդհանուր պարտավորություն՝ մասնավոր անձանց պարտքերը մարելու նպատակով (*Կոտովն ընդդեմ Ռուսաստանի* [ՄՊ] [Kotov v. Russia [GC]], 2012թ., § 111, *Անդիսինն ընդդեմ Ռուսաստանի* (որոշում), 2007թ.):

230. Մասնավորապես, եթե «գույքից» անարգել օգտվելու իրավունքին միջամտությունն իրականացվել է մասնավոր անձի կողմից, ապա պետության համար առաջանում է դրական պարտավորություն՝ իր ներպետական իրավական համակարգում ապահովելու, որ գույքային իրավունքները բավարար պաշտպանված լինեն օրենքով, և տրամադրվեն իրավական պաշտպանության պատշաճ միջոցներ, որոնցով միջամտությունից տուժողը կարող է պաշտպանել իր իրավունքները (*Կոտովն ընդդեմ Ռուսաստանի* [ՄՊ] [Kotov v. Russia [GC]], 2012թ., § 113, *Բլումբերգան ընդդեմ Լատվիայի* [Blumberga v. Latvia], 2008թ., § 67, *Պապախելան և «ԱՄԱԶՈՆ Էս.Ա.»-ն ընդդեմ Հունաստանի* [Papachela and AMAZON S.A. v. Greece], 2020թ., § 54, *Սարաչը և այլք ընդդեմ Թուրքիայի* [Saraç and Others v. Turkey], 2021թ., § 73, *Դաբիչն ընդդեմ Խորվաթիայի* [Dabić v. Croatia], 2021թ., § 52, *Կանևսկան ընդդեմ Ուկրաինայի* (որոշում) [Kanevska v. Ukraine (dec.)], 2020թ., § 45): Սա ներառում է, ըստ պատշաճության, կրած ցանկացած վնասի համար վնասների հատուցում պահանջելու իրավունքը (*Կոտովն ընդդեմ Ռուսաստանի* [ՄՊ] [Kotov v. Russia [GC]], 2012թ., § 113, *Բլումբերգան ընդդեմ Լատվիայի* [Blumberga v. Latvia], 2008թ., § 67, *Դաբիչն ընդդեմ Խորվաթիայի* [Dabić

v. Croatia], 2021թ., § 52, *Գերարդի Մարտիրին ընդդեմ Սան Մարինոյի* [*Gherardi Martiri v. San Marino*], 2022թ., § 105): Դրանից հետևում է, որ միջոցները, որոնք պետությունից կարող է պահանջվել ձեռնարկելու այս համատեքստում, կարող են ունենալ կանխարգելիչ կամ վերականգնող բնույթ (*Կոտովն ընդդեմ Ռուսաստանի* [*ՄՊ*] [*Kotov v. Russia* [GC]], 2012թ., § 113, *Սարաչը և այլք ընդդեմ Թուրքիայի* [*Saraç and Others v. Turkey*], 2021թ., § 73, *Գերարդի Մարտիրին ընդդեմ Սան Մարինոյի* [*Gherardi Martiri v. San Marino*], 2022թ., § 106):

231. Օրինակ, *Չոլոտասն ընդդեմ Հունաստանի (թիվ 2)* [*Zolotas v. Greece (no. 2)*] գործով, 2013թ., որով դիմումատուն այլևս չէր կարող պահանջել իր բանկային հաշվին առկա ավանդները, քանի որ նա ավելի քան քսան տարի դրանով որևէ գործարք չէր իրականացրել, Դատարանը վճռել է, որ պետությունն ունեցել է դրական պարտավորություն՝ պաշտպանելու քաղաքացիներին և պահանջելու, որ բանկերը, հաշվի առնելով վաղեմության ժամկետը լրանալու հնարավոր բացասական հետևանքները, պետք է տեղեկացնեն ոչ ակտիվ հաշիվ ունեցողներին այն դեպքում, երբ վաղեմության ժամկետը լրանում է, և այսպիսով նրանց ընձեռեն վաղեմության ժամկետի ընթացքը դադարեցնելու հնարավորություն: Այսպիսի տեղեկություն տրամադրելու պահանջ չներկայացնելը կարող էր խախտել արդար հավասարակշռությունը, որը պետք է պահպանվի համայնքի ընդհանուր շահի պահանջների և անձի հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև:

232. Դատարանը նաև վճռել է, որ պետություններն ունեն կրոնական միաբանությունների կողմից ներկայացված պահանջներից անձանց գույքային իրավունքները պաշտպանելու պարտավորություն այն դեպքում, երբ այդ պահանջների հետևանքով անձանց համար սահմանվում է անհամաչափ բեռ: Այսպիսով, *Լիամբերին և այլք ընդդեմ Հունաստանի* [*Liamberi and Others v. Greece*] գործով, 2020թ., §§ 86-88, Դատարանը գտել է, որ մահացած վանականի գույքի նկատմամբ վանքին ինքնաբերական և բացարձակ իրավունքներ շնորհելն այն դեպքում, երբ այդ շնորհմամբ չի դիտարկվել գույքի նկատմամբ անհատական շահերի պաշտպանության կարևորությունը, համարվում է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում: Այս դեպքում համապատասխան տարրերը կազմված են եղել տասնամյակներ շարունակ դիմումատուների նախնիների կողմից տնօրինման բազմաթիվ գործողությունների կատարումից (այդ թվում՝ գույքահարկի և տեղական հարկերի, ինչպես նաև ժառանգության հարկերի վճարումը)՝ վանքի կողմից տնօրինման որևէ գործողության կամ վիճարկվող գույքի

նկատմամբ իր պահանջների գրանցման բացակայության պայմաններում (*սույն տեղում*):

233. Վերջապես, *Դաբիչն ընդդեմ Խորվաթիայի* [Dabić v. Croatia] գործով, 2021թ., §§ 53-59, դիմումատուի տանը հասցվել է վնաս, և այն թալանվել է փախստականների և տեղահանված անձանց վերադարձի համատեքստում, որպիսի հանգամանքներում պետության համար կարող են առաջանալ վիճարկվող կամ լքված գույքն ավերումից կամ թալանից պաշտպանելու կոնկրետ պարտավորություններ: Դատարանը գտել է, որ դիմումատուի գույքին հասցված վնասի և դրա թալանի հետևանքով տեղի ունեցած կորստի համար պատասխանատվություն կրում է ոչ միայն անմիջական կատարողը, այլև պետությունը, որը սկզբնապես նաև առգրավել էր գույքը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներպետական դատարանները վճռել էին, որ պետությունը պատասխանատվություն չէր կրում այդ կորստի համար, և մերժել էին դիմումատուի՝ վնասների փոխհատուցման պահանջը, պետությունը չի կատարել Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով սահմանված իր դրական պարտավորությունները:

2. Իրավական պաշտպանության միջոցները

234. Հատուկ անդրադարձ կատարելով իրավական պաշտպանության միջոցներին, որոնք պետությունից կարող են պահանջվել կոնկրետ հանգամանքներում, Դատարանը վճռել է, որ դրանք ներառում են համապատասխան իրավական մեխանիզմ, որը թույլ է տալիս տուժող կողմին արդյունավետորեն պաշտպանել իր իրավունքները: Թեև Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը չի պարունակում հստակ ընթացակարգային պահանջներ, սույն դրույթով նախատեսված ընթացակարգային բնույթի դրական պարտավորությունների առկայությունը Դատարանը ճանաչել է թե՛ պետական իշխանություններին վերաբերող գործերում (*Յոկելան ընդդեմ Ֆինլանդիայի* [Jokela v. Finland], 2002թ., § 45, *Յեհենտներն ընդդեմ Ավստրիայի* [Zehentner v. Austria], 2009թ., § 73) և թե՛ բացառապես մասնավոր անձանց միջև հարուցված գործերում:

235. Այսպիսով, վերջին կատեգորիային պատկանող գործերով Դատարանը վճռել է, որ պետություններն ունեն պարտավորություն՝ իրականացնելու դատական ընթացակարգեր, որոնք ապահովում են անհրաժեշտ

ընթացակարգային երաշխիքները, և հետևաբար հնարավորություն են տալիս ներպետական դատարաններին և տրիբունալներին արդյունավետորեն և արդարացիորեն կարգավորելու մասնավոր անձանց միջև ծագած ցանկացած վեճ (*Կոտովն ընդդեմ Ռուսաստանի* [ՄՊ] [*Kotov v. Russia* [ՄՊ]], 2012թ., § 114, «*Սովտրանսավտո Հոլդինգ»-ն ընդդեմ Ուկրաինայի* [*Sovtransavto Holding v. Ukraine*], 2002թ., § 96, «*Անհոյզեր-Բուշ Ինք.»-ն ընդդեմ Պորտուգալիայի* [ՄՊ] [*Anheuser-Busch Inc. v. Portugal* [GC]], 2007թ., § 83, *Ֆրայթագն ընդդեմ Գերմանիայի* [*Freitag v. Germany*], 2007թ., § 54, «*Շեստի Մայ Էնջինիըրինգ» ՍՊԸ-ն և այլք ընդդեմ Բուլղարիայի* [*Shesti Mai Engineering OOD and Others v. Bulgaria*], 2011թ., § 79, *Պլեխանովն ընդդեմ Լեհաստանի* [*Plechadow v. Poland*], 2009թ., § 100, «*Ուկրաինա-Տյումեն»-ն ընդդեմ Ուկրաինայի* [*Ukraine-Tyumen v. Ukraine*], 2007թ., § 51, *Անտոնոպուլուն ընդդեմ Հունաստանի* (որոշում) [*Antonopoulou v. Greece* (dec.)], 2021թ., § 57, *Նիկոլայ Կոստադինովն ընդդեմ Բուլղարիայի* [*Nikolay Kostadinov v. Bulgaria*], § 54): Այն դեպքերում, երբ գույքին պատճառված վնասն առաջացել է մասնավոր անձի վտանգավոր գործունեության հետևանքով, պետությունը կարող է սահմանել քրեական, քաղաքացիական կամ վարչական պաշտպանության միջոց (*Կուրշունն ընդդեմ Թուրքիայի* [*Kurşun v. Turkey*], 2018թ., §§ 123-124):

236. Այս սկզբունքն էլ ավելի ինտենսիվությամբ կիրառվում է այն դեպքում, երբ վեճը ծագել է հենց պետության և անձի միջև: Համապատասխանաբար այդպիսի վեճերի կարգավորման գործընթացում առկա լուրջ թերությունները կարող են հարց առաջացնել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում (*Պլեխանովն ընդդեմ Լեհաստանի* [*Plechadow v. Poland*], 2009թ., § 100): Օրինակ, *Դաբիչն ընդդեմ Խորվաթիայի* [*Dabić v. Croatia*] գործով, 2021թ., § 55, Դատարանը վճռել է, որ իշխանությունների կողմից գույքի առգրավման դեպքում նրանք նաև ստանձնում են դրա նկատմամբ հոգատար վերաբերմունք ցուցաբերելու պարտականություն և պատասխանատու են այդ գույքի վնասի և (կամ) կորստի համար: Այսպիսի դեպքերում կրած իրական վնասը չպետք է գերազանցի այն վնասը, որն անխուսափելի է Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածին համապատասխանությունն ապահովելու համար: Հետևաբար գույքի առգրավման դեպքում իշխանությունները պետք է ոչ միայն ձեռնարկեն դրա պահպանման համար անհրաժեշտ ողջամիտ միջոցներ, այլև ներպետական օրենսդրությամբ պետք է նաև նախատեսվի պետության նկատմամբ վարույթ

հարուցելու հնարավորություն՝ գույքը հարաբերականորեն բարվոք վիճակում չպահելու հետևանքով հասցված վնասի համար փոխհատուցում ստանալու համար:

237. Պետության՝ իրավական պատշաճ պաշտպանություն չապահովելու համար պատասխանատվություն սահմանվել է պարտքերի վերաբերյալ վճիռների կատարման համատեքստում՝ գույքի վերադարձ (*Պադուրարու ընդդեմ Ռումինիայի* [*Păduraru v. Romania*], 2005թ., § 112), օտարման համար փոխհատուցման վճարում (*Ալմեյդա Գարեթը, Մասկարենյաշ Ֆալկաուն և այլք ընդդեմ Պորտուգալիայի* [*Almeida Garrett, Mascarenhas Falcão and Others v. Portugal*], 2000թ., §§ 109-111), վարձակալներին վտարման և բնակարանները սեփականատերերին վերադարձնելու մասին դատարանի կարգադրությունների կատարում (*«Իմմոբիլիարե Սաֆֆի»-ն ընդդեմ Իտալիայի* [ՄԴ] [*Immobiliare Saffi v. Italy* [GC]], 1999թ., §§ 43-59, *Մատեուսն ընդդեմ Ֆրանսիայի* [*Matheus v. France*], 2005թ., §§ 69-71, *Լո Տուֆոն ընդդեմ Իտալիայի* [*Lo Tufo v. Italy*], 2005թ., § 53, *Պրոդանն ընդդեմ Մոլդովայի* [*Prodan v. Moldova*], 2004թ., § 61), ինչպես նաև «Հարկի» ընդունման ճամբարում կենսապայմանների համար փոխհատուցման առնչությամբ (*Տամազունտը և այլք ընդդեմ Ֆրանսիայի* [*Tamazount and others v. France*], 2024թ., § 164): Պետության պատասխանատվությունը վկայակոչվել է նաև *Պապախելան և «ԱՄԱԶՈՆ Էս.Ա.»-ն ընդդեմ Հունաստանի* [*Papachela and AMAZON S.A. v. Greece*], 2020թ., §§ 57-58 և 62-64, որով Հունաստանի կառավարությունը չի վտարել դիմումատուին պատկանող հյուրանոցը զբաղեցրած միգրանտներին և այլոց՝ չնայած դատարանի հակառակը պահանջող կարգադրությանը:

3. Կատարողական վարույթը

238. Պետության դրական պարտավորությունները լայնորեն օգտագործվում են թե՛ պետության և թե՛ մասնավոր պարտատերերի նկատմամբ հարուցվող կատարողական վարույթների համատեքստում: Սա մասնավորապես նշանակում է, որ պետությունները դրական պարտավորություն ունեն՝ ստեղծելու վճիռների կատարման այնպիսի համակարգ, որն արդյունավետ է թե՛ իրավունքի շրջանակներում և թե՛ գործնականում և ապահովում է, որ վերջնական վճիռների կատարման մասին օրենսդրության մեջ ամրագրված ընթացակարգերը կատարվեն առանց անհարկի ձգձգումների (*Ֆուկլենն ընդդեմ Ուկրաինայի* [*Fuklev*

[v. Ukraine](#)], 2005թ., § 91):

239. Երբ դիմումատուն բողոքում է հոգուտ իրեն դատարանի կայացրած որոշումը կատարելու անկարողության առնչությամբ, թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով սահմանված՝ պետության պարտավորությունների ծավալը տարբեր է՝ կախված այն հանգամանքից՝ պարտապանը պետությունն է, թե մասնավոր անձը ([Անոխինս ընդդեմ Ռուսաստանի](#) (որոշում) [[Anokhin v. Russia](#) (dec.)], 2007թ., [Լիսեյցևան և Մասլովս ընդդեմ Ռուսաստանի](#) [[Liseytseva and Maslov v. Russia](#)], 2014թ., § 183):

240. Եթե պարտապանը պետությունն է, ապա Դատարանի նախադեպային իրավունքով խստիվ պահանջվում է, որ պետությունն ամբողջությամբ և ժամանակին կատարի դատարանի համապատասխան որոշումը ([Անոխինս ընդդեմ Ռուսաստանի](#) (որոշում) [[Anokhin v. Russia](#) (dec.)], 2007թ., [Բուրդովս ընդդեմ Ռուսաստանի](#) [[Burdov v. Russia](#)], 2002թ., §§ 33-42): Պետության դեմ կայացված վճռի կատարումն ապահովելու բեռը հիմնականում դրված է պետական իշխանությունների վրա՝ սկսած այն օրվանից, երբ վճիռը դառնում է պարտադիր և կատարման ենթակա ([Բուրդովս ընդդեմ Ռուսաստանի](#) (թիվ 2) [[Burdov v. Russia](#) (no. 2)], 2009թ., § 69):

241. Դրամական պահանջին վերաբերող գործով պետության նկատմամբ կայացված վերջնական դատական որոշման կատարումը չապահովելը համարվում է թե՛ 6-րդ հոդվածի և թե՛ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում: 6-րդ հոդվածի 1-ին կետով յուրաքանչյուրի համար երաշխավորվում է իր քաղաքացիական իրավունքների և պարտավորությունների առնչությամբ դատարան կամ տրիբունալ հայց ներկայացնելու իրավունք. այսկերպ իրացվում է «դատարան դիմելու իրավունքը», որում դատարանի մատչելիության իրավունքը, այսինքն՝ քաղաքացիական գործերով դատարաններում վարույթ հարուցելու իրավունքը, կազմում է մի բաղադրիչը: Այնուամենայնիվ, այդ իրավունքն անիրական կլիներ, եթե Պայմանավորվող պետության ներպետական իրավական համակարգը թույլ տար, որ վերջնական, պարտադիր դատական որոշումը շարունակեր չգործել՝ ի վնաս կողմերից մեկի: Դժվար է պատկերացնել, որ 6-րդ հոդվածի 1-ին կետում մանրամասն նկարագրվեն դատավարության կողմերին տրամադրված ընթացակարգային երաշխիքները՝ արդար, դռնբաց և արագ դատական վարույթ՝ առանց դատական որոշումների իրականացման պաշտպանության. 6-րդ հոդվածի մեկնաբանումը որպես բացառապես

դատարանի մատչելիությանը և վարույթի իրականացմանը վերաբերող հոդված հավանաբար առաջ կբերի այնպիսի իրավիճակներ, որոնք անհամատեղելի են օրենքի գերակայության սկզբունքի հետ, որը Պայմանավորվող պետությունները պարտավորվել են հարգել Կոնվենցիան վավերացնելիս: Հետևաբար Դատարանի կողմից կայացված վճռի կատարումը պետք է համարվի «դատաքննության» բաղկացուցիչ մաս՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի նպատակներով (*Հորնսբին ընդդեմ Հունաստանի* [Hornsby v. Greece], 1997թ., § 40, *Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի* [Burdov v. Russia], 2002թ., § 34):

242. Պարտադիր իրավական ուժ ունեցող վճռի կատարման անհիմն երկար ձգձգումը հետևաբար կարող է հանգեցնել Կոնվենցիայի խախտման («*Իմմոբիլիարե Սաֆֆի*»-ն *ընդդեմ Իտալիայի* [ՄՊ] [Immobiliare Saffi v. Italy [GC]], 1999թ., § 63, *Հորնսբին ընդդեմ Հունաստանի* [Hornsby v. Greece] 1997թ., § 40, *Դե Լուկան ընդդեմ Իտալիայի* [De Luca v. Italy], 2013թ., § 66, *Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի* (թիվ 2) [Burdov v. Russia (no. 2)], 2009թ., § 65): Օրինակ, պետական մասնակցությամբ ընկերությունների դեպքում գումարի վճարման մասին դատական որոշման կատարումը մեկ տարուց պակաս ժամկետով ձգձգելը սկզբունքորեն համատեղելի է Կոնվենցիայի հետ, իսկ ավելի երկար ժամկետով ձգձգումը *prima facie* (առերևույթ) ողջամիտ չէ (*Կուժեվևը և այլք ընդդեմ Ռուսաստանի* [Kuzhelev and Others v. Russia], 2019թ., §§ 109-110):

243. Պետական իշխանությունն իրավունք չունի դրամական միջոցների բացակայությունը վկայակոչելու որպես դատարանի որոշմամբ ճանաչված պարտքը չվճարելու համար արդարացում: Պետք է ընդունել, որ վճռի կատարման ձգձգումը կարող է արդարացվել կոնկրետ հանգամանքներում: Սակայն ձգձգումը չպետք է լինի այնպիսին, որ խաթարի 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված իրավունքի ելությունը («*Իմմոբիլիարե Սաֆֆի*»-ն *ընդդեմ Իտալիայի* [ՄՊ] [Immobiliare Saffi v. Italy [GC]], 1999թ., § 74): Նույն կերպ, ներպետական կատարողական ընթացակարգի կամ պետության բյուջետային համակարգի խրթին բնույթը չի կարող պետությանն ազատել Կոնվենցիայով սահմանված՝ բոլորի համար պարտադիր իրավական ուժ ունեցող և կատարման ենթակա դատական որոշման՝ ողջամիտ ժամկետում կատարումն ապահովելու իրավունքը (*Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի* (թիվ 2) [Burdov v. Russia (no. 2)], 2009թ., § 70, «*Սյուզեր և Էքսեն Հոլդինգ Էս.Ս.*»-ն *ընդդեմ Թուրքիայի* [Süzer and Eksen Holding A.Ş. v. Turkey], 2012թ., § 116):

244. Չի կարելի ակնկալել, որ անձը, որի մասով կայացվել է պետության դեմ վերջնական վճիռ, չի հարուցի առանձին կատարողական վարույթ (*Մետաքսասն ընդդեմ Հունաստանի* [Metaxas v. Greece], 2004թ., § 19, և *Լիզանետսն ընդդեմ Ուկրաինայի* [Lizanets v. Ukraine], 2007թ., § 43, *Իվանովն ընդդեմ Ուկրաինայի* [Ivanov v. Ukraine], 2006թ., § 46): Այսպիսի դեպքերում պատասխանող պետական իշխանությունը, որը պատշաճ ձևով ծանուցվել է վճռի մասին, պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցներն այն կատարելու համար կամ կատարման նպատակով այն փոխանցի մեկ այլ իրավասու մարմնի (*Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի* (թիվ 2) [Burdov v. Russia (no. 2)], 2009թ., § 69): Կարող է պահանջվել, որ հաջողության հասած դատավարության կողմը ձեռնարկի որոշակի ընթացակարգային քայլեր՝ վճռում նշված պարտքը բռնագանձելու համար՝ անկախ այն հանգամանքից, թե դա կլինի պետության կողմից վճռի՝ կամավոր հիմունքներով կատարման ընթացքում, թե հարկադիր միջոցներով դրա կատարումն ապահովելու ընթացքում (*Շվեդովն ընդդեմ Ռուսաստանի* [Shvedov v. Russia], 2005թ., § 32): Համապատասխանաբար, միանգամայն ողջամիտ է, որ իշխանությունները պահանջեն, որ դիմումատուն ներկայացնի լրացուցիչ փաստաթղթեր, ինչպես օրինակ՝ բանկային տվյալներ, վճռի կատարումը սկսելու կամ արագացնելու համար (*Կոսմիդիսը և Կոսմիդուն ընդդեմ Հունաստանի* [Kosmidis and Kosmidou v. Greece], 2007թ., § 24): Պարտատիրոջ համագործակցության պահանջը, այնուհանդերձ, չպետք է դուրս գա խիստ անհրաժեշտության սահմաններից և ցանկացած պարագայում չի ազատում իշխանություններին Կոնվենցիայով սահմանված՝ սեփական նախաձեռնությամբ ժամանակին միջոց ձեռնարկելու պարտավորությունից:

245. Օրինակ՝ *Սկորիտսն ընդդեմ Հունգարիայի* [Skórits v. Hungary] գործով, 2014թ., §§ 43-44, Դատարանը վճռել է, որ իշխանությունները պետք է ձեռնարկեն գործնական միջոցներ՝ սեփականության վերադարձի վերաբերյալ որոշումների կատարումն ապահովելու համար, և հողային կադաստրում առկա սխալները չպետք է խոչընդոտեն դա, և գտել է, որ տեղի է ունեցել գույքային իրավունքի խախտում, քանի որ որոշման կայացումից հետո մինչև հողի՝ դիմումատուի տնօրինմանն անցնելն անցել էր տասը տարի: *Վիտիելլոն ընդդեմ Իտալիայի* [Vitiello v. Italy] գործով, 2006թ., § 37, Դատարանը գտել է, որ տեղի է ունեցել գույքային իրավունքի խախտում, քանի որ ազգային իշխանությունները չէին կատարել ներպետական դատարանի՝ անօրինական շինությունը քանդելու վերաբերյալ

կարգադրությունը:

246. Գուլբի ռեստիտուցիայի համատեքստում Դատարանը կարգադրել է պետությանը ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դիմումատուի օգտին կայացված որոշման՝ համապատասխան ժամկետում կատարումը, այդ թվում՝ նրա հողից եկեղեցու տեղափոխումն ապահովելու համար (*Օրլովիչը և այլք ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի* [Orlović and Others v. Bosnia and Herzegovina], 2019թ., §§ 68-71, տե՛ս ստորև՝ «Գուլբի ռեստիտուցիան» վերտառությամբ գլուխը):

247. *Դե Լուկան ընդդեմ Իտալիայի* [De Luca v. Italy] գործով, 2013թ., §§ 49-56, դիմումատուի՝ վնասների փոխհատուցման առնչությամբ գոյացած՝ վճռով ճանաչված պարտքը մարելու նպատակով տեղական մարմնի նկատմամբ կատարողական վարույթ հարուցելու անկարողությունը համարվել է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում: Ուստի նույնիսկ պետական իշխանության՝ իր պարտքերը վճարելու օրինական անկարողությունը չի ազատում պետությանը Կոնվենցիայով սահմանված իր պարտավորությունից:

248. Այն հանգամանքը գնահատելիս, թե արդյոք ընկերությունը պետք է դիտարկվի «պետական կազմակերպություն», ներպետական իրավունքով սահմանված՝ ընկերության իրավական կարգավիճակը չի կարող որոշիչ դեր կատարել ընկերության գործողության կամ անգործության համար պետության պատասխանատվությունը որոշելու հարցում: Անշուշտ, ընկերությունը պետք է պետությունից ունենա բավարար ինստիտուցիոնալ և գործառնական անկախություն, որպեսզի պետությունն ազատվի դրա գործողության կամ անգործության համար Կոնվենցիայով սահմանված իր պատասխանատվությունից: Հիմնական չափանիշները, որոնցով որոշվում է, թե արդյոք պետությունը պատասխանատու է այդպիսի պարտքերի համար, հետևյալն են՝ ընկերության իրավական կարգավիճակը (համաձայն հանրային կամ մասնավոր իրավունքի), նրա գործունեության բնույթը (հանրային գործառույթ կամ սովորական առևտրային գործունեություն), նրա գործունեության համատեքստը (օրինակ՝ մենաշնորհի կամ խստորեն կարգավորվող գործունեություն), նրա ինստիտուցիոնալ անկախությունը (պետական մասնակցության չափը) և դրա գործառնական անկախությունը (պետական վերահսկողության և հսկողության ծավալը) (*Լիսեյցևան և Մասլովն ընդդեմ Ռուսաստանի* [Liseytseva and Maslov v. Russia], 2014թ., §§ 186-188, և դրանում մեջբերված հղումները) (առավել մանրամասն տե՛ս ստորև՝ «Պետական մասնակցությամբ ընկերությունները»

վերտառությամբ գլուխը):

249. Երբ պարտապանը մասնավոր դերակատար է, դիրքորոշումն այլ է, քանի որ պետությունը, որպես կանոն, ուղղակիորեն պատասխանատու է մասնավոր դերակատարների պարտքերի համար, և Կոնվենցիայի այս դրույթներով սահմանված նրա պարտավորությունները սահմանափակված են դատարանի համապատասխան որոշումների կատարման հարցում պարտատիրոջը ցուցաբերվող անհրաժեշտ աջակցությամբ, օրինակ՝ դատական կարգադրիչների ծառայության միջոցով կամ սնանկության ընթացակարգերով (*Անոխինս ընդդեմ Ռուսաստանի* (որոշում) [*Anokhin v. Russia* (dec.)], 2007թ., *Շեստակովն ընդդեմ Ռուսաստանի* (որոշում) [*Shestakov v. Russia* (dec.)], 2002թ., *Կրիվոնոգովան ընդդեմ Ռուսաստանի* (որոշում) [*Krivosnogova v. Russia* (dec.)], 2004թ., *Զեսյանն ընդդեմ Ռուսաստանի* <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-77578>[*Kesyan v. Russia*], 2006թ., § 80):

250. Այսպիսով, եթե իշխանությունները պարտավոր են գործողություններ ձեռնարկել վճռի կատարումն ապահովելու համար, և նրանք այդպես չեն վարվում, ապա նրանց անգործությունը որոշ դեպքերում կարող է առաջացնել պետության պատասխանատվություն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի և թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի հիմքով (*Սկոլլոն ընդդեմ Իտալիայի* [*Scollo v. Italy*], 1995թ., § 4, *Ֆուկլևն ընդդեմ Ուկրաինայի* [*Fuklev v. Ukraine*], 2005թ., § 84): Այսպիսի դեպքերում Դատարանի խնդիրն է ուսումնասիրել՝ արդյոք իշխանությունների կողմից կիրառված միջոցները եղել են պատշաճ և բավարար, և արդյոք նրանք գործել են բարեխղճորեն՝ վճռի կատարման հարցում պարտատիրոջն աջակցելու համար (*Անոխինս ընդդեմ Ռուսաստանի* (որոշում) [*Anokhin v. Russia* (dec.)], 2007թ., *Ֆուկլևն ընդդեմ Ուկրաինայի* [*Fuklev v. Ukraine*], 2005թ., § 84):

251. Ի մասնավորի՝ պետությունը թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով ունի դատարանի կողմից կայացված որոշման կատարման հարցում պարտատիրոջն անհրաժեշտ աջակցություն տրամադրելու պարտավորություն (*Կոտովն ընդդեմ Ռուսաստանի* [ՄԴ] [*Kotov v. Russia* [GC]], 2012թ., § 90, *Ֆոմենկոն և այլք ընդդեմ Ռուսաստանի* (որոշում) [*Fomenko and Others v. Russia* (dec.)], 2019 թ., § 171): Օրինակ, *Ֆուկլևն ընդդեմ Ուկրաինայի* [*Fuklev v. Ukraine*] գործով, 2005թ., § 92, Դատարանը գտել է, որ դատական կարգադրիչների՝ ավելի քան չորս տարի ժամկետով անգործությունը կամ սնանկության գործով կատարողական

վարույթի արդյունավետ հսկողության չիրականացումը համարվում է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում: [Ֆոմենկոն և այլք ընդդեմ Ռուսաստանի](#) (որոշում) [[Fomenko and Others v. Russia](#) (dec.)] գործով, 2019թ., §§ 181-195, որի դեպքում կատարման գործընթացը ձգձգվել է մինչև տասներկու տարի, Դատարանը, հաշվի առնելով կատարողական վարույթի խրթին բնույթը, հայցվորների թիվը, մարման ենթակա պարտքի ընդհանուր չափը, պարտապան ընկերության մոտեցումը և դատական կարգադրիչների գործունեության վերաբերյալ տեղեկությունները, համարել է, որ դատական կարգադրիչների կողմից գործադրված միջոցների ընդհանուր ազդեցությունը համատեղելի է թե՛ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով և թե՛ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով պետության նկատմամբ սահմանվող պահանջներին: Այն դեպքում, երբ սնանկության ազգային օրենսդրությամբ աշխատողների՝ մինչև սնանկության վարույթների մեկնարկը կուտակված աշխատանքային հայցերը համարվում են առաջնահերթ հայցեր, իսկ մեկամյա բազիսային ժամկետից դուրս ներկայացված հայցերը համարվում են ոչ առաջնային, Դատարանը հղում է կատարել ԱՅԿ օրենսդրությանը և այդ կարգը ճանաչել է նպատակահարմար ([Աջարը և այլք ընդդեմ Թուրքիայի](#) (որոշում) [[Acar and Others v. Turkey](#) (dec.)], 2017թ., § 34):

252. Մասնավոր պարտապանի անապահով կարգավիճակի պատճառով Նրա նկատմամբ կայացված վճիռը չկատարելը չի կարող օգտագործվել պետության դեմ, եթե և այնքանով, որքանով դա վերագրելի չէ ներպետական իշխանություններին, օրինակ՝ վարույթի ընթացքում Նրանց թույլ տված սխալների կամ կատարման ձգձգման պատճառով ([Օմաստան ընդդեմ Սլովակիայի](#) (որոշում) [[Omasta v. Slovakia](#)] (dec.), 2002թ., [Վրտարն ընդդեմ Խորվաթիայի](#) [[Vrtar v. Croatia](#)], 2016թ., § 96):

253. Մյուս կողմից՝ խախտում է արձանագրվել այն դեպքում, երբ ներպետական իշխանությունները սկսել են դիմումատուի գույքի բաժնեմասի վաճառքը Նրա կողմից պարտքը լրիվ մարվելուց հետո՝ բացառապես կատարողական վարույթի ծախսերը հատուցելու նպատակով ([Մինդեկն ընդդեմ Խորվաթիայի](#) [[Mindek v. Croatia](#)], 2016թ., §§ 79-87), կամ այն դեպքում, երբ կատարողական վարույթի ընթացքում տուևը վաճառվել էր իր արժեքի մեկ երրորդով ([Լյասկայն ընդդեմ Խորվաթիայի](#) [[Ljaskaj v. Croatia](#)], 2016թ., §§ 62-70): Նույն կերպ, տան վաճառքը և դիմումատուի վտարումն այնտեղից հարկային կատարողական վարույթի համատեքստում, երբ չվճարված հարկը կազմում էր

տան արժեքի միայն չնչին մասը, ինչպես նաև դիմումատուի մասով կայացված որոշման կատարմանն ուղղված վարույթի տարբեր մասերում ներգրավված տարբեր հարկային մարմինների միջև հաղորդակցության բացակայության համատեքստում համարվել են թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտումներ ([Ռուսկն ընդդեմ Շվեդիայի \[Rousk v. Sweden\]](#), 2013թ., §§ 119-127):

Դ. Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի և Կոնվենցիայի այլ հոդվածների միջև կապը

254. «Գույքից» անարգել օգտվելու առնչությամբ ծագող հարցերը կարող են վերաբերել նաև Կոնվենցիայի այլ հոդվածների:

1. Հոդված 2¹

255. [Ըյունըերյըլդըզն ընդդեմ Թուրքիայի \[ՄԴ\] \[Öneryıldız v. Turkey \[GC\]\]](#) գործով, 2004թ., (§§ 136-137), որով աղբահորում տեղի ունեցած մեթանի պայթյունը հանգեցրել էր սողանքի, որը կլանել էր դիմումատուի տունը՝ հանգեցնելով նրա ինը մերձավոր ազգականների մահվան, Դատարանը չի տարբերակել 2-րդ հոդվածով և թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով սահմանված՝ անդամ պետությունների դրական պարտավորությունները՝ կանխարգելիչ և շտկիչ միջոցների համարժեքության առումով:

256. [Վրաստանն ընդդեմ Ռուսաստանի \(II\) \[ՄԴ\] \[Georgia v. Russia \(II\) \[GC\]\]](#) գործով, 2021 թ., (§§ 174, 214, 220) Դատարանը եզրակացրել է, որ այն պահից, երբ Ռուսաստանի Դաշնությունը Դատարանի նախադեպային իրավունքի իմաստով ակտիվ ռազմական գործողությունների դադարեցումից հետո «արդյունավետ վերահսկողություն» էր հաստատել Հարավային Օսիայի տարածքների և «բուժերային գոտու» նկատմամբ, այն նաև պատասխանատվություն էր կրում այդ տարածքներում Հարավային Օսիայի ուժերի, այդ թվում՝ մի շարք անօրինական զինված խմբավորումների գործողությունների համար՝ առանց այդ գործողություններից յուրաքանչյուրի համար «մանրամասն վերահսկողության» ապացույց ներկայացնելու անհրաժեշտության: Դատարանն իր տրամադրության տակ ուներ բավարար ապացույցներ, որոնք հնարավորություն էին տալիս ողջամիտ կասկածից վեր եզրակացնելու, որ առկա է եղել 2-րդ հոդվածին և թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածին հակասող վարչական գործելակերպ՝

¹ Տե՛ս [2-րդ հոդվածի վերաբերյալ ուղեցույցը \(Կյանքի իրավունք\)](#):

Հարավային Օսիայի վրացական գյուղերում և «բուժերային գոտում» քաղաքացիական անձանց սպանության, ինչպես նաև տների հրկիզման ու թալանման դեպքերի առնչությամբ:

2. Հոդված 3

257. *Պանչենկոն ընդդեմ Լատվիայի* (որոշում) [*Pančenko v. Latvia (dec.)*] գործով, 1999թ., որով դիմումատուն բողոքել էր ընդհանուր առմամբ իր սոցիալ-տնտեսական խնդիրներից, Դատարանը հիշեցրել է, որ Կոնվենցիայով սոցիալ-տնտեսական իրավունքներ որպես այդպիսին չեն երաշխավորվում: Այնուամենայնիվ, Դատարանը չի բացառել այն հնարավորությունը, որ երբ դիմումատուի կենսապայմանները հասնում են ծանրության նվազագույն մակարդակի, դա կարող է համարվել 3-րդ հոդվածին հակասող վերաբերմունք:

258. *Բուդինան ընդդեմ Ռուսաստանի* (որոշում) [*Budina v. Russia (dec.)*] գործով, 2009թ., որով դիմումատուն բողոքել էր, որ իր կենսաթոշակը չափազանց քիչ էր գոյատևելու համար, Դատարանը չի բացառել այն հնարավորությունը, որ 3-րդ հոդվածի համաձայն կարող էր առաջանալ պետության պատասխանատվություն այն վերաբերմունքի մասով, երբ դիմումատուն, որն ամբողջությամբ կախված էր պետական աջակցությունից, բախվել էր պաշտոնական անտարբերության լուրջ զրկանքների կամ հայտնվել էր կարիքի իրավիճակում, որն անհամատեղելի էր մարդկային արժանապատվության հետ: Այն համարել է, որ այդպիսի բողոքը *per se* (ինքնին) *ratione materiae* անհամատեղելի չէր Կոնվենցիայի դրույթների հետ, և ընդհանուր առմամբ 3-րդ հոդվածի շրջանակներում ուսումնասիրել է դիմումատուի տնտեսական վիճակը, այդ թվում նաև դիմումատուի՝ պետության կողմից վճարվող կենսաթոշակի չափը՝ որոշելու համար, թե արդյոք նրա իրավիճակն այնպիսին էր, որ գտնվեր արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի արգելքի շրջանակում: Այն գտել է, որ դա այդպես չէր:

259. Դատարանը որոշելուց բացի, որ տեղի էր ունեցել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում 2-րդ հոդվածի հետ համատեղ (տե՛ս վերևում), *Վրաստանն ընդդեմ Ռուսաստանի (II)* [ՄԴ] [*Georgia v. Russia (II)*] [GC]] գործով, 2021թ., § 220, հաշվի առնելով կատարված չարաշահումների լրջությունը, որը կարելի էր դասակարգել որպես «անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք», տուժողների կրած տանջանքի և տառապանքի

զգացողությունների պատճառով, որոնք, բացի այդ, թիրախավորվել էին նաև որպես էթնիկ խումբ, եզրակացրել է, որ այս վարչական գործելակերպը հակասում էր նաև Կոնվենցիայի 3-րդ հոդվածին:

3. Հոդված 4²

260. Բանտարկյալին վճարովի կամ չվճարվող, սակայն պատժի կրճատմամբ աշխատանքի միջև ընտրության տրամադրումը չի համարվել Կոնվենցիայի 4-րդ հոդվածի խախտում (*Ֆլորոյուն ընդդեմ Ռումինիայի* (որոշում) [*Floroiu v. Romania* (dec.)], 2013թ., §§ 35-38): Ծերության կենսաթոշակային համակարգին չմիացած բանտարկյալի կատարած հարկադիր աշխատանքը Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով պետք է համարվի «աշխատանք, որը սովորաբար պահանջվում է կատարել կալանքի տակ գտնվելու ընթացքում» (*Շտումերն ընդդեմ Ավստրիայի* [ՄԴ] [*Stummer v. Austria* [GC]], 2011թ., § 132):

261. Համանման ձևով, բանտարկյալի կատարած չվճարվող աշխատանքը կարող է համարվել «աշխատանք, որը սովորաբար պահանջվում է կատարել կալանքի տակ գտնվելու ընթացքում» (*Շելյաշկովն ընդդեմ Բուլղարիայի* [*Zhelyazkov v. Bulgaria*], 2012թ., § 36): Այնուամենայնիվ, Դատարանը նշել է բանտարկյալների չվճարվող աշխատանքի նկատմամբ մոտեցումների փոփոխությունների մասին, մասնավորապես՝ 1987 և 2006 թվականների Եվրոպական բանտային կանոններում, որոնցով կոչ էր արվում ապահովելու բանտարկյալների արդարացի վարձատրություն իրենց կատարած աշխատանքի համար՝ 2006 թվականի կանոններում ավելացնելով «բոլոր դեպքերում» արտահայտությունը, որն արտացոլում էր զարգացման միտումը: Այնուամենայնիվ, դիմումատուն աշխատանքը կատարել է 2006 թվականի կանոնների ընդունումից առաջ և կարճ ժամանակահատվածում (*Նույն տեղում*, § 36):

4. Հոդված 6³

262. Սեփականության իրավունքին կամ դրա պաշտպանությանն առնչվող միջամտություններին վերաբերող ներպետական վարույթները հաճախ առաջացնում են հարցեր 6-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակներում: Անշուշտ, սեփականության իրավունքը հստակորեն նյութական բնույթի իրավունք է, և ուստի

² Տե՛ս 4-րդ հոդվածի վերաբերյալ ուղեցույցը (*Ստրկության և հարկադիր աշխատանքի արգելում*):

³ Տե՛ս 6-րդ հոդվածի վերաբերյալ ուղեցույցը (Արդար դատաքննության իրավունք). *Քաղաքացիաիրավական հայեցակետը* և *Քրեաիրավական հայեցակետը*:

վճռվել է, որ պետության կողմից կայացված՝ մասնավոր գույքի օտարման կամ օգտագործման կարգավորման վերաբերյալ կամ նյութական կամ գույքային այլ իրավունքների վրա այլ կերպ ազդող որոշումների վրա տարածվում է արդար դատաքննության իրավունքը (*«Բրիտանա-ամերիկյան ծխախոտային ընկերություն» ՄՊԸ-ն ընդդեմ Նիդերլանդների* [British-American Tobacco Company Ltd v. the Netherlands], 1995թ., § 67, արտոնագրի վերաբերյալ դիմում, *Ռայմոնդոն ընդդեմ Իտալիայի* [Raimondo v. Italy], 1994թ., § 43, բռնագանձում): Բացի այդ, դատական որոշումների կատարումը 6-րդ հոդվածի նպատակներով «դատաքննության» անբաժանելի մասն է կազմում (տե՛ս վերևում՝ «Կատարողական վարույթը» վերտառությամբ ենթագլուխը):

263. Այնուամենայնիվ, առավել հաճախ այն դեպքերում, երբ գույքային իրավունքի վերաբերյալ քաղաքացիական վարույթը տևում է չափազանց երկար, այդ փաստը բավարար է, որպեսզի Դատարանը գտնի, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում: Եթե դիմումատուն պնդում է, որ վարույթի տևողությունն ինքնին սեփականության իրավունքի իրացման շարունակական խոչընդոտ է եղել, Դատարանը վճռում է, որ անհրաժեշտություն չկա քննելու վարույթի տևողության վերաբերյալ բողոքը՝ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն (*Չանգին ընդդեմ Իտալիայի* [Zanghi v. Italy], 1991թ., § 23), կամ որ հարցը վաղաժամ է (*Բելլերն ընդդեմ Լեհաստանի* [Beller v. Poland], 2005թ., § 74): «Սոցիալական վարձակալության» (bail social) համատեքստում Դատարանը գտել է, որ մի քանի տարի շարունակ դիմումատուի վերաբնակեցման որոշումը կատարելու համար անհրաժեշտ միջոցներ չձեռնարկելով՝ Ֆրանսիայի իշխանությունները զրկել են 6-րդ հոդվածի 1-ին կետը ցանկացած օգտակար գործողությունից (*Չոկոնտիո Հապին ընդդեմ Ֆրանսիայի* [Tchokontio Happi v. France], 2015թ., § 52):

264. Այնուամենայնիվ, արտասովոր երկարատև վարույթների վերաբերյալ գործերով Դատարանը գտել է, որ դրանց ձգձգվող տևողությունը (*Կունիչն ընդդեմ Խորվաթիայի* [Kunić v. Croatia], 2007թ., § 67, *Մաշարն ընդդեմ Ֆրանսիայի* [Machard v. France], 2006թ., § 15) կամ ձգձգումներին նպաստող այլ միջոցներ (*«Իմմոբիլիարե Սաֆֆի»-ն ընդդեմ Իտալիայի* [ՄՊ] [Immobiliare Saffi v. Italy [GC]], 1999թ., § 59) նույնպես անմիջական ազդեցություն են ունեցել դիմումատուների՝ իրենց «գույքից» անարգել օգտվելու իրավունքների վրա: Վերջին դեպքում Դատարանը գտել է նաև, որ դիմումատու ընկերությունը զրկվել էր 6-րդ հոդվածով

սահմանված՝ իր վարձակալի հետ վեճը դատական կարգով լուծելու իր իրավունքից ([նույն տեղում](#), § 74):

265. Այն դեպքերում, երբ Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի խախտում՝ դատարանի մատչելիության բացակայության պատճառով, և դիմումատուն բողոքում է գործի ըստ էության արդյունքից նաև թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն, Դատարանը սովորաբար համարում է, որ չի կարող ենթադրություններ անել այն մասին, թե ինչպիսին կլինեին իրավիճակը, եթե դիմումատուն ունենար դատարանի արդյունավետ մատչելիություն: Ուստի անհրաժեշտություն չկա կայացնելու որոշում այն հարցի վերաբերյալ, թե արդյոք դիմումատուն ունեցել է գույք թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով, և համապատասխանաբար այդ հոդվածի վրա հիմնված բողոքի վերաբերյալ ([Կանեայի կաթոլիկ եկեղեցին ընդդեմ Հունաստանի \[Canea Catholic Church v. Greece\]](#), 1997թ., § 50, [Գլոդն ընդդեմ Ռումինիայի \[Glod v. Romania\]](#), 2003թ., § 46, [Ալբինան ընդդեմ Ռումինիայի \[Albina v. Romania\]](#), 2005թ., § 43, [Լունգոչին ընդդեմ Ռումինիայի \[Lungoci v. Romania\]](#), 2006թ., § 48, [Յանակիևն ընդդեմ Բուլղարիայի \[Yanakiev v. Bulgaria\]](#), 2006թ., § 82): Այնուամենայնիվ, [Ցեհենտներն ընդդեմ Ավստրիայի \[Zehentner v. Austria\]](#) գործով, 2009թ., § 82, որը վերաբերում էր դիմումատուի բնակարանի՝ դատական կարգով վաճառքին, Դատարանը գտել է, որ տեղի է ունեցել 8-րդ հոդվածի և թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում՝ դատական գործունակություն չունեցող դիմումատուի համար ոչ պատշաճ ընթացակարգային երաշխիքների պատճառով, և վճռել է, որ 6-րդ հոդվածի համաձայն առանձին հարց չէր առաջացել:

266. Վիճարկվող իրավիճակը կարգավորող նոր՝ հետադարձ ուժ ունեցող օրենքի ընդունումն այն ժամանակ, երբ դիմումատուի գույքային շահերին վերաբերող վարույթն ընթացքի մեջ է, կարող է լինել ինչպես 6-րդ հոդվածի, այնպես էլ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում, երբ օրենքի ընդունումը հիմնավորված չէ ընդհանուր շահի անհերքելի պատճառներով և չափազանց մեծ բեռ է դնում դիմումատուի վրա ([Կալիջիուրին և այլք ընդդեմ Իտալիայի \[Caligiuri and Others v. Italy\]](#), 2014թ., § 33):

267. Երբ դիմումատուն բողոքում է իր օգտին կայացված վերջնական դատական որոշումը կատարելու անկարողության առնչությամբ, առաջ են գալիս պետության՝ ինչպես 6-րդ հոդվածով, այնպես էլ թիվ 1 արձանագրության 1-ին

հոդվածով սահմանված պարտավորությունները: Երբ իշխանությունները պարտավոր են գործել վճիռն ի կատար ածելու համար, և նրանք դա չեն անում, նրանց անգործությունը որոշակի հանգամանքներում կարող է հանգեցնել պետության պատասխանատվության՝ ինչպես 6-րդ հոդվածի, այնպես էլ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի հիման վրա (*Ֆուկլևը ընդդեմ Ուկրաինայի* [Fuklev v. Ukraine], 2005թ., §§ 86 և §§ 92-93, *Անոխինը ընդդեմ Ռուսաստանի* (որոշում) [Anokhin v. Russia (dec.)], 2007թ., *Լիսեյցևան և Մասլովը ընդդեմ Ռուսաստանի* [Liseyitseva and Maslov v. Russia], 2014թ., § 183):

268. Դիմումատուին փոխհատուցում տրամադրելու մասին պարտադիր և կատարման ենթակա վճիռը վերահսկողության կարգով վերանայման միջոցով բեկանելը բացառիկ պարտադիր հանգամանքների բացակայության դեպքում խախտում է վճիռների վերջնականության սկզբունքը, ինչպես նաև 6-րդ հոդվածի 1-ին կետը և թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը (*Դավիդովը ընդդեմ Ռուսաստանի* [Davydov v. Russia], 2014թ., §§ 37-39): Այնուամենայնիվ, «իրավական որոշակիության» նկատառումները չպետք է ապախրախուսեն պետությանը շտկել արդարադատության իրականացման ընթացքում թույլ տրված հատկապես կոպիտ սխալները (*Լենսկայան ընդդեմ Ռուսաստանի* [Lenskaya v. Russia], 2009թ., § 41): Այս բացառիկ հանգամանքներն առաջանում են միայն, եթե սկզբնական վարույթի ընթացքում թույլ են տրվել այնպիսի լուրջ խախտումներ, որոնք այն հիմնարար կերպով անարդար են դարձրել, ինչպես օրինակ՝ այն դեպքում, երբ վարույթի կողմ չհանդիսացող երրորդ անձի մեղքի բացակայության պարագայում ներպետական դատարանը կայացրել է վճիռ, որն ուղղակիորեն ազդել է նրա իրավունքների վրա: Այդպիսի հանգամանքներում վերջնական որոշումը բեկանելը չի առաջացրել Կոնվենցիայի խախտում (*Պրոցենկոն ընդդեմ Ռուսաստանի* [Protsenko v. Russia], 2008թ., §§ 30-34): Նույն կերպ, համարվել է, որ քրեական գործով վարույթի ընթացքում արդարադատության լուրջ սխալի վերացմանն ուղղված վերջնական վճիռը բեկանելը (*Ջուրանը ընդդեմ Ռումինիայի* [Giuran v. Romania], 2011թ., § 41) ապահովում էր վերջնականության և արդարադատության մրցակցող շահերի միջև ճիշտ հավասարակշռություն, կամ երբ դիմումատուին տրամադրվել էր ամբողջ գույքի լրիվ փոխհատուցում՝ չնայած այն հանգամանքին, որ դրա նկատմամբ իրավունքներ ունեին մի քանի անձինք (*Վիկենտիևիկն ընդդեմ Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության* [Vikentijevik v. the former Yugoslav Republic of Macedonia],

2014թ., § 70):

269. Դատական վարույթի ընթացքում առաջացող ծախսերի վերաբերյալ հարցերը որոշ դեպքերում Դատարանի կողմից քննվել են թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում: «Պարտվողը վճարում է» կանոնը քաղաքացիական վարույթի համատեքստում ինքնին չի կարող համարվել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածին հակասող (*Կլաուզն ընդդեմ Խորվաթիայի* [Klauz v. Croatia], 2013թ., §§ 82 և 84), քանի որ դրա նպատակն է խուսափել անհիմն դատական վարույթներից և չարդարացված բարձր դատական ծախսերից՝ հնարավոր հայցվորներին տարհամոզելով անհիմն հայցեր ներկայացնելուց՝ առանց հետևանքները հաշվի առնելու: Այս տեսակետը չի փոխվում այն փաստից, որ այդ կանոնները կիրառվում են նաև այն քաղաքացիական վարույթների նկատմամբ, որոնցում պետությունը կողմ է (*Ցինդրիչ և Բեշլիչն ընդդեմ Խորվաթիայի* [Cindrić and Bešlić v. Croatia], 2016թ., §§ 96 և 107-109, համապատասխան նախադեպային իրավունքի չափանիշների մասով գնահատելիս, թե արդյոք դատական վճարների սահմանումը չափազանց մեծ բեռ է դրել դիմումատուի վրա, *Բուրսաչ և այլք ընդդեմ Խորվաթիայի* [Bursac and Others v. Croatia], 2022թ., §§ 81, 95 և 100-101, պատերազմական հանցագործությունների կոնկրետ համատեքստում):

270. Դատարանը գտել է, որ տեղի է ունեցել խախտում այն գործով, որով դիմումատուները պահանջել են փոխհատուցում օտարման համար և մասամբ հաղթել են իրենց գործը, սակայն սրանց ստացած հատուցումը պետք է ամբողջությամբ վճարվեր մյուս կողմին՝ սրա ծախսերը հոգալու համար: Դատարանը նշել է, որ ոչ դիմումատուների վարքագիծը, ոչ էլ սկսված դատավարական գործողությունները չէին կարող արդարացնել դատական ծախսերը, որոնք այնքան բարձր էին, որ կհանգեցնեին օտարման համար փոխհատուցման լիակատար բացակայության: Այսպիսով, դիմումատուները ստիպված են եղել կրել չափազանց մեծ բեռ (*Պերդիգաուն ընդդեմ Պորտուգալիայի* [ՄՊ] [Perdigão v. Portugal [GC]], 2010թ., § 78): *Մուսա Թարհանն ընդդեմ Թուրքիայի* [Musa Tarhan v. Turkey] գործով, 2018թ., § 86, որով դիմումատուին կարգադրվել էր վճարել օտարման վարույթում հակառակ կողմի կրած դատական ծախսերը, որը զգալիորեն նվազեցրել էր փոխհատուցման գումարը, դիմումատուի վրա դրված բեռը նույնպես չափազանց մեծ է համարվել: Համանման ձևով, *«Էկոգլասնոստ» ազգային շարժումն ընդդեմ Բուլղարիայի* [National Movement Ekoglasnost v. Bulgaria] գործով, 2020թ., § 83, հակառակ կողմի փաստաբանի

վճարների համար ծախսերի փոխհատուցում տրամադրելու մասին ներպետական դատարանի որոշումը, առանց բավարար և համապատասխան հիմնավորումներ ներկայացնելու, երաշխավորելու համար, որ այդ վճարները փաստացի արդարացի և հիմնավորված էին, ինչպես պահանջվում է ներպետական իրավունքով, հավասար էր վտանգված տարբեր շահերի միջև պատշաճ հավասարակշռություն չպահպանելուն և հետևաբար Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում էր: Երրորդ կողմի օգտին դատախազի անհաջող քաղաքացիաիրավական պահանջի առնչությամբ կատարված ծախսերի փոխհատուցման մերժումը նույնպես համարվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում (*Ստանկիևիչն ընդդեմ Լեհաստանի* [Stankiewicz v. Poland], 2006թ., §§ 65-76): *Չոլիչն ընդդեմ Խորվաթիայի* [Čolić v. Croatia] գործով, 2021թ., §§ 67-69, չնայած այն հանգամանքին, որ դիմումատուին հաջողվել էր ստանալ վնասի փոխհատուցում իր նկատմամբ ֆիզիկական բռնություն գործադրած մասնավոր անձից, նրան կարգադրվել էր վճարել պաշտպանյալի ծախսերը, որոնք գերազանցում էին նրա ստացած փոխհատուցման չափը: Դատարանը գտել է, որ միջամտությունը համաչափ չէր (համեմատե՛ք *Դերբուցը և Սվեչակն ընդդեմ Խորվաթիայի* (որոշում) [Derbuc and Svečak v. Croatia (dec.)] գործը, 2022թ., §§ 36-39, որով մասնավոր կողմերի նկատմամբ նշանակվել էր ծախսերի փոխհատուցում, և այն չէր համարվել անհամաչափ ոչ 6-րդ հոդվածի և ոչ էլ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն): *Մանդևի և այլոց* գործով, 2024թ., §§ 129-138, որը վերաբերում էր նրանց նկատմամբ կայացված բռնազանձման մասին որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելու համար չափազանց մեծ դատական ծախսերին, Դատարանը կրկին գտել է, որ դատական վճարների մակարդակը, որը զգալիորեն գերազանցում էր երկրի միջին տարեկան եկամուտը, անհամաչափ էր Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի նպատակներով: Դատարանը նաև պատշաճ կերպով հաշվի է առել այն փաստը, որ այդ վճարները վճարվել են բռնազանձման վարույթի շրջանակներում, և որ դիմումատուները, որպես դատավարական հակառակորդ, բախվել են քննչական լայն լիազորություններով օժտված պետական մարմնի հետ:

271. Բացի այդ, Դատարանը նաև վճռել է, որ այն կանոնը, ըստ որի՝ դատարանում քննվող վարույթի մասնակիցը պետք է կրի իր ծախսերը, եթե դատարանն այլ որոշում չի կայացնում, *per se* չի կարող համարվել 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ անհամատեղելի: Այնուամենայնիվ, նշված կանոնի կիրառման ազդեցությունը պետք է համատեղելի լինի 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ (*Դրագան*

Կովաչևիչն ընդդեմ Խորվաթիայի [*Dragan Kovačević v. Croatia*], 2022թ., § 69, խոցելի անձի կողմից Սահմանադրական դատարան բերված վարույթի վերաբերյալ):

272. Վերջապես, գտել են, որ 6-րդ հոդվածը դրա քրեաիրավական հայեցակետով կիրառելի է այն դեպքում, երբ որոշում է կայացվել քանդել տունը, որը կառուցվել էր առանց նախագծային թույլտվության, սակայն որի գոյության հետ հետազայում իշխանությունները երեսուն տարի հաշտվել էին: Մասնավորապես, քանդման վերաբերյալ միջոցը Կոնվենցիայի նպատակով համարվել է «պատիժ» (*Համերն ընդդեմ Բելգիայի* [*Hamer v. Belgium*], 2007թ., § 60):

5. Հոդված 7⁴

273. Դիմումատուների նկատմամբ ապօրինի կառուցապատման համար կիրառված բռնագրավումը դիտարկվել է որպես «պատիժ» Կոնվենցիայի 7-րդ հոդվածի իմաստով՝ չնայած այն փաստին, որ դիմումատու ընկերությունների կամ նրանց ներկայացուցիչների նկատմամբ որևէ քրեական դատավճիռ չէր կայացվել: Այդ նպատակով Դատարանը հիմնվել է այն փաստի վրա, որ տվյալ բռնագրավումը կապված էր ընդհանուր իրավական դրույթների հիման վրա կատարված «քրեական հանցանքի» հետ, կառուցապատման փաստացի ապօրինությունը հաստատվել էր քրեական դատարանների կողմից, որ Իտալիայի օրենսդրությամբ նախատեսված պատժամիջոցը հիմնականում նպատակ էր հետապնդում պատժի միջոցով կանխելու օրենքով սահմանված պայմանների հետագա խախտումները, որ ըստ օրենքի՝ ապօրինի կառուցապատման համար բռնագրավումը դասվում էր քրեական պատժամիջոցների շարքին, և վերջապես, որ պատժամիջոցը կոնկրետ խստության էր («*Սուդ Ֆոնդի ԷսարԷլ-ը և այլք ընդդեմ Իտալիայի*» (որոշում) [*Sud Fondi srl and Others v. Italy*] (dec.), 2007թ.): Նույն չափանիշները կիրառվել են «*Զի.Այ.Ի.Էմ. Էս.Ար.Էլ.-ը և այլք ընդդեմ Իտալիայի*» (ըստ եռության) [ՄԴ] [*G.I.E.M. S.R.L. and Others v. Italy (merits)*] [GC]] գործով, 2018թ., §§ 212-234, և գտել են, որ 7-րդ հոդվածը կիրառելի էր:

274. «*Սուդ Ֆոնդի ԷսարԷլ-ը և այլք ընդդեմ Իտալիայի* [*Sud Fondi srl and Others v. Italy*] գործով, 2009թ., ներպետական դատարանն արդարացրել է դիմումատու ընկերությունների ներկայացուցիչներին այն հիմքով, որ նրանք

⁴ Տե՛ս 7-րդ հոդվածի վերաբերյալ ուղեցույցը (*Պատիժ՝ բացառապես օրենքի հիման վրա*):

թույլ էին տվել անխուսափելի և ներելի սխալ իրենց տրված նախագծային թույլտվության մեկնաբանման հարցում: 7-րդ հոդվածի նպատակներով կիրառելի օրենսդրական շրջանակը հնարավորություն չէր տալիս մեղադրյալին հասկանալու քրեական օրենքի իմաստն ու կիրառման շրջանակը, ինչն այդպիսով ոչ բավարար էր: Հետևաբար քրեական դատարանի կողմից նշանակված գույքի բռնագրավումը 7-րդ հոդվածի նպատակներով օրենքով սահմանված չէր և կամայական պատիժ էր: Նույն պատճառով բռնագրավման արդյունքում խախտվել էր նաև թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը (*«[Unif. Fondi Srl and Others v. Italy](#)»-ը և այլք ընդդեմ Իտալիայի* [*Sud Fondi srl and Others v. Italy*], 2009թ., §§ 111-118 և 136-142): Համանման եզրակացություն է արվել նաև այն գործով, որով գույքը և շինությունները բռնագրավվել են, թեև սեփականատիրոջ դեմ քրեական վարույթը դադարեցվել էր վաղեմության ժամկետը լրանալու պատճառով (*«[Varvara v. Italy](#)»* [*Varvara v. Italy*], 2013թ., § 72):

275. *«[G.I.E.M. S.R.L. and Others v. Italy](#)»-ը և այլք ընդդեմ Իտալիայի*» (ըստ եռության) [*G.I.E.M. S.R.L. and Others v. Italy* (merits) [GC]] գործով, 2018թ., բռնագրավումն ինքնաբար կիրառվել է ապօրինի կառուցապատման դեպքերում, ինչպես նախատեսված է Իտալիայի օրենսդրությամբ: Դատարանը գնահատել է միջամտության համաչափությունը՝ հաշվի առնելով մի շարք գործոններ, այդ թվում՝ դիմումատուների կողմից մեղավորության կամ անփութության աստիճանը կամ առնվազն նրանց վարքագծի և դիտարկվող հանցանքի միջև եղած կապը: Այդ առնչությամբ ընդգծվել է նաև ընթացակարգային երաշխիքների կարևորությունը, քանի որ «գույքից» անարգել օգտվելու իրավունքին վերաբերող դատական վարույթը պետք է անձին ընձեռներ իր գործն իրավասու մարմիններին ներկայացնելու ողջամիտ հնարավորություն՝ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված իրավունքներին միջամտող միջոցներն արդյունավետորեն վիճարկելու նպատակով (*«[նույն տեղում](#)»*, §§ 301-303):

276. *«[Ulemek v. Serbia](#)»* (որոշում) [*Ulemek v. Serbia* (dec.)] գործով, 2021թ., դիմումատուն դատապարտվել է մի շարք ծանր հանցագործությունների համար: Նրանից հետագայում «Հանցավոր ճանապարհով ձեռք բերված եկամուտների ազգրավման և բռնագրավման մասին» 2008 թվականի օրենքի համաձայն պահանջվել է հանձնել իր տունը, որը նա գնել էր 1998 թվականին՝ ապօրինի միջոցներով: Ներպետական դատարանները պատճառաբանել են, որ հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների բռնագանձումը ոչ քրեական

պատժամիջոց էր, ոչ էլ իր բնույթով պատիժ էր, ուստի քրեական օրենքի հետադարձ ուժի արգելքը կիրառելի չէր: Դատարանը հիշեցրել է, որ «օրինականության» պահանջը որպես կանոն չէր կարող մեկնաբանվել որպես շարունակական փաստական հանգամանքները կամ իրավահարաբերությունները նորովի կարգավորող՝ հետադարձ ուժ ունեցող նոր դրույթներով օրենսդրի կողմից սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողության իրականացումը կամ որևէ այլ ձևով նյութական իրավունքներին միջամտությունը կանխող պահանջ: Հետևաբար դիմումատուի գույքի բռնագրավումը լիովին համապատասխանում էր թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի «օրինականության» պահանջին ([նույն տեղում](#), § 64): Դատարանը նաև եզրակացրել է, որ դիմումատուի դեմ կայացված բռնագանձման որոշումը Կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ նախադասության իմաստով «պատիժ» չէր, և հետևաբար 7-րդ հոդվածն այս գործով կիրառելի չէր ([նույն տեղում](#), §§ 56-57):

6. Հոդված 8⁵

277. Ինչպես Կոնվենցիայի 8-րդ հոդվածին, այնպես էլ թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածին վերաբերող մի շարք գործեր առնչվում են բնակարանային հարցերին: Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ «բնակարան» և «սեփականություն» հասկացությունների միջև կարող է լինել էական համընկնում, սակայն «բնակարանի» առկայությունը կախված չէ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի կամ շահի առկայությունից ([Սուրուջիուն ընդդեմ Ռումինիայի](#) [*Surugiu v. Romania*], 2004թ., § 63): Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի նպատակներով անձը կարող է գույքային իրավունք ունենալ կոնկրետ շենքի կամ հողամասի նկատմամբ՝ առանց այդ գույքի հետ բավարար կապեր ունենալու, որպեսզի այն 8-րդ հոդվածի իմաստով համարվի իր «բնակարանը» ([Խամիդովն ընդդեմ Ռուսաստանի](#) [*Khamidov v. Russia*], 2007թ., § 128):

278. Դիմումատուի՝ իր սեփական բնակարանը զբաղեցնելու իրավունքին միջամտությունը կարող է խախտել 8-րդ հոդվածը: Դատարանը լայն մեկնաբանություն է տալիս «բնակարան» հասկացությանը ([Գիլլոուն ընդդեմ Միացյալ Թագավորության](#) [*Gillow v. the United Kingdom*], 1986թ., § 46, [Լարկոնս](#)

⁵ Տե՛ս 8-րդ հոդվածի վերաբերյալ ուղեցույցը (Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք):

ընդդեմ Կիպրոսի [ՄՊ] [*Larkos v. Cyprus* [GC]], 1999թ., §§ 30-32, *Աքդիվարը և այլք ընդդեմ Թուրքիայի* [ՄՊ] [*Akdivar and Others v. Turkey* [GC]], 1996թ., § 88): Նույնը կարող է ճիշտ լինել նաև առևտրային ձեռնարկության շինությունների և փաստաբանական գրասենյակների նկատմամբ (*Նիեմիցն ընդդեմ Գերմանիայի* [*Niemietz v. Germany*], 1992թ., §§ 29-33):

279. *Լարկոսն ընդդեմ Կիպրոսի* [ՄՊ] [*Larkos v. Cyprus* [GC]] գործով, 1999թ., §§ 30-32, Դատարանը քննել է դիմումատուի բողոքները Կիպրոսի պետության հետ կնքված իր վարձակալության պայմանագրի չեղարկման վերաբերյալ՝ համաձայն Կոնվենցիայի 8-րդ հոդվածի՝ 14-րդ հոդվածի հետ համակցությամբ: Այն գտել է, որ պետական ծառայող հանդիսացող դիմումատուն, որի վարձակալության պայմանագիրն ուներ գույքի սովորական վարձակալության բազմաթիվ առանձնահատկություններ, խտրականության է ենթարկվել մասնավոր վարձակալների համեմատությամբ: Հաշվի առնելով այս եզրակացությունները՝ անհրաժեշտություն չի եղել առանձին քննելու բողոքը՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն:

280. *Կարներն ընդդեմ Ավստրիայի* [*Karner v. Austria*] գործը, 2003թ., կարևոր գործ է բնակարանային իրավունքների վերաբերյալ՝ Կոնվենցիայի 14-րդ հոդվածի համաձայն՝ 8-րդ հոդվածի հետ համակցությամբ: Այն վերաբերում է վարձակալության մասով իրավահաջորդությանը՝ նույնասեռական հարաբերությունների համատեքստում: Վերահաստատելով, որ սեռական կողմնորոշման վրա հիմնված տարբերությունների համար որպես հիմնավորում պահանջվում են հատկապես լուրջ պատճառներ, Դատարանը գտել է, որ պետք է նաև ապացուցվի, որ ավանդական ընտանիքի միավորի պաշտպանության նպատակն իրագործելու համար անհրաժեշտ էր օրենսդրության գործողության շրջանակից բացառել նույնասեռական հարաբերություններում գտնվող զույգերին: Արձանագրվել է խախտում (*նույն տեղում*, §§ 38-42): Համանման եզրակացություն է արվել նաև *Կոզակն ընդդեմ Լեհաստանի* [*Kozak v. Poland*] գործով, 2010թ., §§ 98-99, համատեղ բնակվող նույնասեռ զուգընկերոջ վերաբերյալ (նախադեպային իրավունքի զարգացման համար համեմատե՛ք *Ս.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* [*S. v. the United Kingdom*] գործը, Հանձնաժողովի որոշում, 1986թ., տե՛ս «Գույքի վարձակալություն» վերտառությամբ ենթագլուխը):

281. *Ռուսկն ընդդեմ Շվեդիայի* [*Rousk v. Sweden*] գործով, 2013թ.,

§§ 115-127, դիմումատուի տան՝ դատական կարգով վաճառքը պետությանը վճարման ենթակա հարկերի վճարումն ապահովելու նպատակով և դրան հաջորդած վտարումը հանգեցրել են ինչպես Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի, այնպես էլ 8-րդ հոդվածի խախտման, քանի որ սեփականատիրոջ շահերը պատշաճ կերպով չեն պաշտպանվել: Մինչդեռ *Վասկրսիչն ընդդեմ Սլովենիայի* [Vaskrsić v. Slovenia] գործով, 2017թ., § 87, 124 եվրոյի չափով նախնական պահանջը կատարելու նպատակով դիմումատուի տան՝ հրապարակային աճուրդով վաճառքը Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում էր: Ինչ վերաբերում է ավելի ընդհանուր առմամբ սեփական բնակարանի նկատմամբ հարգանքի իրավունքի և պարտքերի վճարման նպատակով բնակարանի հարկադիր վաճառքի համատեղելիությանը, տե՛ս *Վրզիչն ընդդեմ Խորվաթիայի* [Vrzić v. Croatia] գործը, 2016թ., §§ 63-68:

282. *Գլադիշևան ընդդեմ Ռուսաստանի* [Gladysheva v. Russia] գործով, 2011թ., § 93, Դատարանը գտել է, որ տեղի է ունեցել նույն դրույթների խախտում այն հիմքով, որ ներպետական մարմինները չեն գնահատել վիճարկվող միջոցի համաչափությունը բարեխիղճ գնորդին այն բնակարանից վտարելիս, որը նախորդ սեփականատերը խարդախությամբ էր ձեռք բերել: Այն նաև նշել է, որ բնակարանային հարցերում պետության հայեցողական լիազորությունների շրջանակն 8-րդ հոդվածով սահմանված իրավունքների առումով ավելի նեղ է՝ համեմատած Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանվող իրավունքների հետ, ընդ որում, հաշվի առնելով 8-րդ հոդվածի առանցքային նշանակությունն անձի ինքնության, ինքնորոշման, ֆիզիկական և բարոյական անձեռնմխելիության, այլ անձանց հետ հարաբերությունների պահպանման և համայնքում կայուն ու անվտանգ տեղի համար (*Զոննորսն ընդդեմ Միացյալ Թագավորության* [Connors v. the United Kingdom], 2004թ., §§ 81-84, *Օրլիչն ընդդեմ Խորվաթիայի* [Orlić v. Croatia], 2011թ., §§ 63-70): Համաչափության անհատական գնահատում է անհրաժեշտ նաև դիմումատուի բնակարանի կորստի վտանգի դեպքում՝ չնայած նրան, որ ներպետական իրավունքի համաձայն՝ բնակարան զբաղեցնելու նրա իրավունքը դադարել էր (*Չոսիչն ընդդեմ Խորվաթիայի* [Čosić v. Croatia], 2009թ., §§ 21-23), ինչպես նաև տուևը քանդելու մասին որոշման հետևանքով այն անխուսափելիորեն կորցնելու դեպքերում այն հիմքով, որ այն գիտակցաբար կառուցվել էր նախագծման կանոնների խախտմամբ (*Իվանովան և Չերկեզովն ընդդեմ Բուլղարիայի* [Ivanova and Cherkezov v. Bulgaria], 2016թ., § 53):

283. *Բերգեր-Կրալը և այլք ընդդեմ Սլովենիայի* [Berger-Krall and Others v. Slovenia] գործով, 2014թ., §§ 205-211 և 272-275, բնակարանային ոլորտի բարեփոխումները, որոնք հաջորդել էին շուկայական տնտեսության անցնելուն և հանգեցրել էին երաշխավորված վարձակալությունից դիմումատուների զրկվելուն, դիտարկվել են ինչպես 8-րդ հոդվածի, այնպես էլ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համատեքստում: Դատարանը վճռել է, որ թեև երաշխավորված վարձակալությունից զրկելը բնակարանի նկատմամբ հարգանքի իրավունքին միջամտություն էր, տվյալ դեպքում այն չի խախտել 8-րդ հոդվածը, քանի որ այն համաչափ է եղել հետապնդվող օրինական նպատակներին: Նույն նկատառումներից ելնելով՝ Դատարանը հանգել է այն եզրակացության, որ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում նույնպես տեղի չի ունեցել: Նույն կերպ, *Սորիչն ընդդեմ Խորվաթիայի* (որոշում) [Sorić v. Croatia (dec.)] գործով, 2000թ., Դատարանը վճռել է, որ բնակարանային ոլորտի բարեփոխումների համաձայն՝ դիմումատուի կարգավիճակը՝ որպես վարձակալ, շարունակում էր լինել հուսալի պաշտպանության ներքո: Այնուամենայնիվ, Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորվում էր ոչ թե որևէ գույք գնելու իրավունքը, այլ միայն գոյություն ունեցող գույքին անարգել տիրապետելը: *Գալովիչն ընդդեմ Խորվաթիայի* (որոշում) [Galović v. Croatia ((dec.))] գործով, 2021թ., § 65, Դատարանը մերժել է նաև նախկինում հատուկ պաշտպանված վարձակալության տիրապետող անձի կողմից 8-րդ հոդվածի համաձայն ներկայացված պահանջը, որին սեփականատերը վտարել էր բնակարանից, քանի որ նրան հասանելի էր այլ բնակարան: *Գրոզդանիչը և Գրշկովիչ-Գրոզդանիչն ընդդեմ Խորվաթիայի* [Grozđanić and Gršković-Grozđanić v. Croatia] գործով, 2021թ., §§ 109 և 115-120, Դատարանը վճռել է, որ ներպետական դատարանի՝ հատուկ պաշտպանված վարձակալության գործողության դադարեցման նյութաիրավական պայմանները չփոփոխող՝ նախադեպային իրավունքի զուտ ընթացակարգային փոփոխության հիման վրա վաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու որոշումն անկանխատեսելի չէր, և որ վարձակալներից պահանջել ապացուցելու իրենց տրամադրված բնակարանների օգտագործումը շարունակելու իրենց մտադրությունը՝ համապատասխան վարույթ հարուցելով բնակարանները զբաղեցնող երրորդ անձանց դեմ, անհամաչափ չէր, մասնավորապես՝ պատերազմի ժամանակաշրջանում՝ մեծ թվով տեղահանված անձանց առկայության պարագայում:

284. Նույն սկզբունքով, [Չրիլիչն ընդդեմ Խորվաթիայի \[Zrilić v. Croatia\]](#) գործով, 2013թ., § 71, Դատարանը վճռել է, որ դիմումատուի և իր նախկին ամուսնու համատեղ սեփականությունը հանդիսացող տունը դատական կարգով վաճառքի միջոցով բաժանելու մասին դատական որոշմամբ չի խախտվել 8-րդ հոդվածը, և հետևաբար լրացուցիչ ստուգում իրականացնելու անհրաժեշտություն չի եղել՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի առնչությամբ խախտման բացակայությունը պարզելու համար:

285. [Ցվիետիչն ընդդեմ Խորվաթիայի \[Cvijetić v. Croatia\]](#) գործով, 2004թ., § 51, որով դիմումատուն չէր կարողացել հասնել իր նախկին ամուսնուն այն բնակարանից վտարելուն, որն իր տունն էր, հայտնաբերվել է 6-րդ և 8-րդ հոդվածների խախտում՝ կատարողական վարույթի չափազանց երկար տևողության հիման վրա: Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածն առանձին քննելու անհրաժեշտություն չկար:

286. Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով չի երաշխավորվում սեփական «գույքից» հաճելի միջավայրում օգտվելու իրավունքը (տե՛ս [Ֆլամենբաումը և այլք ընդդեմ Ֆրանսիայի \[Flamenbaum and Others v. France\]](#) գործը, 2012թ., § 184, որը վերաբերում էր օդանավակայանի թռիչքուղու ընդլայնմանը՝ նաև 8-րդ հոդվածի համաձայն): Բացի այդ, քանի որ դիմումատուները չէին հիմնավորել, թե արդյոք և որքանով էր թռիչքուղու ընդլայնումն ազդել իրենց գույքի արժեքի վրա, Դատարանը չի գտել նշված դրույթով սահմանված իրավունքների խախտում ([Նույն տեղում](#), §§ 188-190):

287. Այն դեպքերում, երբ Դատարանը գտել է, որ տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում գիշերային ժամերին բարի աշխատանքի հետևանքով առաջացած անկարգությունների ([Ուդովիչիչն ընդդեմ Խորվաթիայի \[Udovičić v. Croatia\]](#), 2014թ., § 159) կամ թաղամասում տեղի ունեցող լուրջ և կրկնվող անկարգությունների վերաբերյալ բողոքներին իշխանությունների արդյունավետ արձագանքի բացակայության ([Սուրուջիուն ընդդեմ Ռումինիայի \[Surugiu v. Romania\]](#), 2004թ., §§ 67-69) հիմքով, այն որոշել է, որ անհրաժեշտ չէր քննել, թե արդյոք այդ դեպքում տեղի է ունեցել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

288. 8-րդ հոդվածը և Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը գործում են այն գործերում, որոնք վերաբերում են անձի բնակարանի ոչնչացմանը: [Սելչուկը և Ասքերն ընդդեմ Թուրքիայի \[Selçuk and Asker v. Turkey\]](#) գործով, 1998թ., § 77,

Դատարանը հաշվի է առել անվտանգության ուժերի կողմից դիմումատուների տները ոչնչացվելու դիտավորյալ եղանակը և գտել է, որ տեղի է ունեցել 3-րդ, 8-րդ հոդվածների և Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում: Ավելի մանրամասն տե՛ս ստորև՝ «Վարձակալությունը և վարձավճարի նկատմամբ հսկողությունը» վերտառությամբ գլուխը:

289. Վերջապես, [Բեելերն ընդդեմ Շվեյցարիայի \[ՄՊ\] \[Beeler v. Switzerland \[GC\]\]](#) գործը, 2022, §§ 50-74 և 93-116, վերաբերում էր իր երեխաների համար շուրջօրյա խնամք իրականացնող ամուրի տղամարդու նկատմամբ խտրական վերաբերմունքին՝ դադարեցնելով կերակրողի կորստի դեպքում տրամադրվող կենսաթոշակը, երբ նրա կրտսեր երեխան չափահաս է դարձել, մինչդեռ այրի կանայք շարունակում էին ստանալ այն: Դատարանն ընդգծել է, որ այն գործերի ճնշող մեծամասնության դեպքում, որոնցով որոշում է կայացվել սոցիալական ապահովության նպաստ ստանալու իրավունքի ոլորտում ենթադրյալ խտրականության վերաբերյալ, իր վերլուծության ուշադրության կենտրոնում եղել է Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը, այլ ոչ թե 8-րդ հոդվածը: Հիմնվելով [Բելանե Նագին ընդդեմ Հունգարիայի \[ՄՊ\] \[Bélané Nagy v. Hungary \[GC\]\]](#) գործի վրա (§§ 74-70 և 86-89)՝ Դատարանը գտել է, որ իր նախադեպային իրավունքը բավարար կայուն էր Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի կիրառելիության համար անհրաժեշտ շեմի հստակ սահմանում ապահովելու համար:

290. Դատարանը նշել է, որ իրավիճակը 8-րդ հոդվածի համաձայն պակաս պարզ է եղել, և պարզաբանել է կիրառելի սկզբունքները: Սույն գործով Դատարանը նախևառաջ գտել է, որ դիտարկվող կենսաթոշակի տրամադրումն ուղղված էր ընտանեկան կյանքի աջակցության ապահովմանը՝ հնարավորություն տալով ողջ մնացած ծնողին հոգ տանելու երեխաների մասին՝ առանց աշխատելու անհրաժեշտության, և երկրորդ, որ կենսաթոշակի ստացումն անխուսափելիորեն ազդել է այն բանի վրա, թե ինչպես է կազմակերպվել դիմումատուի ընտանեկան կյանքը համապատասխան ժամանակահատվածում: Հետևաբար գործի փաստերը մտնում էին 8-րդ հոդվածի գործողության ոլորտում՝ Կոնվենցիայի 14-րդ հոդվածը կիրառելի դարձնելով: Դատարանն այնուհետև գտել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտում՝ 8-րդ հոդվածի հետ համակցությամբ:

7. Հոդված 10

291. [Հենդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության \[Handyside v. the United](#)

Kingdom] գործով, 1976թ., §§ 59 և 63, դիմումատուին բողոքել է մատրիցայի և «Փոքրիկ կարմիր դասագրքի» հարյուրավոր օրինակների առգրավման, ինչպես նաև ներպետական դատարանի վճռից հետո դրանց բռնագրավման և հետագա ոչնչացման առնչությամբ: Դատարանը գտել է, որ առգրավման նպատակը եղել է «բարոյականության պաշտպանությունը», ինչպես որ դա ընկալվում է բրիտանական իրավասու մարմինների կողմից՝ գնահատման մասով իրենց լիազորություններն իրականացնելիս: Դասագրքի բռնագրավումն ու ոչնչացումը դիմումատուին ընդմիջտ զրկել են որոշակի «գույքի» նկատմամբ սեփականության իրավունքից: Այնուամենայնիվ, այս միջոցները թույլատրված են եղել թվ 1 արձանագրության 1-ին հոդվածի երկրորդ պարբերությամբ՝ մեկնաբանվելով Պայմանավորվող պետությունների համար ընդհանուր իրավունքի սկզբունքի լույսի ներքո, որի համաձայն՝ հետագա ոչնչացման նպատակով բռնագրավման են ենթակա բոլոր այն առարկաները, որոնց օգտագործումն օրենքի համաձայն ճանաչվում է ապօրինի և ընդհանուր շահի համար վտանգավոր: Հետևաբար թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի կամ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

292. *Ըյուզթյուրքն ընդդեմ Թուրքիայի* [ՄՊ] [*Öztürk v. Turkey*] գործով, 1999թ., § 76, Դատարանը վճռել է, որ դիմումատու հրատարակչի կողմից հրատարակված գրքի օրինակների բռնագրավումն ու ոչնչացումն անջատողական քարոզչություն տարածելու համար նրա դատապարտման հայեցակետերից ընդամենը մեկն էր (որը դիտարկվում էր 10-րդ հոդվածի շրջանակներում): Հետևաբար անհրաժեշտ չէր բռնագրավման հարցը դիտարկել առանձին՝ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն:

293. *Էշբի Դոնալդը և այլք ընդդեմ Ֆրանսիայի* [*Ashby Donald and Others v. France*] գործով, 2013թ., § 40, Դատարանը գտել է, որ երբ հարցը վերաբերում է արտահայտվելու ազատությանը միջամտելուն, պետություններն օգտվում են հայեցողական լիազորությունների ավելի լայն շրջանակից, եթե վիճարկվող միջոցն ուղղված է Կոնվենցիայով սահմանված այլ իրավունքների պաշտպանությանը, ինչպիսին է գույքից անարգել օգտվելու իրավունքը, այս կոնկրետ դեպքում՝ հեղինակային իրավունքի վերաբերյալ (*Նեյը և Սունդե Կոլմիսոպին ընդդեմ Շվեդիայի* (որոշում) [*Neij and Sunde Kolmisoppi v. Sweden* (dec.)]<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-117513>, 2013թ.):

8. Հոդված 11⁶

294. *Շասանյուն և այլք ընդդեմ Ֆրանսիայի* [ՄՊ] [*Chassagnou and Others v. France* [GC]] գործով, 1999թ., §§ 85 և 117, որը վերաբերում էր 20 հեկտարից քիչ հողատարածքի սեփականատեր հանդիսացող և որսորդությանը դեմ հանդես եկող դիմումատուներին՝ հաստատված որսորդական համայնքային կամ միջհամայնքային միավորումներին ինքնաբար անդամակցությանը և նրանց հողերի նկատմամբ որսորդական իրավունքների՝ այդ միավորումներին փոխանցմանը, Դատարանը գտել է, որ տեղի է ունեցել ինչպես թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի, այնպես էլ Կոնվենցիայի 11-րդ հոդվածի խախտում:

9. Հոդված 13

295. Որպեսզի Կոնվենցիայի 13-րդ հոդվածը գործի, դիմումատուները պետք է «փաստարկելի» պնդում ունենան: Դրական պատասխանի դեպքում նրանք պետք է ունենան պաշտպանության արդյունավետ և գործնական միջոցներ՝ իրենց պահանջի վերաբերյալ որոշման կայացման հասնելու և անհրաժեշտության դեպքում կորուստների փոխհատուցում ստանալու համար:

296. *Իատրիդիս ընդդեմ Հունաստանի* [ՄՊ] [*Iatridis v. Greece* [GC]] գործով, 1999թ., § 65, որը վերաբերում էր իշխանությունների կողմից կինոթատրոնը դիմումատուին չվերադարձնելուն, Դատարանը գտել է, որ առկա էր տարբերություն Կոնվենցիայի 13-րդ հոդվածով և թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանվող շահերի բնույթի միջև. դրանցից առաջինով տրամադրվում է ընթացակարգային երաշխիք, մասնավորապես՝ «իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք», մինչդեռ վերջինին բնորոշ ընթացակարգային պահանջը լրացուցիչ միջոց է գույքից անարգել օգտվելու իրավունքը հարգելն ապահովելու ավելի լայն նպատակի համար: Տեղի է ունեցել ինչպես թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի, այնպես էլ 13-րդ հոդվածի խախտում:

297. Նույն կերպ, *Օյուներյուդդզն ընդդեմ Թուրքիայի* [ՄՊ] [*Öneriildiz v. Turkey* [GC]] գործով, 2004թ., §§ 156-157, Դատարանը գտել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում՝ կապված թիվ 1 արձանագրության 1-ին

⁶ Տե՛ս 11-րդ հոդվածի վերաբերյալ ուղեցույցը (Հավաքների և միավորման ազատություն):

հոդվածի համաձայն ներկայացված գանգատի հետ, որը վերաբերում էր աղբահորում մեթան գազի պայթյունի հետևանքով կենցաղային ապրանքների ոչնչացման համար փոխհատուցման վերաբերյալ վարչական վարույթի արդյունավետությանը: Եվ հակառակը, *Բուդայևա և այլք ընդդեմ Ռուսաստանի* [Budayeva and Others v. Russia] գործով, 2008թ., §§ 196-198, որով վնասը մեծամասամբ առաջացել էր բնական աղետի հետևանքով, Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի և այդ հոդվածի հետ համատեղ 13-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմումատուները կարողացել էին վնասի փոխհատուցման պահանջ ներկայացնել և ապահովել, որ այն քննվի իրավասու դատարանների կողմից, ինչպես նաև այն հանգամանքը, որ պետությունը միջոցներ էր իրականացրել արտակարգ իրավիճակում օգնություն տրամադրելու ընդհանուր ծրագրի շրջանակներում:

298. Ինչ վերաբերում է վարձավճարների հսկողության վերաբերյալ գործերին, ապա Դատարանը վնասի փոխհատուցման սահմանադրական վարույթներն անարդյունավետ է համարել *Մարշալը և այլք ընդդեմ Մալթայի* [Marshall and Others v. Malta] գործով, 2020թ., §§ 71-81, որը վերաբերում էր առևտրային գույքի վարձավճարի չափի սահմանափակմանը՝ հաշվի առնելով վտարման մասին կարգադրություն չտալը կամ ապագայում ավելի բարձր վարձավճարներ չտրամադրելը, և եզրակացրել է, որ տեղի է ունեցել 13-րդ հոդվածի խախտում՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի հետ համակցությամբ: *Կաուչին ընդդեմ Մալթայի* [Cauchi v. Malta] գործով, 2021թ., §§ 52-55 և 58-64, դիմումատուն վնասի փոխհատուցման սահմանադրական վարույթ է հարուցել՝ պնդելով, որ ներպետական կարգադրությամբ, որով վարձակալներին վարձակալության հանձնված տարածքի տիրապետումը պահպանելու իրավունք էր տրվում, փաստորեն իրեն՝ սեփականատիրոջը, պարտադրվել են միակողմանի վարձակալության հարաբերություններ անորոշ ժամկետով՝ առանց հնարավորություն տալու նրան ստանալ արդար և համարժեք վարձավճար: Դատարանը գտել է, որ դիմումատուն ստիպված է եղել կրել անհամաչափ բեռ, և որ ներպետական դատարանի կողմից տրամադրված վնասի փոխհատուցումը բավարար հատուցում չի եղել նրա համար, ինչն այդպիսով Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում էր ինչպես առանձին, այնպես էլ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի հետ համակցությամբ:

299. Գույքը նախկին սեփականատերերին վերադարձնելու շրջանակներում *Դրիզան ընդդեմ Ալբանիայի* [Driza v. Albania] գործով, 2007թ., §§ 115-120,

հայտնաբերվել է 13-րդ հոդվածի խախտում՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի հետ համակցությամբ՝ վերադարձի համապատասխան մեխանիզմ, մասնավորապես՝ մարմիններ և ընթացակարգ չձևավորելու պատճառով:

300. Վերջապես, *Չիրագովը և այլք ընդդեմ Հայաստանի* [ՄԴ] [*Chiragov and Others v. Armenia* [GC]] գործով, 2015թ., §§ 213-215, և *Սարգսյանն ընդդեմ Ադրբեյջանի* [ՄԴ] [*Sargsyan v. Azerbaijan* [GC]] գործով, 2015թ., §§ 269-274, Լեռնային Ղարաբաղի շուրջ հայ-ադրբեյջանական հակամարտության ընթացքում իրենց տների և գույքի կորստի վերաբերյալ Կոնվենցիայի համաձայն դիմումատուների բողոքների առնչությամբ փոխհատուցում ապահովելու և հաջողության հասնելու ողջամիտ հեռանկարներ առաջարկելու ունակ իրավական պաշտպանության միջոցների բացակայությունը նույնպես հանգեցրել է Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտման:

10. Հոդված 14

301. 14-րդ հոդվածով սահմանված խտրականության արգելքը կարող է վկայակոչվել միայն Կոնվենցիայով պաշտպանվող այլ նյութական իրավունքներից մեկի կապակցությամբ:

302. Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի հետ համակցությամբ 14-րդ հոդվածի շրջանակներում ներկայացվող գործերով Դատարանը քննում է, թե արդյոք դիմումատուները գտնվել են համեմատաբար նմանատիպ կամ համանման վիճակում գտնվող այն անձանց խմբի հետ, որոնց հետ իրենք իրենց համեմատել են: Այնուամենայնիվ, վերաբերմունքի յուրաքանչյուր տարբերությունն չէ, որ կհամարվի 14-րդ հոդվածի խախտում. Պետություններն ունեն հայեցողական լիազորությունների որոշակի շրջանակ գնահատելիս, թե արդյոք և որքանով են այլ կերպ համանման իրավիճակներում առկա տարբերություններն արդարացնում տարբեր վերաբերմունքը: Շրջանակի մասշտաբը տարբեր կլինի՝ ըստ հանգամանքների, խնդրո առարկայի և նախապատմության: Կոնվենցիայով պետությանը սովորաբար տրամադրվում է հայեցողության լայն շրջանակ, երբ հարցը վերաբերում է օրինակ տնտեսական կամ սոցիալական ռազմավարության ընդհանուր միջոցներին (*Շպոլյարը և Դեչիի Վրտիչ Պչելիցեն ընդդեմ Խորվաթիայի* (որոշում) [*Špoljar and Dječji Vrtić Pčelice v. Croatia (dec.)*], 2020թ., §§ 33-36):

303. Թեև պետության՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով սահմանված լիազորությունների շրջանակը որոշ դեպքերում կարող է լայն լինել, այդ

լիազորությունները չեն կարող իրականացվել խտրական ձևով: Եթե 14-րդ հոդվածով կարգավորվող խտրականության հիմքով դիմումատուին մերժվել է որոշակի ակտիվի ամբողջական կամ մասնակի տրամադրումը, ապա համապատասխան չափանիշն այն է, թե արդյոք նա ներպետական իրավունքի համաձայն կունենար կիրարկելի իրավունք տվյալ ակտիվի նկատմամբ, եթե չլիներ այն խտրականության հիմքը, որի մասով նա բողոքում է (*Ֆաբրին ընդդեմ Ֆրանսիայի* [ՄԴ] [*Fabris v. France*][GC], 2013թ., § 52, տե՛ս նաև *Շալտինիտեն ընդդեմ Լիտվայի* [*Šaltinytė v. Lithuania*], 2021թ., § 59, սոցիալական ապահովության վճարումների համար):

304. Արտամոլեսական կապից ծնված երեխաների նկատմամբ խտրականության հարցը դիտարկվել է *Մարքսն ընդդեմ Բելգիայի* [*Marckx v. Belgium*] անսախաղեպ գործում, 1979թ., § 65: Դատարանը վճռել է, որ դիմումատուն, որպես չամուսնացած մայր, խտրականության է ենթարկվել իր գույքն ազատորեն տնօրինելու հարցում՝ համեմատած ամուսնացած մայրերի հետ: Առանձին վերցրած՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում մոր նկատմամբ տեղի չի ունեցել, իսկ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը կիրառելի չէ դստեր նկատմամբ:

305. Նույն կերպ, *Մազուրեկն ընդդեմ Ֆրանսիայի* [*Mazurek v. France*] գործով, 2000թ., § 54, ամուսնական անհավատարմության արդյունքում ծնված երեխային վճարման ենթակա ժառանգության չափը նվազեցնող օրենքը ճանաչվել է որպես այդպիսի երեխաների նկատմամբ իրենց գույքային իրավունքներն իրացնելիս անհիմն խտրականություն դրսևորող, թեև «ավանդական ընտանիքի պաշտպանությունը» համարվել է պետության կողմից հետապնդվող օրինական նպատակ (*Ֆաբրին ընդդեմ Ֆրանսիայի* [ՄԴ] [*Fabris v. France*][GC], 2013թ., §§ 68-72, համատեղ բնակվող քույրերի դեպքում ժառանգության իրավունքների վերաբերյալ տե՛ս նաև *Բըրդենն ընդդեմ Միացյալ Թագավորության* [ՄԴ] [*Burden v. the United Kingdom*][GC] գործը, 2008թ., § 65, ոչ ռեզիդենտ անձանց կենսաթոշակների ինդեքսավորման վերաբերյալ՝ *Զարսոնը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության* [ՄԴ] [*Carson and Others v. the United Kingdom*][GC], 2010թ., § 90, և կերակրողի կորստի դեպքում տրամադրվող կենսաթոշակի նկատմամբ այն այրու իրավունքի վերաբերյալ, որը կերակրողի կինն էր միայն կրոնական ծեսի ուժով՝ *Շերիֆե Յիգիտ ընդդեմ Թուրքիայի*» [ՄԴ] [*Şerife Yiğit v. Turkey*][GC], 2010թ., § 86):

306. Վերաբերմունքի տարբերությունը, որին ենթարկվել է դիմումատուն՝ որպես մուսուլմանական դավանանքի պատկանող կտակարարի կողմից Զադաքացիական օրենսգրքի համաձայն կազմված կտակի շահառու՝ ի համեմատ ոչ մուսուլմանական դավանանքի պատկանող կտակարարի կողմից Զադաքացիական օրենսգրքի համաձայն կազմված կտակի շահառուի, չի ունեցել որևէ օբյեկտիվ և ողջամիտ հիմնավորում (*Մոլլա Սալին ընդդեմ Հունաստանի* [ՄՊ] [*Molla Sali v. Greece*][GC]], 2018թ., § 161):

307. Հակառակը, *Շտումերն ընդդեմ Ավստրիայի* [ՄՊ] [*Stummer v. Austria*][GC]] գործով, 2011թ., §§ 132-136, կենսաթոշակային իրավունքները հաշվարկելիս բանտում կատարված աշխատանքը հաշվի առնելուց հրաժարվելը չի առաջացրել 14-րդ հոդվածի որևէ խախտում՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի հետ համակցությամբ (տե՛ս վերևում սույն գլխում 4-րդ հոդվածի ներքո): Ավելին, *Փ.Կ.-ն ընդդեմ Իռլանդիայի* [*P.C. v. Ireland*] գործով, §§ 53-54 և 93, օրենսդրությամբ բացառվում էր բանտում գտնվելու ընթացքում դիմումատուի կողմից ծերության կենսաթոշակի ստացումը: Թեև Դատարանը գտել է, որ 14-րդ հոդվածը Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի հետ համակցությամբ կիրառելի էր (տե՛ս վերևում՝ «Սոցիալական ապահովության նպաստներ/կենսաթոշակներ» ենթագլուխը դիմումատուի՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն ներկայացված բողոքների ընդունելիության վերաբերյալ Դատարանի եզրահանգումների վերաբերյալ), Դատարանը վճռել է, որ այդ դրույթների խախտում տեղի չի ունեցել:

308. *Շաբոտին ընդդեմ Ֆրանսիայի* [ՄՊ] [*Chabauty v. France*][GC]] գործով, 2012թ., § 47, փոքր հողատերերի՝ հաստատված որսորդական միավորման վերահսկողությունից իրենց հողը հանելու անկարողությունը, ի տարբերություն խոշոր հողատերերի, բացառությամբ էթիկական պատճառների առկայության դեպքերի, չի առաջացրել 14-րդ հոդվածի որևէ խախտում՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի հետ համակցությամբ (համեմատե՛ք *Շասանյուն և այլք ընդդեմ Ֆրանսիայի* [ՄՊ] [*Chassagnou and Others v. France*][GC]] գործը, 1999թ., § 95):

309. 2016 թվականի *Գուբերինան ընդդեմ Խորվաթիայի* [*Guberina v. Croatia*] գործը, 2016թ., վերաբերում էր ծանր հաշմանդամություն ունեցող երեխայի կարիքները բավարարելու նպատակով բնակարանի վաճառքից հետո տուն գնելու համար հարկային արտոնություն տրամադրելու մերժմանը՝ այն հիմքով, որ

վաճառված բնակարանը, լինելով բավականաչափ մեծ և հագեցած անհրաժեշտ ենթակառուցվածքներով, ինչպիսիք են էլեկտրաէներգիան, ջեռուցումը և այլն, բավարարում էր ընտանիքի կարիքները: Հարկային մարմինները որևէ ուշադրություն չեն դարձրել վերելակ չունեցող բնակարանում երեխային խնամող ընտանիքի ծանր վիճակին: Դիմումատուն բողոքել է, որ իր ընտանիքի վիճակի մասով հարկային օրենսդրության կիրառման եղանակը խտրականություն էր՝ հաշվի առնելով իր երեխայի հաշմանդամությունը: Գտել էին, որ տեղի էր ունեցել խախտում հիմնականում այն պատճառով, որ իշխանությունները հաշվի չէին առել հաշմանդամության հետ կապված ավելի լայն նկատառումներն ու պարտավորությունները, ինչը հանգեցրել էր հարկային օրենսդրության մեկնաբանման նկատմամբ չափազանց սահմանափակող և մեխանիկական մոտեցման կիրառմանը՝ ի վնաս ընտանիքի կոնկրետ իրավիճակի (*նույն տեղում*, § 98):

310. *Ջ.Դ.-ն և Ա.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* [J.D. and A v. the United Kingdom] գործը, 2019թ., §§ 97 և 101-105, վերաբերում էր հարմարեցված տներում բնակվող դիմումատուների բողոքին առ այն, որ սոցիալական բնակարանային ոլորտում բնակարանային նպաստների տրամադրման նոր կանոններով (հայտնի որպես «ննջասենյակի հարկ») խտրականություն էր դրսևորվել նրանց նկատմամբ՝ իրենց կոնկրետ իրավիճակի պատճառով. առաջին դիմումատուն խնամում էր հաշմանդամ դստերը, իսկ երկրորդն ընտանեկան բռնության զոհ էր և բնակվում էր «Ապաստանի ծրագրի» շրջանակներում: Այդ միջոցը հանգեցնում էր վարձակալության սուբսիդիայի կրճատման, եթե բնակիչներն ունեին ավելի շատ ննջասենյակներ, քան իրավունք ունեին՝ նպատակ ունենալով խրախուսել նրանց տեղափոխվելու ավելի փոքր տուն: Դատարանն ընդգծել էր, որ պատմական անհավասարությունները շտկելու համար նախատեսված անցումային միջոցների համատեքստից դուրս, հաշվի առնելով հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրականությունը կանխելու և նրանց լիարժեք մասնակցությունն ու ինտեգրումը հասարակությանը խթանելու անհրաժեշտությունը, հաշմանդամություն ունեցող անձանց համար այլ իրավական ռեժիմ սահմանելու հարցում պետությունների հայեցողական լիազորությունների շրջանակը զգալիորեն կրճատվել էր: Այն վճռել էր, որ այն դեպքում, երբ ենթադրյալ խտրականությունը հիմնված է եղել հաշմանդամության և գենդերի վրա և չի բխել անհավասարությունը շտկելու նպատակով բարեխղճորեն իրականացված

անցումային միջոցից, վիճարկվող միջոցը հիմնավորելու համար անհրաժեշտ կլինեն շատ ծանրակշիռ պատճառներ: Դատարանը եզրակացրել է, որ բնակարանային հայեցողական վճարումները (ԲՀՎ-ներ), որոնք կարող են լրացնել վարձավճարի պակասորդը, թույլ են տվել իրեն գտնելու, որ առաջին դիմումատուի դեպքում վերաբերմունքի տարբերությունը հիմնավորված էր: Այնուամենայնիվ, երկրորդ դիմումատուի դեպքում դա այդպես չէր. նա օգտվում էր մեկ այլ ծրագրից, որի նպատակն էր թույլ տալ ընտանեկան բնության գոհերին մնալու իրենց տներում, և ԲՀՎ-ների ծրագրով չէր կարող կարգավորվել այդ նպատակի և ննջասենյակի հարկի, որը խրախուսում էր նրան տեղափոխել, նպատակի միջև եղած հակասությունը:

311. *Անդրեևան ընդդեմ Լատվիայի* [ՄԴ] [*Andrejeva v. Latvia* [GC]] գործով, 2009թ., § 88, որով կատարվել էր քաղաքացիության վրա հիմնված տարբերակում, հայտնաբերվել էր 14-րդ հոդվածի խախտում՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի հետ համակցությամբ, քանի որ Լատվիայի դատարանները մերժել էին դիմումատուին տրամադրել տարիքային կենսաթոշակ մինչև 1991 թվականը Լատվիայի տարածքում նախկին խորհրդային Միությունում նրա աշխատանքային տարիների համար այն հիմքով, որ նա Լատվիայի քաղաքացիություն չի ունեցել: Հետագայում, *Սավիցկիսը և այլք ընդդեմ Լատվիայի* [ՄԴ] [*Savickis and Others v. Latvia* [GC]] գործով, 2022թ., §§ 189-220, որով դիմումատուները նույնպես «քաղաքացի չհանդիսացող մշտական ռեզիդենտներ» էին, խորհրդային ժամանակաշրջանում Լատվիայից դուրս գտնվող այլ խորհրդային հանրապետություններում նրանց ծառայության տարիները հաշվի չեն առնվել նրանց կենսաթոշակը հաշվարկելիս: *Անդրեևան ընդդեմ Լատվիայի* [ՄԴ] [*Andrejeva v. Latvia* [GC]], 2009թ., գործից հետո դիմումատուներն անհաջող կերպով փորձել են հասնել իրենց կենսաթոշակների վերահաշվարկի: 2011 թվականին Լատվիայի Սահմանադրական դատարանը վիճարկվող կանոնը ճանաչել է համատեղելի Սահմանադրության և Կոնվենցիայի հետ՝ հստակ տարբերակում դնելով *Անդրեևայի* և դիմումատուների միջև: Թեև տիկին Անդրեևան վիճարկվող ժամանակահատվածներում բնակվել էր Լատվիայի տարածքում, դիմումատուներն աշխատել էին Լատվիայից դուրս և մինչև Լատվիայի հետ որևէ իրավական կապ հաստատելը: Տասնամյակներ տևած անօրինական օկուպացիայից և միացումից հետո պետության անկախության վերականգնման կոնկրետ համատեքստում Դատարանն ընդունել է

քաղաքացիության հիման վրա մոտեցման տարբերությունը հիմնավորող պատճառները, որոնք պետք է լինեին «շատ ծանրակշիռ», և չի գտել, որ տեղի է ունեցել 14-րդ հոդվածի խախտում Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի հետ համակցությամբ՝ այդպիսով հանգեցրել *Անդրեևայի* գործով արված եզրակացությունից այլ եզրակացության: Դատարանն օգտագործել է մի քանի գործոններ՝ որոշելու համար հայեցողական լիազորությունների համապատասխան շրջանակը, ինչպես նաև անձնական ընտրության նշանակությունը՝ ֆինանսական օգուտների հետ կապված հարցերում իրավական կարգավիճակի կամ քաղաքացիության վերաբերյալ:

312. *Ֆաբիանս ընդդեմ Հունգարիայի* [ՄՊ] [*Fábián v. Hungary*] գործով, 2017թ., Դատարանը գտել է, որ պետական և մասնավոր հատվածում զբաղվածության միջև առկա էին էական իրավական և փաստական տարբերություններ՝ ինստիտուցիոնալ և գործառնական պատճառներով, ինչպիսիք են աշխատավարձի աղբյուրը, այն փաստը, որ ներպետական իրավունքով պետական և մասնավոր հատվածներում զբաղվածությունը դիտարկվում էր որպես տարբեր զբաղվածություն, որ պետական հատվածում դիմումատուի մասնագիտությունը դժվար էր համեմատել մասնավոր հատվածի որևէ մասնագիտության հետ, և որ պետության պարտականությունն էր որպես նրա գործատու սահմանել նրա զբաղվածության պայմանները և որպես կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ՝ կենսաթոշակների վճարման պայմանները (*Լույն տեղում*, §§ 131-132, *Պանֆիլեն ընդդեմ Ռումինիայի (որոշում)* [*Panfile v. Romania* (dec.)], 2012թ., § 28): Մեկ այլ գործով Դատարանը գտել է, որ պետական հատվածի տարբեր կատեգորիաներում զբաղվածությունն ունեցող կենսաթոշակառուների նկատմամբ վերաբերմունքի միջև տարբերությունը հիմնավորված էր (*Գելլերթեգյին և այլք ընդդեմ Հունգարիայի* (որոշում) [*Gellértheyi and Others v. Hungary* (dec.)], 2018թ., §§ 34-40):

313. *Պոպովիչը և այլք ընդդեմ Սերբիայի* [*Popović and Others v. Serbia*] գործով, 2020թ., §§ 75-76 և 78, Դատարանը վճռել է, որ քաղաքացիական և զինվորական շահառուների միջև հաշմանդամության նպաստների տրամադրման տարբերությունն օբյեկտիվորեն և ողջամտորեն հիմնավորված էր այն եղանակով, որով երկու խմբերը ստացել էին իրենց վնասվածքները՝ առանց նախապես քննելու, թե արդյոք նրանք գտնվում էին «նմանատիպ կամ համեմատաբար համանման իրավիճակներում»: Մասնավորապես մոտեցման համապատասխան

տարբերությունը պայմանավորված էր բարոյական պարտքի հանգամանքով, որ պետությունը հավանաբար պարտավորված էր զգում կատարել՝ ի պատիվ իր պատերազմի վետերանների կողմից իրականացված ծառայության: Չինվորական ծառայության ընթացքում կրելով վնասվածքներ՝ պատերազմի վետերանները ենթարկվել էին ավելի բարձր ռիսկի, երբ կատարել են պետության կողմից սահմանված պարտականությունները: Հիշյալ ռիսկի առկայության պայմաններում նրանց վնասվածքներն այլ դեպքերում նաև դժվար կլինեին ապահովագրել, և նրանց համար նույն կերպ նաև ծանր կլինեին, եթե ոչ՝ անհնար նրանց պատճառված վնասվածքների համար հատուցում ստանալ դատական վարույթի միջոցով: Ի հակադրություն, քաղաքացիական անձինք իրենց վնասվածքներն ստացել էին այդպիսի պարտականությունների կատարման հետ առնչություն չունեցող իրավիճակներում, որոնք մեծամասամբ ներառում են դժբախտ պատահարներ կամ հիվանդություններ կամ երրորդ անձանց գործողություններ:

314. *Շպոլյարը և Ջեժի Վրտիչ Պչելիցեն ընդդեմ Խորվաթիայի* (որոշում) [*Špoljar and Dječji Vrtić Pčelice v. Croatia (dec.)*] գործով, 2020թ., §§ 38-46, Դատարանը գտել է, որ պետական մանկապարտեզների հետ նույն չափով սուբսիդիաներ չստանալու վերաբերյալ դիմումատուների բողոքն ակնհայտորեն անհիմն էր, քանի որ մասնավոր և պետական մանկապարտեզները համանման կամ համեմատաբար համանման վիճակում չէին: Պետական մանկապարտեզները, որպես տեղական կառավարման մարմինների հաստատություններ, առաջին հերթին նպատակ ունեին բավարարելու համայնքի նախադպրոցական կրթության հետ կապված կարիքները, մինչդեռ մասնավոր մանկապարտեզները մասնավոր կերպով կառավարվող հաստատություններ էին, որոնք, թեև նույնպես տրամադրում էին նախադպրոցական կրթություն, ուղղված էին իրենց ծառայությունների դիմաց որոշակի եկամուտ ստանալուն:

315. *Յուրչիչն ընդդեմ Խորվաթիայի* [*Jurčić v. Croatia*] գործով, 2021թ., §§ 55 և 77-85, դիմումատուն աշխատանքային պայմանագիր էր կնքել արտամարմնային բեղմնավորում իրականացնելուց տասն օր անց: Երբ նա հետագայում հղիության հետ կապված բարդությունների պատճառով գտնվել է հիվանդության արձակուրդում, համապատասխան ներպետական մարմինը վերանայել է նրա առողջության ապահովագրության կարգավիճակը՝ գտնելով, որ արտամարմնային բեղմնավորում իրականացնելուց կարճ ժամանակ անց պայմանագիրը ստորագրելով՝ դիմումատուն միայն ձգտել է ստանալ զբաղվածության

կարգավիճակի հետ կապված նյութական առավելություններ, հետևաբար Նրա զբաղվածությունը շինծու է եղել. Նրա դիմումը՝ որպես ապահովագրված աշխատող գրանցվելու վերաբերյալ, ինչպես նաև հիվանդության արձակուրդի հետ կապված աշխատավարձի փոխհատուցման վերաբերյալ դիմումը համապատասխանաբար մերժվել են: Դատարանը վճռել է, որ դիմումատուի հղիության պատճառով Նրան աշխատանքի ընդունելուց կամ աշխատանքի մասով տրամադրվող նպաստը ճանաչելուց հրաժարվելը սեռի հիմքով ուղղակի խտրականություն է, որը չի կարող հիմնավորվել պետության ֆինանսական շահերով:

316. *Շալտիսիտեն ընդդեմ Լիտվայի [Šaltinytė v. Lithuania]* գործով, 2021թ., դիմումատուին՝ անչափահաս երեխայի միայնակ մորը, մերժել են առաջին տունը գնելիս ցածր եկամուտ ունեցող «երիտասարդ ընտանիքների» համար նախատեսված բնակարանային սուբսիդիա տրամադրել, քանի որ Նրա տարիքը գերազանցում էր օրենքով սահմանված տարիքային վերին շեմը: Դատարանը համարել է, որ հանրային քաղաքականությունը՝ ուղղված արտագաղթի և ցածր ծնելիության պատճառով բնակչության թվաքանակի կրճատումը համակշռելու նպատակով երիտասարդներին ավելի շատ երեխաներ ունենալ խրախուսելուն, համարվում էր հանրային շահերից բխող օրինական նպատակ հետապնդող (*նույն տեղում*, § 74): Հաշվի առնելով իր օժանդակ դերը՝ Դատարանը վճռել է, որ պետությունը չի անցել իր հայեցողական լիազորությունների լայն շրջանակի սահմանը, երբ որոշել է լրացուցիչ բնակարանային օգնություն տրամադրել այն ընտանիքներին, որոնցում ամուսինները կամ միայնակ ծնողը երեսուսինից տարեկանից մեծ չեն: Այն նաև նշել է, որ կարևոր է, որ իրավական կարգավորումը, նույնիսկ եթե այն ուղղված էր մարդկանց ավելի վաղ տարիքում երեխաներ ունենալը խրախուսելուն, պետք է այնուամենայնիվ համարժեքորեն արտացոլեր երկրի իրական ժողովրդագրական իրավիճակը (*նույն տեղում*, §§ 77-82):

317. Ավելին, *Անդերլեխտի Եհովայի վկաների քրիստոնեական ասամբլեան և այլք ընդդեմ Բելգիայի [Anderlecht Christian Assembly of Jehovah's Witnesses and Others v. Belgium]* գործը, 2022թ., §§ 36-40 և 50-55, վերաբերում էր Եհովայի վկաների մի քանի ժողովների: Նրանք պնդում էին, որ խտրականության զուգահեռ դարձել այն փաստի պատճառով, որ Բրյուսելի շրջանում գործող նոր օրենսդրությամբ գույքահարկից ազատումը կախված էր «ճանաչված կրոնի» պատկանելությամբ. կատեգորիա, որում Նրանք ներառված չէին: Գործը քննվել է 14-րդ հոդվածի համաձայն՝ 9-րդ հոդվածի և Թիվ 1 արձանագրության 1-ին

հոդվածի հետ համակցությամբ: Դատարանը վճռել է, որ վիճարկվող օրենքի ազդեցությունը որպես կրոնական համայնքներ դիմումատու միավորումների գործունեության վրա բավարար էր ինչպես 9-րդ հոդվածի, այնպես էլ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում ներառվելու համար: Հաշվի առնելով այն փաստը, որ հարկային արտոնությունը կախված էր նախկինում որպես «ճանաչված կրոն» ճանաչվելուց, ինչը կարգավորվում էր խտրականության դեմ բավարար երաշխիքներ չապահովող կանոններով, գտել է, որ տեղի է ունեցել խախտում:

318. Վերջապես, [*P16-2021-002 խորհրդատվական կարծիքը*](#), 2022թ. (§§ 88 111), վերաբերում էր մասնավոր գույքի վրա որսորդության հետ կապված իրավունքների իրացմանը և հողատեր միավորումների նկատմամբ վերաբերմունքի միջև տարբերությանը՝ հիմնվելով ներպետական բնապահպանական օրենսդրությունում դրանց ստեղծման վրա: Դատարանը ուղեցույց է տրամադրել հարցում ներկայացրած Պետական խորհրդին այն չափանիշների վերաբերյալ, որոնցով պետք է գնահատվեին համապատասխան միջոցի իրավաչափ նպատակը, օրինականությունն ու համաչափությունը:

III. Կոնկրետ հարցեր

Ե. Վարձակալությունը և վարձավճարի նկատմամբ հսկողությունը

319. Կոնվենցիայով և դրա Արձանագրություններով չի երաշխավորվում կացարանով և բնակարանով ապահովելու իրավունքը, և բնակարանային իրավունքներին վերաբերող բազմաթիվ գործեր քննվել են Կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն՝ դիմումատուների անձնական կամ ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի պաշտպանության առնչությամբ (տե՛ս վերևում՝ 8-րդ հոդվածի վերաբերյալ ենթագլուխը): Կոնվենցիայի մարմինները Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն քննել են մի շարք գործեր, որոնք վերաբերում են տանտերերի իրավունքների և ազգային օրենսդրության համաձայն վարձակալներին տրված իրավունքների հավասարակշռմանը, ինչպես տանտերերի, այնպես էլ վարձակալների արդար դատաքննության երաշխիքներին, ինչպես նաև վտարման դեմ վարձակալների երաշխիքներին, խտրականության բացառման հարցերին և այլն:

320. Առաջին գործը, որը վերաբերում է տանտերերի և վարձակալների գույքային իրավունքների հավասարակշռմանը, [Ջեյմսը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության \[James and Others v. the United Kingdom\]](#), 1986., գործն է: Գործը վերաբերում էր քսան տարուց ավելի ժամկետով վարձակալության պայմանագրերով սահմանված՝ «Վարձակալության հարաբերությունների բարեփոխումների մասին» օրենքի ընդունումից հետո գույքի նկատմամբ ամբողջական սեփականության իրավունքը ձեռք բերելու վարձակալների իրավունքին: Դիմումատուները նշանակվել էին զգալի ժառանգության գույքի հավատարմագրային կառավարիչներ՝ համաձայն հողատեր ազնվականության անդամի թողած կտակի: Տվյալ գույքի որոշ վարձակալներ իրացրել են «Վարձակալության հարաբերությունների բարեփոխումների մասին» օրենքի համաձայն ձեռքբերման իրենց իրավունքները՝ այդպիսով զրկելով հավատարմագրային կառավարիչներին իրենց գույքային շահերից: Հավատարմագրային կառավարիչները բողոքել են, որ գույքի հարկադիր փոխանցումը և հետագայում ստացած փոխհատուցման չափը խախտել են իրենց իրավունքները:

321. Դատարանը բնական է համարել, որ սոցիալական և տնտեսական քաղաքականություններ իրականացնելիս օրենսդիր մարմինն տրամադրվող

հայեցողական լիազորությունների շրջանակը պետք է լայն լինի, և որ այն պետք է կատարի օրենսդիր մարմնի որոշումն այն մասին, թե ինչն է բխում «հանրային շահից», եթե այդ վճիռն ակնհայտորեն զուրկ չէ ողջամիտ հիմքերից ([Ջեյմսը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության \[James and Others v. the United Kingdom\]](#), 1986թ., § 46): Այն վճռել է, որ բնակարանային ոլորտում սոցիալական անարդարության մեղմացումը «Վարձակալության հարաբերությունների բարեփոխումների մասին» օրենքով հետապնդվող իրավաչափ նպատակ էր, որը գտնվում էր օրենսդիր մարմնի հայեցողական լիազորությունների շրջանակներում: Ինչ վերաբերում է պետության կողմից իրականացված միջոցների համաչափությանը, ապա Դատարանը գտել է, որ այս հանգամանքներում վարձակալներին ձեռքբերման իրավունք տրամադրելը ոչ անհիմն էր, ոչ էլ անհամաչափ, քանի որ օրենքով այս իրավունքը սահմանափակվում էր պակաս արժեքավոր գույքով, որոնք, օրենսդիր մարմնի կարծիքով, դժվարությունների ամենածանր դեպքեր էին ([Նույն տեղում](#), § 70, Կոնվենցիայի 14-րդ հոդվածի համար, § 77):

322. Նույն կերպ, [Մելլախերը և այլք ընդդեմ Ավստրիայի \[Mellacher and Others v. Austria\]](#) գործով, 1989թ., վարձատուները, որոնք տիրապետում էին մի քանի բազմաբնակարան շենքերի կամ ունեին սեփականության մասնաբաժին դրանցում, բողոքել են, որ «Վարձակալության մասին» օրենքով վարձավճարի օրենքով սահմանված նվազեցման ներմուծումը խախտում էր Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը: Վիճարկվող օրենսդրության գնահատման ժամանակ Դատարանն ընդունել է ազգային օրենսդիր մարմնի հայեցողական լիազորությունների լայն շրջանակն ինչպես հանրային մտահոգության խնդիրը բացահայտելու, այնպես էլ այն լուծելու համար ընդունված սոցիալ-տնտեսական քաղաքականության զարգացման համար անհրաժեշտ միջոցները որոշելու հարցում, այս դեպքում՝ բնակարանային ոլորտում: Դատարանը գտել է, որ Ավստրիայի օրենսդիր մարմինը ողջամիտ կերպով եկել է այն եզրակացության, որ սոցիալական արդարությունը պահանջում էր նվազեցնել սկզբնական վարձավճարները, և որ օրենքով պայմանավորված վարձավճարների նվազեցումները թեև Էական էին, պարտադիր չէ, որ անհամաչափ բեռ դնեին վարձատուների վրա ([Նույն տեղում](#), § 57): Բացի այդ, վարձակալության նկատմամբ վերահսկողության համատեքստում, սակայն այն դեպքերում, երբ վարձակալության առարկան նվազախմբի կողմից օգտագործվող տարածքն էր,

Դատարանն ընդունել է, որ ակումբի մշակութային և սոցիալական դերը հանրային շահերից էր բխում. այնուամենայնիվ, դրա աստիճանը զգալիորեն պակաս էր, քան այլ դեպքերում, և հետևաբար չէր արդարացնում այդքան էական նվազեցումն ազատ շուկայում վարձակալության արժեքի համեմատ (*Բրեդշոուն և այլք ընդդեմ Մայթայի* [Bradshaw and Others v. Malta], 2018թ., § 58):

323. Եվ հակառակը, ավելի վերջերս՝ 2012 թվականին քննված *Լինդհայմը և այլք ընդդեմ Նորվեգիայի* [Lindheim and Others v. Norway] գործով, «Հողի վարձակալության մասին» օրենքում կատարված փոփոխությունների համաձայն բնակելի տների կամ հանգստյան տների համար օգտագործվող հողերի վարձակալներին իրավունք տրվեց անորոշ ժամկետով երկարաձգելու իրենց վարձակալության պայմանագիրը նույն պայմաններով, ինչ նախորդ վարձակալության պայմանագիրը: Վարձակալները խնդրել էին, որ իրենց վարձատուները վարձակալության պայմանագրերը երկարաձգեն նույն պայմաններով, ինչ նախորդ վարձակալության պայմանագրերն էին՝ առանց վարձավճարի ավելացման: Դատարանը գտել է, որ օրենսդրությամբ հետապնդվող նպատակը, մասնավորապես՝ ֆինանսական միջոցներ չունեցող վարձակալների շահերի պաշտպանությունը, իրավաչափ էր, քանի որ 2002 թվականին վարձավճարի նկատմամբ վերահսկողության վերացումն էականորեն ազդել էր բազմաթիվ անպատրաստ վարձակալների վրա՝ կտրուկ բարձրացնելով նրանց հողի վարձավճարը:

Այնուամենայնիվ, միջոցների համաչափության առնչությամբ Դատարանը վճռել է, որ քանի որ սեփականատերերին պարտադրված հողի վարձակալության պայմանագրերի երկարաձգումը եղել է անորոշ ժամկետով՝ առանց վարձավճարի էական ավելացման հնարավորության, հողի իրական արժեքը նշանակալություն չի ունենա այդպիսի վարձակալության պայմանագրերով վարձավճարի չափի գնահատման ժամանակ: Բացի այդ, միայն վարձակալները կարող էին որոշել դադարեցնելու վարձակալության պայմանագրերը, ինչպես նաև ազատ էին վարձակալության իրավունքը զիջելու երրորդ կողմերին, և վարձակալի կողմից զիջման մասով սեփականության իրավունքի ցանկացած փոփոխություն չէր ազդի վարձավճարի չափի վրա, քանի որ վարձավճարի չափի նկատմամբ վերահսկողությունն ուժի մեջ կմնար անորոշ ժամկետով: Այս գործոնները փաստացի զրկում էին սեփականատերերին իրենց գույքից օգտվելու հնարավորությունից, այդ թվում՝ այն արդար շուկայական արժեքով տնօրինելու

հնարավորությունից: Հետևաբար Դատարանը եզրակացրել է, որ ֆինանսական և սոցիալական բեռը դրվել է միայն վարձատուների վրա, և վճռել է, որ օրենսդրությամբ խախտվել է իրենց սեփականության պաշտպանության մասով սեփականատերերի իրավունքը ([Նույն տեղում](#), §§ 128-134):

324. [«Կարիբու հիմնադրամ»-ն ընդդեմ Նորվեգիայի \[The Karibu Foundation v. Norway\]](#) գործով, 2022թ., §§ 75-94, Դատարանը հետագայում առանձնացրել է այս սկզբունքը: [Լինդհայմը և այլք ընդդեմ Նորվեգիայի \[Lindheim and Others v. Norway\]](#) գործով Դատարանի կայացրած վճռին ի պատասխան՝ Նորվեգիայի խորհրդարանը փոփոխություններ է կատարել «Հողի վարձակալության մասին» 1996 թվականի օրենքում (2004 թվականի փոփոխություններով)՝ վարձատուներին իրավունք տալով պահանջել տարեկան վարձավճարի ճշգրտում: Դիմումատուն ձգտում էր բարձրացնել որոշակի բնակարանների բնակիչների՝ հողի վարձակալության վարձավճարը: Վարձակալներն առարկել են պահանջին՝ հղում անելով վերոնշյալ օրենքում ինդեքսավորված «վարձավճարի վերին շեմին»՝ գումար, որն այդ ժամանակ արդեն գերազանցում էր նրանց հողի վարձավճարի չափը, և պնդել են, որ գործը տարբերվում էր [Լինդհայմի և այլոց](#) գործից: Դատարանը գտել է, որ [Լինդհայմի և այլոց](#) գործով իր կողմից տրված կոնկրետ գնահատականն ուղղակիորեն կիրառելի չէր այնքանով, որքանով սույն գործը վերաբերում էր այդ վճռից հետո ընդունված օրենսդրության կիրառմանը: Ակնհայտ էր նաև, որ օրենսդիր մարմինը ձգտել էր ամբողջությամբ իրականացնել Դատարանի եզրակացությունները և մանրակրկիտ վերանայել էր Կոնվենցիայի պահանջներն օրենսդրության վերջնական մշակման ժամանակ: Ավելին, հետագայում Կոնվենցիայի պահանջները ենթարկվել էին լայնածավալ դատական վերանայման (երեք մակարդակով) ինչպես ընդհանուր առմամբ, այնպես էլ դիմումատու կազմակերպության կոնկրետ հանգամանքների լույսի ներքո:

325. [Էդվարդսն ընդդեմ Մալթայի \[Edwards v. Malta\]](#) գործով, 2006թ., Դատարանը գտել է, որ տեղի է ունեցել խախտում՝ դիմումատու սեփականատիրոջ իրավունքների իրացման նկատմամբ կիրառված սահմանափակումների հիման վրա: Նրա՝ վարձակալությամբ տրվող բազմաբնակարան շենքը և դրան կից տարածքը բռնագրավվել էին կառավարության կողմից՝ անօթևաններին բնակարանով ապահովելու համար: Սեփականատերը բողոքել է, որ գրեթե 30 տարի զրկված է եղել իր սեփականությունից, և որ վարձավճարը, որը նա ստանում էր որպես փոխհատուցում, ծիծաղելիորեն ցածր էր շուկայական գնի համեմատ:

Դատարանը նշել է, որ պետության կողմից սեփականատիրոջ գույքի բռնագրավմամբ սեփականատիրոջը, որը որևէ ազդեցություն չունի վարձակալի ընտրության կամ վարձակալության պայմանագրի որևէ էական պայմանի վրա, պարտադրվել էին հարկադիր վարձակալական հարաբերություններ վարձակալի հետ: Բացի այդ, որպես փոխհատուցում սահմանված վարձավճարի չափը բավարար չէր սեփականատիրոջ կողմից իր գույքից շահույթ ստանալու օրինական շահը բավարարելու համար: Հետևաբար բռնագրավումն անհամաչափ և չափազանց մեծ բեռ էր դրել սեփականատիրոջ վրա, որը ստիպված էր զգալի չափով կրել ուրիշներին բնակարանով ապահովելու սոցիալական և ֆինանսական ծախսերը (*Նույն տեղում*, § 78):

326. *«Իմոբիլիարե Սաֆֆի»-ն ընդդեմ Իտալիայի* [ՄԴ] [*Immobiliare Saffi v. Italy* [GC]] գործով, 1999թ., § 56, ինչպես նաև բազմաթիվ հետագա գործերով Դատարանը գտել է, որ տեղի է ունեցել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում՝ կապված վարձակալների վտարման համար չափազանց երկար սպասման ժամանակահատվածի հետ (Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ *Էդոարդո Պալումբոն ընդդեմ Իտալիայի* [*Edoardo Palumbo v. Italy*], 2000թ., §§ 45-46):

327. Համանման կերպով, արդար դատաքննության պատշաճ երաշխիքների բացակայության առնչությամբ Դատարանն *Ամատո Գաուչին ընդդեմ Մալթայի* [*Amato Gauci v. Malta*] գործով, 2009թ., § 63, որը վերաբերում էր վարձակալության ժամկետի ավարտից հետո սեփականատիրոջ կողմից իր տունը վերադարձնելու անհնարինությանը և գույքի համար արդար և համարժեք վարձավճար ստանալու նրա իրավունքի խախտմանը, գտել է, որ տեղի է ունեցել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

328. Ինչ վերաբերում է վտարման մասով վարձակալների երաշխիքներին, ապա Դատարանը *Զոննորսն ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Connors v. the United Kingdom*] գործով, 2004թ., §§ 81-84, որով քննարկվում էր գնչուական կենսակերպը, և *Մքքենն ընդդեմ Միացյալ Թագավորության* [*McCann v. the United Kingdom*] գործով, 2008թ., § 53, Կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն սահմանել է այն սկզբունքը, որ յուրաքանչյուր անձ, որը գտնվում է իր տունը կորցնելու վտանգի առջև, պետք է ունենա անկախ տրիբունալի կողմից որոշված միջոցի համաչափության իրավունք, նույնիսկ եթե ներպետական իրավունքի համաձայն

բնակության իրավունքը դադարեցվել է: [Քոննորսն ընդդեմ Միացյալ Թագավորության \[Connors v. the United Kingdom\]](#) գործով, 2004թ., § 100, գտել են, որ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն որևէ առանձին հարց չէր առաջանում:

329. [Իվանովան և Չերկեզովն ընդդեմ Բուլղարիայի \[Ivanova and Cherkezov v. Bulgaria\]](#) գործով, 2016թ., ներպետական իշխանությունները կարգադրել էին քանդել այն տունը, որտեղ դիմումատուները՝ տարեց չամուսնացած զույգը, ապրում էր երկար տարիներ միայն այն հիմքով, որ այն անօրինական էր, քանի որ կառուցվել էր առանց շինարարական թույլտվության: Դատարանը գտել է, որ դիմումատուներն իրենց տրամադրության տակ չեն ունեցել ընթացակարգ, որը նրանց հնարավորություն կտար պատշաճ կերպով ուսումնասիրելու այն տան նախատեսված քանդման միջոցի համաչափությունը, որտեղ նրանք ապրում էին, իրենց անձնական հանգամանքների լույսի ներքո, և որ տեղի կունենար 8-րդ հոդվածի խախտում, եթե քանդման կարգադրությունը կատարվեր առանց այդպիսի ուսումնասիրության ([նույն տեղում](#), §§ 61-62): Այնուամենայնիվ, Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն խախտում չէր հայտնաբերվել, քանի որ տունը գիտակցաբար կառուցվել էր առանց թույլտվության և հետևաբար ներպետական շինարարական կանոնակարգերի կոպիտ խախտմամբ ([նույն տեղում](#), § 75):

330. [Բայկինը և այլք ընդդեմ Ռուսաստանի \[Baykin and Others v. Russia\]](#) գործը, 2020թ., վերաբերում էր ստորգետնյա խողովակաշարի մոտ գտնվող տան քանդման (և դրա բնակիչների վտարման) մասին ներպետական դատարանի որոշմանը, որով այն ճանաչվել էր ապօրինի շինություն, քանի որ շենքի և խողովակաշարի միջև 100 մ անվտանգ հեռավորությունը չէր պահպանվել: Դատարանը գտել էր, որ տեղի էր ունեցել խախտում՝ այդպիսի միջամտության համար հստակ և կանխատեսելի իրավական հիմքի բացակայության պատճառով ([նույն տեղում](#), §§ 70-74): Հակառակը, [Ալիֆ Ահմադովը և այլք ընդդեմ Ադրբեջանի \[Alif Ahmadov and Others v. Azerbaijan\]](#) գործով, 2023թ., §§ 36-46, Դատարանը դիմումատուների բողոքը հայտարարել էր *ratione materiae* անընդունելի. ներպետական դատարանները սահմանել էին, որ ինքնակամ կառույցները չէին կարող լինել գույքային իրավունքի առարկա, և գործի հանգամանքներն ընդհանուր առմամբ դիտարկվելով՝ դիմումատուներին չէին տրամադրում Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանված նյութական շահ:

331. Ավելին, *Խ.Լ.Ս.-ն ընդդեմ Իսպանիայի* (որոշում) [*J.L.S. v. Spain (dec.)*] գործով, 1999թ., որով զինծառայող դիմումատուին զինվորական բնակարան էր ստացել Մադրիդում՝ ստորագրելով հատուկ վարչական ձև, այլ ոչ թե վարձակալության պայմանագիր, ինչպես նաև մի շարք այլ գործերով, որոնք նույնպես վերաբերում էին սոցիալիզմից շուկայական տնտեսության անցնող պետությունների վերափոխմանը և փոփոխվող պայմաններին (*Կոզլովսն ընդդեմ Լատվիայի* (որոշում) [*Kozlovs v. Latvia (dec.)*], 2000թ., *Կովալենոկն ընդդեմ Լատվիայի* (որոշում) [*Kovalenok v. Latvia (dec.)*], 2001թ., *Յ.Ֆ.-ն ընդդեմ Սլովակիայի* (որոշում) [*H.F. v. Slovakia (dec.)*], 2003թ., *Բունևացն ընդդեմ Սլովենիայի* (որոշում) [*Bunjevaca v. Slovenia (dec.)*], 2006թ.), Դատարանը հետևել է Հանձնաժողովի կողմից *Դուրինին ընդդեմ Իտալիայի* [*Durini v. Italy*] գործով, 2014թ., սահմանված ընդհանուր սկզբունքին, որի համաձայն՝ դիմումատուին չպատկանող կոնկրետ սեփականությունում ապրելու իրավունքը չի համարվում «գույք» Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով:

332. Մի շարք գործերով, որոնք վերաբերում էին դիմումատուներին պետական կամ սոցիալական բնակարանային իրավունքների տրամադրման մասին վերջնական դատական որոշումների չկատարմանը, հիմնականում Ռուսաստանի Դաշնության դեմ, Դատարանը հիշեցրել է, որ «պահանջը» Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով կարող է համարվել «գույք», եթե այն բավարար չափով հիմնավորված է դրա կիրառումն ապահովելու համար: Դատարանը գտել է, որ կատարման ենթակա վճիռների ուժով, որոնք դիմումատուներին իրավունք էին տալիս ստանալու բնակարանային վկայագիր և դրան հաջորդող՝ այսպես կոչված «սոցիալական վարձակալության պայմանագիր» կամ այլ կերպ վերահաստատում էին նրանց բնակարանային իրավունքը, դիմումատուներն ունեին նյութական ակտիվ ձեռք բերելու հաստատված «իրավաչափ ակնկալիք»: Արձանագրվել է Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում (*Տետերինին ընդդեմ Ռուսաստանի* [*Teteriny v. Russia*], 2005թ., §§ 48-50, *Մալինովսկին ընդդեմ Ռուսաստանի* [*Malinovskiy v. Russia*], 2005թ., §§ 44-46, *Իլյուշկինը և այլք ընդդեմ Ռուսաստանի* [*Ilyushkin and Others v. Russia*], 2012թ., §§ 49 և 58, *Ակիմովան ընդդեմ Ադրբեջանի* [*Akimova v. Azerbaijan*], 2007թ., §§ 40-41, *Գերասիմովը և այլք ընդդեմ Ռուսաստանի* [*Gerasimov and Others v. Russia*], 2014թ., §§ 182-83, *Կուկալոն ընդդեմ Ռուսաստանի* [*Kukalo v. Russia*], 2005թ., § 61, *Սիպչենկոն ընդդեմ Ռուսաստանի* [*Sypchenko v. Russia*], 2007թ., § 45): Բացի այդ, *Օլարոն և այլք ընդդեմ Մոլդովայի*

[*Olaru and Others v. Moldova*] գործով, 2009թ., §§ 54-57, Դատարանը գտել է, որ պետական տեղական մարմինների համար դատարանի վերջնական վճիռները կատարելու անհնարինությունը, որոնց համաձայն նրանց կարգադրվում էր դիմումատուներին սոցիալական բնակարաններ տրամադրել, համակարգային բնույթ էր կրում:

333. *Չոկոնտիո Ապպին ընդդեմ Ֆրանսիայի* [*Tchokontio Happi v. France*] գործով, 2015թ., §§ 59-61, Դատարանը գործի փաստերը տարբերակել է վերոնշյալ՝ *Տետերինին ընդդեմ Ռուսաստանի* [*Teteriny v. Russia*], 2005թ., և *Օլարուն և այլք ընդդեմ Մոլդովայի* [*Olaru and Others v. Moldova*], 2005թ., գործերից: Հիմնվելով *Դուրինին ընդդեմ Իտալիայի* (որոշում) [*Durini v. Italy (dec.)*], 2014թ., և *Խ.Լ.Ս.-ն ընդդեմ Իսպանիայի* (որոշում) [*J.L.S. v. Spain (dec.)*], 1999թ., գործերի վրա՝ դատական արակտիկայի համաձայն (տե՛ս «Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի կիրառելիությունը. «գույք»» վերտառությամբ գլուխը) Դատարանը գտել է, որ վերջնական վճռով ոչ թե պահանջվել է, որ իշխանությունները բնակարանի սեփականության իրավունքը շնորհեն դիմումատուին, այլ այն հասանելի դարձնեն նրան: Ճիշտ է, դիմումատուն կարող էր ձեռք բերել բնակարանի սեփականության իրավունք որոշակի պայմաններում: Այնուամենայնիվ, իշխանություններն այն վաճառելու որևէ իրավական պարտավորություն չեն ունեցել: Հետևաբար նա չուներ նյութական ակտիվ ձեռք բերելու իրավաչափ ակնկալիք, և Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն ներկայացված նրա բողոքը մերժվել է որպես *ratione materiae* անհամատեղելի (թեև արձանագրվել է 6-րդ հոդվածի խախտում):

334. Ավելին, մի քանի գործերով Դատարանը քննել է նախկին Հարավսլավիայի «հատուկ պաշտպանված վարձակալության» համակարգից բխող իրավիճակներ, որոնք ունեին որոշակի առանձնահատկություններ սովորական վարձակալության համեմատ: Իրավահաջորդ պետություններն ընդունել են տարբեր իրավական լուծումներ՝ ընդհանուր առմամբ «հատուկ պաշտպանված վարձակալությունը» փոխակերպելով տարբեր աստիճաններով պաշտպանված վարձակալության: *Բլեչիչն ընդդեմ Խորվաթիայի* [ՄԴ] [*Blečić v. Croatia [GC]*] գործով, 2006թ., § 92, և *Բերգեր-Կրալ և այլք ընդդեմ Սլովենիայի* [*Berger-Krall and Others v. Slovenia*] գործով, 2014թ., § 135, Դատարանն անհրաժեշտ չի համարել որոշել, թե արդյոք «հատուկ պաշտպանված վարձակալությունը» համարվում է

«գույք», թե՛ ոչ, քանի որ գործերը լուծվել են այլ հիմքերով:

335. *Գաչեշան ընդդեմ Խորվաթիայի* (որոշում) [*Gaćeša v. Croatia* (dec.)], 2008թ., գործով Դատարանը վճռել է, որ քանի որ Խորվաթիայում հատուկ պաշտպանված վարձակալությունը վերացվել էր նախքան Խորվաթիայի կողմից Կոնվենցիան վավերացվելը, այն պարտավոր չի եղել որոշելու՝ արդյոք այդպիսի վարձակալությունն ինքնին կարող էր համարվել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանված «գույք», թե՛ ոչ: Այնուամենայնիվ, *Մագոն և այլք ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի* [*Mago and Others v. Bosnia and Herzegovina*], 2012թ., գործով Դատարանը վճռել է, որ «հատուկ պաշտպանված վարձակալությունը» համարվում է «գույք», քանի որ Բոսնիա և Հերցեգովինայում այդպիսի վարձակալության իրավունք ունեցող անձինք, որպես կանոն, իրավունք ունեին վերադարձնելու պատերազմից առաջ իրենց ունեցած բնակարանները և այնուհետև գնել դրանք շատ բարենպաստ պայմաններով: Դատարանն այդ գործը տարբերակել է *Գաչեշան ընդդեմ Խորվաթիայի* (որոշում) [*Gaćeša v. Croatia* (dec.)], 2008թ., գործից այն հիմքով, որ Խորվաթիայում հատուկ պաշտպանված վարձակալությունն ունեցող անձինք այլևս չէին կարող գնել իրենց բնակարանները մինչև Խորվաթիայի կողմից Կոնվենցիան և դրա արձանագրությունները վավերացվելը:

336. *Հուտեն-Չապսկան ընդդեմ Լեհաստանի* [ՄԴ] [*Hutten-Czapska v. Poland* [GC]], 2005թ., նշանակալի գործով Դատարանն առաջին անգամ քննել է իրավիճակը մեդալի հակառակ կողմից այն սեփականատերերի իրավունքների մասով, որոնց վերադարձվել էր նախորդ ռեժիմի ժամանակ բռնագրավված գույքը, և որոնք բողոքել էին վարձակալության նկատմամբ վերահսկողության ծրագրերից: Այդ ժամանակից սկսած՝ Դատարանը քննել է այլ նմանատիպ գործեր, ինչպիսիք են *Բիտտոն և այլք ընդդեմ Սլովակիայի* [*Bittó and Others v. Slovakia*], 2014թ., *Ստատիլեոն ընդդեմ Խորվաթիայի* [*Statileo v. Croatia*], 2014թ., և «*Ռ&Լ, Էս.ար.օ.*»-ն և այլք ընդդեմ Չեխիայի Հանրապետության [*R & L, s.r.o., and Others v. the Czech Republic*], 2014թ., գործերը: Ընդհանուր առմամբ վարձակալության նկատմամբ վերահսկողությունն անդամ պետությունների կողմից գործողության մեջ է դրվել նախորդ ռեժիմի անկումից հետո: Այդ սեփականության բնակարանների վարձակալներին, որոնց շնորհվել էր վարձակալության արտոնյալ իրավունք, թույլատրվել էր մնալ բնակարաններում նախորդ ռեժիմի փլուզումից հետո, ընդ որում, պետությունը կարգավորում էր վարձավճարի չափը, որը սովորաբար

շուկայական գներից շատ ավելի ցածր էր: Վերոնշյալ բոլոր գործերով Դատարանը գտել է, որ սեփականատերերն ստիպված են եղել կրել անհամաչափ բեռ, և համարել է, որ տեղի է ունեցել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում (համեմատե՞ք տնտեսական և սոցիալական այլ հանգամանքներում [Ջեյմսը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության](#) [James and Others v. the United Kingdom], 1986թ., և [Մելախերը և այլք ընդդեմ Ավստրիայի](#) [Mellacher and Others v. Austria], 1989թ., գործերը): 2014 թվականի «*Ռ&L, Էս.ար.օ.*»-ն և [այլք ընդդեմ Չեխիայի Հանրապետության](#) [R & L, s.r.o., and Others v. the Czech Republic] հայելային գործով Դատարանը հետևաբար վճռել է, որ ներպետական դատարանի որոշումն առ այն, որ դիմումատունն՝ մասնավոր վարձակալը, պետք է վճարեր ավելի բարձր վարձավճար սկզբնապես վարձավճարների վերահսկողության պետական ծրագրի շրջանակներում վարձակալած բնակարանը զբաղեցնելու համար, թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում չէր (տե՛ս նաև [Պարիժեկն ընդդեմ Չեխիայի Հանրապետության](#) [Pařízek v. the Czech Republic], 2023թ., §§ 51-60):

337. Նույն կերպ, [Ռադովիչին և Ստանեսկուն ընդդեմ Ռումինիայի](#) [Radovici and Stănescu v. Romania], 2006թ., գործով բնակարանների սեփականատերերը վարձակալության նոր պայմանագրեր են առաջարկել այդ բնակարանները զբաղեցնող վարձակալներին, որոնք նախկինում ունեցել են պետական վարձակալության պայմանագրեր: Վարձակալները հրաժարվել են ստորագրել վարձատուների առաջարկած վարձակալության պայմանագրերը: Այնուհետև վարձատուները դիմել են վտարման որոշումներ ստանալու համար, որոնք մերժվել են վարձատուների կողմից իրավական ձևականությունները չկատարվելու պատճառով: Լրացուցիչ հետևանք էր վարձակալների կողմից վարձակալության պայմանագրերի ինքնաշխատ երկարաձգումը: Արձանագրվել է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

338. [Կասմին ընդդեմ Ալբանիայի](#) [Kasmi v. Albania] գործով, 2020թ., §§ 76, 79 և 85, դիմումատունն սկսել է քաղաքացիական վարույթ՝ վտարելու վարձակալներին նախկինում ազգայնացված գույքից, որը վերադարձվել էր իր ընտանիքին: Ներպետական դատարանները գտել են, որ վարձակալներից երեքը (չորսից) «օրենքով անօթևան» համարվող անձինք էին և օգտվում էին հատուկ պաշտպանությունից: Հաշվի առնելով պետության սոցիալ-տնտեսական հանգամանքները համապատասխան ժամանակահատվածում՝ Դատարանն ընդունել է, որ հասարակության խոցելի հատվածին, ինչպիսիք են թոշակառուները,

և բնակչության պակաս ապահովված անդամներին բնակարանով ապահովելը ծառայում էր իրավաչափ նպատակի: Ինչ վերաբերում է համաչափության վերլուծությանը, ապա արձանագրվել է խախտում օրենքով սահմանված վարձակալության պայմանագրերի, դիմումատուի կողմից այդպիսի պայմանագրերը լուծելու իրավունքը պաշտպանող համարժեք մեխանիզմների բացակայության, օրենքով սահմանված ցածր վարձավճարի չափի և այնպիսի երկարատև անորոշության պատճառով, որում դիմումատուն հայտնվել էր:

339. *Վիշինսկին ընդդեմ Լեհաստանի* [Wyszyński v. Poland] գործով, 2022թ., §§ 36 և 40-41, որով վարձակալը, որը բնակարանը զբաղեցրել էր առանց վավեր սեփականության իրավունքի, վտարման մասին որոշումից հետո շարունակել էր մնալ դիմումատուի բնակարանում ավելի քան չորսուկես տարի, Դատարանը գտել է, որ տեղի է ունեցել խախտում՝ հաշվի առնելով, որ ներպետական դատարանների կողմից դատավարության կողմին առաջադրված պահանջները՝ պատասխանատվության գնահատման չափանիշների և ապացուցման բեռի վերաբերյալ, չափազանց մեծ բեռ էին, որը, ըստ էության, զրկել էր դիմումատուին կրած վնասի համար փոխհատուցում ստանալու իրավունքից:

340. Վերջապես, բնակարանային ապահովմանն առնչվող հայեցակետերից մեկը, այն է՝ նույնիսկ իրենց բնակելի շենքերը մատակարարող ջեռուցման կենտրոնացված համակարգից անջատված բնակարանների սեփականատերերի կողմից ջեռուցման մասնավոր մատակարարներին վճարման ենթակա՝ պետության կողմից սահմանված մշտական վճարը քննարկման առարկա էր *Ստրեզովսկին և այլք ընդդեմ Հյուսիսային Մակեդոնիայի* [Strezovski and Others v. North Macedonia] գործով, 2020թ., §§ 82-88: Դատարանը գտել է, որ տեղի է ունեցել խախտում՝ յուրաքանչյուր առանձին դեպքում ջեռուցման անուղղակի օգտագործման մասով որևէ օբյեկտիվ գնահատականի բացակայության, ինչպես նաև ներպետական դատարանների կողմից բավարար ընթացակարգային երաշխիքների կիրառման միջոցով առկա մրցակցող շահերի միջև անհրաժեշտ արդար հավասարակշռություն չապահովելու պատճառով:

2. Սոցիալական բարեկեցության վերաբերյալ գործեր

341. Հանձնաժողովը և Դատարանը քննել են մի շարք գործեր, որոնք վերաբերում են սոցիալական ապահովության/պետական նպաստների տարբեր տեսակների, այդ թվում՝ կենսաթոշակային իրավունքին: Համապատասխան նախադեպային իրավունքի համապարփակ ամփոփման համար տե՛ս *Բելանե*

Նագին ընդդեմ Հունգարիայի [ՄԴ] [*Bélané Nagy v. Hungary* [GC]], 2016թ., §§ 80-89, *Յավաշը և այլք ընդդեմ Թուրքիայի* [*Yavaş and Others v. Turkey*], 2019, §§ 39-43:

342. Որպես ընդհանուր դիտարկում Դատարանը վճռել է, որ սկզբունքորեն չի կարող փոխարինել ազգային իշխանություններին՝ սոցիալական աջակցության ծրագրի շրջանակներում հասանելի ֆինանսական նպաստների մակարդակը գնահատելիս կամ վերանայելիս (*Լարիոշինան ընդդեմ Ռուսաստանի* (որոշում) [*Larioshina v. Russia* (dec.)], 2002թ., *Շեյկոն ընդդեմ Լիտվայի* [*Šeiko v. Lithuania*], 2020թ., § 32):

343. Ինչ վերաբերում է կենսաթոշակային իրավունքներին, ապա թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով, որպես այդպիսին, չի երաշխավորվում կոնկրետ գումարի չափով կենսաթոշակ ստանալու որևէ իրավունք (ի թիվս այլ գործերի, տե՛ս *Սկորկիևիչն ընդդեմ Լեհաստանի* (որոշում) [*Skórkiewicz v. Poland* (dec.)], 1999թ., *Յանկովիչն ընդդեմ Խորվաթիայի* (որոշում) [*Janković v. Croatia* (dec.)], 2000թ., *Կունան ընդդեմ Գերմանիայի* (որոշում) [*Kuna v. Germany* (dec.)], 2001թ., *Լենցն ընդդեմ Գերմանիայի* (որոշում) [*Lenz v. Germany* (dec.)], 2001թ., *Բլանկո Կալեյասն ընդդեմ Իսպանիայի* (որոշում) [*Blanco Callejas v. Spain* (dec.)], 2002թ., *Կյարտան Ասմունդսոնն ընդդեմ Իսլանդիայի* [*Kjartan Ásmundsson v. Iceland*], 2004թ., § 39, *Ապոստոլակիսն ընդդեմ Հունաստանի* [*Apostolakis v. Greece*], 2009թ., § 36, *Վիեչորեկն ընդդեմ Լեհաստանի* [*Wieczorek v. Poland*], 2009թ., § 57, *Պուլենն ընդդեմ Ֆրանսիայի* (որոշում) [*Poulain v. France* (dec.)], 2011թ., *Մաջիոն և այլք ընդդեմ Իտալիայի* [*Maggio and Others v. Italy*], 2011թ., § 55, *Վալկովը և այլք ընդդեմ Բուլղարիայի* [*Valkov and Others v. Bulgaria*], 2011թ., § 84), պատասխանող պետությունից բացի այլ պետությունում իրականացված գործունեության համար կենսաթոշակի որևէ իրավունք և ի հարկե, կենսաթոշակի որևէ իրավունք ընդհանրապես (*Աունոլան ընդդեմ Ֆինլանդիայի* (որոշում) [*Aunola v. Finland* (dec.)], 2001թ., *Դա Սիլվա Կարվալյու Ռիկուն ընդդեմ Պորտուգալիայի* (որոշում) [*Da Silva Carvalho Rico v. Portugal* (dec.)], 2015թ., § 30): Եթե պետությունը, այնուամենայնիվ, որոշի հաստատել կենսաթոշակի ապահովման կարգ, ապա այն պետք է դա անի այնպես, որ այդ կարգը համատեղելի լինի Կոնվենցիայի 14-րդ հոդվածի հետ (*Ստեքը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության* [ՄԴ] [*Stec and Others v. the United Kingdom* [GC]], 2006թ., § 53, *Անդրեյևան ընդդեմ Լատվիայի* [ՄԴ] [*Andrejeva v. Latvia* [GC]], 2009թ., § 77, *Սավիցկիսն ընդդեմ Լատվիայի* [ՄԴ]

[*Savickis and Others v. Latvia* [GC], 2002թ., § 180):

344. Ինչ վերաբերում է տարիքային կենսաթոշակային ծրագրին հետևելու պարտավորությանը, ապա Դատարանն *Ակերմանն ու Ֆուրմանն ընդդեմ Գերմանիայի* (որոշում) [*Ackermann and Fuhrmann v. Germany* (dec.)] գործով, 2013թ., քննարկել է այն հարցը, թե արդյոք պարտադիր վճարումները չափազանց մեծ բեռ են դրել դիմումատուների վրա, և գործը համարել է ակնհայտորեն անհիմն: Այն հաշվի է առել այն փաստը, որ վճարը կազմել է նրանց համախառն եկամտի մոտավորապես 19 տոկոսը և հավասար մասնաբաժիններով վճարվել է դիմումատուների և նրանց գործատուների կողմից:

345. Այն փաստը, որ սոցիալական ապահովագրության նպաստը կարող է կրճատվել կամ դադարեցվել, չի խոչընդոտում այն համարել «գույք» թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով, քանի դեռ այն չեղյալ չի հայտարարվել (*Մոսկալն ընդդեմ Լեհաստանի* [*Moskal v. Poland*], 2009թ., § 40. տե՛ս «Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի կիրառելիությունը. «գույք»» վերտառությամբ գլուխը): Դատարանն ընդունել է սոցիալական ապահովագրության վճարումների կրճատման հնարավորությունը որոշակի հանգամանքներում: Որոշելիս, թե այդպիսի միջոցները համաչափ են, Դատարանը հաշվի է առել հետևյալ գործոնները՝ կրճատման նպատակը, այն փաստը, որ իշխանությունները ձգտել են սահմանափակել սոցիալական ապահովագրության ծրագրի մասով ցանկացած կորուստ, այն, որ դիմումատուները շարունակել են ստանալ ծերության կենսաթոշակներ, այն, որ նրանք խտրականության չեն ենթարկվել կամ չեն գտնվել որևէ անբարենպաստ իրավիճակում՝ սովորական ծրագրից օգտվող կենսաթոշակառուների համեմատությամբ, այն, որ միջոցները հետադարձ ուժ չեն ունեցել, ինչպես նաև այն, որ դիմումատուների աշխատանքային ստաժի տևողությունը հաշվի է առնվել նրանց՝ օրենքով սահմանված վճարման ժամկետները հաշվարկելու ժամանակ (*Յավաշը և այլք ընդդեմ Թուրքիայի* [*Yavaş and Others v. Turkey*], 2019թ., §§ 47-50): Այն փաստը, որ անձը, թեև հարկադրաբար, միացել է պետական սոցիալական ապահովագրության համակարգի և կազմում է դրա մասը, պարտադիր չէ, որ նշանակի, որ այդ համակարգը չի կարող փոփոխվել վճարումներ ստանալու իրավասության պայմանների կամ նպաստի կամ կենսաթոշակի չափի առումով (*Ռիչարդսոնն ընդդեմ Միացյալ Թագավորության* (որոշում) [*Richardson v. the United Kingdom* (dec.)], 2012թ., § 17, *Քարսոնը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության* [ՄԴ])

[[Carson and Others v. the United Kingdom](#) [GC]], 2010թ., §§ 85-89):

346. Այնուամենայնիվ, եթե նպաստի չափը կրճատվում է, կամ այն դադարեցվում է, ապա դա սովորաբար համարվում է միջամտություն «գույքի» նկատմամբ, որի համար անհրաժեշտ է հիմնավորում՝ ելնելով ընդհանուր շահերից ([Կյարտան Ասմունդսոնն ընդդեմ Իսլանդիայի](#) [[Kjartan Ásmundsson v. Iceland](#)], 2004թ., §§ 39-40, [Ռասմուսենն ընդդեմ Լեհաստանի](#) [[Rasmussen v. Poland](#)], 2009թ., § 71, [Մոսկալն ընդդեմ Լեհաստանի](#) [[Moskal v. Poland](#)], 2009թ., §§ 51 և 64, [Գրուդիչն ընդդեմ Սերբիայի](#) [[Grudić v. Serbia](#)], 2012թ., § 72, [Հոգենդայքն ընդդեմ Նիդերլանդների](#) (որոշում) [[Hoogendijk v. the Netherlands](#) (dec.)], [Վալկովը և այլք ընդդեմ Բուլղարիայի](#) [[Valkov and Others v. Bulgaria](#)], 2011թ., § 84, [Ֆիլիպոուն ընդդեմ Կիպրոսի](#) [[Philippou v. Cyprus](#)], 2016թ., § 59):

347. Դատարանի համար կարևոր նկատառում է այն, թե արդյոք դիմումատուի՝ սոցիալական ապահովագրության ծրագրից օգուտներ ստանալու իրավունքը խախտվել է այնպես, որ հանգեցրել է նրա կենսաթոշակային իրավունքների էության վնասի ([Դոմալևսկին ընդդեմ Լեհաստանի](#) (որոշում) [[Domalewski v. Poland](#) (dec.)], 1999թ., [Կյարտան Ասմունդսոնն ընդդեմ Իսլանդիայի](#) [[Kjartan Ásmundsson v. Iceland](#)], 2004թ., § 39, [Վիեչորեկն ընդդեմ Լեհաստանի](#) [[Wieczorek v. Poland](#)], 2009թ., § 57, [Ռասմուսենն ընդդեմ Լեհաստանի](#) [[Rasmussen v. Poland](#)], 2009թ., § 75, [Վալկովը և այլք ընդդեմ Բուլղարիայի](#) [[Valkov and Others v. Bulgaria](#)], 2011թ., §§ 91 և 97, [Մաջիոն և այլք ընդդեմ Իտալիայի](#) [[Maggio and Others v. Italy](#)], 2011թ., § 63, [Ստեֆանետին և այլք ընդդեմ Իտալիայի](#) [[Stefanetti and Others v. Italy](#)], 2014թ., § 55): Ինչ վերաբերում է համաչափության վերլուծությանը ([Դա Սիլվա Կարվալյու Ռիկուն ընդդեմ Պորտուգալիայի](#) (որոշում) [[Da Silva Carvalho Rico v. Portugal](#) (dec.)], 2015թ., § 42), ապա Դատարանն ընդհանուր առմամբ նկատել է, որ կենսաթոշակից ամբողջությամբ զրկելը հավանական է, որ կհանգեցնի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտման ([Ստեֆանետին և այլք ընդդեմ Իտալիայի](#) [[Stefanetti and Others v. Italy](#)], 2014թ., § 59, [Ապոստոլակիսն ընդդեմ Հունաստանի](#) [[Apostolakis v. Greece](#)], 2009թ., § 41), և որ հակառակը, կենսաթոշակի չափի կրճատման կիրառումը, որը Դատարանը համարում է ողջամիտ և համաչափ, պարտադիր չէ, որ հանգեցնի այդպիսի խախտման ([Դա Սիլվա Կարվալյու Ռիկուն ընդդեմ Պորտուգալիայի](#) (որոշում) [[Da Silva Carvalho Rico v. Portugal](#) (dec.)], 2015թ., § 42, [Արրասը և այլք ընդդեմ Իտալիայի](#) [[Arras and Others v. Italy](#)], 2012թ., § 82, [Պուլենն ընդդեմ Ֆրանսիայի](#) (որոշում) [[Poulain](#)

v. France (dec.)], 2011թ., *Ֆիլիպոուն ընդդեմ Կիպրոսի* [*Philippou v. Cyprus*], 2016թ., § 68, *Բելանե Նագին ընդդեմ Հունգարիայի* [ՄՊ] [*Bélané Nagy v. Hungary* [GC]], 2016թ., § 117):

348. Այնուամենայնիվ, Դատարանի կողմից սոցիալական ապահովագրության համատեքստում իրականացված արդար հավասարակշռության ստուգումը վերացականորեն հիմնված չէ բացառապես կրած կորստի չափի կամ տոկոսի վրա: Դատարանը բոլոր համապատասխան տարրերը քննում է գործին հատուկ նախապատմության համատեքստում (*Բելանե Նագին ընդդեմ Հունգարիայի* [ՄՊ] [*Bélané Nagy v. Hungary* [GC]], 2016թ., § 117, և *Ստեֆանետին և այլք ընդդեմ Իտալիայի* [*Stefanetti and Others v. Italy*], 2014թ., § 59): Սոցիալական ապահովագրության ոլորտում միջամտության համաչափության գնահատմանը վերաբերող կոնկրետ գործոնները ներառում են իրավունքի ցանկացած կորստի խտրական բնույթը (*Կյարտան Ասմունդսոն ընդդեմ Իսլանդիայի* [*Kjartan Ásmundsson v. Iceland*], 2004թ., § 43), պայմանի կամայական բնույթը (*Կլայն ընդդեմ Ավստրիայի* [*Klein v. Austria*], 2011թ., § 55), դիմումատուի բարեխղճությունը (*Մոսկալ ընդդեմ Լեհաստանի* [*Moskal v. Poland*], 2009թ., § 44, *Չակարևիչ ընդդեմ Խորվաթիայի* [*Čakarević v. Croatia*], 2018թ., §§ 60-65, *Կասարին ընդդեմ Իտալիայի* [*Casarin v. Italy*], 2021թ., § 74), դիմումատուի դատապարտումը, որը հանգեցրել է վնասի փոխհատուցման՝ ամեն ամիս նրա ծերության կենսաթոշակի վրա արգելանք դնելու միջոցով, և այն փաստը, որ նա զրկված չէր ապրուստի բոլոր միջոցներից (*Շեյկոն ընդդեմ Լիտվայի* [*Šeiko v. Lithuania*], 2020թ., §§ 32-35):

349. Սոցիալական ապահովագրության իրավունքների համատեքստում արդար հավասարակշռության գնահատման գործընթացում ընթացակարգային երաշխիքների կարևորությունն արտացոլվում է այն փաստում, որ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում է արձանագրվել այն դեպքում, երբ դիմումատուին սոցիալական ապահովագրության նպաստ շնորհելու մասին որոշումը հետագայում չեղյալ է հայտարարվել դիմումատուի սկզբնական գործի վերագնահատման հիման վրա (*Մոսկալ ընդդեմ Լեհաստանի*, 2009թ., § 56):

350. Նպաստների կասեցման իրավիճակներում անցումային ժամանակահատվածի առկայությունը, երբ իրավասու անձինք կարող էին հարմարվել նոր ծրագրին, համաչափության գործոններից մեկն է, որը գործում է

պատասխանող պետության օգտին (*Լակիչևիչը և այլք ընդդեմ Չեռնոգորիայի և Սերբիայի* [Lakićević and Others v. Montenegro and Serbia], 2011թ., § 72, *Մոսկալն ընդդեմ Լեհաստանի* [Moskal v. Poland], 2009թ., § 74, որտեղ դիմումատուն գրեթե հաջորդ օրն ամբողջությամբ զրկվել էր իր՝ վաղ թոշակի անցնելու կապակցությամբ նշանակված կենսաթոշակից, որը կազմում էր նրա եկամտի միակ աղբյուրը, և հազիվ թե կարողանար հարմարվել փոփոխությանը):

351. Եթե նպաստների դադարեցման կամ կասեցման մասին որոշումը հետադարձ ուժ ունի, ապա դա այն գործոնն է, որը պետք է հանգամանորեն հաշվի առնել միջամտության համաչափությունը գնահատելիս, *Լակիչևիչը և այլք ընդդեմ Չեռնոգորիայի և Սերբիայի* [Lakićević and Others v. Montenegro and Serbia]<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-107937>, 2011թ., § 71, *Մոսկալն ընդդեմ Լեհաստանի* [Moskal v. Poland], 2009թ., § 69, անհապաղ ուժի մեջ մտնելու համար: Դիմումատուին արդեն շնորհված կենսաթոշակի՝ հետադարձ ուժով կատարված վերահաշվարկի վերաբերյալ գործով Դատարանը վճռել է, որ «Պետության հնարավոր շահագրգռվածությունը «Կենսաթոշակների մասին» օրենքի միատեսակ կիրառումն ապահովելու հարցում չպետք է հանգեցնել դիմումատուի օգտին արդեն իսկ կայացված դատական որոշման՝ հետադարձ ուժով կատարված վերահաշվարկի: Հետին ամսաթվով վերահաշվարկը, որի հետևանքն էր վճարման ենթակա գումարների նվազեցումը, անհատական և չափազանց մեծ բեռ էր դիմումատուի համար և անհամատեղելի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի հետ» (*Բուլգակովան ընդդեմ Ռուսաստանի* [Bulgakova v. Russia], 2007թ., § 47): Մինչև նպաստների վճարումը դադարեցնելու կամ դրանք կրճատելու մասին որոշումը ստացված ցանկացած գումար վերադարձնելու պարտավորությունը, եթե դրանք խարդախությամբ չեն ձեռք բերվել, կարևոր է համաչափության գնահատման համար (*Իվաշկևիչն ընդդեմ Լեհաստանի* [Iwaszkiewicz v. Poland], 2011թ., § 60, համեմատության և հակադրության համար՝ *Խրոուստն ընդդեմ Չեխիայի Հանրապետության (որոշում)* [Chroust v. the Czech Republic (dec.)], 2006թ., *Մոսկալն ընդդեմ Լեհաստանի* [Moskal v. Poland], 2009թ., § 70): *Ռոմևան ընդդեմ Դյուսիսային Մակեդոնիայի* [Romeva v. North Macedonia] գործով, 2019թ., §§ 78 և 88, դիմումատուն հետադարձ ուժի սկզբունքով զրկվել է տարիքային կենսաթոշակից, որը նա ստանում էր յոթ տարի, ու նրանից պահանջվել էր ստացված գումարները վերադարձնել՝ դիմումատուի կողմից կենսաթոշակի իրավունքի սկզբնական գնահատման ընթացքում Հիմնադրամի կողմից թույլ

տրված սխալի պատճառով: Գտնելով, որ տեղի է ունեցել խախտում, Դատարանը պահանջել է, որ կառավարությունը ձեռնպահ մնա չվճարված գումարը բռնագանձելուց:

352. Ժամանակի անցնելը կարող է հատուկ նշանակություն ունենալ սոցիալական ապահովագրության նպաստների իրավական գոյության և բնույթի համար: Սա վերաբերում է ինչպես օրենսդրության փոփոխություններին, որոնք կարող են ընդունվել հասարակական փոփոխություններին և սոցիալական օգնության կարիք ունեցող անձանց կատեգորիաների վերաբերյալ փոփոխվող տեսակետներին ի պատասխան, այնպես էլ անհատական իրավիճակների զարգացմանը (*Վեչորեկն ընդդեմ Լեհաստանի [Wieczorek v. Poland]*, 2009թ., § 67):

353. Երբ կենսաթոշակի վճարումն ինքնաբար է դադարեցվել զուտ քրեական գործով դիմումատուի դատապարտման հիման վրա, և այդպիսով նա զրկվել է իր կողմից ձեռք բերված բոլոր իրավունքներից, Դատարանը գտել է, որ տեղի է ունեցել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում (*Ապոստոլակիսն ընդդեմ Հունաստանի [Apostolakis v. Greece]*, 2009թ., § 39): Եվ հակառակը, այն գտել է, որ նույն հիմքով նպաստի 65%-ով կրճատումը որևէ խնդիր չի առաջացրել, քանի որ հասանելի էր եռաստիճան դատական ընթացակարգ, որի շրջանակներում այդ կրճատումը կարող էր վիճարկվել, և այս ամենը՝ հաշվի առնելով դիմումատուի հանցանքի բացառիկ ծանրությունը (*Բանֆիլդն ընդդեմ Միացյալ Թագավորության (որոշում) [Banfield v. the United Kingdom (dec.)]*, 2005թ., *Ֆիլիպոուն ընդդեմ Կիպրոսի [Philippou v. Cyprus]*, 2016թ., §§ 70, 71 և 74):

354. Այն կենսաթոշակային իրավունքների նկատմամբ արտոնյալ դիրքի օգտագործմանը վերաբերող կոնկրետ հարցը, որից անցյալում օգտվում էին կոմունիստական վերնախավի անդամները, քաղաքական ուստիկանությունը կամ զինված ուժերը հետկոմունիստական եվրոպական երկրներում, մի քանի անգամ քննվել է Դատարանի կողմից (*Գորեցկին ընդդեմ Գերմանիայի (որոշում) [Goretzky v. Germany (dec.)]*, 2000թ., *Լեսինգը և Ռայխելթն ընդդեմ Գերմանիայի (որոշում) [Lessing and Reichelt v. Germany (dec.)]*, 2012թ., *Շվենգելն ընդդեմ Գերմանիայի (որոշում) [Schwengel v. Germany (dec.)]*, 2000թ., *Դոմալևսկին ընդդեմ Լեհաստանի (որոշում) [Domalewski v. Poland (dec.)]*, 1999թ., *Յանկովիչն ընդդեմ Խորվաթիայի (որոշում) [Janković v. Croatia (dec.)]*, 2000թ.): Մի շարք գործերով գտել են, որ նպաստների չափի կրճատումը՝ պայմանավորված այն դերով, որը ստացողները

Նախկինում՝ կոմունիստական համակարգի շրջանակներում խաղացել են, համապատասխանում է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածին, մասնավորապես՝ այն պատճառով, որ այն միջոցները, որոնց վերաբերյալ բողոքել են, չեն խաթարել իրավունքների փաստացի եռությունը՝ կրճատումները չեն գերազանցել միջինում 25%-ից 30%-ը, և դիմումատուները շարունակել են ստանալ Լեհաստանում միջինից բարձր կենսաթոշակ (*Ցիխուպեկը և այլք ընդդեմ Լեհաստանի* (որոշում) [*Cichopek and Others v. Poland* (dec.)], 2013թ., §§ 152 և 156): Այն դեպքերում, երբ դիմումատուները կորցրել են սոցիալական ապահովագրության նպաստ ստանալու իրենց արտոնյալ իրավունքն այն օրենսդրության արդյունքում, որը նախատեսված էր դատապարտելու քաղաքական դերը, որը կոմունիստական անվտանգության ծառայությունները խաղացել են կոմունիստական ռեժիմի քաղաքական ընդդիմությունը ճնշելու գործում, Դատարանն այդպիսի գործերը հայտարարել է անընդունելի՝ հաշվի առնելով այն փաստը, որ սոցիալական ապահովագրության նպաստները չեն տուժել անհամաչափ կամ կամայական ձևով (*Սկուրկևիչն ընդդեմ Լեհաստանի* (որոշում) [*Skórkiewicz v. Poland* (dec.)], 1999թ., *Ստիկն ընդդեմ Լեհաստանի* [*Styk v. Poland*], Հանձնաժողովի որոշում, *Բիենկովսկին ընդդեմ Լեհաստանի* [*Bienkowski v. Poland*], Հանձնաժողովի որոշում, 1998թ.): Այդպիսի դեպքերում ընդունվել է, որ միջոցները հետապնդել են իրավաչափ նպատակ՝ չնայած այն հանգամանքին, որ անցել է զգալի ժամանակ՝ գրեթե քսան տարի, կոմունիստական ռեժիմի փլուզման և ներպետական օրենսդրության ընդունման միջև, որով նախկինում արտոնյալ անձինք զրկվում էին իրենց ձեռք բերած իրավունքներից (*Ցիխուպեկը և այլք ընդդեմ Լեհաստանի* (որոշում), 2013թ., § 118):

355. Ավելին, նպաստները, որոնք հիմնված են առողջական խնդիրների պատճառով վճարովի աշխատանքը շարունակելու հայցվորի անկարողության հետ, նույնպես կարող են չեղյալ հայտարարվել կամ կրճատվել, նույնիսկ եթե դրանք երկար ժամանակ վճարվել են դրա իրավունքն ունեցող անձին: Բնական է, որ տարբեր առողջական խնդիրներ, որոնք սկզբնապես անհնար են դարձնում այդ խնդիրներով տառապող անձանց աշխատանքը, ժամանակի ընթացքում կարող են փոփոխվել՝ հանգեցնելով կամ անձի առողջության վատթարացման, կամ բարելավման: Պետությունների համար թույլատրելի է ձեռնարկել հաշմանդամության կենսաթոշակ ստացող անձանց բժշկական վիճակը վերագնահատելուն ուղղված միջոցներ՝ պարզելու համար, թե արդյոք նրանք շարունակում են անաշխատունակ լինել՝ պայմանով, որ այդ վերագնահատումը

համապատասխանի օրենքին և ուղեկցվի բավարար ընթացակարգային երաշխիքներով: Եթե հաշմանդամության կենսաթոշակների իրավունքները պահպանվեին այն իրավիճակներում, երբ դրանք ստացողները ժամանակի ընթացքում դադարեին համապատասխանել կիրառելի իրավական պահանջներին, դա կհանգեցներ նրանց անհիմն հարստացման: Բացի այդ, դա անարդար կլիներ սոցիալական ապահովագրության համակարգ վճարումներ կատարող անձանց նկատմամբ, մասնավորապես՝ նրանց նկատմամբ, ում մերժել էին նպաստ տրամադրել՝ համապատասխան պահանջները չբավարարելու պատճառով: Ավելի ընդհանուր առմամբ այդ կերպ կթուլատրվեր նաև պետական միջոցների ոչ պատշաճ բաշխում, և այդ բաշխումը կհակասեր այն նպատակներին, որոնց ենթադրաբար անհրաժեշտ էր հասնել հաշմանդամության կենսաթոշակների միջոցով (*Վիչորեկն ընդդեմ Լեհաստանի* [Wieczorek v. Poland], 2009թ., § 67, *Իվաշկևիչն ընդդեմ Լեհաստանի* [Iwaszkiewicz v. Poland], 2011թ., § 51):

356. Այնուամենայնիվ, համարվել է, որ հաշմանդամության կենսաթոշակի կասեցումը, որը պայմանավորված էր դիմումատուի աշխատունակության սխալ գնահատման և հետագայում իրավական լուծում չտրամադրվելու հետ, որը դիմումատուին զրկել էր փոխհատուցում ստանալու հնարավորությունից (*res judicata* սկզբունքի հիման վրա)՝ չնայած սոցիալական արդարության և արդարացիության սկզբունքների պահպանումն ապահովելու նպատակով սխալ եզրակացությունից շեղվելու համար համապատասխան և բավարար պատճառների առկայությանը, անհամաչափ բեռ էր դրել դիմումատուի վրա (*Գրոբելնին ընդդեմ Լեհաստանի* [Grobelyny v. Poland], 2020թ., §§ 67-71):

357. Ինչ վերաբերում է սոցիալական բարեկեցության տարբեր տեսակի նպաստներին, ապա *Կրայնցն ընդդեմ Սլովենիայի* [Krajnc v. Slovenia] (2017թ., §§ 49-51) գործով, որով քննարկվում էր օրենսդրական բարեփոխման արդյունքում դիմումատուի սպասման ժամանակահատվածի ընթացքում տրամադրվող նպաստը շատ ավելի ցածր հաշմանդամության նպաստով փոխարինելու հարցը, Դատարանը համարել է, որ դիմումատուն հայտնվել է առանձնապես անհուսալի իրավիճակում, և որ ստիպված է եղել կրել հաշմանդամության նպաստի զգալի մասը կորցնելու անհամաչափ բեռը: *Ֆեդուլովն ընդդեմ Ռուսաստանի* [Fedulov v. Russia] գործով, 2019թ., §§ 76-79, որը վերաբերում էր հաշմանդամություն ունեցող անձի՝ անվճար դեղորայք ստանալու իրավունքին, Դատարանը գտել է, որ իրավիճակը պայմանավորված չէր օրենսդրության որևէ փոփոխությամբ: Դիմումատուն բավարարել է տվյալ նպաստը ստանալու բոլոր չափանիշները, դրա

անընդմեջ ստացումը խիստ կարևոր նշանակություն է ունեցել դիմումատուի կյանքի համար, իսկ պետական մարմինների մերժումը՝ միջոցների բացակայության հիմքով, ի վերջո, դժվար էր համաձայնեցնել օրենքի գերակայության հետ: Այս եզրակացության արդյունքում համաչափության գնահատման իրականացումն ավելորդ էր դարձել:

358. Համարվել է, որ տարբեր խիստ միջոցների կիրառման հետևանքով որոշ սոցիալական ապահովագրության նպաստների և աշխատավարձի իրավունքների կրճատումները համապատասխանել են թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածին, ընդ որում, Դատարանը հաշվի է առել բողոքարկվող միջոցների ընդհանուր համատեքստը (տնտեսական ճգնաժամ) և դրանց շրջանակը (կենսաթոշակի չափը մնացել էր անփոփոխ, վճարումը կրճատվել էր երեք տարի ժամկետով. հետևաբար, միջամտությունը սահմանափակվել է թե՛ ժամանակի, թե՛ շրջանակի առումով. [Դա Կոնսեյսաու Մատեուշը և Սանտուշ Ժանուարիուս ընդդեմ Պորտուգալիայի](#) (որոշում) [*Da Conceição Mateus and Santos Januário v. Portugal* (dec.)], 2013թ., §§ 28-29): Համանման գործով, որը վերաբերում էր, *inter alia*, կենսաթոշակների կրճատումներին, ինչը հիմնավորված էր Հունաստանի նորագույն պատմության մեջ նախադեպը չունեցող բացառիկ տնտեսական ճգնաժամի առկայությամբ, Դատարանը գտել է, որ միջոցների համաչափությունը հարցեր չէր առաջացնում թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի պահանջների համաձայն ([Կուֆակին և Ադեդին ընդդեմ Հունաստանի](#) (որոշում) [*Koufaki and Adedy v. Greece* (dec.)], 2013թ., §§ 46-49 (տե՛ս «խիստ խնայողության միջոցները» վերտառությամբ գլուխը):

359. Դատարանն ընդունել է այն տարբերակումը, որը որոշ Պայմանավորվող պետություններ կենսաթոշակային նպատակներով սահմանում են քաղաքացիական ծառայողների և մասնավոր աշխատողների միջև ([Մաթեիսն ընդդեմ Գերմանիայի](#) (որոշում) [*Matheis v. Germany* (dec.)], 2005թ., կերակրողին կորցնելու դեպքում տրամադրվող կենսաթոշակի վերաբերյալ, [Ակերմանը և Ֆուրմանն ընդդեմ Գերմանիայի](#) (որոշում) [*Ackermann and Fuhrmann v. Germany* (dec.)], 2013թ., [Վալկովը և այլք ընդդեմ Բուլղարիայի](#) [*Valkov and Others v. Bulgaria*], 2011թ., § 117, [Պանֆիլեն ընդդեմ Ռումինիայի](#) (որոշում) [*Panfile v. Romania* (dec.)], 2012թ., § 28, և համեմատաբար վերջերս՝ [Գիավին ընդդեմ Հունաստանի](#) [*Giavi v. Greece*], 2013թ., § 52, [Ֆաբիանն ընդդեմ Հունգարիայի](#) [ՄԴ] [*Fábián v. Hungary* [GC]], 2017թ., §§ 131-132): Այս մոտեցման հիմքում ընկած տրամաբանությունը

երկու համակարգերի միջև կառուցվածքային տարբերությունների մեջ է, ինչն էլ իր հերթին արդարացնում է տարբեր կարգավորումները (*Մաթեիսն ընդդեմ Գերմանիայի* (որոշում) [*Matheis v. Germany* (dec.)], 2005թ., և ընդհանուր առմամբ առավելապես ապահովագրված անձանց տարբեր կատեգորիաների միջև եղած տարբերությունների մասով՝ *Զարսոնը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության* [ՄԴ] [*Carson and Others v. the United Kingdom* [GC]], 2010թ., § 84) (*Ֆաբիանսն ընդդեմ Հունգարիայի* [ՄԴ] [*Fábián v. Hungary* [GC]] գործի համար տե՛ս 14-րդ հոդվածի վերաբերյալ ենթագլուխը):

360. Միայն այն փաստը, որ նոր, պակաս բարենպաստ օրենսդրությամբ կենսաթոշակային նպաստի իրավունք ունեցող անձինք կենսաթոշակային իրավունքների ձեռքբերման հետ կապված պայմանների հետադարձ ուժով իրականացված վերաորակավորման միջոցով զրկվում են դրանցից, *per se* բավարար չէ խախտում արձանագրելու համար: Օրենքով սահմանված կենսաթոշակային կարգավորումները կարող են փոփոխվել, և օրենսդիր մարմինը չի կարող զրկված լինել գործող օրենքներից բխող կենսաթոշակային իրավունքները հետադարձ ուժ ունեցող նոր դրույթների միջոցով կարգավորելու հնարավորությունից (*Խոնիակինան ընդդեմ Վրաստանի* [*Khoniakina v. Georgia*], 2012թ., §§ 74 և 75, ինչպես նաև *Արասը և այլք ընդդեմ Իտալիայի* [*Arras and Others v. Italy*], 2012թ., § 42, *Սուխոբոկովն ընդդեմ Ռուսաստանի* [*Sukhobokov v. Russia*], 2006թ., § 26, 6-րդ հոդվածի համաձայն դիմումատուի կենսաթոշակի վճարման ապառքի փոխհատուցման մասին վերջնական վճռի չկատարման վերաբերյալ, *Բակրաձեն և այլք ընդդեմ Վրաստանի* (որոշում) [*Bakradze and Others v. Georgia* (dec.)], 2013թ., § 19):

361. Առողջության ապահովագրության ծրագրի շրջանակում ապահովագրված անձի ակնկալիքը, որ իր կամ իր առողջության ապահովագրության պայմանագիրը կպահպանվի կամ կերկարաձգվի, չի համարվում գույք (*Ռամարը և Վան Վիլինգենսն ընդդեմ Նիդերլանդների* (որոշում) [*Ramaer and Van Villingen v. the Netherlands* (dec.)], 2012թ., § 81):

362. Երբ խոսքը վերաբերում է վճարման ենթակա գումարի նվազեցմանը, թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածին վերաբերող գործերում ընդհանուր առմամբ կիրառվող սկզբունքները հավասարապես վերաբերելի են նաև աշխատավարձերի կամ սոցիալական նպաստների դեպքում (*Սավիցկասը և այլք ընդդեմ Լիտվայի* (որոշում) [*Savickas and Others v. Lithuania* (dec.)], 2013թ., § 91,

Շտումերն ընդդեմ Ավստրիայի [ՄՊ] [*Stummer v. Austria* [GC]], 2011թ., § 82):

363. Բացի այդ, *Վալվերդե Դիգոնս ընդդեմ Իսպանիայի* [*Valverde Digon v. Spain*] գործով, 2023թ., §§ 76-81, և *Դոմենեկ Արադիլյան և Ռոդրիգես Գոնսալեսն ընդդեմ Իսպանիայի* [*Rodríguez González v. Spain*] գործով, 2023թ., §§ 107-112, Դատարանը վճռել է, որ թույլատրելիության նոր պահանջի անկանխատեսելի, հետադարձ ուժով կիրառման պատճառով ներպետական մարմինների կողմից դիմումատուներին կերակրողին կորցնելու դեպքում տրամադրվող կենսաթոշակի տրամադրման մերժումը հանգեցրել է Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտման:

364. Վերջապես, *Բերնոտաս ընդդեմ Լիտվայի* [*Bernotas v. Lithuania*] գործով, 2024թ., §§ 104-113, Դատարանը գտել, որ տեղի չի ունեցել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում այն դեպքում, երբ դիմումատուն պարտավորություն է ունեցել փոխհատուցելու սոցիալական ապահովության մարմիններին աշխատունակության կորստի հետ կապված կենսաթոշակը, որը վճարվել էր այն անձին, որին դիմումատուն պատահաբար վնասվածք էր հասցրել որսորդության ժամանակ տեղի ունեցած դժբախտ պատահարի արդյունքում: Դատարանը բավարարվել է, որ վարույթով ընդհանուր առմամբ դիմումատուին տրամադրվել է ողջամիտ հնարավորություն իր գործը համապատասխան մարմիններին ներկայացնելու համար՝ բախվող շահերի միջև արդար հավասարակշռություն հաստատելու նպատակով: Համաչափության գնահատման մեջ հաշվի են առնվել մի քանի տարրեր:

Է. Բանկային գործեր

365. Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը վկայակոչվել է մի շարք գործերով, որոնք վերաբերում էին դիմումատուների խնայողությունների արժեքի նվազման կամ իրենց խնայողությունները վերադարձնելու անհնարինության վերաբերյալ նրանց բողոքներին:

366. Խնայողական հաշիվները կարող են զգալիորեն արժեզրկվել գնաճի և տնտեսական բարեփոխումների արդյունքում: Դիմումատուների խնայողությունների արժեքի նվազմանն առնչվող գործերով, վերահաստատելով այն փաստը, որ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը չի ներառում սեփականությունն ձեռք բերելու իրավունքը (*Գրիշչենկոն ընդդեմ Ռուսաստանի* (որոշում) [*Grishchenko v. Russia (dec.)*], 2004թ.), Դատարանը վճռել է, որ

խնայողությունների համակարգված ինդեքսավորման միջոցով բանկային կամ ֆինանսական հաստատություններում ավանդադրված գումարների գնողունակությունը պահպանելու կամ գնաճի պատճառած վնասները փոխհատուցելու մասով պետությունների ընդհանուր պարտավորությունը չի կարող բխել այդ հոդվածից (*Գայդուկը և այլք ընդդեմ Ուկրաինայի* (որոշում) [*Gayduk and Others v. Ukraine* (dec.)], 2002թ., *Ապոլոնովն ընդդեմ Ռուսաստանի* (որոշում) [*Appolonov v. Russia* (dec.)], 2002թ., *Տոդորովն ընդդեմ Բուլղարիայի* (որոշում) [*Todorov v. Bulgaria* (dec.)], 2008թ., *Պոլտորաչենկոն ընդդեմ Ուկրաինայի* [*Poltorachenko v. Ukraine*], 2005թ., § 38, *Զբարանսկայան ընդդեմ Ուկրաինայի* (որոշում) [*Zbaranskaya v. Ukraine* (dec.)], 2005թ., *Շերստյուկն ընդդեմ Ուկրաինայի* (որոշում) [*Sherstyuk v. Ukraine* (dec.)], 2006թ., *Բոյաջյանն ընդդեմ Հայաստանի* [*Boyajyan v. Armenia*], 2011թ., § 54, *Ռյաբիխն ընդդեմ Ռուսաստանի* [*Ryabykh v. Russia*], 2003թ., § 63, *Դոլնեանուն ընդդեմ Մոլդովայի* [*Dolneanu v. Moldova*], 2007թ., § 31): Նույն կերպ, Կոնվենցիայով պետությունների վրա չեն դրվում գնաճի և տնտեսական այլ երևույթների հետևանքների մասով նրանց տնտեսական քաղաքականության առնչությամբ պարտավորություններ, կամ չի պահանջվում նրանցից շտկել այդպիսի իրավիճակներն օրենսդրության կամ դատական որոշման միջոցով (*Օ.Ն.-ն ընդդեմ Բուլղարիայի* (որոշում) [*O.N. v. Bulgaria* (dec.)], 2000թ.): Այն գործերով, որոնցով դիմումատուները պնդել են, որ դատական վարույթի չափազանց երկար տևողության և երկար ժամանակ տևած գնաճի հետևանքների պատճառով իրենց պահանջների իրական արժեքը զգալիորեն նվազել է, գտել են, որ պետության պատասխանատվություն առկա չէր, և բողոքները հայտարարվել են անընդունելի (*Կյոկսալն ընդդեմ Թուրքիայի* (որոշում) [*Köksal v. Turkey* (dec.)], 2013թ., § 38, *Գրոզևան ընդդեմ Բուլղարիայի* (որոշում) [*Grozeva v. Bulgaria* (dec.)], 2005թ., *Օ.Ն.-ն ընդդեմ Բուլղարիայի* (որոշում) [*O.N. v. Bulgaria* (dec.)], 2000թ.):

367. Դիմումատուի բաժնեմասերի արժեքի նվազմանը վերաբերող գործով, ինչպես նաև հաշվի առնելով այս ոլորտում Պայմանավորվող պետությունների հայեցողական լիազորությունների լայն շրջանակը՝ Դատարանը վճռել է, որ Լեհաստանի ազգային բանկի ձեռնարկած միջոցները, անկասկած, նպատակ ունեին պաշտպանելու բանկի այն հաճախորդների շահերը, որոնք իրենց ակտիվները վստահել էին բանկին, և խուսափելու այն ծանր ֆինանսական կորուստներից, որոնք բանկի սնանկացումը կարող էր առաջացնել իր հաճախորդների համար (*Օլչակն ընդդեմ Լեհաստանի* (որոշում) [*Olczak v. Poland*

(dec.), 2002թ.):

368. Բացի այդ, պետական իշխանությունների կողմից մասնավոր բանկի պետականացումը կարող է դիտարկվել որպես միջամտություն բանկի նախկին բաժնետերերի սեփականության իրավունքին (*«Սյուզեր և Էքսեն Յուլդինգ Ա.Շ.»-ն ընդդեմ Թուրքիայի* [Süzer and Eksen Holding A.Ş. v. Turkey], 2012թ., §§ 143-144): Դատարանը պետք է որոշի, թե արդյոք այդպիսի միջամտությունը համապատասխանում է օրինականության պահանջին, իրավաչափ նպատակի հետապնդմանը և հետապնդվող նպատակին համաչափ լինելուն: Երբ բանկի պետականացման մասին որոշումը հստակորեն կայացվում է որպես երկրում բանկային ոլորտը վերահսկելու միջոց, սեփականությունից զրկելը պետք է դիտարկվի որպես իրավաչափ նպատակի հետապնդում, և պետք է կիրառվի Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի երկրորդ պարբերությունը (*«Սյուզեր և Էքսեն Յուլդինգ Ա.Շ.»-ն ընդդեմ Թուրքիայի* <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-113828>, 2012թ., §§ 146-147): Գնահատելու համար, թե արդյոք այդպիսի միջամտությունը սեփականության իրավունքին համաչափ է հետապնդվող նպատակին, Դատարանը պետք է որոշի, թե արդյոք հաստատվել է արդար հավասարակշռություն համայնքի ընդհանուր շահերի պահանջների և համապատասխան անձանց հիմնարար իրավունքների պաշտպանության միջև (*«Ջընգըլլը Յուլդինգ Ա.Շ.»-ն և Ջընգըլլըօղլին ընդդեմ Թուրքիայի* [Cingilli Holding A.Ş. and Cingilloğlu v. Turkey], 2015թ., §§ 49-51):

369. Այնուամենայնիվ, *«Ջընգըլլը Յուլդինգ Ա.Շ.»-ն և Ջընգըլլըօղլին ընդդեմ Թուրքիայի* վերջին գործը, 2015թ., § 50, վերաբերում էր Բանկային ոլորտի կարգավորման և վերահսկողության խորհրդի որոշմամբ «Դեմիրբանկ»-ի (այդ ժամանակ Թուրքիայի հինգերորդ խոշորագույն մասնավոր բանկը) փոխանցմանը և վաճառքին: Դատարանը գտել է, որ տեղի է ունեցել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում՝ օրինականության սկզբունքի խախտման հիմքով, և ուստի այն չի շարունակել քննել միջամտության համաչափության հարցը: Արդարացի փոխհատուցման վերաբերյալ իր հետագա որոշման մեջ այն վճռել է, որ ներպետական իրավունքը՝ համապատասխան փոփոխություններով, հնարավորություն է տալիս պատշաճ փոխհատուցում ստանալ այն բանից հետո, երբ Դատարանը գտել է, որ տեղի է ունեցել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում, և ձեռնամուխ է եղել գործի մասնակի կասեցմանը (*սույն տեղում*, § 53):

370. *«Փրոջեքթ-Թրեյդ» ՍՊԸ-ն ընդդեմ Խորվաթիայի [Project-Trade d.o.o. v. Croatia]* գործով, 2020թ., Դատարանը գտել է, որ տեղի է ունեցել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում, երբ կառավարությունը որոշում է ընդունել «Խորվաթիայի բանկ»-ի վերականգնման և վերակառուցման մասին, որով չեղյալ են հայտարարվել և չեղարկվել են բանկի բաժնետերերին պատկանող բոլոր բաժնեմասերը: Դիմումատուն՝ «Խորվաթիայի բանկ»-ում 1251 բաժնեմաս ունեցող բաժնետիրական ընկերությունը, պնդել է, որ միջամտությունն իր գույքին չի ուղեկցվել կամայականության դեմ բավարար ընթացակարգային երաշխիքներով և հետևաբար թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով իրավաչափ չէր: Դատարանը համաձայնել է դիմումատուի հետ՝ գտնելով, որ տեղի է ունեցել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում՝ պետության կողմից այդ հոդվածով սահմանված ընթացակարգային պարտավորությունների խախտման հետ (*«Փրոջեքթ-Թրեյդ» ՍՊԸ-ն ընդդեմ Խորվաթիայի [Project-Trade d.o.o. v. Croatia]*, 2020թ., §§ 80-88, և 110):

371. Բանկային գործունեության լիցենզիայի չեղարկմանը վերաբերող վարույթի առնչությամբ Դատարանն ընդգծել է, որ «գույքից» անարգել օգտվելու իրավունքին ցանկացած միջամտություն պետք է ուղեկցվի ընթացակարգային երաշխիքներով, որոնք տվյալ ֆիզիկական կամ իրավաբանական անձին ողջամիտ հնարավորություն են տալիս իր գործը ներկայացնելու պատասխանատու մարմիններ՝ այս դրույթով երաշխավորված իրավունքներին միջամտող միջոցներն արդյունավետորեն վիճարկելու նպատակով: Պարզելու համար, թե արդյոք այս պայմանը կատարվել է, պետք է համակողմանիորեն դիտարկել կիրառելի դատական և վարչական ընթացակարգերը (*«Կապիտալ բանկ» ԲԸ-ն ընդդեմ Բուլղարիայի [Capital Bank AD v. Bulgaria]*, 2005թ., § 134, տե՛ս նաև *«Փրոջեքթ Թրեյդ» ՍՊԸ-ն ընդդեմ Խորվաթիայի [Project-Trade d.o.o. v. Croatia]*, 2020թ., § 82):

372. Բանկային հաշվի սառեցումը սովորաբար համարվում է սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողության միջոց (*Ռայմոնոն ընդդեմ Իտալիայի [Raimondo v. Italy]*, 1994թ., § 27, ակտիվների ժամանակավոր առգրավման վերաբերյալ՝ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների մասին օրենսդրության համաձայն դրանց բռնագրավման նպատակով, *Լուորդոն ընդդեմ Իտալիայի [Luordo v. Italy]*, 2003թ., § 67, *Վալենտինսն ընդդեմ Դանիայի [Valentin v. Denmark]*, 2009թ., §§ 67-72, սևանկացած անձանց իրենց սեփականությունը կառավարելու և տնօրինելու իրավունքից զրկելու

վերաբերյալ, *Կարահասանօղլուն ընդդեմ Թուրքիայի* [Karahasanoğlu v. Turkey], 2021թ., §§ 144 և 150-153, նախկին երկու հանրային բանկերի նախկին գործադիր տնօրեն և տնօրեն հանդիսացող դիմումատուի ակտիվները երկար ժամանակով սառեցնելու ժամանակավոր արգելքների և սահմանափակումները գնահատելու համար համապատասխան գործոնների վերաբերյալ, *Տրայկովսկին ընդդեմ Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության* (որոշում) [Trajkovski v. the former Yugoslav Republic of Macedonia], 2001թ., բանկային հաշիվների սառեցման վերաբերյալ, «*Ժողովրդավարության և մարդու իրավունքների ռեսուրսների կենտրոն»-ը և Մուստաֆան ընդդեմ Ադրբեջանի* [Democracy and Human Rights Resource Centre and Mustafayev v. Azerbaijan], 2021թ., § 66, մարդու իրավունքների պաշտպանի և նրա ոչ պետական կազմակերպության բանկային հաշիվների սառեցման վերաբերյալ): Դիմումատուների կողմից իրենց խնայողություններն ավելի քան քսան տարի դուրս բերել չկարողանալու և իրավիճակի բարդության պատճառով բանկային հաշիվների սառեցման հարցը քննվել է ընդհանուր կանոնի համաձայն՝ *Ալիշիչ և այլք ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի, Խորվաթիայի, Սերբիայի, Սլովենիայի և Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության* [ՄՊ] [Ališić and Others v. Bosnia and Herzegovina, Croatia, Serbia, Slovenia and the Former Yugoslav Republic of Macedonia [GC]] գործով 2014թ., § 99 (հետագա մանրամասների համար տե՛ս ստորև):

373. Բանկի նկատմամբ լուծարման վարույթ հարուցվելու դեպքում կառավարիչների բանկային հաշիվների սառեցումը կարող է համարվել օրինական և իրավաչափ նպատակ հետապնդող, քանի դեռ այն նպատակ ունի ապահովելու, որ անվճարունակ բանկի կառավարիչները չվատնեն իրենց ակտիվները՝ սպասելով հնարավոր քրեական մեղադրանքների կամ քաղաքացիական հայցերի՝ կապված այն եղանակի հետ, որով նրանք կառավարել են բանկը մինչև անվճարունակ դառնալը («*Առևտրի և զարգացման միջազգային բանկ» ԲԸ-ն և այլք ընդդեմ Բուլղարիայի* [International Bank for Commerce and Development AD and Others v. Bulgaria], 2016թ., § 123):

374. Բանկերի կայունությունը և նրանց ավանդատուների ու պարտատերերի շահերն արժանի են ուժեղացված պաշտպանության: Ազգային իշխանություններն ունեն հայեցողական լիազորությունների լայն շրջանակ այդպիսի հարցերը լուծելու եղանակի ընտրության հարցում («*Կապիտալ Բանկ» ԲԸ-ն ընդդեմ Բուլղարիայի*

[*Capital Bank AD v. Bulgaria*], 2005թ., § 136, *Կարահասանօղլուն ընդդեմ Թուրքիայի* [*Karahasanoğlu v. Turkey*], 2021թ., § 150): Սովորական հանգամանքներում բանկի կառավարիչների բանկային հաշիվների սառեցումը խիստ սահմանափակ՝ վեց ամիս ժամկետով կարող էր դիտարկվել որպես միջոց, որն այդ սահմաններում է և հետևաբար համարժեք է հետապնդվող նպատակին («*Առևտրի և զարգացման միջազգային բանկ» ԲԸ-ն և այլք ընդդեմ Բուլղարիայի* [*International Bank for Commerce and Development AD and Others v. Bulgaria*]<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-163353>, 2016թ., § 124):

375. Դատարանի կողմից քննված մի քանի գործեր վերաբերում էին «հին» արտարժույթով խնայողություններին, որոնք ավանդադրվել էին ՀՍՀՀ-ի ժամանակ և հետագայում սառեցվել էին: Անկախություն ձեռք բերելուց հետո ՀՍՀՀ-ի յուրաքանչյուր իրավահաջորդ պետություն գտել է տարբեր իրավական լուծում՝ նախկինում ՀՍՀՀ-ի կողմից երաշխավորված խնայողությունները կարգավորելու համար (տարբեր պատասխանող պետություններին վերաբերող կոնկրետ հանգամանքների ընդհանուր բնութագրի համար տե՛ս *Ալիշիչը և այլք ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի, Խորվաթիայի, Սերբիայի, Սլովենիայի և Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության* [ՄՊ] [*Ališić and Others v. Bosnia and Herzegovina, Croatia, Serbia, Slovenia and the Former Yugoslav Republic of Macedonia* [GC]], 2014թ., §§ 24-52): Այդ գործով «հին» արտարժույթով խնայողություններն անհասանելի էին դարձել այնպիսի գործոնների պատճառով, ինչպիսիք են համապատասխան բանկերում միջոցների բացակայությունը, օրենքի համաձայն հաշիվների սառեցման մասին դրույթների կիրառումը և ազգային իշխանությունների կողմից դիմումատուների իրավիճակում գտնվող ավանդատուներին իրենց խնայողությունները տնօրինելու հնարավորություն ընձեռող միջոցներ չձեռնարկելը:

376. Դատարանը վճռել է, որ ՀՍՀՀ-ի լուծարումից առաջ առևտրային բանկում ավանդադրված արտարժույթով խնայողություններից բխող պահանջները Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով «գույք» են (*Սուլյագիչն ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի* [*Suljagić v. Bosnia and Herzegovina*], 2009թ., §§ 34-36), ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության դեմ պահանջը՝ խնայողությունները նախկին ԽՍՀՄ-ի կողմից թողարկված պետական պրեմիում վարկային պարտատոմսերում (*Յուրի Լոբանովն ընդդեմ Ռուսաստանի* [*Yuriy Lobanov v. Russia*], 2010թ., §§ 32-34) կամ ԽՍՀՄ «խնայբանկ»-ի կողմից

թողարկված պարտատոմսերում և վկայականներում ներդնելու վերաբերյալ (*Բոյաջյանն ընդդեմ Հայաստանի* [Boyajyan v. Armenia], 2011թ., § 57): Նույն կերպ, տնտեսական արժեք ունեցող արժեթղթերը կարող են համարվել «գույք» (*Ջասինսկին և այլք ընդդեմ Լիտվայի* [Jasinskij and Others v. Lithuania], Հանձնաժողովի որոշում, 1998թ.):

377. Այնուամենայնիվ, ինչ վերաբերում է ԽՍՀՄ-ի ժամանակ լատվիացի դիմումատուների կողմից «Արտաքին տնտեսական գործունեության բանկ»-ում ավանդադրված՝ սառեցված արտարժույթով խնայողությունների մասով պահանջներին, Դատարանը դիմումատուների բողոքներն անընդունելի է հայտարարել, քանի որ Բանկի գործողությունները չէին կարող վերագրվել Լատվիային, որը երբեք որևէ նշան չէր ցուցաբերել այդպիսի պահանջներն ընդունելու կամ ճանաչելու վերաբերյալ (*«Լիկվիդեյամա փի/Էս Սելգա»-ն և Վասիլևսկան ընդդեմ Լատվիայի* (որոշում) [Likvidējamā p/s Selga and Vasiļevska v. Latvia (dec.)], 2013թ., §§ 94-113):

378. Այն գործերում, որոնցով օրենսդրական միջոցներն ուղղված էին «հին» արտարժույթով խնայողությունները պետական պարտատոմսերով վճարելուն, Դատարանը, հաշվի առնելով հանրային շահի և դիմումատուի և նույն իրավիճակում գտնվող բոլոր անձանց սեփականության իրավունքի միջև արդար հավասարակշռություն հաստատելու անհրաժեշտությունը, համարել է, որ ընտրված միջոցները համապատասխանում էին հետապնդվող իրավաչափ նպատակին հասնելուն (մասնավորապես՝ *Տրայկովսկին ընդդեմ Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության* (որոշում) [Trajkovski v. the former Yugoslav Republic of Macedonia (dec.)]<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-22308>, 2002թ.):

379. Անկախ նրանից, թե պետությունն ինչ միջոցներ է որոշել ձեռնարկել «հին» արտարժույթով խնայողությունների վճարման վերաբերյալ, օրենքի գերակայությունն ու օրինականության սկզբունքը պահանջում են, որ Պայմանավորվող կողմերը կանխատեսելի կերպով և հետևողականորեն հարգեն և կիրառեն իրենց կողմից ընդունված օրենքները: «Հին» արտարժույթով խնայողությունների վերաբերյալ պետության օրենսդրության թերի կիրառումը հանգեցրել է պատասխանող պետության կողմից այդ պարտավորության չկատարմանը (*Սուլյագիչն ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի* [Suljagić v. Bosnia and Herzegovina], 2009թ., § 57):

380. Գնահատելիս, թե արդյոք համայնքի ընդհանուր շահերի պահանջների և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև «արդար հավասարակշռություն» է հաստատված, Դատարանը պետք է ընդհանուր քննության ենթարկի վիճարկվող տարբեր շահերը՝ հաշվի առնելով, որ Կոնվենցիան նախատեսված է պաշտպանելու այն իրավունքները, որոնք «գործնական և արդյունավետ» են: Այդ համատեքստում հարկ է նշել, որ անորոշությունը, լինի դա օրենսդրական, վարչական, թե իշխանությունների կողմից իրականացված գործելակերպերից առաջացող, այնպիսի գործոն է, որը պետք է հաշվի առնել պետության վարքագիծը գնահատելիս: Անշուշտ, այն դեպքերում, երբ խոսքն ընդհանուր շահերին վերաբերող հարցի մասին է, պետական մարմինները պարտավոր են գործել ժամանակին, պատշաճորեն և հետևողականորեն: Թեև որոշ ձգձգումներ կարող են բացառիկ հանգամանքներում արդարացված լինել, Դատարանն այդ կոնկրետ գործով գտել է, որ դիմումատուները ստիպված են եղել չափազանց երկար սպասել: Սլովենիայի և Սերբիայի իշխանությունները, չնայած այս ոլորտում իրենց հայեցողական լիազորությունների լայն շրջանակին, արդար հավասարակշռություն չեն հաստատել համայնքի ընդհանուր շահերի և դիմումատուների գույքային իրավունքների միջև: Այս երկու պատասխանող պետությունների մասով հայտնաբերվել է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում (*Ալիշիչ և այլք ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի, Խորվաթիայի, Սերբիայի, Սլովենիայի և Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության* [ՄԴ] [*Ališić and Others v. Bosnia and Herzegovina, Croatia, Serbia, Slovenia and the Former Yugoslav Republic of Macedonia* [GC]], 2014թ., §§ 108 և 124-125):

381. Ձգձգումները կարևոր գործոն են գույքային իրավունքների նկատմամբ միջամտության հիմնավորվածությունը գնահատելիս: Թեև որոշ ուշացումներ կարող են արդարացված լինել բացառիկ հանգամանքների առաջացման հաշվառմամբ, այլ դեպքերում Դատարանը եզրակացրել է, որ դրանք չեն կարող հիմնավոր պատճառ լինել պետության կողմից դիմումատուներին գումարը չվերադարձնելու համար (*Ալիշիչ և այլք ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի, Խորվաթիայի, Սերբիայի, Սլովենիայի և Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության* [ՄԴ] [*Ališić and Others v. Bosnia and Herzegovina, Croatia, Serbia, Slovenia and the Former Yugoslav Republic of Macedonia* [GC]], 2014թ., § 108):

382. Պետությունների հայեցողական լիազորությունների շրջանակի սահմանափակում է առաջանում, երբ ազգային իշխանությունների կողմից ընդունված միջոցներն էապես սահմանափակում են դիմումատուի՝ դրամական միջոցները տնօրինելու իրավունքը և հանգեցնում են սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողության: Օրինակ, Դատարանը գտել է, որ օրենսդրական միջոցներն անբավարար են, եթե դրանք հանգեցնում են մի քանի ամսվա ձգձգումների (*Սուլյագիչն ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի* [Suljagić v. Bosnia and Herzegovina], 2009թ., § 64):

383. Բացի այդ, դիմումատուի օգտին վերջնական վճռի կատարումն ապահովելու անհնարինությունը միջամտություն էր «գույքից» անարգել օգտվելու նրա իրավունքի նկատմամբ «հին» արտարժույթով խնայողությունների համատեքստում (*Յելիչիչն ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի* [Jeličić v. Bosnia and Herzegovina], 2006թ., § 48):

384. Վերջապես, *Պինտարը և այլք ընդդեմ Սլովենիայի* [Pintar and Others v. Slovenia] գործը, 2021թ., վերաբերում էր Սլովենիայի բանկի կողմից 2013-2014 թվականներին մի քանի խոշոր սլովենական բանկերի նկատմամբ ձեռնարկված արտակարգ միջոցներին, որոնց արդյունքում չեղարկվել էին դիմումատուներին պատկանող բոլոր բաժնեմասերը կամ ստորադաս պարտատոմսերը (կիրառելիության համար տե՛ս վերևում՝ «Ընկերության բաժնեմասերը և ֆինանսական գործիքները» վերտառությամբ բաժինը)՝ առանց որևէ փոխհատուցման: Դատարանը գտել է, որ տեղի է ունեցել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում՝ հաշվի առնելով միջոցները վիճարկելու և (կամ) չեղարկված բաժնեմասերի ու պարտատոմսերի համար փոխհատուցում ապահանջելու որևէ ողջամիտ հնարավորության բացակայությունը: Հետևաբար դիմումատուների գույքի նկատմամբ միջամտությունը չի ուղեկցվել կամայականության դեմ բավարար ընթացակարգային երաշխիքներով և հետևաբար օրինական չէր: Ավելին, իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի տրամադրումը կապված էր ԵՄ իրավունքի տարբեր սկզբունքների պահպանմանը վերաբերող բարդ հարցերի հետ, այդ թվում՝ ԵՄ Արդարադատության դատարանի նախնական որոշման համատեքստում (*Սուլյն տեղում*, §§ 101 և 109-111):

Ը. Հարկումը

385. Հարկումը սկզբունքորեն միջամտություն է թիվ 1 արձանագրության 1 ին հոդվածի առաջին պարբերությամբ երաշխավորված իրավունքի նկատմամբ, քանի որ այն զրկում է տվյալ անձին գույքից, մասնավորապես՝ վճարման ենթակա գումարից (*Բուրդենն ընդդեմ Միացյալ Թագավորության* [ՄԴ] [*Burden v. the United Kingdom* [GC]], 2008թ., § 59, «Շպաչեկ» *ՍՊԸ-ն ընդդեմ Չեխիայի Հանրապետության* [Špaček, s.r.o., v. the Czech Republic], 1999թ., § 39, *Բեժանիչը և Բաշկարադն ընդդեմ Խորվաթիայի* [Bežanić and Baškarad v. Croatia], 2022թ., § 60):

386. Հարկման նպատակներով միջամտությունը, որպես կանոն, հիմնավորվում է սույն հոդվածի երկրորդ պարբերությամբ, որով բացահայտ նախատեսվում է բացառություն հարկերի կամ այլ վճարների վճարման մասով («Գասուս Դոսիեր և Ֆյորդերթեքնիք GmbH»-ն ընդդեմ Նիդերլանդների [Gasus Dosier — und Fördertechnik GmbH v. the Netherlands], 1995թ., § 59, «Եհովայի վկաներ» քրիստոնեական կրոնական կազմակերպությունն ընդդեմ Հայաստանի (որոշում) [Christian Religious Organization of Jehovah’s Witnesses v. Armenia (dec.)], 2020թ., § 43): Ներմուծված ապրանքների համար մաքսային տուրքերը կամ գանձումները պետք է համարվեն հարկման ոլորտին առնչվող հարցեր, որոնք պետական մարմինների բացառիկ իրավունքների հիմնական մասն են կազմում (*Կրաևան ընդդեմ Ուկրաինայի* [Krayeva v. Ukraine], 2022թ., § 28):

387. Այնուամենայնիվ, հարցը գտնվում է Դատարանի իրավասության ներքո, քանի որ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի ճիշտ կիրառումը ենթակա է դրա վերահսկողությանը («Օրիոն-Բրեկլավ Էս.Ար.Օ.»-ն ընդդեմ Չեխիայի Հանրապետության (որոշում) [Orion-Břeclav, S.R.O. v. the Czech Republic (dec.)], 2004թ.):

388. Հարկման ոլորտում «օրենքի» մասին խոսելիս թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով հղում է կատարվում Կոնվենցիայի այլ մասերում հանդիպող նույն հասկացությանը, որը ներառում է ինչպես օրենսդրական իրավունքը, այնպես էլ դատական նախադեպը: Այն ենթադրում է որակական պահանջներ, մասնավորապես՝ մատչելիության և կանխատեսելիության մասով («Շպաչեկ» *ՍՊԸ-ն ընդդեմ Չեխիայի Հանրապետության* [Špaček, s.r.o., v. the Czech Republic], 1999թ., § 54):

389. Միջամտությունը, այդ թվում՝ այն միջամտությունը, որը բխում է

հարկերի վճարումն ապահովելու միջոցից, պետք է «արդար հավասարակշռություն» ապահովի համայնքի ընդհանուր շահերի պահանջների և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև: Այդ հավասարակշռությանը հասնելու մասով մտահոգությունն արտացոլվում է Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի ընդհանուր կառուցվածքում, այդ թվում՝ երկրորդ պարբերության մեջ. օգտագործվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև պետք է առկա լինի համաչափության ողջամիտ կապ (*«Բուլվես» ԲԸ-ն ընդդեմ Բուլղարիայի* [*“Bulves” AD v. Bulgaria*], 2009թ., § 62, *Վալդներն ընդդեմ Ֆրանսիայի* [*Waldner v. France*], 2023թ., § 42): Հետևաբար հարկերի բարձրացումից բխող ֆինանսական պարտավորությունը կարող է բացասական ազդեցություն ունենալ սեփականության երաշխիքի վրա, եթե այն չափազանց մեծ բեռ է դնում տվյալ անձի վրա կամ մեծապես միջամտում է նրա ֆինանսական վիճակին (*Ֆերետին ընդդեմ Իտալիայի* [*Ferretti v. Italy*], Հանձնաժողովի որոշում, 1997թ., *«Վասա Լիվ Օմսեսիդիգտ»-ը, «Ֆյորստերինգսբոլագետ Վալանդս Պենսիոնստիֆթելսեն»-ն և շուրջ 15000 անձից բաղկացած խումբն ընդդեմ Շվեդիայի* [*Wasa Liv Ömsesidigt, Försäkringsbolaget Valands Pensionsstiftelse and a group of approximately 15,000 individuals v. Sweden*], Հանձնաժողովի որոշում, 1988թ., *Լուծարման գործընթացում գտնվող «Բուֆֆալո Էս.ար.Էլ.»-ն ընդդեմ Իտալիայի* [*Buffalo S.r.l. in liquidation v. Italy*], 2003թ., § 32. *«Իոֆիլ ԱԵ»-ն ընդդեմ Հունաստանի* (որոշում) [*Iofil AE v. Greece (dec.)*], 2021թ., § 34):

390. Կոնվենցիայի համաձայն՝ պետությանն ընդհանուր առմամբ տրվում է հայեցողական լիազորությունների լայն շրջանակ, երբ հարցը վերաբերում է տնտեսական կամ սոցիալական ռազմավարության ընդհանուր միջոցներին (*Վալիսհաուզերն ընդդեմ Ավստրիայի (թիվ 2)* [*Wallishauser v. Austria (no. 2)*], 2013թ., § 65), ինչպես նաև հարկման ոլորտում քաղաքականություն մշակելիս և իրականացնելիս (*«Բուլվես» ԲԸ-ն ընդդեմ Բուլղարիայի* [*“Bulves” AD v. Bulgaria*], 2009թ., § 63, *«Գասուս Դոսիեր և Ֆյորդերթեքնիք GmbH»-ն ընդդեմ Նիդերլանդների* [*Gasus Dosier- und Fördertechnik GmbH v. the Netherlands*], 1995թ., § 60, *Ստերեն և այլք ընդդեմ Ռումինիայի* [*Stere and Others v. Romania*], 2006թ., § 51, *Լոկաշան և այլք ընդդեմ Իտալիայի* [*Locascia and Others v. Italy*], 2023թ., § 157): Դատարանը հարգում է օրենսդիր մարմնի գնահատականն այդպիսի հարցերում, եթե այն գուրկ չէ ողջամիտ հիմքից (*«Գասուս Դոսիեր և Ֆյորդերթեքնիք GmbH»-ն ընդդեմ Նիդերլանդների* [*Gasus Dosier-und*

Fördertechnik GmbH v. the Netherlands], 1995թ., § 60):

391. Բացի այդ, Դատարանի հաստատուն դիրքորոշումն այն է, որ օրինականության ստուգման շրջանակներում պետություններին կարող է տրամադրվել որոշակի աստիճանի լրացուցիչ արտոնություն և ազատություն իրենց հարկաբյուջետային գործառույթներն իրականացնելիս (*«Եհովայի վկաներ» քրիստոնեական կրոնական կազմակերպությունն ընդդեմ Հայաստանի* (որոշում) [*Christian Religious Organization of Jehovah's Witnesses v. Armenia* (dec.)], 2020թ., § 50, *Բեժանիչ և Բաշկարադն ընդդեմ Խորվաթիայի* [*Bežanić and Baškarad v. Croatia*], 2022թ., § 64):

392. Ազգային իշխանությունները պետք է նախևառաջ որոշում կայացնեն հարկերի կամ վճարների տեսակի մասին, որը ցանկանում են գանձել: Այս ոլորտում որոշումները, որպես կանոն, ներառում են նաև քաղաքական, տնտեսական և սոցիալական խնդիրների գնահատում, որի իրականացումը Կոնվենցիայով անդամ պետությունների իրավասությանն է թողնված, քանի որ ներպետական իշխանություններն ակնհայտորեն ունեն ավելի լավ հնարավորություններ այդպիսի խնդիրները գնահատելու համար, քան Կոնվենցիայի մարմինները (*Մուսան ընդդեմ Ավստրիայի* [*Musa v. Austria*], Հանձնաժողովի որոշում, 1998թ., *Բալաժն ընդդեմ Սլովակիայի* (որոշում) [*Baláž v. Slovakia* (dec.)], 2003թ., *«Ագիենդա Ագրիկոլա Սիլվերֆունգի Էս.ա.Էս.»-ը և այլք ընդդեմ Իտալիայի* [*Azienda Agricola Silverfunghi S.a.s. and Others v. Italy*], 2014թ., § 103, *Ռ. Շ.-ն ընդդեմ Հունգարիայի* [*R.Sz. v. Hungary*], 2013թ., §§ 38 և 46, *«Եհովայի վկաներ» քրիստոնեական կրոնական կազմակերպությունն ընդդեմ Հայաստանի* (որոշում) [*Christian Religious Organization of Jehovah's Witnesses v. Armenia* (dec.)], 2020թ., § 45): Բացի այդ, ներպետական օրենսդիր մարմինը պետք է ընտրություն կատարի այն մասով, թե ինչը կարող է դասակարգվել որպես հարկվող եկամուտ, և որը պետք է լինի հարկային պարտավորության կիրառման կոնկրետ միջոցը (*Կաչատոն ընդդեմ Իտալիայի* (որոշում) [*Cacciato v. Italy* (dec.)], 2018թ., § 25, *Գիսոն և Կոնսիլյոն ընդդեմ Իտալիայի* (որոշում) [*Guiso and Consiglio v. Italy* (dec.)], 2018թ., § 44): Մասնավորապես այնպիսի բարդ ոլորտում, ինչպիսին ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) կիրառումն է, պատասխանող պետությանը պետք է տրվի հայեցողական լիազորությունների առավել լայն շրջանակ (*«Եհովայի վկաներ» քրիստոնեական կրոնական կազմակերպությունն ընդդեմ Հայաստանի* (որոշում) [*Christian Religious Organization of Jehovah's Witnesses v. Armenia* (dec.)], 2020թ., § 51):

393. Բացի այդ, Դատարանի լիազորությունները ներպետական օրենսդրության հետ համապատասխանության հարցը դիտարկելիս սահմանափակ են: Առաջին հերթին ազգային իշխանությունները, մասնավորապես՝ դատարանները պետք է մեկնաբանեն և կիրառեն ներպետական իրավունքը նույնիսկ այն ոլորտներում, որտեղ Կոնվենցիան «ներառում է» այդ իրավունքի կանոնները, քանի որ ազգային իշխանությունները, ըստ էության, հատկապես իրավասու են լուծելու այդ կապակցությամբ առաջացող հարցերը: Եթե մեկնաբանությունը կամայական կամ ակնհայտորեն անհիմն չէ, ապա Դատարանի դերը սահմանափակվում է պարզելով, թե արդյոք այդ մեկնաբանության հետևանքները համատեղելի են Կոնվենցիայի հետ: Այս սկզբունքը հատկապես արդիական է այն գործով, որը վերաբերում է իրավունքի նեղ մասնագիտական և տեխնիկական ուղղվածությանը (*«Իոֆիլ Ա.Ե.»-ն ընդդեմ Դոլնաստանի* (որոշում) [*Iofil AE v. Greece (dec.)*], 2021թ., § 42, տե՛ս նաև *«Ս.Կ.Զորինա Ինթերնեյշնլ Էս.Ար.Էլ.»-ն ընդդեմ Ռումինիայի* [*S.C. Zorina International S.R.L. v. Romania*], 2023թ., §§ 52-55, որով ներպետական դատարանները քննել են հարկային մարմնի կողմից վաճառված ապրանքների համար կտրոններ չտրամադրելու համար կիրառված պատժամիջոցները):

394. Սահմանված չափից ավել վճարված հարկերը վերադարձնելու ձգձգումները համարվել են խախտում (*Լուծարման փուլում գտնվող «Բուֆֆալո Էս.ար.Էլ.»-ն ընդդեմ Իտալիայի* [*Buffalo S.r.l. in liquidation v. Italy*], 2003թ., § 39, որով Դատարանը համարել է, որ հինգից տասը տարի տևած ձգձգումները լուրջ ազդեցություն են ունեցել դիմումատու ընկերության ֆինանսական վիճակի վրա, որը չէր կարող փոխհատուցվել զուտ վճարման ենթակա գումարների նկատմամբ պարզ տոկոսների վճարմամբ, անորոշ իրավիճակ է առաջացրել հարկ վճարողի համար, և այդ իրավիճակը լրացուցիչ սրվել է այն շտկելու որևէ իրավական միջոցի բացակայությամբ):

395. Նույն կերպ, սահմանված չափից ավել վճարված հարկի փոխհատուցում ստանալու անհնարինությունը, որի առնչությամբ ներպետական իշխանություններն ընդունել են, որ այն վճարվել է կիրառելի նյութական իրավունքի խախտմամբ, հանգեցրել է խախտման. ինչպես դիմումատու ընկերության կողմից պետության դեմ ներկայացված հայցի մերժումը, այնպես էլ ներպետական ընթացակարգերի բացակայությունը, որոնք բավարար միջոց կտրամադրեին դիմումատու ընկերության՝ իր «գույքից» անարգել օգտվելու իրավունքի

պաշտպանությունն ապահովելու համար, խախտել են արդար հավասարակշռությունը (*«Էս.Ա. Դանժվիլ»-ն ընդդեմ Ֆրանսիայի* [S.A. Dangeville v. France], 2002թ., § 61):

396. Օտարման համար փոխհատուցման հաշվարկի նպատակով վերցված սեփականության արժեքի և ժառանգության հարկի միջև եղած անհամապատասխանության արդյունքում Դատարանը գտել է, որ տեղի է ունեցել խախտում՝ կամայականության հիմքով (*Յոկելան ընդդեմ Ֆինլանդիայի* [Jokela v. Finland], 2002թ., § 65):

397. Չուտ այն փաստը, որ հարկային օրենսդրությունն ունի հետադարձ բնույթ, որպես այդպիսին չի հանգեցնում խախտման (օրինակ՝ հետադարձ ուժ ունեցող օրենք՝ որոշ գործարքներ հարկման ենթակա դարձնելու համար (*Մ.Ա.-ն և 34 այլք ընդդեմ Ֆինլանդիայի* (որոշում) [M.A. and 34 Others v. Finland (dec.)], 2003թ.):

398. Հարկային վարույթի համատեքստում հարկադիր կատարման միջոցները, որոնք ինքնաբար չեն կասեցվել, երբ պարտապանը բողոքարկել է դրանք, համարվել են ընդունելի և պետության հայեցողական լիազորությունների լայն շրջանակում գտնվող, սակայն դրանք պետք է ուղեկցվեն ընթացակարգային երաշխիքներով՝ ապահովելու համար, որ անհատները չհայտնվեն այնպիսի իրավիճակում, երբ իրենց բողոքարկումներն արդյունավետորեն սահմանափակված լինեն, և նրանք չկարողանան արդյունավետորեն պաշտպանել իրենց շահերը: Այստեղ կարևոր գործոններից մեկն այն է, թե արդյոք ներգրավված պետական մարմինների միջև առկա է եղել փոխգործակցության որոշակի ողջամիտ մակարդակ, որը թույլ կտար պաշտպանել հարկ վճարողների իրավունքները (*Ռասքն ընդդեմ Շվեդիայի* [Rousk v. Sweden], 2013թ., § 124):

399. Չուտ այն փաստը, որ հարկային դրույքաչափը շատ բարձր է, ինքնին չի հանգեցնում խախտման. Դատարանը քննում է դիմումատուի հարկային դրույքաչափը (*Ռ.Շ.-ն ընդդեմ Հունգարիայի* [R.Sz. v. Hungary], 2013թ., § 54): Տվյալ եկամուտը ստանալու պահին գործող հարկային դրույքաչափից զգալիորեն ավելի բարձր դրույքաչափով հարկումը վիճարկելիորեն կարող է համարվել անհիմն միջամտություն թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանված ակնկալիքներին (*Մ.Ա.-ն և 34 այլք ընդդեմ Ֆինլանդիայի* (որոշում) [M.A. and 34 Others v. Finland (dec.)], 2003):

400. Այն գործով, որով աշխատանքից ազատված քաղաքացիական ծառայողը հարկադրված էր հարկ վճարել իր արձակման նպաստից՝ ընդհանուր 52% դրույքաչափով, Դատարանը գտել է, որ տեղի է ունեցել խախտում՝ հետևյալ հիմքերով. այս դրույքաչափը զգալիորեն գերազանցում էր մյուս բոլոր եկամուտների նկատմամբ կիրառվող դրույքաչափը, դիմումատուն եկամտի զգալի կորուստ էր կրել իր գործազրկության հետևանքով, և հարկը գործատուի կողմից ուղղակիորեն նվազեցվել էր արձակման նպաստից՝ առանց նրա վիճակի որևէ անհատական գնահատման, և կիրառվել էր տվյալ հարկային տարվանից առաջ տեղի ունեցած գործունեության հետ կապված եկամտի նկատմամբ ([Ն.Կ.Մ.-ն ընդդեմ Հունգարիայի \[N.K.M. v. Hungary\]](#), 2013թ., §§ 66-74): Եվ հակառակը, Դատարանը գտել է, որ բեռի մաքսային արժեքի մինչև 30% ԱԱՀ-ն քանակական տեսանկյունից չէր կարող համարվել չափազանց մեծ: Այսպիսով, դիմումատու կազմակերպության կողմից կրոնական գրականության ներմուծումներից ԱԱՀ գանձելը չի խախտել դիմումատուի իրավունքների պաշտպանության և հարկերի վճարման ապահովման մասով հանրային շահի միջև հավասարակշռությունը ([«Եհովայի վկաներ» քրիստոնեական կրոնական կազմակերպությունն ընդդեմ Հայաստանի](#) (որոշում) [[Christian Religious Organization of Jehova's Witnesses v. Armenia \(Dec.\)](#)], 2020, §§ 53 և 55):

401. Դիմումատու ընկերության նկատմամբ այն գործարքի համար, որով այն որոշ արժեթղթեր էր վաճառել (որոնք այն ուներ դուստր ընկերությունում), դրանք հետ գնելուց առաջ ներպետական դատարանների կողմից հարկի կիրառման առնչությամբ ազգային իրավունքի մեկնաբանման վերաբերյալ գործով Դատարանը համարել է, որ արդար հավասարակշռություն էր հաստատվել հարկերի հավաքագրման մասով հանրային շահի և դիմումատու ընկերության՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի միջև: Դատարանը մասնավորապես նշել է, որ արժեթղթերի վաճառքը/հետգնումը տեղի էր ունեցել տարբեր աշխատանքային օրերի, այլ ոչ թե նույն օրը, և այդպիսի դեպքում ազգային իրավունքով թույլատրվում է բացառություն ([«Իոֆիլ Ա.Ե.»-ն ընդդեմ Հունաստանի](#) (որոշում) [[Ilofil AE v. Greece \(dec.\)](#)], 2021թ., §§ 43-48):

402. Հարկային վարույթի համատեքստում նույնպես Դատարանը կարևորում է համապատասխան վարույթում ընթացակարգային երաշխիքների առկայությունը (համեմատե՛ք [«Ագոսի»-ն ընդդեմ Միացյալ Թագավորության \[Agosi v. the United Kingdom\]](#) գործը, 1986թ., § 55): Այդ առնչությամբ Դատարանը գտել է, որ հարկային մարմինների կողմից ընկերության բանկային հաշիվներն անորոշ

Ժամկետով սառեցնելը, առանց դրանք պարբերաբար վերանայելու որևէ հնարավորության, հանգեցրել է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտման (*Ռուստամխանլի ընդդեմ Ադրբեջանի* [Rustamkhanli v. Azerbaijan], 2024թ., § 65): Բացի այդ, արդար հավասարակշռությունը խախտվել է այն գործերով, որոնցով ազգային իշխանությունները մատակարարման շղթայում ԱԱՀ-ի խարդախ կերպով չարաշահման մեջ ֆիզիկական կամ իրավաբանական անձի անմիջական ներգրավվածության կամ այդ մասին տեղյակ լինելու որևէ ցուցիչի բացակայության դեպքում, այնուամենայնիվ, տուգանել են սահմանված պահանջներն ամբողջությամբ կատարող՝ ԱԱՀ-ով հարկվող մատակարարման ստացողին մատակարարի այն գործողությունների կամ անգործության համար, որոնց նկատմամբ նա որևէ վերահսկողություն չի ունեցել, և որոնց համապատասխանությունը վերահսկելու կամ ապահովելու որևէ միջոց չի ունեցել («*Բուլվես» ԲԸ-ն ընդդեմ Բուլղարիայի* [“Bulves” AD v. Bulgaria], 2009թ., §§ 67-71)

Թ. Հողային պլանավորումը

403. Զաղաքային կամ շրջանային պլանավորման հարցերում սեփականատերերի իրավունքներն ըստ էության զարգացող բնույթ են կրում: Զաղաքային և շրջանային պլանավորման քաղաքականությունը, *par excellence*, այն ոլորտն է, որին պետությունը միջամտում է մասնավորապես սեփականության նկատմամբ վերահսկողության միջոցով՝ ելնելով ընդհանուր կամ հանրային շահերից: Այդպիսի հանգամանքներում, երբ համայնքի ընդհանուր շահը գերակա է, Դատարանն այն տեսակետին է, որ պետության հայեցողական լիազորությունների շրջանակն ավելի լայն է, քան այն դեպքերում, երբ հարցը վերաբերում է բացառապես քաղաքացիական իրավունքներին (*Գորաիս Լիսառագան և այլք ընդդեմ Իսպանիայի* [Gorraiz Lizarraga and Others v. Spain], 2004թ., § 70, *Մելախերը և այլք ընդդեմ Ավստրիայի* [Mellacher and Others v. Austria], 1989թ., § 55, *Չափմանն ընդդեմ Միացյալ Թագավորության [ՄՊ]* [Chapman v. the United Kingdom [GC]], 2001թ., § 104):

404. Դատարանը քննել է տարածքային պլանավորման համատեքստում հողատերերի վրա դրված սահմանափակումներին վերաբերող մի շարք գործեր, որոնք երբեմն տևում էին երկար տարիներ (*Սկիբինսկին ընդդեմ Լեհաստանի* [Skibiński v. Poland], 2006թ., § 98, *Սկրժինսկին ընդդեմ Լեհաստանի* [Skrzyński v. Poland], 2007թ., § 92, *Ռոսինսկին ընդդեմ Լեհաստանի* [Rosiński v. Poland], 2007թ., § 89, *Բուչկևիչն ընդդեմ Լեհաստանի* [Buczkiewicz v. Poland], 2008թ., § 77,

Պետժակն ընդդեմ Լեհաստանի [Pietrzak v. Poland], 2008թ., § 115. *Յական Արին ընդդեմ Թուրքիայի [Hakan Ari v. Turkey]*, 2011թ., § 36, *Ռոսսիտոն ընդդեմ Իտալիայի [Rossitto v. Italy]*, 2009թ., § 37, *Մայոլին ընդդեմ Իտալիայի [Maioli v. Italy]*, 2011թ., § 52, *Հուսեյին Կապլանն ընդդեմ Թուրքիայի [Hüseyin Kaplan v. Turkey]*, 2013թ., § 38, *Չիյա Չեվիկն ընդդեմ Թուրքիայի [Ziya Çevik v. Turkey]*, 2011թ., § 33): «*Յանը և այլք ընդդեմ Գերմանիայի*» [ՄՊ] [*Jahn and Others v. Germany [GC]*] (2005թ., §§ 100-105) գործով, որը վերաբերում էր բացառիկ հանգամանքներին, հաստատվել է, որ սահմանափակումները, նույնիսկ երբ դրանք կիրառվել են մշտական հիմունքներով և առանց փոխհատուցում ստանալու որևէ իրավունքի, համապատասխանել են այս դրույթին: Դիմումներն անընդունելի են ճանաչվել այն գործերով, որոնք վերաբերում էին շինարարության բացարձակ արգելքին, ինչն ուղեկցվում էր քաղաքապետարանից փոխհատուցում պահանջելու անհնարինությամբ, երբ սեփականատերերը ոչ կառուցելու մտադրություն են ցուցաբերել, ոչ էլ ցույց են տվել, որ արգելքը պարտավորեցրել է նրանց փոխել գույքի օգտագործման նպատակը (*Սկալյարինին ընդդեմ Իտալիայի (որոշում) [Scagliarini v. Italy (dec.)]*, 2015թ.), կամ այն դեպքում, երբ օգտագործման նպատակի փոփոխության բացակայության պայմաններում դիմումատուն երկար ժամանակ սպասել է՝ նախքան շինարարության թույլտվության համար դիմելը (*Գալտիերին ընդդեմ Իտալիայի (որոշում) [Galtieri v. Italy (dec.)]*, 2006թ.): Այլ գործերում խախտում է հայտնաբերվել նույնիսկ կոնկրետ շինարարական նախագծի բացակայության դեպքում և այն հիմքով, որ օրենսդիր մարմինը սկզբում ընդունել էր օրենքներ, որոնցով նախատեսվում էր օտարման համար փոխհատուցում ստանալու իրավունք, սակայն հետագայում բազմիցս հետաձգել էր այդ օրենքներն ուժի մեջ մտնելը (*Սկիբինսկին ընդդեմ Լեհաստանի [Skibiński v. Poland]*, 2006թ., § 78):

405. Չարգացման ծրագրեր իրականացնելու նպատակով պետական իշխանությունների կողմից մասնավոր հողերի ապօրինի զավթումը, որի արդյունքում ստեղծվել էր մեխանիզմ, որը հնարավորություն էր տալիս իշխանություններին օգտվելու անօրինական իրավիճակից, որում հողատերը հայտնվել էր արդեն իսկ կատարված փաստի առջև, համարվել է «գույքից» անարգել օգտվելու իրավունքի խախտում («*Բելվեդերե Ալբերգիերա Էս.ար.Էլ.-ն ընդդեմ Իտալիայի [Belvedere Alberghiera S.r.l. v. Italy]*, 2000թ., § 59):

406. Դատարանն ընդգծել է, որ քաղաքաշինության ոլորտում համապարփակ

իրավական դաշտ գործողության մեջ դնելու հարցում դժվարությունները սոցիալիստական իրավակարգից և դրա սեփականության ռեժիմից դեպի օրենքի գերակայության և շուկայական տնտեսության հետ համատեղելի ռեժիմ անցման գործընթացի մի մասն են կազմում. գործընթաց, որը իրերի բնույթից ելնելով՝ լի է դժվարություններով: Այնուամենայնիվ, այս դժվարությունները և խնդիրների ահռելի ծավալը, որին բախվել են օրենսդիր մարմինները, որոնք պետք է լուծեն այդպիսի անցումային գործընթացի հետ կապված բոլոր բարդ հարցերը, անդամ պետություններին չեն ազատում Կոնվենցիայից կամ դրա արձանագրություններից բխող պարտավորություններից (*Շիրմերն ընդդեմ Լեհաստանի* [Schirmer v. Poland], 2004թ., § 38, *Սկիբինսկին ընդդեմ Լեհաստանի* [Skibiński v. Poland], 2006թ., § 96):

Ժ. Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների բռնագրավումը

407. Դատարանը մի շարք գործերով թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի ներքո քննել է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներից ապօրինի հարստացման դեմ պայքարի նպատակներով ձեռնարկված տարբեր միջոցներ: Այդպիսի դեպքերում պետություններն ունեն հայեցողական լիազորությունների լայն շրջանակ հանցավորության դեմ պայքարի քաղաքականություն իրականացնելիս, այդ թվում՝ այն գույքի բռնագրավումը, որը ենթադրաբար ապօրինի ծագում ունի (*Ռայմոնդոն ընդդեմ Իտալիայի* [Raimondo v. Italy], 1994թ., § 30, *Ռիելան և այլք ընդդեմ Իտալիայի* (որոշում) [Riela and Others v. Italy (dec.)], 2001թ., *Արկուրին և այլք ընդդեմ Իտալիայի* (որոշում) [Arcuri and Others v. Italy (dec.)], 2001թ., *Գոգիտիձեն և այլք ընդդեմ Վրաստանի* [Gogitidze and Others v. Georgia], 2015թ., § 108), ապօրինի միջոցներով ձեռք բերված գույքը (*Ուլեմեկն ընդդեմ Սերբիայի* (որոշում) [Ulemek v. Serbia (dec.)], 2021թ.), քրեական հանցանքից ստացված եկամուտը (*productum sceleris*) (*Ֆիլիփսն ընդդեմ Միացյալ Թագավորության* [Phillips v. the United Kingdom], 2001թ., *Սիլիցկիենեն ընդդեմ Լիտվայի* [Silickienė v. Lithuania], 2012թ., *Գոգիտիձեն և այլք ընդդեմ Վրաստանի* [Gogitidze and Others v. Georgia], 2015թ.), հանցանքի առարկա հանդիսացած գույքը (*objectum sceleris*) (*«Ագոսի»-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* [Agosi v. the United Kingdom], 1986թ., *Սունն ընդդեմ Ռուսաստանի* [Sun v. Russia], 2009թ., *Իսմայիլովն ընդդեմ Ռուսաստանի* [Ismayilov v. Russia], 2018թ.) կամ այն գույքը, որը ծառայել է կամ նախատեսված է եղել ծառայելու հանցագործության

կատարման համար (*instrumentum sceleris*) ([Անդոնոսկին ընդդեմ Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության](#) [Andonoski v. the former Yugoslav Republic of Macedonia], 2015թ., «Բի.Քեյ.Էմ.» լոգիստիկ տրանսպորտային առևտրային [Բաթլերն ընդդեմ Միացյալ Թագավորության](http://hudoc.echr.coe.int/eng?i=001-170387սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն ընդդեմ Սլովենիայի [B.K.M. Lojistik Tasimacilik Ticaret Limited Sirketi v. Slovenia], 2017թ., «Ս.Կ. Սերվիս Բենց Զոմ Էս.Ար.Էլ.»-ն ընդդեմ Ռումինիայի [S.C. Service Benz Com S.R.L. v. Romania], 2017թ., <a href=) (որոշում) [Butler v. the United Kingdom (dec.)], 2002թ., [Մարկուսն ընդդեմ Լատվիայի](#) [Markus v. Latvia], 2020թ., § 69, և [Տոդորովը և այլք ընդդեմ Բուլղարիայի](#) [Todorov and Others v. Bulgaria], 2021թ., §§ 189-199, տարբեր իրավիճակների կրկնության համար):

408. Կախված անդամ պետությունների իրավական շրջանակից՝ այդպիսի բռնագրավումը կարող է տեղի ունենալ քրեական վարույթի շրջանակում, որը սովորաբար պայմանավորված է դատապարտմամբ, կամ քրեական վարույթից դուրս, երբ որոշակի պայմաններ բավարարված են: Մեկ այլ հատուկ ընթացակարգ է այն ընթացակարգը, որի դեպքում հանցանք կատարած անձի կամ այլ անձանց գույքը բռնագրավվում է միայն այն ենթադրության հիման վրա, որ այն ստացվել է հանցագործությունից: Դա սովորաբար կոչվում է ընդլայնված բռնագրավում, որը համարվում է սովորական բռնագրավման լրացուցիչ և օժանդակ ձև: Բացի այդ, Իտալիայում գործում են վարչական բնույթի կանխարգելիչ բռնագրավման միջոցներ, մասնավորապես՝ կազմակերպված հանցավորության դեմ պայքարի համար: Վերջապես, որոշ պետություններում, ինչպիսին է Միացյալ Թագավորությունը, նույնպես առկա է բռնագրավման նկատմամբ քաղաքացիաիրավական մոտեցում. բռնագրավման այս մոդելը հիմնված է ոչ թե հանցանք կատարած անձի մեղքի, այլ գույքի ծագման վրա:

409. Դատարանը [Գոգիտիձեն և այլք ընդդեմ Վրաստանի](#) [Gogitidze and Others v. Georgia] գործով, 2015թ., § 105, նշել է, որ գոյություն ունեն ընդհանուր եվրոպական և նույնիսկ համընդհանուր իրավական ստանդարտներ, որոնք առաջին հերթին խրախուսում են այնպիսի ծանր քրեական հանցանքների հետ կապված գույքի բռնագրավումը, ինչպիսիք են կոռուպցիան, փողերի լվացումը, թմրանյութերի հետ կապված հանցանքները և այլն՝ առանց նախկինում դատվածության առկայության: Երկրորդ, ենթադրաբար անօրինական կերպով ձեռք բերված գույքի օրինական ծագումն ապացուցելու պարտավորությունը

բռնագրավման մասով այդպիսի ոչ քրեական վարույթում կարող է օրինական կերպով փոխանցվել պատասխանողներին, այդ թվում՝ *in rem* (գույքային) քաղաքացիական վարույթում: Երրորդ, բռնագրավման միջոցները կարող են կիրառվել ոչ միայն հանցագործությունից ստացված ուղղակի եկամուտների, այլև գույքի, այդ թվում՝ ցանկացած եկամտի և այլ անուղղակի օգուտների նկատմամբ, որոնք ստացվել են հանցագործությունից ստացված ուղղակի եկամուտները փոխարկելու կամ վերափոխելու կամ այլ՝ գուցե օրինական ակտիվների հետ միախառնելու միջոցով: Վերջապես, բռնագրավման միջոցները կարող են կիրառվել ոչ միայն քրեական հանցանքների կատարման մեջ անմիջականորեն կասկածվող անձանց, այլև ցանկացած երրորդ կողմի նկատմամբ, որն ունի սեփականության իրավունք, սակայն չի ցուցաբերում անհրաժեշտ բարեխղճություն՝ նպատակ ունենալով քողարկելու տվյալ հարստությունը կուտակելու գործում իր ապօրինի դերակատարումը:

410. Անդրազգային հանցավորության համատեքստում [Շորազովան ընդդեմ Մալթայի](#) [Shorazova v. Malta] գործով, 2022թ., § 111, որը վերաբերում էր դիմումատուի՝ Մալթայում գտնվող գույքի սառեցման մասին որոշմանը՝ հիմնված դիմումատուի և նրա ամուսնու կողմից խարդախության/փողերի լվացման մեղադրանքների վերաբերյալ Ղազախստանում ընթացող քննության հետ կապված հարցման վրա, Դատարանն ընդունել է Միավորված ազգերի կազմակերպության «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» կոնվենցիայի կարևորությունը կազմակերպված հանցավորության դեմ արդյունավետ պայքարի համար: Միևնույն ժամանակ Դատարանն ընդգծել է, որ այդ Կոնվենցիայի համաձայն տրամադրվող փոխադարձ իրավական օգնությունը պետք է իրականացվի մարդու իրավունքների միջազգային չափանիշներին համապատասխան: Այսպիսով, ներպետական դատարանները կրում են վերանայման պարտավորություն, եթե առկա է լուրջ և հիմնավորված բողոք Եվրոպական կոնվենցիայով նախատեսված իրավունքի պաշտպանության հարցում ակնհայտ թերության վերաբերյալ (*mutatis mutandis* (համապատասխան փոփոխություններով), [Ավոտինշն ընդդեմ Լատվիայի](#) [ՄԴ] [Avotiņš v. Latvia [GC]], 2016թ., § 116):

411. Այս կապակցությամբ, նույնիսկ եթե միջոցը նշանակվել է միջազգային փոխադարձ իրավական օգնության մասին մեկ այլ պետության կողմից ներկայացված հարցման համատեքստում, ազգային իշխանությունները

պարտավոր են ըստ Էուրոյան կիրառել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի սկզբունքները և դա անել՝ հաշվի առնելով միջազգային փոխադարձ իրավական օգնության կոնկրետ առանձնահատկություններն ու մեխանիզմները ([«*Ulfertung Utensur Eu.Ար.Էլ.*»-ն ընդդեմ *Լյուքսեմբուրգի \[Amerisoc Center S.R.L. v. Luxembourg\]*, 2024թ., § 55](#)): Այդ գործով, որը վերաբերում էր Պերուկի իշխանությունների կողմից ներկայացված միջազգային իրավական օգնության մասին հարցումից հետո Լյուքսեմբուրգում դիմումատու ընկերության բանկային ակտիվների առգրավմանը, Դատարանը գտել է, որ ազգային դատարանները դիմումատու ընկերությանը չեն տրամադրել իր գործը մրցակցային վարույթի շրջանակներում ներկայացնելու ողջամիտ հնարավորություն՝ հաշվի առնելով, որ այս իրավիճակը նախևառաջ բխում էր միջազգային փոխադարձ իրավական օգնության մասին օրենքից, որով չէր նախատեսվում, որ առգրավման մասին որոշման վերաբերյալ տեղեկությունները պետք է հաղորդվեին բանկի համապատասխան հաճախորդին, և երկրորդ՝ բխում էր ազգային դատարանի կողմից դիմումատուի փաստարկները չքննելու մասին որոշումից: Այս եզրակացությունն ամրապնդվել է այն փաստով, որ տվյալ հարցը չի քննվել նաև Պերուկի իշխանությունների կողմից ([*սույն տեղում*, §§ 58-59](#)): Այսպիսով, դիմումատու ընկերության ակտիվների առգրավումն արդյունավետորեն վիճարկելու իրավական պաշտպանության միջոցի բացակայության պայմաններում Դատարանը գտել է, որ միջոցն անհամաչափ է եղել հետապնդող իրավաչափ նպատակին ([*սույն տեղում*, § 61](#)):

412. Բռնագանձման միջոցները կարող են ընդունելի լինել, եթե դրանք իրականացվում են ընդհանուր շահի պահանջներին համապատասխան՝ ապահովելու համար, որ տվյալ սեփականության օգտագործումը չստեղծի առավելություն քրեական մեղադրանքով դատապարտված անձի համար՝ ի վնաս համայնքի ([Ուլեմեկն ընդդեմ Սերբիայի](#) (որոշում) [*Ulemek v. Serbia (dec.)*], 2021թ., § 66):

413. Դատարանը նշել է նաև, որ պետությունները տարբեր միջազգային պայմանագրերի ուժով ունեն օրինական շահ, ինչպես նաև պարտականություն՝ իրականացնելու միջոցներ իրենց սահմաններով կանխիկ գումարի տեղաշարժը հայտնաբերելու և վերահսկելու համար, քանի որ կանխիկ գումարի մեծ քանակը կարող է օգտագործվել փողերի լվացման, թմրանյութերի ապօրինի շրջանառության, ահաբեկչության կամ կազմակերպված հանցավորության

Ֆինանսավորման, հարկերից խուսափելու կամ այլ ծանր ֆինանսական հանցագործությունների կատարման համար: Հետևաբար սահմանները հատելու ժամանակ ֆիզիկական անձանց կողմից կանխիկ գումարը չհայտարարագրվելու դեպքում կիրառվող բռնագրավման միջոցները համապատասխանում են համայնքի ընդհանուր շահերին (*Կարապետյանն ընդդեմ Վրաստանի* [Karapetyan v. Georgia], 2020թ., § 34):

414. Դատարանը բռնագրավումը հիմնականում դիտարկում է որպես սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն՝ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի երկրորդ պարբերության իմաստով (*Հենդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության* [Handyside v. the United Kingdom], 1976թ., § 63, «Ագոսի»-ն ընդդեմ Միացյալ Թագավորության [Agosi v. the United Kingdom], 1986թ., § 51, *Կարապետյանն ընդդեմ Վրաստանի* [Karapetyan v. Georgia], 2020թ., § 32, «Ակտիվա» ՍՊԸ-ն ընդդեմ Սերբիայի [Aktiva DOO v. Serbia], 2021թ., § 78), թեև բռնագրավումն իր բուն բնույթով անձին զրկում է սեփականությունից:

415. Անկասկած, թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի երկրորդ պարբերությամբ, *inter alia*, Պայմանավորվող պետություններին հնարավորություն է ընձեռվում վերահսկելու սեփականության օգտագործումը՝ տուգանքների վճարումն ապահովելու նպատակով: Այսպիսով, դատապարտումից հետո իրականացված՝ քրեական հանցանքից ստացված եկամուտների բռնագրավման վերաբերյալ գործերով Դատարանը սովորաբար բռնագրավումը համարել է սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն (*Ֆիլիփսն ընդդեմ Միացյալ Թագավորության* [Phillips v. the United Kingdom], 2001թ., § 51. տե՛ս նաև *Վելչն ընդդեմ Միացյալ Թագավորության* [Welch v. the United Kingdom], 1995թ., § 26, Կոնվենցիայի 7-րդ հոդվածի ներքո, *Վան Օֆերենն ընդդեմ Նիդերլանդների* (որոշում) [Van Offeren v. Netherlands (dec.)], 2005թ., Կոնվենցիայի 6-րդ հոդվածի ներքո): Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի երկրորդ պարբերությունը պետք է մեկնաբանվի առաջին պարբերության առաջին նախադասության մեջ ամրագրված ընդհանուր սկզբունքի լույսի ներքո, որով պահանջվում է, որ կիրառվող միջոցների և իրագործման ենթակա նպատակի միջև գոյություն ունենա համաչափության ողջամիտ կապ (*Ֆիլիփսն ընդդեմ Միացյալ Թագավորության* [Phillips v. the United Kingdom], 2001թ., §§ 51-52, *Բալսամոն ընդդեմ Սան Մարինոյի* [Balsamo v. San Marino], 2019թ., § 81):

416. Նույն մոտեցումն է կիրառվել այն իրավիճակներում, երբ բռնագրավման միջոցներն իրականացվել են քրեական մեղադրանքից անկախ, քանի որ տվյալ ակտիվները համարվել են անօրինական կերպով ձեռք բերված, դրանց օրինական ծագումը չի ապացուցվել, կամ դրանք հանդիսացել են հանցագործության գործիքներ (*Ռայմոնդոն ընդդեմ Իտալիայի* [Raimondo v. Italy], 1994թ., § 27, *Ռիելան և այլք ընդդեմ Իտալիայի* (որոշում) [Riela and Others v. Italy (dec.)], 2001թ., *Սունն ընդդեմ Ռուսաստանի* [Sun v. Russia], 2009թ., § 25, *Արկուրին և այլք ընդդեմ Իտալիայի* (որոշում) [Arcuri and Others v. Italy (dec.)], 2001թ., *Սի.Էմ.-ն ընդդեմ Ֆրանսիայի* (որոշում) [C.M. v. France (dec.)], 2001թ., «*Էլր Կանադա*»-ն ընդդեմ Միացյալ Թագավորության [Air Canada v. the United Kingdom], 1995թ., § 34, *Գոգիտիձեն և այլք ընդդեմ Վրաստանի* [Gogitidze and Others v. Georgia], 2015թ., §§ 94 և 97, քաղաքացիական վարույթով կիրառված բռնագրավման առնչությամբ, *Բալսամոն ընդդեմ Սան Մարինոյի* [Balsamo v. San Marino], 2019թ., § 81, փողերի լվացման վարույթի առնչությամբ, *Ուլեմեկն ընդդեմ Սերբիայի* (որոշում) [Ulemek v. Serbia (dec.)], 2021թ., §§ 62-68, հանցագործությունից ստացված եկամուտների առգրավման և բռնագրավման մասին օրենքի համաձայն հարուցված հետագա վարույթի առնչությամբ, որը բնույթով քրեական չէր համարվել):

417. Բացի այդ, Դատարանը բռնագրավումը դիտարկել է նաև որպես սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն այն դեպքում, երբ դիմումատուի սեփականությունը բռնագրավվել է որպես քրեական պատիժ՝ անկախ դրա ձեռքբերման եղանակից և հանցանքի հետ որևէ կապից (*Մարկուսն ընդդեմ Լատվիայի* [Markus v. Latvia], 2020թ., §§ 69-70, լրացուցիչ մանրամասների համար տե՛ս վերևում՝ «Օրինականության սկզբունքը» վերտառությամբ գլուխը):

418. Բացառիկ դեպքերում Դատարանը միջամտությունը վերլուծել է որպես գույքից զրկում, երբ հանցագործության գործիքի բռնագրավումը վերաբերել է երրորդ կողմերի սեփականությանը և մշտական միջոց է եղել (տե՛ս նաև վերևում՝ «Օգտագործման նկատմամբ վերահսկողությունը» վերտառությամբ գլուխը, *Անդոնոսկին ընդդեմ Սակեդոնիայի Նախկին Զարավալական Զանրապետության* [Andonoski v. the former Yugoslav Republic of Macedonia], 2015թ., § 36, «*Բի.Քեյ.Էմ.*» լոգիստիկ տրանսպորտային առևտրային http://hudoc.echr.coe.int/eng?i=001-170387սահմանափակ_պատասխանատվությամբ_ընկերությունն_ընդդեմ_Սլովենիայի [B.K.M. Lojistik Tasimacilik Ticaret Limited Sirketi v. Slovenia], 2017թ., § 48, *Յաշարն ընդդեմ Ռումինիայի* [Yaşar v. Romania], 2019թ.,

§ 49):

419. Որոշ դեպքերում Դատարանը ձեռնպահ է մնացել որոշելուց, թե արդյոք քննարկվող միջամտությունը գույքից զրկում, թե օգտագործման նկատմամբ վերահսկողություն է, քանի որ գտել է, որ դա անելու անհրաժեշտություն չկա: Փոխարենն այն անմիջապես սկսել է քննել այն հարցը, թե արդյոք տեղի է ունեցել օրինականության, իրավաչափ նպատակի և համաչափության սկզբունքների խախտում (*Դենիսովան և Մոիսեևան ընդդեմ Ռուսաստանի* [Denisova and Moiseyeva v. Russia], 2010թ., § 55, «Ակտիվա» ՍՊԸ-ն ընդդեմ Սերբիայի [Aktiva DOO v. Serbia], 2021թ., §§ 78 և 82, *Մելանդրին ընդդեմ Սան Մարինոյի* [Melandri v. San Marino], 2024թ., § 67):

420. Մի շարք գործերով Դատարանը կիրառել է Թիվ 1 արձանագրության 1 ին հոդվածով սահմանված համաչափության ստուգման չափանիշը տարբեր ծանր հանցագործությունների ենթադրյալ կատարման հետ կապված գույքի բռնագանձմանն առնչվող զանազան ընթացակարգերի նկատմամբ: Ինչ վերաբերում է այն գույքին, որը ենթադրաբար ամբողջությամբ կամ մասամբ ձեռք է բերվել թմրանյութերի շրջանառության հետ կապված հանցանքների ստացված եկամուտներից (*Վեբն ընդդեմ Միացյալ Թագավորության* (որոշում) [Webb v. the United Kingdom (dec.)], 2004թ., *Բաթլերն ընդդեմ Միացյալ Թագավորության* (որոշում) [Butler v. the United Kingdom (dec.)], 2002թ.) կամ թմրանյութերի շրջանառությանը ներգրավված հանցավոր կազմակերպությունների կողմից (*Արկուրին և այլք ընդդեմ Իտալիայի* (որոշում) [Arcuri and Others v. Italy (dec.)], 2001թ., *Մորաբիտոն և այլք ընդդեմ Իտալիայի* (որոշում) [Morabito and Others v. Italy (dec.)], 2005թ.) կամ այլ՝ մաֆիայի բնույթի ապօրինի գործունեությունից (*Ռայմոնդոն ընդդեմ Իտալիայի* [Raimondo v. Italy], 1994թ., § 30), Դատարանն ընդունել է, որ բռնագրավման միջոցները համաչափ են եղել նույնիսկ մեղադրյալի մեղավորությունը հաստատող դատապարտման բացակայության դեպքում (*Բալսամոն ընդդեմ Սան Մարինոյի* [Balsamo v. San Marino], 2019թ., § 90):

421. Երբ բռնագրավումը կիրառվել է անկախ երրորդ կողմերի դեմ առկա քրեական մեղադրանքից, Դատարանն ընդունել է, որ իշխանությունները կարող են բռնագրավման միջոցներ կիրառել ոչ միայն հանցանքների մեջ անմիջականորեն մեղադրվող անձանց, այլև նրանց ընտանիքի անդամների և այլ

մերձավոր ազգականների նկատմամբ, որոնք ենթադրաբար անօրինական կերպով տիրապետում և կառավարում են հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքը կասկածյալ հանցագործների անուկից, կամ որոնք այլ կերպ չեն ունեցել անհրաժեշտ բարեխղճության կարգավիճակ (*Ռայմոնդոն ընդդեմ Իտալիայի* [Raimondo v. Italy], 1994թ., § 30, *Արկուրին և այլք ընդդեմ Իտալիայի* (որոշում) [Arcuri and Others v. Italy (dec.)], 2001թ., *Մորաբիտոն և այլք ընդդեմ Իտալիայի* (որոշում) [Morabito and Others v. Italy (dec.)], 2005թ., *Բաթլերն ընդդեմ Միացյալ Թագավորության* (որոշում) [Butler v. the United Kingdom (dec.)], 2002թ., *Վեբն ընդդեմ Միացյալ Թագավորության* (որոշում) [Webb v. the United Kingdom (dec.)], 2004թ., *Սակոչիան ընդդեմ Ավստրիայի* [Saccoccia v. Austria], 2008թ., § 88, *Սիլիցկիենեն ընդդեմ Լիտվայի* [Silickienė v. Lithuania], 2012թ., § 65, որտեղ բռնագրավման միջոց է կիրառվել կոռումպացված պետական պաշտոնյայի այրու նկատմամբ, *Բալսամոն ընդդեմ Սան Մարինոյի* [Balsamo v. San Marino], 2019թ., §§ 89 և 93, որտեղ բռնագրավման միջոց է կիրառվել նաև երեխաների նկատմամբ՝ նրանց հոր նախկին դատվածության պատճառով, *Չագինին ընդդեմ Սան Մարինոյի* [Zaghini v. San Marino], 2023թ., §§ 17 և 65, որտեղ դիմումատուն փողերի լվացման մեջ մեղավոր ճանաչված անձի որդի էր): Բացի այդ, *Յուսլի և այլք ընդդեմ Ադրբեջանի* (որոշում) [Yusifli and Others v. Azerbaijan (dec.)] գործով, 2022թ., §§ 88-93, դիմումատուներն առողջապահության նախկին նախարարի ծանոթներն էին կամ ազգականները: Դատարանը գտել է, որ հանցագործությունից ստացված եկամուտների բռնագրավման վերաբերյալ նրանց բողոքները՝ կապված տարբեր սեփականությունների հետ, որոնք ենթադրաբար հափշտակվել էին պետությունից առողջապահության նախկին նախարարի կողմից և փոխանցվել դիմումատուների անուններով կամ այն ընկերությունների անուններով, որոնց անվանական միակ սեփականատերը դիմումատուներն էին, ակնհայտորեն անհիմն էին:

422. Այդպիսի դեպքերում բռնագրավման նպատակն է կանխել այն «գույքի» ապօրինի օգտագործումը, որի օրինական ծագումը չի հաստատվել, հատկապես, եթե այն օգտագործվում է հասարակության համար վտանգավոր ձևով: Դատարանը նշել է այն դժվարությունները, որոնց պետական մարմինները բախվում են կազմակերպված հանցավորության դեմ պայքարում: Բռնագրավումը, որը նախատեսված է կասկածելի կապիտալի այդ տեղաշարժը կանխելու համար, այդ համատեքստում արդյունավետ և անհրաժեշտ զենք է: Հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի բռնագրավման մասին որոշումը գործում է

ընդհանուր շահերի օգտին՝ որպես զսպող գործոն հանցավոր գործունեության մեջ ներգրավվել ցանկացող անձանց համար, ինչպես նաև ապահովում է, որ հանցագործությունը չարդարացվի (*Դենիսովան և Մոիսեյևան ընդդեմ Ռուսաստանի* [Denisova and Moiseyeva v. Russia], 2010, § 58, *Ֆիլիպսն ընդդեմ Միացյալ Թագավորության* [Phillips v. the United Kingdom], 2001թ., § 52, «*Դասսա» հիմնադրամը և այլք ընդդեմ Լիխտենշտայնի* (որոշում) [Dassa Foundation and Others v. Liechtenstein (dec.)], 2007թ., 6-րդ և 7-րդ հոդվածների ներքո):

423. Կոնվենցիայի 6-րդ հոդվածով ընդհանուր առմամբ չի արգելվում պետություններին դիմել ենթադրությունների: Բռնագրավման կամ հարկաբյուջետային ճնշումների տարբեր ձևերի վերաբերյալ վարույթներում պետական մարմինները կարող են գործել այն ենթադրության հիման վրա, որ ակտիվները ձեռք են բերվել ապօրինի եղանակով (*Սալաբիակուն ընդդեմ Ֆրանսիայի* [Salabiaku v. France], 1988թ., § 28): Նույն մոտեցումը կիրառվել է այս համատեքստում արված ենթադրությունների վերաբերյալ բողոքների մասով՝ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն (*Կակուչին և Սաբատելլին ընդդեմ Իտալիայի* (որոշում) [Cacucci and Sabatelli v. Italy (dec.)], 2014թ., § 43, *Յըլդրըմն ընդդեմ Իտալիայի* (որոշում) [Yildirim v. Italy (dec.)], 2003թ., կամ 6-րդ հոդվածի ներքո (ապացուցման բեռը տեղափոխելով դիմումատուի վրա, որպեսզի նա ապացուցի, որ իր ակտիվները ձեռք են բերվել օրինական ճանապարհով (*Գրեյսոնը և Բարնհամն ընդդեմ Միացյալ Թագավորության* [Grayson and Barnham v. the United Kingdom], 2008թ., § 45, *Ֆիլիպսն ընդդեմ Միացյալ Թագավորության* [Phillips v. the United Kingdom], 2001թ., § 43, *Պերրենն ընդդեմ Իտալիայի* (որոշում) [Perre v. Italy (dec.)], 1999թ., վկայի հարցաքննության համար): Ենթադրությունների կիրառումը համատեղելի է անմեղության կանխավարկածի հետ, եթե կողմին տրվել է ենթադրությունները հերքելու հնարավորություն: Եվ հակառակը, 6-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում է հայտնաբերվել այն գործով, որով ապրանքների մասով բռնագրավման մասին որոշում էր կայացվել չնայած այն հանգամանքին, որ սեփականատերն արդարացվել էր այն հանցագործությանն առնչվող քրեական վարույթով, որից ենթադրաբար ծագել էին եկամուտները (*Գերինգսն ընդդեմ Նիդերլանդների* [Geerings v. Netherlands], 2007թ., §§ 43-51):

424. Դատարանն իրավաչափ է համարել նաև այն, որ համապատասխան ներպետական մարմինները կարող են բռնագրավման մասին որոշումներ կայացնել այն ապացույցների գերակշռության հիման վրա, որոնք ենթադրում են, որ

պատասխանողների օրինական եկամուտները չեն կարող բավարար լինել տվյալ սեփականությունը ձեռք բերելու համար: Բոլոր դեպքերում, երբ բռնագրավման մասին որոշումը կայացվել է ծանր հանցանքներից բխող՝ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների հետ կապված *in rem* քաղաքացիական վարույթի արդյունքում, Դատարանն այդ վարույթով չի պահանջել գույքի ապօրինի ծագման վերաբերյալ «ողջամիտ կասկածից դուրս» ապացույցներ: Փոխարենը, թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով սահմանված համաչափության ստուգման նպատակների համար բավարար է համարվել ապօրինի ծագման առկայության առավել հավանական լինելու կամ մեծ հավանականության վերաբերյալ ապացույցը՝ զուգորդված սեփականատիրոջ՝ հակառակն ապացուցելու կարողության հետ (*Բալսամոն ընդդեմ Սան Մարինոյի* [Balsamo v. San Marino], 2019թ., § 91, տե՛ս նաև *Մելանդրին ընդդեմ Սան Մարինոյի* [Melandri v. San Marino], 2024թ., § 72): Հակառակը, Դատարանը գտել է, որ ազգային դատարանները համոզիչ կերպով չեն ապացուցել պատճառահետևանքային կապը մի կողմից՝ նախորդող հանցանքների/ցանկացած այլ հանցավոր վարքագծի և մյուս կողմից՝ բռնագրավման ենթակա ակտիվների միջև, երբ նրանք հիմնվել են միայն այն ենթադրության վրա, որ ցանկացած ակտիվ, որի օրինական ծագումը չի ապացուցվել, հանցագործությունից ստացված եկամուտ էր, ինչպես նաև դիմումատուների՝ օրինական աղբյուրներից ստացված եկամտի և նրանց ծախսերի միջև դատարանների կողմից սահմանված տարբերության վրա (*Մանդևը և այլք ընդդեմ Բուլղարիայի* [Mandev and Others v. Bulgaria], 2024թ., § 100, տե՛ս նաև *Տոդորովը և այլք ընդդեմ Բուլղարիայի* [Todorov and Others v. Bulgaria], 2021թ.):

425. Դատարանը կարևորել է բռնագրավման վարույթում առկա տարբեր ընթացակարգային երաշխիքները, ինչպիսիք են դրանց մրցակցային բնույթը (*Յիլդիրիմն ընդդեմ Իտալիայի* (որոշում) [Yildirim v. Italy (dec.)], 2003թ., *Պերրենն ընդդեմ Իտալիայի* (որոշում) [Perre v. Italy (dec.)], 1999թ.), մեղադրանքի կողմի կազմած գործի նախապես բացահայտումը (*Գրեյսոնը և Բարնհամն ընդդեմ Միացյալ Թագավորության* [Grayson and Barnham v. the United Kingdom], 2008թ., § 45), կողմի՝ փաստաթղթային և բանավոր ապացույցներ ներկայացնելու հնարավորությունը (*Բաթլերն ընդդեմ Միացյալ Թագավորության* (որոշում) [Butler v. the United Kingdom (dec.)], 2002թ., *Պերրենն ընդդեմ Իտալիայի* (որոշում) [Perre v. Italy (dec.)], 1999թ.), մասնավոր վարձած փաստաբանի միջոցով օրինական

Ներկայացվածության հնարավորությունը (*Բաթլերն ընդդեմ Միացյալ Թագավորության* (որոշում) [*Butler v. the United Kingdom* (dec.)], 2002թ.), այն, որ կողմը կարող է հերքել ակտիվների հանցավոր բնույթի մասով ենթադրությունը (*Գերինգսն ընդդեմ Նիդերլանդների* [*Geerings v. Netherlands*], 2007թ., § 44), ենթադրությունը չկիրառելու դատավորի հայեցողությունը, եթե նա համարի, որ այն կիրառելը կհանգեցնի անարդարության լուրջ ռիսկի (*Ֆիլիփսն ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Phillips v. the United Kingdom*], 2001թ., § 43), այն, թե արդյոք կատարվել է անհատական գնահատում այն մասով, թե գործի փաստերի լույսի ներքո սեփականության որ մասը պետք է բռնագրավվի (*Ռումմին ընդդեմ Էստոնիայի* [*Rummi v. Estonia*], 2015թ., § 108, *Սիլիցկիենեն ընդդեմ Լիտվայի* [*Silickienė v. Lithuania*], 2012թ., § 68), արդյոք ընդհանուր առմամբ դիմումատուին տրամադրվել է իր փաստարկները ներպետական դատարաններում ներկայացնելու ողջամիտ հնարավորություն (*Վեյթսն ընդդեմ Էստոնիայի* [*Veits v. Estonia*], 2015թ., §§ 72 և 74, *Յոկելան ընդդեմ Ֆինլանդիայի* [*Jokela v. Finland*], 2002թ., § 45, *Բալսամոն ընդդեմ Սան Մարինոյի* [*Balsamo v. San Marino*], 2019թ., § 93, *Մելանդրին ընդդեմ Սան Մարինոյի* [*Melandri v. San Marino*], 2024թ., § 72)՝ հաշվի առնելով համապատասխան վարույթի համապարփակ դիտարկումը (*Դենիսովան և Մոիսեյևան ընդդեմ Ռուսաստանի* [*Denisova and Moiseyeva v. Russia*], 2010թ., § 59):

426. Վերջապես, թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով սահմանված ընդհանուր ընթացակարգային պարտավորություններից բացի («*Զի.Այ.Ի.Էմ. Էս.Ար.Էլ.*»-ը և այլք ընդդեմ Իտալիայի (ըստ Էության) [ՄՊ] [*G.I.E.M. S.R.L. and Others v. Italy (merits)*] [GC]], 2018թ., § 302), բռնագրավման միջոցի համաչափությունը որոշելու համար կարևոր են որոշակի գործոններ, մասնավորապես՝ դրա տևողությունը, թեև սա վերջնական չէ («*Ավրորա ցածրահարկ շինարարություն*» ՄՊԸ-ն ընդդեմ Ռուսաստանի [ՕՕՕ *Avrora Maloetazhnoe Stroitelstvo v. Russia*], 2020թ., § 69, *Ստոկովսկին ընդդեմ Լեհաստանի* [*Stolkowski v. Poland*], 2021թ., §§ 73-77, «*Իպեկ*» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն ընդդեմ Թուրքիայի [*İpek Société à responsabilité limitée v. Turkey*], 2022թ., §§ 92-94), այն պահպանելու անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով քրեական վարույթի ընթացքը, ինչպես նաև շահագրգիռ կողմի համար դրա հետևանքները (*Լաչիխինան ընդդեմ Ռուսաստանի* [*Lachikhina v. Russia*], 2017թ., § 59), դիմումատուի և միջամտող պետության

իշխանությունների վարքագիծը (*«Ֆորմինսթեր Էնթերփրայզիզ Լիմիթեդ»-ն ընդդեմ Չեխիայի Հանրապետության* [Forminster Enterprises Limited v. the Czech Republic], 2008թ., § 75), ինչպես նաև պաշտպանության արդյունավետ միջոցի առկայությունը, այդ թվում՝ դատարանների մատչելիությունը, որի միջոցով դիմումատուն կարող է բողոքարկել (շարունակվող) առգրավումը (*«Բենեթ Չեխ, սպր. Էս ար.օ.»-ն ընդդեմ Չեխիայի Հանրապետության* [Benet Czech, spol. s r.o. v. the Czech Republic], 2010թ., § 49):

ԺԱ. Գույքի ռեստիտուցիան

427. Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում ժողովրդավարական փոփոխություններից հետո շատ կառավարություններ ընդունեցին օրենսդրություն, որով նախատեսվում էր Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո օտարված գույքի ռեստիտուցիա, կամ որը կարգավորում էր ռեստիտուցիան գործող իրավական դաշտի շրջանակներում:

428. Կոնվենցիան և դրա արձանագրությունները վավերացնելուց առաջ գույքի առգրավման առնչությամբ կոնվենցիոն մարմինները հետևողականորեն հաստատել են, որ սեփականությունից կամ այլ գույքային իրավունքից զրկելը սկզբունքորեն ակնթարթային գործողություն է և չի առաջացնում «իրավունքից զրկելու» շարունակական իրավիճակ (*Մալխոուսն ընդդեմ Չեխիայի Հանրապետության* (որոշում) [ՄԴ] [Malhous v. the Czech Republic (dec.) [GC]], 2000թ., *«Պրոյսիշե Թրոյհանդ GmbH & Ըն. ԿԳ ա.Ա.»-ն ընդդեմ Լեհաստանի* (որոշում) [Preußische Treuhand GmbH & Co. KG a.A.v. Poland], 2008թ., § 57):

429. Բացի այդ, Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը չի կարող մեկնաբանվել որպես Պայմանավորվող պետությունների վրա այն գույքը վերադարձնելու որևէ ընդհանուր պարտավորություն դնող, որը նրանց փոխանցվել է Կոնվենցիան վավերացնելուց առաջ (*Յանտներն ընդդեմ Սլովակիայի* [Jantner v. Slovakia], 2003թ., § 34):

430. Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով չի դրվում նաև որևէ սահմանափակում Պայմանավորվող պետությունների ազատության վրա՝ որոշելու գույքի ռեստիտուցիայի շրջանակը և ընտրելու այն պայմանները, որոնցով նրանք համաձայնում են վերականգնել նախկին սեփականատերերի գույքային իրավունքները (*Մարիա Աթանասիուս և այլք ընդդեմ Ռումինիայի* [Maria Atanasiu and Others v. Romania], 2010թ., § 136): Մասնավորապես Պայմանավորվող

պետություններն օգտվում են հայեցողական լիազորությունների լայն շրջանակից՝ նախկին սեփականատերերի որոշ կատեգորիաներ այդպիսի իրավունքից բացառելու մասով: Եթե սեփականատերերի կատեգորիաներն այդ կերպ բացառվում են, ապա ռեստիտուցիայի վերաբերյալ նրանց պահանջները չեն կարող հիմք ապահովել «իրավաչափ ակնկալիքի» համար, որն առաջ է բերում Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի պաշտպանությունը (*Գրացինգերը և Գրացինգերովան ընդդեմ Չեխիայի Հանրապետության* (որոշում) [ՄԴ] [*Gratzinger and Gratzingerova v. the Czech Republic* (dec.) [GC]], 2002թ., §§ 70-74, *Կոպեցկին ընդդեմ Սլովակիայի* [ՄԴ] [*Kopecký v. Slovakia* [GC]], 2004թ., § 35, *Սմիլյանիչն ընդդեմ Սլովենիայի* (որոշում) [Smiljanić v. Slovenia (dec.)], 2006թ., § 29):

431. Այսպիսով, այն գույքային իրավունքի ճանաչման հույսը, որը հնարավոր չի եղել արդյունավետորեն իրացնել, չի կարող համարվել «գույք» Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով, ինչպես նաև պայմանական պահանջը, որը կորցրել է իր ուժն այդ պայմանը չկատարվելու արդյունքում (*Մալխոուսն ընդդեմ Չեխիայի Հանրապետության* (որոշում) [ՄԴ] [*Malhous v. the Czech Republic* (dec.) [GC]], 2000թ., *Կոպեցկին ընդդեմ Սլովակիայի* [ՄԴ] [*Kopecký v. Slovakia* [GC]], 2004թ., § 35): Այն համոզմունքը, որ նախկինում գործող օրենքը կփոխվի հոգուտ դիմումատուի, չի կարող համարվել որպես իրավաչափ ակնկալիքի ձև՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի նպատակների համար: Առկա է տարբերություն ռեստիտուցիայի հետ կապված պարզ հույսի (ինչպես էլ որ այդ հույսը հասկացվի) և իրավաչափ ակնկալիքի միջև, որը պետք է լինի ավելի կոնկրետ բնույթի, քան պարզ հույսը, և հիմնված լինի իրավական դրույթի կամ այնպիսի իրավական ակտի վրա, ինչպիսին է դատական որոշումը (*Գրացինգերը և Գրացինգերովան ընդդեմ Չեխիայի Հանրապետության* (որոշում) [ՄԴ] [*Gratzinger and Gratzingerova v. the Czech Republic* (dec.) [GC]], 2002թ., § 73, *Ֆոն Մալցանը և այլք ընդդեմ Գերմանիայի* (որոշում) [ՄԴ] [*Von Maltzan and Others v. Germany* (dec.) [GC]], 2005թ., § 112):

432. Մյուս կողմից, երբ Պայմանավորվող պետությունը, վավերացնելով Կոնվենցիան, այդ թվում՝ Թիվ 1 արձանագրությունը, ընդունում է օրենսդրություն, որով նախատեսվում է նախորդ ռեժիմի շրջանակում բռնագրավված գույքի լրիվ կամ մասնակի վերականգնում, այդպիսի օրենսդրությունը կարող է դիտվել որպես Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանված նոր գույքային իրավունքի առաջացում իրավունքի պահանջները բավարարող անձանց համար (*Սարիա*

Աթանասիուն և այլք ընդդեմ Ռումինիայի [Maria Atanasiu and Others v. Romania]<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-100989>, 2010թ., § 136): Նույնը կարող է կիրառվել մինչև վավերացումը գործող օրենսդրությամբ սահմանված ռեստիտուցիայի կամ փոխհատուցման կարգավորումների առնչությամբ, եթե այդ օրենսդրությունը շարունակել է ուժի մեջ մնալ Պայմանավորվող պետության կողմից թիվ 1 արձանագրությունը վավերացվելուց հետո (*Ֆոն Մալցանը և այլք ընդդեմ Գերմանիայի* (որոշում) [ՄԴ] [Von Maltzan and Others v. Germany (dec.) [GC]], 2005թ., § 74, *Կոպեցկին ընդդեմ Սլովակիայի* [ՄԴ] [Kopecký v. Slovakia [GC]], 2004թ., § 35, *Բրոնիովսկին ընդդեմ Լեհաստանի* [ՄԴ] [Broniowski v. Poland [GC]], 2004թ., § 125):

433. Հետևաբար տվյալ իրավունքի բովանդակության և գործողության շրջանակի առնչությամբ Դատարանը նկատել է, որ այդ հարցը պետք է դիտարկել այն տեսանկյունից, թե ինչ «գույք» է ունեցել դիմումատուն Արձանագրությունն ուժի մեջ մտնելու օրը և ամենակարևորը, այն օրը, երբ նա ներկայացրել է իր բողոքը կոնվենցիոն հաստատություններին (*Բրոնիովսկին ընդդեմ Լեհաստանի* [ՄԴ] [Broniowski v. Poland [GC]], 2004թ., §§ 125 և 132): Այդ գործով դիմումատուի՝ գույքի համար փոխհատուցում ստանալու իրավունքը նրան վերապահված էր Լեհաստանի համար թիվ 1 արձանագրությունն ուժի մեջ մտնելու օրը Լեհաստանում գործող օրենսդրությամբ, որով իրավունքներ էին շնորհվում Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Բուգ գետից այն կողմ գտնվող տարածքներից հայրենադարձված անձանց կամ նրանց ժառանգներին:

434. Ինչ վերաբերում է ձեռնարկված բարեփոխումների իրականացմանը, ապա Կոնվենցիայի հիմքում ընկած օրենքի գերակայության և թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածում առկա օրինականության սկզբունքի համաձայն պահանջվում է, որ պետությունները ոչ միայն հարգեն և կիրառեն իրենց կողմից ընդունված օրենքները կանխատեսելի և հետևողական կերպով, այլև որպես այս պարտականության հետևանք ապահովեն դրանց իրականացման իրավական և գործնական պայմանները (*Բրոնիովսկին ընդդեմ Լեհաստանի*<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-61828> [ՄԴ] [Broniowski v. Poland [GC]], 2004թ., § 184):

435. Գույքի ռեստիտուցիայի ոլորտին առնչվող մի շարք գործեր վերաբերում էին ներպետական մարմինների կողմից վերջնական դատական (կամ վարչական) որոշումները չկատարելուն: Վճիռը, որով իշխանությունները,

գույքային իրավունքների ռեստիտուցիայի վերաբերյալ ներպետական օրենսդրությանը համապատասխան, պարտավոր են փոխհատուցում տրամադրել հողի կամ դրամի տեսքով, դիմումատուին տալիս է կատարման ենթակա պահանջ, որը կարող է համարվել «գույք» թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով (*Յասյունենեն ընդդեմ Լիտվայի* [*Jasiūniene v. Lithuania*], 2003թ., § 44): Հետևաբար, երբ առկա է դատարանի վերջնական վճիռ հոգուտ հայցվորի, կարող է գործողության մեջ դրվել «իրավաչափ ակնկալիք» հասկացությունը (*Դրիզան ընդդեմ Ալբանիայի* [*Driza v. Albania*], 2007թ., § 102):

436. Վերջնական որոշումները չկատարելը գույքի ռեստիտուցիայի մասով Ռումինիայում գործող համակարգում առկա այլ թերությունների հետ միասին հանգեցրել է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտման *Մարիա Աթանասիուն և այլք ընդդեմ Ռումինիայի* [*Maria Atanasiu and Others v. Romania*]<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-100989> գործով, 2010թ., ինչպես նաև պիլոտային վճռի ընթացակարգի կիրառման (*Նույն տեղում*, §§ 215-218): Նույն կերպ, *Մանուշաչե Պուտուն և այլք ընդդեմ Ալբանիայի* [*Manushaqe Puto and Others v. Albania*] գործով, 2012թ., §§ 110-118, պիլոտային վճռում Դատարանը վճռել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում՝ դիմումատուներին իրենց գույքի ռեստիտուցիայի փոխարեն փոխհատուցում տրամադրելու վերաբերյալ վերջնական որոշումը չկատարվելու հիմքով: Դատարանը *Բեշիրին և այլք ընդդեմ Ալբանիայի* (որոշում) [*Beshiri and Others v. Albania* (dec.)] գործով, 2020թ., ուսումնասիրել է Ալբանիայում այդ պիլոտային վճռին ի պատասխան ներդրված նոր ներպետական համակարգը/իրավական պաշտպանության միջոցը: Նշելով պետության հայեցողական լիազորությունների լայն շրջանակը գույքային իրավունքների խախտումների դեպքում վնասի փոխհատուցման ձևերի ընտրության հարցում (*Նույն տեղում*, § 188)՝ Դատարանը գտել է, որ իրավական պաշտպանության նոր միջոցն արդյունավետ էր՝ հաշվի առնելով հետևյալ նկատառումները. ա) վնասի փոխհատուցման ձևի պատշաճությունը (*Նույն տեղում*, § 188), բ) փոխհատուցման համարժեքությունը (*Նույն տեղում*, §§ 189-203), և գ) իրավական պաշտպանության միջոցի մատչելիությունն ու արդյունավետությունը (*Նույն տեղում*, §§ 204-214): Ինչ վերաբերում է փոխհատուցման համարժեքությանը, ապա Դատարանն ընդունել է, որ իրավիճակը բացառիկ դժվար և բարդ էր, և եզրակացրել է, որ Ալբանիայի կոնկրետ համատեքստում սկզբնական գույքի ընթացիկ արժեքի 10%-ի չափով

փոխհատուցման նվազագույն շեմը կարող է համարվել ողջամիտ (*Նույն տեղում*, §§ 194-196): Միևնույն ժամանակ այն ընդունել է, որ իրավական պաշտպանության նոր միջոցի իր գնահատականը կարող է ապագայում վերանայվել՝ կախված նրանից, թե արդյոք իրավական պաշտպանության միջոցները գործնականում շարունակում են համապատասխանել Կոնվենցիայի պահանջներին (*Նույն տեղում*, § 222):

437. *Օրլովիչը և այլք ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի* [Orlović and Others v. Bosnia and Herzegovina] գործը, 2019թ., §§ 55, 57 և 61, վերաբերում էր ներպետական այն որոշումների չկատարմանը, որոնցով դիմումատուներին իրավունք էր տրվում վերադարձնել իրենց հողատարածքն ամբողջությամբ, այդ թվում՝ հողի այն մասը, որտեղ նրանց արտաքսումից հետո եկեղեցի էր կառուցվել: Դատարանը գտել է, որ տեղի է ունեցել խախտում, և պետությանը կարգադրել է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դիմումատուների օգտին որոշման կատարումն ապահովելու համար, այդ թվում՝ եկեղեցու հեռացումը նրանց հողից (*Նույն տեղում*, §§ 68-71):

438. Ինչ վերաբերում է դիմումատուի սեփականության իրավունքին կառավարության միջամտության հիմնավորմանը, ապա Դատարանը վերահաստատել է, որ միջոցների պակասը չի կարող արդարացնել պետության ունեցած պարտքի վերաբերյալ վերջնական և պարտադիր վճռի չկատարումը (*Դրիզան ընդդեմ Ալբանիայի* [Driza v. Albania], 2007թ., § 108, *Պրոդան ընդդեմ Մոլդովայի* [Prodan v. Moldova], 2004թ., § 61):

439. Միայն շատ բացառիկ դեպքերում, օրինակ՝ Գերմանիայի վերամիավորման եզակի համատեքստում է Դատարանն ընդունել, որ որևէ փոխհատուցման բացակայություն չի հանգեցրել սեփականության պաշտպանության և ընդհանուր շահի պահանջների միջև անհրաժեշտ «արդար հավասարակշռության» խախտման (*Յանը և այլք ընդդեմ Գերմանիայի* [ՄԴ] [Jahn and Others v. Germany [GC]]<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-69560>, 2005թ., § 117): Ընդհանուր առմամբ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով պահանջվում է, որ պետության կողմից վերցված գույքի համար տրամադրվող փոխհատուցման չափը «ողջամտորեն կապված լինի» լինի դրա արժեքի հետ (*Բրոնիովսկին ընդդեմ Լեհաստանի* [ՄԴ] [Broniowski v. Poland [GC]], 2004թ., § 186): Սա կիրառվում է նաև օրենսդրությամբ սահմանված փոխհատուցման իրավունքների նկատմամբ:

Դատարանն ընդունել է յուրացված հողի համար սահմանված փոխհատուցման չափի նվազեցումը, որն իրականացվել է ներպետական վարչական վարույթի ընթացքում՝ ենթաօրենսդրական ակտերի փոփոխման միջոցով, քանի դեռ այդ նվազեցումը ծառայում է պետական բյուջեի պաշտպանության ընդհանուր շահերին, և շնորհիվ փոխհատուցումը չի թվում անհիմն ցածր ([Սերբիայի Ուղղափառ Եկեղեցին ընդդեմ Խորվաթիայի \[Serbian Orthodox Church v. Croatia\]](#), 2020թ., §§ 62, 65-68):

440. Բացի այդ, Դատարան ներկայացված որոշ գործեր վերաբերում էին վերջնական վճռի *res judicata* ազդեցությունը չպահպանելուն, որի արդյունքում դիմումատուի՝ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը չեղյալ է հայտարարվել առանց փոխհատուցման: Այդպիսի հանգամանքներում Դատարանը գտել է, որ իրավական որոշակիության սկզբունքի խախտումը հանգեցնում է Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով սահմանված օրինականության պահանջի խախտման ([Պարվանովը և այլք ընդդեմ Բուլղարիայի \[Parvanov and Others v. Bulgaria\]](#), 2010թ., § 50, [Կեհայան և այլք ընդդեմ Բուլղարիայի \[Kehaya and Others v. Bulgaria\]](#), 2006թ., § 76, [Չենգելյանը և այլք ընդդեմ Բուլղարիայի \[Chengelyan and Others v. Bulgaria\]](#), 2016թ., §§ 49-50): Օրինականության պահանջը նշանակում է ոչ միայն ներպետական իրավունքի համապատասխան դրույթներին համապատասխանություն, այլ նաև համատեղելիություն օրենքի գերակայության հետ: Այն այսպիսով ենթադրում է, որ պետք է առկա լինի պաշտպանություն կամայական գործողությունից ([Պարվանովը և այլք ընդդեմ Բուլղարիայի \[Parvanov and Others v. Bulgaria\]](#), 2010թ., § 44):

441. Այսպիսով, հաշվի առնելով ներպետական դատարանների հակասական որոշումները և ներպետական դատարանի անկարողությունը՝ բացատրելու, թե ինչու է շեղվում նախկին վճռի ակնհայտ տրամաբանությունից, դիմումատուին «գույքից» զրկելը չի կարող համատեղելի լինել օրենքի գերակայության հետ և գերծ լինել կամայականությունից և ուստի չի կարող բավարարել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով սահմանված օրինականության պահանջը ([Պարվանովը և այլք ընդդեմ Բուլղարիայի \[Parvanov and Others v. Bulgaria\]](#), 2010թ., § 50): Նույն կերպ, Դատարանը 6-րդ հոդվածի համաձայն նշել է, որ Ռումինիայում ազգայնացված սեփականության ռեստիտուցիայի կոնկրետ համատեքստում օրենսդրական համաձայնեցվածության բացակայությունը և ռեստիտուցիայի մասին օրենքների որոշ հայեցակետերի մեկնաբանման

վերաբերյալ հակասական նախադեպային իրավունքը ստեղծել են իրավական որոշակիության բացակայության ընդհանուր մթնոլորտ (*Տուդոր Տուդորն ընդդեմ Ռումինիայի* [Tudor Tudor v. Romania], 2009թ., § 27):

442. Բացի այդ, նույն գույքի նկատմամբ սեփականության երկու վկայականների առկայությունը և իր «գույքից» օգտվել չկարողանալու համար սեփականատիրոջը չփոխհատուցելը հանգեցրել են նրան, որ Դատարանի բազմաթիվ որոշումներով արձանագրվել է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում (որոնցից առաջինը *Ստրայնը և այլք ընդդեմ Ռումինիայի* [Străin and Others v. Romania] գործն էր, 2005թ., §§ 46-47: Այս մոտեցումը համեմատաբար վերջերս հաստատվել է *Դիքմանը և Գիոն ընդդեմ Ռումինիայի* [Dickmann and Gion v. Romania] գործով, 2017թ., §§ 103-04), որտեղ Դատարանն անհրաժեշտ է համարել նաև ապահովել, որ կոմունիստական ռեժիմի կողմից գույքային իրավունքների խախտումների հետևանքով պատճառված «հին վնասվածքների» մեղմացումը չհանգեցնի անհամաչափ նոր իրավախախտումների առաջացման (*Նույն տեղում*, § 96):

443. Դատարանը նաև հնարավորություն է ունեցել ուսումնասիրելու այն սեփականատերերի իրավիճակը, որոնք, բարեխղճորեն ձեռք բերած լինելով իրենց գույքը, հետագայում զրկվել են դրանից, քանի որ այլոք են ճանաչվել օրինական սեփականատերեր (*Տոշկուտան և այլք ընդդեմ Ռումինիայի* [Toșcuță and Others v. Romania], 2008թ., § 33):

444. Մասնավորապես, պետության կողմից անձի սեփականությունը բարեխղճորեն գործող երրորդ կողմին վաճառելը, նույնիսկ եթե դա նախորդում է մյուս անձի իրավունքի վերջնական հաստատմանը դատական կարգով, սեփականությունից զրկում է: Սեփականությունից այդ եղանակով զրկելը փոխհատուցման լիակատար բացակայության հետ համակցությամբ հակասում է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածին (*Վոդան և Բոբն ընդդեմ Ռումինիայի* [Vodă and Bob v. Romania], 2008թ., § 23): *Կազն ընդդեմ Ռումինիայի* [Katz v. Romania] գործով, 2009թ., §§ 30-36, Դատարանը գտել է, որ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտումը բացահայտել է լայն տարածում ունեցող խնդիր, որն առաջացել է պետության կողմից բարեխիղճ գնորդ երրորդ կողմերին վաճառված ազգայնացված շենքերի ռեստիտուցիայի վերաբերյալ թերի օրենսդրության պատճառով, և որ նույնիսկ օրենքի բազմաթիվ փոփոխությունները

չեն բարելավել իրավիճակը: Դատարանը գտել է, որ պետության՝ իր օրենսդրությունը կարգի բերելու անկարողությունը ոչ միայն ծանրացնող գործոն է, այլև նաև սպառնալիք Կոնվենցիայի 46-րդ հոդվածով սահմանված կոնվենցիոն մեխանիզմի ապագա արդյունավետության համար: Սա շարունակել է խնդրահարույց մնալ *Պրեդան և այլք ընդդեմ Ռումինիայի* [Preda and Others v. Romania] գործով, 2014թ., §§ 146-148, որը *Մարիա Աթանասիուն և այլք ընդդեմ Ռումինիայի* [Maria Atanasiu and Others v. Romania]<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-100989> 2010 թվականի գործին հաջորդող վճիռն էր, ինչպես ընդգծված է նաև *Անա Իոնեսկուն և այլք ընդդեմ Ռումինիայի* [Ana Ionescu and Others v. Romania] գործով, 2019թ., §29: *Վալեանուն և այլք ընդդեմ Ռումինիայի* [Văleanu and Others v. Romania], 2022թ., § 262, ավելի ուշ քննված գործով այս վճիռները վերահաստատվեցին՝ Պատասխանող պետությունից պահանջելով ձեռնարկել հետագա ընդհանուր միջոցառումներ՝ ռեստիտուցիայի մեխանիզմում առկա շարունակական կառուցվածքային խնդիրները լուծելու համար:

445. *Պինցովան և Պինցն ընդդեմ Չեխիայի Հանրապետության* [Pincová and Pinc v. the Czech Republic] գործով, 2002թ., դիմումատուները բողոքել են իրենց սեփականության իրավունքների խախտման վերաբերյալ՝ պնդելով, որ տունը բարեխղճորեն ձեռք էին բերել 1967 թվականին՝ չիմանալով, որ սեփականությունը նախկինում բռնագրավվել էր, և չունենալով որևէ վերահսկողություն գործարքի մանրամասների կամ գնման գնի նկատմամբ: Դատարանն անհրաժեշտ էր համարել ապահովել, որ «հին վնասվածքների» մեղմացումը չհանգեցնեք նոր անհամաչափ սխալների: Այդ նպատակով օրենսդրությամբ պետք է հնարավորություն ընձեռվի հաշվի առնելու յուրաքանչյուր գործի կոնկրետ հանգամանքները, որպեսզի այն անձինք, որոնք բարեխղճորեն ձեռք են բերել իրենց «գույքը», ստիպված չլինեն կրել այն պատասխանատվության բեռը, որն իրավամբ այն պետության պատասխանատվությունն էր, որը մի ժամանակ բռնագրավել էր այդ «գույքը» (*նույն տեղում*, § 58): Այդ գործով արձանագրվել էր խախտում (նաև *Չվոլսկին և Չվոլսկան ընդդեմ Չեխիայի Հանրապետության* [Zvolský and Zvolská v. the Czech Republic] գործով, 2002թ., §§ 72-74): Այն միջոցների համաչափությունը, որոնք այլ անձանց զրկել էին պետությունից գնած սեփականությունից այն անձանց փոխհատուցելու նպատակով, որոնցից կոմունիստական ռեժիմը կամայականորեն խլել էր գույքը, քննարկվել է նաև *Վելիկովները և այլք ընդդեմ Բուլղարիայի* [Velikovi and Others v. Bulgaria] գործով,

2007թ., §§ 181 և 190:

446. Եվ հակառակը, [Վիեգանդովան ընդդեմ Չեխիայի Հանրապետության \[Wiegandová v. the Czech Republic\]](#) գործով, 2024թ., §§ 60-65, Դատարանը վճռել էր, որ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում տեղի չէր ունեցել, եթե դիմումատուին պատկանող բնակարանը ծանրաբեռնված է եղել բնակարանային կոոպերատիվի օգտին գույքի ռեստիտուցիայի մասին օրենսդրությամբ ստեղծված՝ անվճար և առանց որևէ ժամկետային սահմանափակման, *ex lege* (օրենքի ուժով) չվճարված սերվիտուտի ուժով: Դիմումատուն, որը բնակարանը ձեռք էր բերել ժառանգության միջոցով այն անձից, որին բնակարանը վերադարձվել էր որպես ռեստիտուցիա 1991 թվականին, կարող էր բնակարանը միայն վաճառել, սակայն ոչ օգտագործել կամ ազատորեն վարձակալությամբ հանձնել: Դատարանը նշել է, որ անդամ պետությունները կոմունիստական ռեժիմից մասնավոր սեփականությունը պաշտպանող ժողովրդավարական հասարակարգի անցման ընթացքում օգտվել են սեփականությանը վերաբերող բարդ հարցերը կարգավորելու հայեցողական լիազորությունների լայն շրջանակից: Համաչափության վերաբերյալ իր վերլուծության նպատակներով Դատարանը հատկապես նշանակալից է համարել այն, որ Սահմանադրական դատարանը սերվիտուտի մշտական առկայությունը համարել է բարեխիղճ մասնավոր անձանց (կոոպերատիվի և դրա անդամների) կողմից նյութական ներդրումների դիմաց ձեռք բերված գույքային իրավունքները պահպանելու գործիք:

447. [Նասկովը և այլք ընդդեմ Հյուսիսային Մակեդոնիայի \[Naskov and Others v. North Macedonia\]](#) գործով, 2023թ., §§ 72-78, Դատարանը գտել է, որ տեղի է ունեցել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում այն հիմքով, որ դիմումատուների գույքային շահերին միջամտությունը խախտել է օրինականության սկզբունքը: Ներպետական մարմինները *motu proprio* (սեփական նախաձեռնությամբ) բեկանել են ռեստիտուցիայի մասին վերջնական որոշումը, որով դիմումատուներին շնորհվում էր հողամասի նկատմամբ սեփականության իրավունք՝ որոշումը կատարելու իրավական և փաստացի անհնարինության պատճառով, քանի որ այդ ընթացքում մասնավոր կողմերը կառույցներ էին կառուցել այդ հողի վրա:

448. Բացի այդ, ռեստիտուցիայի վարույթի չափազանց երկար տևողությունը

մի շարք գործերով, օրինակ՝ Ռումինիայի, Սլովակիայի և Սլովենիայի դեմ գործերով (*Սիրցն ընդդեմ Սլովենիայի* [Sirc v. Slovenia], 2008թ., § 182) առաջացրել է 6-րդ հոդվածի խախտում: Այդպիսի գործերով Դատարանը հաճախ անհրաժեշտ չի համարել դիմումատուների բողոքները քննել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի հիման վրա: Այնուամենայնիվ, եթե ձգձգումները տեղի են ունեցել այնպիսի վարույթի ընթացքում, որը հարուցվել է դիմումատուի գույքային իրավունքների ճանաչումից հետո, Դատարանը գտել է, որ տեղի է ունեցել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի առանձին խախտում մասնավորապես այն անորոշ իրավիճակի պատճառով, որում դիմումատուները հայտնվել են իրենց սեփականության ճակատագրի առնչությամբ (*Իգարիենեն և Պետրաուսկիենեն ընդդեմ Լիտվայի* [Ilgarienė and Petrauskienė v. Lithuania], 2009թ., §§ 55 և 58, *Բեյնարովիչը և այլք ընդդեմ Լիտվայի* [Beinarovič and Others v. Lithuania], 2018թ., §§ 141 և 154): *Կիրիլովան և այլք ընդդեմ Բուլղարիայի* [Kirilova and Others v. Bulgaria] գործով, 2005թ., §§ 120-121, զգալի ձգձգումներ են տեղի ունեցել դիմումատուներին իրենց սեփականության օտարման համար որպես փոխհատուցում առաջարկված բնակարանների մատակարարման հարցում:

449. Վերջապես, *Վասիլևը և Ղոյչևան ընդդեմ Բուլղարիայի* [Vasilev and Doycheva v. Bulgaria] գործով, 2012թ., §§ 45-53, որը վերաբերում էր կոմունիստական ռեժիմի կողմից կոլեկտիվացված գյուղատնտեսական հողերի ռեստիտուցիային դրանց սեփականատերերին կամ նրանց ժառանգներին, արձանագրվել է Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի և 13-րդ հոդվածի խախտում՝ անհրաժեշտ տարբեր ձևականությունները կատարելու հարցում ներպետական մարմինների անգործության հիման վրա:

ԺԲ. Պետական մասնակցությամբ ընկերությունները

450. Որոշելիս, թե արդյոք ընկերության գործողությունը կամ անգործությունը Կոնվենցիայի շրջանակներում կարելի է վերագրել համապատասխան մարմնին կամ պատասխանատու անդամ պետությանը, Դատարանը հաշվի է առնում գործոններ, որոնք թվարկված են «*Ռադիո Ֆրանս»-ը և այլք ընդդեմ Ֆրանսիայի* (որոշում) [Radio France and Others v. France(dec.)] գործում, 2003թ., § 26, Կոնվենցիայի 34-րդ հոդվածի համատեքստում: Մասնավորապես Դատարանը պետք է քննի այն հարցը, թե արդյոք ընկերությունն ունեցել է բավարար ինստիտուցիոնալ և գործառական անկախություն պետությունից՝ վերջինիս իր

գործողությունների կամ անգործության համար Կոնվենցիայով ստանձնած պատասխանատվությունից ազատելու համար (*Միխայլենկին և այլք ընդդեմ Ռուսաստանի* [Mykhaylenky and Others v. Ukraine], 2004 թ., § 44, *Շլեպկին ընդդեմ Ռուսաստանի* [Shlepkina v. Russia], 2007թ., § 24, «Լյուբլյանսկա բանկա» ԲԸ-ն ընդդեմ Խորվաթիայի (որոշում) [Ljubljanska banka d.d. v. Croatia(dec.)], 2015 թ., §§ 51-55, *Լիսեյցևա և Մասլովն ընդդեմ Ռուսաստանի* [Liseytsseva and Maslov v. Russia], 2014թ., § 151, *Կուշելև և այլք ընդդեմ Ռուսաստանի* [Kuzhelev and Others v. Russia], 2019թ., §§ 93-100 և 117): 34-րդ հոդվածի տեքստում չկա ոչինչ, որը կենթադրեր, որ «հասարակական կազմակերպություն» եզրույթը կարելի է մեկնաբանել այնպես, որ բացառվեն միայն այն պետական կազմակերպությունները, որոնք կարող են համարվել պատասխանող պետության մաս (*Խորվաթիայի տնտեսական պալատն ընդդեմ Սերբիայի* (որոշում) [Croatian Chamber of Economy v. Serbia(dec.)], 2017թ., § 38):

451. Այսպես կոչված «ինստիտուցիոնալ և գործառական անկախության» ստուգումը, որին Դատարանը հղում է կատարել բազմաթիվ գործերում, ուղղակիորեն բխում է «*Ռադիո Ֆրանս*»-ի գործով, 2003թ., որոշման մեջ ամփոփված չափանիշներից: Այս առնչությամբ Դատարանն իր կողմից այն գնահատման մեջ, թե արդյոք իրավաբանական անձը, մասնավորապես՝ պետական մասնակցությամբ ընկերությունը Կոնվենցիայի 34-րդ հոդվածի իմաստով «պետական կազմակերպություն» է համարվում, հաշվի է առնում մի շարք գործոններ, որոնցից ոչ մեկն առանձին վերցված որոշիչ չէ:

452. Որոշելու համար՝ արդյոք պետությունն իսկապես այդ պարտքերի համար պատասխանատու էր, հիմնական չափանիշները հետևյալն են՝ ընկերության իրավական կարգավիճակը (հանրային կամ մասնավոր իրավունքի համաձայն), դրա գործունեության բնույթը (հանրային գործառույթ կամ սովորական առևտրային գործունեություն), դրա գործունեության համատեքստը (ինչպես օրինակ՝ մենաշնորհ կամ խստորեն կարգավորվող ձեռնարկություն), դրա ինստիտուցիոնալ անկախությունը (պետական սեփականության ծավալը) և դրա գործառական անկախությունը (պետության կողմից վերահսկողության և հսկողության ծավալը) (*Ալիշիչ և այլք ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի, Խորվաթիայի, Սերբիայի, Սլովենիայի և Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության* [ՄԴ] [Ališić and Others v. Bosnia and Herzegovina, Croatia, Serbia, Slovenia and the Former Yugoslav Republic of Macedonia [GC]], 2014թ., § 114, *Ֆոմենկոն և այլք ընդդեմ Ռուսաստանի* (որոշում) [Fomenko and Others

v. Russia(dec.)], 2019թ., § 172, [Տոկելն ընդդեմ Թուրքիայի](#) [Tokel v. Turkey], 2021թ., § 58):

453. Պետական մասնակցությամբ ընկերության պարտքերի համար պետության պատասխանատվությունը որոշելիս կարծես թե հաշվի են առնվում նաև լրացուցիչ գործոններ, ինչպես օրինակ՝ ինչ դեր է ունեցել պետությունն այն բարդ իրավիճակի առնչությամբ, որում հայտնվել է ընկերությունը, օրինակ՝ սնանկություն, կամ արդյոք կարելի է ենթադրել, որ պետությունն ամբողջությամբ կամ մասամբ ընդունել է պատասխանատվությունն ընկերության պարտքերի համար (համեմատել [Լիսեյցևան և Մասլովն ընդդեմ Ռուսաստանի](#) [Liseytseva and Maslov v. Russia], 2014թ., §§ 184-192):

454. Համապատասխանաբար, երբ առկա են այդպիսի տարրեր, պարտապան ընկերության հանրային բնույթը կարող է հաստատվել ներպետական իրավունքի համաձայն դրա պաշտոնական դասակարգումից անկախ: Հետևաբար, երբ գործի կոնկրետ հանգամանքներում բավարար հիմքերը թույլ են տալիս եզրակացնել, որ պետությունը պատասխանատու է դիմումատուների նկատմամբ ընկերության պարտքերի համար, Դատարանը եզրակացնում է, որ դիմումատուների բողոքը *ratione personae* (ըստ անձանց շրջանակի) համատեղելի է Կոնվենցիայի դրույթների հետ: Օրինակ [Տոկելն ընդդեմ Թուրքիայի](#) [Tokel v. Turkey] գործով, 2021 թ., Դատարանը նշել է, որ «Չայքուր»-ը՝ թեյի արտադրության մեջ մասնագիտացված պետական մասնակցությամբ ձեռնարկությունը, մասնավոր իրավունքի դրույթներին ենթակա իրավաբանական անձ էր, որի պատասխանատվությունը սահմանափակվում էր իր կապիտալով: Այն թեյի շուկայում գործել է թեյի արտադրության մասնավոր ընկերությունների հետ միասին՝ առանց որևէ մենաշնորհի, և ենթարկվել է սովորական դատարանների ընդդատությանը: Այնուամենայնիվ, «Չայքուր»-ի ամբողջ կապիտալը մշտապես եղել է պետության սեփականությունը: Այն դասակարգվել է որպես պետական տնտեսական հաստատություն՝ պետական մասնակցությամբ ձեռնարկության տեսակ, որն ըստ սահմանման՝ իրականացրել է հանրային ծառայություններ և իր կողմից արտադրված արտադրանքի համար օգտվել է արտոնություններից: Դատարանը համարել է, որ չնայած ներպետական իրավունքի համաձայն պաշտոնական դասակարգմանը, հաշվի առնելով տվյալ ժամանակահատվածում գործող օրենսդրությունը, «Չայքուր»-ի անկախությունը սահմանափակվել է պետության հետ ամուր ինստիտուցիոնալ և գործառական կապերի

առկայությամբ: Հետևաբար պետական իշխանության մարմինների կողմից «Չայքուր»-ի ներդրումային ծրագրերի նկատմամբ վերահսկողությունը և հսկողությունը որոշիչ գործոն են այս գործով (*Snlytln քնդդեմ Թուրքիայի* [Tokel v. Turkey], 2021թ., §§ 58-64):

455. Այն դեպքում, երբ պետությունը մասնավոր ընկերության հիմնական բաժնետերն է, Դատարանը եզրակացրել է, որ չնայած նրան, որ դիտարկվող ընկերությունն առանձին իրավաբանական անձ է, այն չունի բավարար ինստիտուցիոնալ և գործառական անկախություն պետությունից, եթե i) դրա ակտիվները մեծապես վերահսկվել և կառավարվել են պետության կողմից, ii) պետությունն ուներ և իրացրել է տարբեր միջոցներով ընկերության ֆինանսական վիճակի բարելավման ուղղված միջոցներ ձեռնարկելու լիազորություն, ինչպես օրինակ՝ դատարանների կողմից դրա նկատմամբ տարածված ապառքների բռնագանձումները, նույնիսկ եթե ժամանակավորապես, չեղյալ հայտարարելու կամ ընկերությունում կատարվող ներդրումները խթանելու միջոցով, և iii) Կառավարությունն ինքն ընդունել է ընկերության պարտքերի համար որոշ չափի պատասխանատվություն (*խաչատրյանն քնդդեմ Հայաստանի* [Khachatryan v. Armenia], 2009թ., §§ 51-54):

456. Այնուամենայնիվ, երբ ինքնուրույն իրավասուբյեկտություն ունեցող պատասխանող ընկերությունն ունի իր բաժնետերերի գույքից այլ ակտիվների տիրապետելու հնարավորություն և ունի պատվիրակված կառավարում, պետությունը, ինչպես ցանկացած այլ բաժնետեր, պատասխանատու է պարտքերի համար միայն իր կողմից ընկերության բաժնեմասերում կատարված ներդրման գումարի չափով (*Անոխինն քնդդեմ Ռուսաստանի* (որոշում) [Anokhin v. Russia(dec.)], 2007թ.):

457. Մասնավորապես, ինչ վերաբերում է հանրային սեփականության ռեժիմում գտնվող ընկերություններին, որը լայնորեն կիրառվել է ՀՍՀՅ-ում, Դատարանը վճռել է, որ դրանք, որպես կանոն, չեն օգտվում «պետությունից բավարար ինստիտուցիոնալ և գործառական անկախությունից»՝ Կոնվենցիայով ստանձնած իր պատասխանատվությունից պետությանն ազատելու համար (*Ռ. Կաչապորը և այլք քնդդեմ Սերբիայի* [R. Kačapor and Others v. Serbia], 2008թ., § 98, *Միխայլենկին և այլք քնդդեմ Ուկրաինայի* <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-119268> [Mykhaïlenko and Others v. Ukraine], 2004թ., § 44, «*Չաստավա Իտ Տոկու*»-ն *քնդդեմ Սերբիայի* <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-119268> (որոշում) [Zastava It Turs

v. Serbia(dec.)], 2013թ., §§ 21-23):

458. Բացի այդ, Դատարանը վճռել է, որ ֆինանսական հաստատություններից բացի այլ պետական մասնակցությամբ ընկերությունների մասով մշակված պարամետրերը կարող են կիրառվել նաև պետական մասնակցությամբ բանկերի վերաբերյալ գործերի նկատմամբ (*Ալիշիչ և այլք ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի, Խորվաթիայի, Սերբիայի, Սլովենիայի և ՄակեդոնիայիՆախկին Հարավսլավական Հանրապետության* [ՄԴ] [*Ališić and Others v. Bosnia and Herzegovina, Croatia, Serbia, Slovenia and the Former Yugoslav Republic of Macedonia* [GC]], 2014թ., § 116): Իսկապես, առանցքային չափանիշները, որոնք հիշատակվում են որոշելիս, թե արդյոք պետությունը պետք է պատասխանատվություն կրի բանկային պարտքերի համար, նույնն են, ինչ Դատարանի կողմից «*Ռադիո Ֆրանս*»-ի գործով, 2003թ., իր որոշման մեջ սահմանված չափանիշները:

459. *Ալիշիչ և այլք ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի, Խորվաթիայի, Սերբիայի, Սլովենիայի և ՄակեդոնիայիՆախկին Հարավսլավական Հանրապետության* [ՄԴ] [*Ališić and Others v. Bosnia and Herzegovina, Croatia, Serbia, Slovenia and the Former Yugoslav Republic of Macedonia* [GC]] գործով, 2014թ., § 114, Դատարանը հիշեցրել է, որ պետությունը կարող է պատասխանատու լինել պետական մասնակցությամբ ընկերության պարտքերի համար, նույնիսկ եթե այդ ընկերությունն առանձին իրավաբանական անձ է՝ պայմանով, որ այն չունի բավարար ինստիտուցիոնալ և գործառական անկախություն պետությունից՝ վերջինիս Կոնվենցիայով ստանձնած իր պատասխանատվությունից ազատելու համար (*Միխայլենկո և այլք ընդդեմ Ուկրաինայի* [*Mykhaylenky and Others v. Ukraine*], 2004թ., §§ 43-46, «*Սլոբոզիա-Հանեսեի*» գյուղատնտեսական կոոպերատիվն ընդդեմ Մոլդովայի [*Cooperativa Agricola Slobozia-Hanesei v. Moldova*], 2007թ., §§ 17-19, *Երշովան ընդդեմ Ռուսաստանի* [*Yershova v. Russia*], 2010թ., §§ 54-63, *Կոտովն ընդդեմ Ռուսաստանի* [ՄԴ] [*Kotov v. Russia*][GC]], 2012թ., §§ 92-107):

460. Բացի վերոնշյալ գործոններից՝ Դատարանն արտահայտել է այն կարծիքը, որ նույնիսկ ֆինանսական հաստատություններից բացի այլ ընկերությունների վերաբերյալ նախադեպային իրավունքում մշակված լրացուցիչ գործոնները կարող են կիրառվել պետական մասնակցությամբ բանկերի

վերաբերյալ գործերի նկատմամբ (*Ալիշիչը և այլք ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի, Խորվաթիայի, Սերբիայի, Սլովենիայի և Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության* [ՄԴ] [*Ališić and Others v. Bosnia and Herzegovina, Croatia, Serbia, Slovenia and the Former Yugoslav Republic of Macedonia* [GC]], 2014թ., § 115): Դիտարկվող գործերը վերաբերել են այն հարցին, թե արդյոք պետությունն ուղղակիորեն պատասխանատու էր ընկերության ֆինանսական դժվարությունների համար, արդյոք այն յուրացրել էր կորպորատիվ միջոցներն ի վնաս ընկերության և դրա փայատերերի, չէր պահպանել ընկերության հետ առանց շահագրգռվածության հարաբերություն կամ այլ կերպ գործել էր կորպորատիվ կառուցվածքի չարաշահմամբ (*Անոխինը ընդդեմ Ռուսաստանի* (որոշում) [*Anokhin v. Russia*(dec.)], 2007թ., *Խաչատրյանը ընդդեմ Հայաստանի* [*Khachatryan v. Armenia*], 2009թ., §§ 51-55):

461. Վերջապես, հարկ է նաև նշել սնանկության գործով լուծարողների իրավական կարգավիճակը հստակեցնելու Դատարանի ջանքերը: Ուսումնասիրելու համար, թե արդյոք կարող է համարվել, որ լուծարողը գործել է որպես պետական գործակալ, Դատարանն ուսումնասիրել է տարբեր չափանիշներ, ինչպես օրինակ՝ i) լուծարողի նշանակման հաստատումը (արդյոք հաստատումն առաջացնում է լուծարողի կողմից իր պարտականությունների կատարման ձևի համար պետության պատասխանատվություն), ii) վերահսկողությունը և հաշվետվողականությունը (արդյոք պետությունը պատասխանատվություն է կրում լուծարողի արարքների համար այն ժամանակ, երբ նա պատասխանատվություն է կրում իր պարտատերերի առջև), iii) նպատակները (լուծարողի խնդիրների բնույթը և սպասարկվող շահերը, այսինքն՝ ըստ Դատարանի՝ զուտ այն փաստը, որ ծառայությունները կարող էին նաև ունենալ հանրային օգտակարություն, լուծարողին չի դարձնում հանրային շահերի օգտին գործող պետական պաշտոնյա), iv) լիազորությունները (արդյոք սահմանափակվում են սնանկ ընկերության գույքի նկատմամբ գործառական հսկողությամբ և կառավարմամբ, և արդյոք առկա է լիազորությունների պաշտոնական պատվիրակում պետական որևէ մարմնի կողմից), և v) գործառույթները (արդյոք լուծարողները ներգրավված են կատարողական վարույթում, և արդյոք նրանց տրվել են հարկադրանք կիրառելու լիազորություններ) (մասնավորապես՝ *Կոտովը ընդդեմ Ռուսաստանի* [ՄԴ] [*Kotov v. Russia*[GC]] գործով, 2012թ., §§ 92-98 և 99-106, որը վերաբերում էր դատարանի կողմից սնանկ ճանաչված բանկի գույքը կառավարելու համար նշանակված

լուծարողից վնասի փոխհատուցում ստանալու դիմումատուի անկարողությանը):

462. Այդ գործով լուծարողը համապատասխան ժամանակահատվածում ունեցել է զգալի գործառական և ինստիտուցիոնալ անկախություն, և պետական իշխանության մարմինները չեն ունեցել նրան ցուցումներ տալու լիազորություն և հետևաբար չեն կարողացել որպես այդպիսին ուղղակիորեն միջամտել լուծարման գործընթացին, ուստի կարելի էր եզրակացնել, որ լուծարողը չի գործել որպես պետական գործակալ (*Կոտովն ընդդեմ Ռուսաստանի* [ՄԴ] [*Kotov v. Russia*][GC]], 2012թ. § 107): Հետևաբար պատասխանող պետությունն ուղղակիորեն պատասխանատու չի եղել նրա հակաիրավական գործողությունների համար:

ԺԳ. Խիստ խնայողության միջոցները

463. Դատարանը քննել է մի շարք գործեր, որոնցով դիմումատուները բողոքել են ֆինանսական ճգնաժամին ի պատասխան Պայմանավորվող կողմերի կողմից ձեռնարկված խիստ խնայողության միջոցների տարբեր հայեցակետերից: Դրանք ներառել են սոցիալական ապահովագրության վճարների և աշխատավարձերի կրճատումները, ինչպես նաև հարկային միջոցները, որոնք հաճախ գտել են, որ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի պահանջներին համապատասխան են: Դատարանը հաշվի է առել, որ այդ միջոցները ձեռնարկվել են տնտեսական ճգնաժամի հետևանքները մեղմելու համար, որ իշխանությունները գործել են հանրային շահից ելնելով, որ կոնկրետ միջոցը եղել է ավելի ընդգրկուն ծրագրի մաս, դրանք չեն եղել անհամաչափ և դիմումատուների եկամտի աղբյուրների համար սպառնալիք չեն հանդիսացել, և որ դրանք կրել են ժամանակավոր բնույթ (*Սոկիենեն ընդդեմ Լիտվայի* (որոշում) [*Mockienė v. Lithuania*(dec.)], 2017թ., § 48, *Դա Սիլվա Կարվալյու Ռիկուն ընդդեմ Պորտուգալիայի* (որոշում) [*DaSilva Carvalho Rico v. Portugal*(dec.)], 2015թ., § 46, *Սավիցկասը և այլք ընդդեմ Լիտվայի* (որոշում) [*Savickas and Others v. Lithuania*(dec.)], 2013թ., §§ 92-94, *Դա Կոնսեյսաու Մատեուշը և Սանտուշ Ժանուարիուն ընդդեմ Պորտուգալիայի* (որոշում) [*Da Conceição Mateus and Santos Januário v. Portugal*(dec.)], 2013, § 29, *Կուֆակին և Ադեդին ընդդեմ Հունաստանի* (որոշում) [*Koufaki and Adedyv. Greece*(dec.)], 2013թ., §§ 37-49, *Շեգարակը և այլք ընդդեմ Սերբիայի* (որոշում) [*Žegarac and Others v. Serbia*(dec.)], 2023թ., § 103): Դատարանն ընդունել է, որ պետություններն ունեն լայն հայեցողություն քաղաքական կամ տնտեսական ռեժիմի փոփոխության համատեքստում օրենքներ ընդունելիս (*Վալկովը և այլք*

[ընդդեմ Բուլղարիայի \[Valkov and Others v. Bulgaria\]](#), 2011թ., § 96):

464. Դատարանի կողմից ընդունված որոշ միջոցներ հանգեցրել են բնակչության որոշակի հատվածների եկամտի ժամանակավոր կրճատման: Ռումինիան 2010 թվականին վեց ամիս ժամկետով 25%-ով կրճատեց պետական հատվածի աշխատողների աշխատավարձերը՝ պետական բյուջեն հավասարակշռելու համար ([Միհայեշը և Սենտեշն ընդդեմ Ռումինիայի](#) (որոշում) [[Mihăieș and Senteș v. Romania](#)(dec.)], 2011թ., § 8): Պորտուգալիան 2012 թվականին պետական հատվածի կենսաթոշակառուների որոշակի կատեգորիաների համար, որոնց ամսական կենսաթոշակը գերազանցում էր 600 եվրոն, կրճատեց տոնական և սուբսիդիային նպաստների չափը և ընդհանրապես կասեցրեց դրանց վճարումն այն կենսաթոշակառուներին, որոնց ամսական կենսաթոշակը գերազանցում էր 1,100 եվրոն, ինչը երկու դիմումատուների դեպքում հանգեցրել էր կենսաթոշակի վճարումների մոտ 11% կրճատման ([Ղա Կոնսեյսաու Մատեուշը և Սանտուշ Ժանուարիուն ընդդեմ Պորտուգալիայի](#) (որոշում) [[Da Conceição Mateus and Santos Januário v. Portugal](#)(dec.)], 2013թ., § 6):

465. Ձեռնարկվել են նաև ժամանակավոր լրացուցիչ եկամտահարկի ձևով այլ միջոցներ: Պորտուգալիան 2013 թվականին պետական հատվածի կենսաթոշակների համար սահմանեց համերաշխության նպաստ 3,5% չափով՝ ամսական առաջին 1,800 եվրոյին համապատասխանող մասի նկատմամբ, և 16% չափով՝ այդ գումարը գերազանցող մասի նկատմամբ, որը Դատարանում քննվող գործով դիմումատուի կենսաթոշակային եկամուտը նվազեցրել էր 4,6%-ով ([Ղա Սիլվա Կարվալյու Ռիկուն ընդդեմ Պորտուգալիայի](#) (որոշում) [[DaSilva Carvalho Rico v. Portugal](#)(dec.)], 2015թ., § 8):

466. Այլ միջոցներ, այնուամենայնիվ, հանգեցրել են բնակչության որոշ հատվածների եկամուտների մշտական կամ ժամանակավոր կրճատման: Ռումինիան 2010 թվականին վերացրել է մի շարք հատուկ կենսաթոշակային ռեժիմներ, որոնք կիրառվում էին պետական հատվածի՝ թոշակի անցած աշխատողների որոշակի կատեգորիաների նկատմամբ, որի արդյունքում հինգ դիմումատուների դեպքում նրանց կենսաթոշակները նվազել էին մոտ 70%-ով ([Ֆրիմուն և այլք ընդդեմ Ռումինիայի](#) (dec.) [[Frimu and Others v. Romania](#) (dec.)], 2012թ., § 5):

467. Հունաստանը 2010 թվականին նույնպես հետադարձ ուժով կրճատել էր

պետական հատվածի կենսաթոշակները և աշխատավարձերը՝ 12%-ից 30%-ի սահմաններում, դրանք նույն տարվա ընթացքում այնուհետև կրճատելով ևս 8%-ով, ինչպես նաև կրճատել էր պետական հատվածի ավելի բարձր վարձատրվող աշխատողների տոների և սուբսիդիաների նպաստները (*Կուֆակին և Ադեդյին ընդդեմ Հունաստանի* (որոշում) [*Koufaki and Adedyv. Greece(dec.)*], 2013թ., §§ 20 և 46):

468. Դատավորների աշխատավարձերի ժամանակավոր կրճատման վերաբերյալ գործով Դատարանը հաշվի է առել այն փաստը, որ միջոցները, որոնց վերաբերյալ բողոքում էին, խիստ խնայողության միջոցների՝ ամբողջ պետական հատվածի աշխատավարձերի վրա ազդող ավելի ընդգրկուն ծրագրի մաս են կազմել, որ կրճատումը վերաբերել է երկու տարի առաջ բարձրացված աշխատավարձերին, և որ ի վերջո, տվյալ կրճատման համար շահագրգիռ անձանց փոխհատուցում էր տրամադրվել (*Սավիցկասը և այլք ընդդեմ Լիտվայի* (որոշում) [*Savickas and Others v. Lithuania(dec.)*], 2013թ., § 93):

469. Ավելին, *Կուբատը և այլք ընդդեմ Չեխիայի Հանրապետության* [*Kubát and Others v. the Czech Republic*] գործով, 2023թ., §§ 89-92 և 95-96, դատավորների աշխատավարձերը կրճատվել էին 2011-2014 թվականներն ընկած ժամանակահատվածի համար՝ «Աշխատավարձերի մասին» օրենքի փոփոխություններին համահունչ: Այս օրենսդրական փոփոխությունները հետագայում հակասահմանադրական են ճանաչվել Սահմանադրական դատարանի կողմից, որը որոշել է իր որոշմանը տալ *pro futuro* (ապագա) գործողություն: Հաշվի առնելով, որ բացառիկ հանգամանքները կարող էին հիմնավորել *ex nunc/pro future* (հետադարձ ուժ չունեցող/ապագա) գործողությամբ չեղարկող վճիռ կայացնելը, որը դատավորների աշխատավարձերի կրճատման հարցից այլ հարց էր, Դատարանը գտել էր, որ ֆինանսական ճգնաժամի ընթացքում իշխանությունների կողմից դատավորների վարձատրության տարբերությունը հետադարձ ուժով վճարելուց հրաժարվելը խախտում չէր: Այնուամենայնիվ, Դատարանը նկատել էր, որ դատավորների վարձատրության մակադակը պետք է սահմանվի այնպես, որ նրանց պաշտպանի իրենց որոշումների և ավելի լայն իմաստով իրենց վարքագծի վրա ազդելու նպատակով գործադրվող ճնշումներից, և որ չապահովելը, որ դատավորներին վճարվեն դատական այն արտոնությունները, որոնց իրավունքը նրանք օրենքով ունեն, կարող է լինել նրանց կողմից անհրաժեշտ նվիրվածությամբ իրենց դատական գործառույթների

կատարումը խոչընդոտող հանգամանք:

470. Այնուամենայնիվ, 52% ընդհանուր դրույքաչափով արձակման նպաստի հարկման գործով Դատարանը գտել է, որ կիրառված միջոցներն անհամաչափ են եղել հետապնդվող օրինական նպատակին: Դա այդպես էր՝ չնայած հարկման հարցերում պետության ունեցած լայն հայեցողությանը և նույնիսկ ենթադրելով, որ միջոցը տնտեսական դժվարությունների ժամանակահատվածում ծառայել էր պետական բյուջեի շահերին: Դատարանը հաշվի է առել, որ դրույքաչափը զգալիորեն գերազանցել է մյուս բոլոր եկամուտների նկատմամբ կիրառվող դրույքաչափերը, որ դիմումատուն իր գործազրկության արդյունքում կրել է եկամտի զգալի կորուստ, և որ գործատուի կողմից հարկն ուղղակիորեն պահվել է արձակման նպաստից՝ առանց նրա իրավիճակի որևէ անհատականացված գնահատում անցկացնելու, և կիրառվել է այն եկամտի նկատմամբ, որը կապված էր նախքան տվյալ հարկային տարին իրականացված գործունեության հետ (*Ն. Կ. Մ.-ն ընդդեմ Հունգարիայի* [N.K.M. v. Hungary], 2013թ., §§ 66-74):

471. Բարձր եկամուտների նկատմամբ հարկերի կիրառման վերաբերյալ մեկ այլ գործով Դատարանն ընդհանուր առմամբ գտել է, որ պետության կողմից կայացված որոշումները հարկման հետ կապված հարցերում իշխանություններին թույլատրված հայեցողության սահմաններից դուրս չեն եղել և չեն խախտել ընդհանուր շահի և ընկերությունների անհատական իրավունքների պաշտպանության միջև հավասարակշռությունը: Դատարանը նկատել է, որ պետության կողմից ձեռնարկված քայլերը նաև Եվրոպական միության բյուջետային կանոններով սահմանված պարտավորությունների կատարման մասով երկրի նպատակի մասն են կազմել (*«Պ. Պլեզիեր Բի.Վի.»-ն -ն ընդդեմ Նիդերլանդների* (որոշում) [P. Plaisier B.V. v. the Netherlands(dec.)], 2017թ., §§ 77-97):

472. Վերջապես, պետական պարտքը նվազեցնելու ջանքերին դիմումատուների՝ իրենց պարտատոմսերը պակաս արժողությամբ պարտքային այլ գործիքների հետ փոխանակելու միջոցով հարկադիր մասնակցության վերաբերյալ գործով Դատարանը գտել է, որ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում տեղի չի ունեցել: Այն նշել է, որ միջամտությունն ունեցել է տնտեսական ծանր ճգնաժամի պայմաններում տնտեսական կայունությունը պահպանելու և ազգային պարտքը վերակազմավորելու հանրային շահ հետապնդող նպատակ: Դատարանը վճռել է, որ դիմումատուները չեն կրել որևէ հատուկ կամ չափից ավելի բեռ,

մասնավորապես՝ հաշվի առնելով պետությունների հայեցողական լիազորությունների լայն շրջանակն այս ոլորտում և պարտատոմսերի առևտրային արժեքի նվազեցումը, որոնց վրա արդեն իսկ ազդել էր պետության վճարունակության նվազումը, որը հավանաբար չէր կարողանա կատարել հին պարտատոմսերում ներառված դրույթներով սահմանված իր պարտավորությունները: Դատարանը նաև համարել է, որ կոլեկտիվ գործողությունների մասին դրույթները և պետական պարտքի վերակազմավորումը պետական պարտքը նվազեցնելու և պետությունը սնանկացումից փրկելու պատշաճ և անհրաժեշտ միջոցներ էին, որ պարտատոմսերում ներդրումներ կատարելը երբևէ ռիսկերից զերծ չի եղել, և որ դիմումատուները պետք է տեղյակ լինեին ֆինանսական շուկայի անկանխատեսելիության և իրենց պարտատոմսերի արժեքի հնարավոր անկման ռիսկի մասին (*Մամատասը և այլք ընդդեմ Հունաստանի* [*Mamatas and Others v. Greece*], 2016թ., §§ 22 և 48-51, տե՛ս նաև *Ֆրեյրե Լոպեշն ընդդեմ Պորտուգալիայի* (որոշում) [*Freire Lopes v. Portugal (dec.)*], 2023թ., §§ 88-90):

ԺԴ. Եվրոպական միության իրավունքը

473. *«Բոսֆորի ավիաուղիներ» զբոսաշրջային և առևտրային բաժնետիրական ընկերությունն* ընդդեմ Իռլանդիայի [ՄՊ] [*Bosphorus Hava Yolları Turizm ve Ticaret Anonim Şirketi v. Ireland* [GC]] գործը, 2005թ., §§ 155-156, վերաբերում էր դիմումատու ընկերության կողմից հարավսլավական ընկերությանը վարձակալության հանձնած օդանավին, որը 1993 թվականին բռնագրավվել էր Իռլանդիայի իշխանությունների կողմից՝ Համայնքի կանոնակարգի հիման վրա, որով գործողության մեջ էին դրվում Հարավսլավիայի Ֆեդերատիվ Հանրապետության նկատմամբ ՄԱԿ-ի կողմից սահմանված պատժամիջոցները: Դատարանը գտել է, որ ԵԽ իրավունքով մարդու հիմնարար իրավունքների պաշտպանությունը կարող էր համարվել և դիտարկվող ժամանակահատվածում համարվում էր Կոնվենցիայի համակարգում իրավունքների պաշտպանությանը «համարժեք» (այսպես կոչված՝ «բոսֆորյան կանխավարկածը կամ համարժեք պաշտպանության սկզբունքը»⁷): Հետևաբար առաջացել է կանխավարկած այն մասին, որ Իռլանդիան ԵՄ անդամակցությունից բխող իր իրավական պարտավորություններն իրականացնելիս չէր շեղվել Կոնվենցիայի պահանջներից: Դատարանը հաշվի էր առել միջամտության բնույթը, բռնագրավման և պատժամիջոցների ռեժիմի միջոցով հետապնդվող ընդհանուր շահը և ԱԵԴ-ի

որոշումը, որը Գերագույն դատարանը պարտավոր էր կատարել և կատարել էր: Դատարանն ակնհայտ էր համարել այն, որ Կոնվենցիայով սահմանված իրավունքների պահպանման նկատմամբ վերահսկողության մեխանիզմների խախտում առկա չէր: Հետևաբար չէր կարելի համարել, որ «Բոսֆորի ավիաուղիներ» ընկերության՝ Կոնվենցիայով սահմանված իրավունքների պաշտպանությունն ակնհայտ անբավարար է եղել: Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում չէր արձանագրվել:

474. Ինչ վերաբերում է Նյութական պահանջներին, ապա [Ավոտինշն ընդդեմ Լատվիայի](#) [ՄԴ] [*Avotiņš v. Latvia* [GC]] գործով, 2016թ., §§ 104 և 109-111, որը վերաբերում էր 2004 թվականին Կիպրոսում կայացված՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն պարտքի մարման վերաբերյալ վճռի կատարմանը Լատվիայում, և որով խախտում չէր արձանագրվել, Դատարանն ընդունել է, որ հիմնարար իրավունքների պահպանման նկատմամբ վերահսկողության համար Եվրոպական միության իրավունքով նախատեսված մեխանիզմով, այնքանով, որքանով օգտագործվում էր դրա ամբողջ ներուժը, նաև տրամադրվում էր Կոնվենցիայով նախատեսված պաշտպանության մակարդակի հետ համեմատելի պաշտպանություն (բոսֆորյան կանխավարկածի երկրորդ պայմանը, որի առաջին պայմանը ներպետական մարմինների կողմից մանևրելու որևէ ազատության բացակայությունն է, ինչպես շարադրված է [Միշոն ընդդեմ Ֆրանսիայի](#) [*Michaud v. France*] գործում, 2012թ., §§ 114-116):

475. Ավելին, [«Հերակլես Էս.Ա.» ցեմենտային գլխավոր ընկերությունն ընդդեմ Հունաստանի](#) (որոշում) [*Heracles S.A. General Cement Company v. Greece* (dec.)] գործով, 2016թ., §§ 63-70, Դատարանը գտել է, որ Եվրոպական հանձնաժողովի որոշման հիման վրա կայացված ներպետական դատարանի վճիռը, որով կարգադրվում էր անօրինական ճանապարհով ձեռքբերված պետական օգնության միջոցների վերադարձ 14 տարվա համար հաշվեգրված տոկոսների հետ միասին, անհամաչափ չէր, և Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով և 6-րդ հոդվածով ներկայացված բողոքները հայտարարել է անընդունելի:

476. [«ՕՍալիվան ՄըքԶարթի Մասլ Դիվելոպմենթ» ՍՊԸ-ն ընդդեմ Իռլանդիայի](#) [*O'Sullivan McCarthy Mussel Development Ltd v. Ireland*] գործով, 2018 թ., չհասունացած միդիաների (միդիայի թրթուրների) որսով զբաղվող ընկերությունը բողոքել է, որ Իռլանդիայի կառավարությունը ֆինանսական

Կորուստներ Է պատճառել այդ ընկերությանն այն եղանակով, որով կատարել էր Եվրոպական միության շրջակա միջավայրի պաշտպանության վերաբերյալ օրենսդրության պահանջները: 2008 թվականին, այն բանից հետո, երբ Եվրոպական միության արդարադատության դատարանը (ԵՄԱԴ) ընդունել էր, որ Իռլանդիան չէր կատարել շրջակա միջավայրի պաշտպանության վերաբերյալ ԵՄ երկու հրահանգներով սահմանված իր պարտավորությունները, Կառավարությունը ժամանակավորապես արգելել էր միդիաների թրթուրների որսն այն նավահանգստում, որտեղ գործում էր ընկերությունը: Այդպիսով, 2010 թվականին ընկերությունը չի ունեցել հասուն միդիաներ վաճառքի համար, ինչը հանգեցրել է շահույթի կորստի: Դատարանը նկատել է, որ թե՛ շրջակա միջավայրի պաշտպանությունը և թե՛ պատասխանող պետության կողմից ԵՄ օրենսդրությամբ սահմանված պարտավորությունների կատարումն օրինական նպատակներ էին: Որպես առևտրային օպերատոր՝ ընկերությունը պետք է տեղյակ լիներ, որ պետության կողմից ԵՄ կանոնների պահպանության անհրաժեշտությունը հավանական էր, որ ազդեր իր ձեռնարկատիրական գործունեության վրա:

477. Մասնավորապես Դատարանն արտահայտել է այն կարծիքը, որ բոսֆորյան կանխավարկածը չէր կիրառվում սույն գործի հանգամանքների վրա, քանի որ պատասխանող պետությունը ԵԽԱԴ-ի վճռին և հրահանգի իրականացումն ապահովող ենթաօրենսդրական ակտերին համապատասխանության իր պարտականության մասով ամբողջովին զրկված չի եղել մանկրելու հնարավորությունից: Դատարանը չի քննել այն հարցը, թե արդյոք իրավունքների խախտման վարույթներով ԵՄԱԴ-ի վճիռն այլ հանգամանքներում ևս կարող է համարվել մանկրելու հնարավորություն չընձեռող (*«ՕՍալիվան ՄըքԶարթի Մասլ Դիվելոպմենթ» ՍՊԸ-ն ընդդեմ Իռլանդիայի* [O'Sullivan McCarthy Mussel Development Ltd v. Ireland], 2018թ., §§ 110-112):

478. Ընդհանուր առմամբ Դատարանը գտել է, որ ընկերությունը Կառավարության գործողությունների պատճառով չի կրել անհամաչափ բեռ, և որ Իռլանդիան արդար հավասարակշռություն է ապահովել համայնքի ընդհանուր շահերի և անհատական իրավունքների պաշտպանության միջև: Այդպիսով, ընկերության՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով սահմանված գույքային իրավունքների խախտում չի արձանագրվել:

479. *Իմերին ընդդեմ Խորվաթիայի* [Imeri v. Croatia] գործով, 2021թ., § 72, Դատարանը Սլովենիայի և Խորվաթիայի միջև սահմանը հատելիս դիմումատուի կողմից չհայտարարագրված գումարի բռնագրավման վերաբերյալ գործը քննելիս հաշվի է առել Եվրոպական միության համապատասխան իրավունքը: Մասնավորապես Դատարանը հաշվի է առել Եվրոպական միության արդարադատության դատարանի նախադեպային իրավունքը, համաձայն որի՝ 2005 թվականի կանոնակարգի (Համայնք մտնող և այնտեղից դուրս եկող կանխիկ միջոցների նկատմամբ հսկողության վերաբերյալ 2005 թվականի Կանխիկ միջոցների հսկողության կանոնակարգ) նպատակը ոչ թե հնարավոր խարդախ կամ անօրինական գործողությունների համար պատժի սահմանումն էր, այլ բացառապես հայտարարագրման պարտավորության խախտման համար պատժի սահմանումն էր: Դատարանը նաև հաշվի էր առել 2005 թվականի կանոնակարգը չեղարկող և փոխարինող՝ 2018 թվականի Կանխիկ միջոցների հսկողության կանոնակարգի նախաբանը, որտեղ բացահայտ նշվում էր, որ սահմանը հատելիս կանխիկ միջոցները հայտարարագրելու կամ բացահայտելու պարտավորությունը չկատարելու համար սահմանվող պատիժները սահմանելիս չպետք է հաշվի առնվի կանխիկ միջոցների հետ կապված հնարավոր հանցավոր գործունեությունը:

480. Վերջապես, *Սպասովն ընդդեմ Ռումինիայի* [Spasov v. Romania] գործով, 2023թ., §§ 113-119, Բուլղարիայում գրանցված նավի սեփականատերն ու նավապետը հանդիսացող անձը տյուրբոյի որս էր իրականացնում Ռումինիայի բացառիկ տնտեսական գոտու (ԲՏԳ) տարածքում, երբ նրա նավ անձինք են բարձրացել: Նրա նկատմամբ քրեական հետապնդում էր իրականացվել այն հիմքով, որ նա չունեի Ռումինիայի կողմից տրամադրված ձկնորսության լիցենզիա և օգտագործել էր Ռումինիայի օրենսդրությամբ արգելված ցանցեր: Զանի որ փաստերը տեղի էին ունեցել Եվրոպական միությանը երկու երկրների միանալուց հետո, դիմումատունն հիմնվել էր Ձկնորսության ոլորտում ընդհանուր քաղաքականության վրա: Այնուամենայնիվ, 2013 թվականի հոկտեմբերի 2-ի վերջնական վճռում Վերաքննիչ դատարանը վճռել էր, որ Համայնքի նավերի վրա դեռևս տարածվում էր «Ծովային իրավունքի մասին» ՄԱԿ-ի Կոնվենցիայի հիման վրա ընդունված Ռումինիայի օրենսդրությունը, և որ կոնկրետ տյուրբոյի որսի հետ կապված ազգային օրենքները չէին հակասում Եվրոպական միության իրավունքին: Դիմումատունն բողոքել է, որ Վերաքննիչ դատարանը հաշվի չէր առել ԵՄԱԴ-ի որոշումը (Ձկնորսության ոլորտում ընդհանուր քաղաքականության կանոնների

մեկնաբանման վերաբերյալ), և որ այն կայացրել էր որոշում, որն այդ կանոնների լույսի ներքո կամայական էր: Դատարանը նկատել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից դիմումատուի նկատմամբ կիրառված նյութական տույժերը հիմնված էին ներպետական օրենսդրության կոնկրետ դրույթների վրա և սահմանվել էին ի լրումն ապօրինի ձկնորսության համար իր դատապարտման: Այնուամենայնիվ, քանի որ Դատարանը գտել էր, որ դիմումատուի դատապարտումն իրավունքի բացահայտ սխալի արդյունք էր, ներպետական օրենսդրության վերոնշյալ դրույթը չէր կարող իրավական հիմք ծառայել դիմումատուի նկատմամբ կիրառված լրացուցիչ նյութական տույժերի համար:

Մեջբերված գործերի ցանկ

Սույն Ուղեցույցում մեջբերված նախադեպային իրավունքի գործերը վերաբերում են Դատարանի կողմից կայացված վճիռներին և որոշումներին, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի (Հանձնաժողով) որոշումներին և զեկույցներին:

Եթե այլ բան նշված չէ, ապա բոլոր հղումներն արվել են գործի ըստ էության քննության վերաբերյալ Դատարանի Պալատի կողմից կայացված վճիռն: «(Որոշում)» բառը նշանակում է, որ հղում է կատարվում Դատարանի որոշմանը, իսկ «[ՄԴ]» հապավումով նշվում է, որ գործը քննվել է Մեծ պալատի կողմից:

Պալատի այն վճիռները, որոնք վերջնական չեն Կոնվենցիայի 44-րդ հոդվածի իմաստով, ստորև ներկայացված ցանկում նշված են աստղանիշով (*): Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսվում է հետևյալը. «Պալատի վճիռը դառնում է վերջնական, եթե՝ ա) կողմերը հայտարարում են, որ չեն պահանջի գործի հանձնում Մեծ պալատին, կամ բ) վճռի կայացումից հետո երեք ամսվա ընթացքում չի պահանջվում գործի հանձնում Մեծ պալատին, կամ գ) Մեծ պալատի հանձնախումբը, 43-րդ հոդվածին համապատասխան, մերժում է գործը հանձնելու պահանջը»: Այն դեպքերում, երբ Մեծ պալատի կոլեգիան ընդունում է գործը հանձնելու պահանջը, Պալատի վճիռը վերջնական չի դառնում և հետևաբար իրավական ուժ չի ունենում. վերջնական է դառնում Մեծ պալատի կողմից դրանից հետո կայացվող հաջորդ վճիռը:

Ուղեցույցի Էլեկտրոնային տարբերակում մեջբերված գործերին արված հիպերհղումները տանում են «HUDOC» տվյալների շտեմարան (<http://hudoc.echr.coe.int>), որն ապահովում է մատչելիություն Դատարանի նախադեպային իրավունքին (Մեծ Պալատի, Պալատի և Կոմիտեի վճիռներ և որոշումներ, հրապարակված գործեր, խորհրդատվական կարծիքներ և «Նախադեպային իրավունքի տեղեկատվական պարբերական»-ում [Case-Law Information Note] առկա գործերի իրավական ամփոփումներ), Հանձնաժողովի նախադեպային իրավունքին (որոշումներ և զեկույցներ) և Նախարարների կոմիտեի բանաձևերին:

